Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4688

ЗКП1
9-64

15 JUL 2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

Գ. ԶԻՆՈՎՅԵՎ

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (ԲԱՑԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմ. Դ. ԴՋՆՈՒՆԻ

ՀԱԽՀ—ՍՍՀՄ
Հայ. Ա. Մյասնիկյանի
Ս. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Յերեվան — 1925.

13.04.2013

4688

1330-91
(95-90)

№ 254. Գրառեալվար № 58 բ. Տիրաժ 5,000.
Պետ. տպարան առաջին տպարան Վաղարշապատում

1925 թ.
Հունվար
Գրքերապահ

ՆՎԻՐՎՈՒՄ Է

# ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆԸ

# ՀԵՂԻՆԱԿԻՑ

Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցությունը սովորական կուսակցություններից չէ։ Պատմությունը ցանկացավ, որպեսզի Ռ. Կ. Կ.-ը մարդկային առաջադիմության հզորագույն զենք և համաշխարհային հեղափոխության կարևորագույն գործիքը դառնար։ Նրա նշանակությունը մեծ է և աննախընթաց ոչ միայն Ռուսաստանի, այլ և ամբողջ աշխարհի պատմության մեջ։ Զուր չէ, որ Ռ. Կ. Կ.-ան զարգացման ընթացքը ներկայումս ուսումնասիրում են միջազգային բանվորական շարժման լավագույն ներկայացուցիչները։ Առավել ևս մեր՝ Ռ. Կ. Կ. շարքերում աղբող և պայքարող յուրաքանչյուրիս պարտականությունն է գիտենալ այդ պատմությունը, ուսումնասիրել նրա ամեն մի քայլը հաղթության դժվարին ճանապարհին, պրոլետարիատի ազատագրման գործի համար մղած նրա հերոսական պայքարի ամենաոգեշունչ էպիզոդները։

Ստորև զետեղված վեց դասախոսությունը, որ յես կարդացել եմ մեր կուսակցության 25-ամյա հոբելյանի նախորյակին, նրա պատմության ամենաթռուցիկ ուրվագիծն է միայն տալիս։ 1917 թ. հետո անցած հնգամյակը միայն կարող եր մի քանի հատոր պահանջել։ Իմ դասախոսությունները լոկ սկզբնական ուրվագիծ են, որոնք կարող են միայն որպես մեր կուսակցության պատմության համառոտ նեբածություն ծառայել։ Այս ուրվագիծը յես հրատարակում եմ միայն, նկատի ունենալով մեր ընկերների պնդումը և այն պատճառով միայն, որ Ռ. Կ. Կ. պատմությունը դեռևս շատ աղքատ է։ Գուցե նման աղքատիկ վիճակում իմ այս ուրվագիծն էլ որևէ օգուտ կբերի։

---



## ԻՆՉ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ։

Ի՞նչ է կուսակցությունը։ Թվում է, թե այս մի շատ պարզ հարց է։ Ներկա յեղողների մեջ յերևի կուսակցության շատ անդամներ կան, որոնց, հավանականաբար, այսպիսի մի հարցով զբաղվելը զուտ ժամավաճառություն կթվա։ Սակայն այս տեսակետն այնքան էլ ճիշտ չէ։

Ցերը խոսք է լինում այնպիսի բնագավառների գիտական բնորոշման մասին, որոնք սերտ առընչություն ունեն մարդկային մասսաների հետ,—որոնք ամբողջովին վերաբերում է հասարակական կազմակերպություններին,—ապա դուք գրեթե միշտ կտեսնեք, ինչպես տարբեր դասակարգերի և աշխարհայացքների ներկայացուցիչները զանազան ձևով են բնորոշում այս կամ այն հասարակական կազմակերպության եյությունը։ Որպես ներկա դեպքում ավելի ծանոթ որինակ վերցնենք արհմիությունները, որոնց մասնակցում են միլիոնավոր մարդիկ։ Ամեն ոք գիտե, թե ինչ է այդ կազմակերպությունը։ Այնինչ տարբեր դասակարգի ներկայացուցիչները տարբեր կերպով են բնորոշում, մինչ Կարլ Մարքսը արհմիությունների եյությունը բնորոշելու համար յերկու խոսք եր միայն գործածում՝ «սոցիալիզմի դպրոց», բուրժուական գիտական աշխարհի ներկայացուցիչները բոլորովին այլ բնորոշում են տալիս։ Սիդնեյ և Բեատրիսա Ուեբը ամուսինները, որ ռեֆորմիստական-մենշևիկյան ուղղության պատկանող հայտնի անգլիական գրողներ են, յենթադրում են, որ արհմիությունները ոչ այլ ինչ են, յեթե ոչ փոխոգնության և նույնիսկ բարեգործության կազմակերպություններ։ Այնուհետև, յեթե ցանկանաք պարզել, թե ինչպես է բնորոշում արհմիությունը դիցուք կենտրոնի կաթոլիկյան կուսակցության պատկանող որևէ գերմանական պրոֆեսոր, դուք կտեսնեք, որ նրա կարծիքով այդ համարյա թե մի աստվածահաճո հիմնարկություն, մի անկելանոց է։ Ցավ այդ հասկանալի յե, որովհետև այնպիսի հարցերի նկատմամբ, որոնք անմիջականորեն վերաբերում են հարյուր-հազարավոր մարդկանց շահերին, դուք զուր աշխատանք թափած կլինեք, յեթե ամենասովորական հարցերի բնորոշման

համար անաչառություն փնտռեք։ Այսպիսով, ուրեմն, մեր ցանկությունը՝ հենց սկզբից վորոշել, թե ինչ է կուսակցությունը, ավելի քան զուր ժամավաճառություն չէ։

## «ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՌԻ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԻՆՈՐՈՇՈՒՄԸ.

Պարտիա (կուսակցություն) բառը ծագել է լատինական pars բառից, վոր նշանակում է «մաս»։ Ներկայումս մենք, մարքսիստներս ասում ենք, վոր կուսակցությունը մի վորոշ դասակարգի մասն է։ Բուրժուական աշխարհի ներկայացուցիչներն, իհարկե, այլ կերպ են մտածում։ Այսպես, որինակ, գերմանական հայտնի պահպանողական հրապարակախոս Շտայլը կուսակցությունները դասավորելով ըստ նրանց հեղափոխականության և ըստայնմ, թե հին հասարակակարգի նկատմամբ նրանք վորքան որինական էին, հանգում եր այն յեզրակացության, թե կուսակցությունների պայքարը, այդ այն պայքարն է, վոր գոյություն ունի մարդկային և աստվածային իրավունքների միջև, մարդկային քմահաճույքների ու անցողական պահանջների բավարարման համար ստեղծված հիմնարկությունների և աստվածային խորհրդով հաստատված մարմինների միջև, կարճ ասած, չարի և բարու միջև։ Իսկ վոչ պակաս հայտնի ցյուրիխցի քաղաքական գործիչ Ռոմերը փորձում է կուսակցության ընորոշման հիմք ընդունել հոգեբանությունը։ Մոտավորապես նա հետևյալն է ասում. «Մարդկային հասարակությունը ծնվում, զարգանում և մեռնում է։ Հետևապես նա լինում է յերիտասարդ կամ ծերացած։ Նրա հասակի համեմատ ել իշխում են այս կամ այն քաղաքական հայացքները։ Մանկության հասակում մարդուս մեջ իշխում են վոգու պասսիվ ուժերը, նրա մեջ զարգացած են յուրացնելու, ընդորինակելու կարողությունն ու կենդանի ֆանտազիան, սակայն բացակայում են ստեղծագործող ուժերը և բանական քննադատությունը. այս վիճակին ամենից շատ համապատասխանում է արմատականությունը (այստեղից —արմատական կուսակցությունները)։ Պատանեկական և հասուն հասակում առաջին տեղն են բռնում վոգու ստեղծագործող ուժերը և առողջ քննադատությունը. բացի դրանից, պատանեկական հասակում մեծ դեր է խաղում ստեղծագործության ձգտումը, իսկ հասուն հասակում՝ ձեռք բերածի պահպանման ձգտումը։ Նման դրությանը համապատասխանում են լիբերալիզմը (ազատամտությունը) և պահպանողականությունը։ (Ըստ այս թեորիայի այս դասլիճում գտնվող կոմունիստներից շատերը պետք է լինեին կամ լիբերալ և կամ պահպանողական)։ Վերջապես ծերության հասակում նորից գերակշռում են վոգու պասսիվ ուժերը՝ մարդ յերկյուղ է կրում այն բոլորից, ինչ նոր է, և կապված է հնի



հետ։ Այս վիճակին համապատասխանում է աբսոլյուտիզմը (միահեծանությունը)։ Այսպիսով, հասարակության մեջ միաժամանակ գոյություն ունեն յերիտասարդ, հասուն և ծառամյալ ելեմենտներ. և այդ կենսակցության համեմատ ել մենք տեսնում ենք նրա մեջ արմատական, լիբերալ, պահպանողական և աբսոլյուտիստական կուսակցություններ, ըստվորում գերակշռում են այնպիսիները, վորոնք ավելի յեն համապատասխանում ժողովրդի տեմպերամենտին և վոգուն։ Բոլոր այս կուսակցությունների գոյությունն անխուսափելի յե. պետական կյանքը պետք է ընթանա նրանց հանդես բերած ուժերի համեմատ, և գիտակից քաղաքագետը, նույնիսկ պայքարելով նրանց դեմ, յերբեք չպետք է ձգտի նրանցից վորևե մեկի կատարյալ վոչնչացման, քանի վոր այդ նպատակն անիրագործելի յե, իսկ նրա իրագործումը կարող է միայն հիվանդությունը որգանիզմի ներսը մղել։ Այս կամ այն անհատի վորևե կուսակցության պատկանելը վորոշվում է գլխավորապես նրա տեմպերամենտով. այսպես՝ Ալկիբիադեսն իր ամբողջ կյանքում յերեխա յեր, Պերիկլեսը մինչև իր գերեզմանը պատանի մնաց, Սցիպիոնը տղամարդ եր, իսկ Ոգոստոսը ծեր եր ծնվել։ Այսպես ժողովուրդներն ել են տարբերվում իրենց բնավորությամբ. գերմանացիներն ըստ իրենց խառնվածքի պահպանողական են, իսկ ըստ մտածելակերպի՝ լիբերալ, ռուսներն արմատականներ են, սակայն հակված են դեպի աբսոլյուտիզմ»։ (Այս բոլորը գրվել է, իհարկե, մինչև 1917 թիվը)։

## ԻՆՉՈՒ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՏԱԼԻՍ «ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԲԱՌԻ ՃԻՇՏ ԻՆՈՐՈՇՈՒՄԸ.

Այսպիսով տեսնում եք, վոր բուրժուական գիտությունը տարբեր ձևով է ընորոշում «կուսակցություն» բառը։ Յեվ նրա ներկայացուցիչներից շատ քչերն են համարձակվում հարցին ուղղակի պատասխանել և ասել, վոր կուսակցությունն այս կամ այն դասակարգի մարտական կազմակերպությունն է։ Այս հասարակ ճշմարտությունը, վոր մեզ համար միանգամայն պարզ է, բուրժուական գիտնականները չեն ուզում և չեն ել կարող ընդունել հենց այն իսկ պատճառով, ինչ պատճառով վոր նրանք խուսափում են պարլամենտարիզմի և յեկեղեցու եյությունն իրենց անունով կոչելուց։ Բուրժուական հասարակարգն իր իսկ բնույթի պատճառով ստիպված է մի շարք հիմնարկություններ, վորոնք ստեղծված են պրոլետարիատի դասակարգային հալածանքի համար, պատկերացնել վորպես դասակարգային ներդաշնակության ու հաշտության որգաններ։ Նա ստիպված է այդ բոլորը հրամցնել հասարակական կարծիքին, և նույնիսկ իրեն, հենց միայն այդ ձևով, և վոչ վորպես դասակարգային պայքարի որգաններ։

Ինդիրն ավելի ևս պարզելու համար յես կբերեմ «կուսակցություն» բառի այն բնորոշումը, որ տվել է կիսակադետ-կիսանարոդնիկ, համեմատաբար անվնաս ռուս հրապարակախոսներից մեկը, որոշ հրապարակախոսական ծառայություններ մատուցած Վադավոզովը։ «Կուսակցություն» հասկացողության նվիրված հատուկ աշխատության մեջ նա գրում է. «Ի՞նչ է կուսակցությունը։ Այս բառի տակ հասկանում են մարդկանց որոշ խմբեր, որ ձգտում են միևնույն քաղաքական ռեֆորմների, ունեն ընդհանուր քաղաքական իդեալներ և կազմակերպված են նրանց պաշտպանության կամ նրանց իրագործման համար պայքարելու նպատակով»։ Այս բնորոշումը միամիտ և նույնիսկ ճշմարտության մոտ է թվում։ Սակայն, իրոք, հեղինակը գիտակցորեն և մեծ խնամքով խուսափում է «դասակարգ» և «դասակարգային պայքար» բառերից։ Նրա կարծիքով կուսակցությունը պարզապես որոշ «իդեալի» համակրող կազմակերպություն է։ Այլ կերպ ասած՝ այս բնորոշման մեջ բացակայում է ամենանշանակը—նա զուրկ է արյունից և վոսկրից, առաստում է սակավախոսությամբ և չունի որևէ ռեալ բովանդակություն։

## ՄԻԼՅՈՒԿՈՎԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ.

Վերցնենք ավելի թարմ օրինակ՝ Միլյուկովի բնորոշումը։ Դուք կտեսնեք, որ նրա բնորոշումը ևս թելադրված է դասակարգային որոշ շահախնդրությամբ։ Բոլորս էլ գիտենք, որ կադետական կուսակցությունը, որի ղեկավարն էր Միլյուկովը, իրեն անվանում էր «ազատդասակարգային»։ Այս հողի վրա մենք նրա (կադետական կուսակցության) դեմ պայքարում էինք՝ ապացուցելով, որ ազատդասակարգային կուսակցություններ գոյություն չեն ունեցել, և որ կադետական կուսակցությունը դասակարգային է, քանի որ նա ներկայացնում է կալվածատերերի, բուրժուազիայի որոշ դասակարգ։ Ցեվ ահա, յեթե դուք մի հետաքրքիր հայացք ձգեք, կհասկանաք, թե ինչու Միլյուկովը ներկա դեպքում հանդես է գալիս միաժամանակ թե որպես բուրժուական գիտնական և թե որպես մարտական քաղաքագետ։ Որպեսզի իր կուսակցության դասակարգային, կալվածատիրական էությունը պարզ չլիներ ժողովրդի համար, կադետները չէին կարող բացահայտ կերպով ասել մասսաներին, որ նրանք պաշտպանում են կալվածատերերի և բուրժուազիայի վերին շերտերի՝ ազգարնակության մի փոքրիկ ունևոր խմբակի շահերը։ Որպես մարտական քաղաքագետ, նա զգում և հասկանում էր, որ յուրաքանչյուր ժողովրդական հավաքույթում նա պետք է իր կուսակցությունը քողի տակ պահի, նրան բեմ հանի, որպես մի գեղեցիկ կնոջ, խնամքով թագցնելով նրա դիմագծերը։ Ցեվ այդ



գործում մարտական քաղաքագետ Միլյուկովին մեծ յեռանդով ոգնում էր գիտության սյուն՝ պրոֆեսոր Միլյուկովը, որ իր բուրժուական գիտնականության ուժով ապացուցում էր, որ կուսակցության համար յերբեք պարտադիր չէ դասակարգային լինել, և որ այդ որոշ «իդեալներ» ունեցող համախոհների մի խումբ է՝ անկախ նրանից, թե բնակչության որ խավի հետ են նրանք կապված։ Այս որինակը ձեզ պարզ ցույց է տալիս, թե որքան հեշտ է Վադավոզովի ակադեմիկ բնորոշումից ըղխեցնել Միլյուկովի միանգամայն կոնկրետ մարտական բուրժուական քաղաքականությունը։ Վերջնիս համար Վադավոզովի ֆորմուլան շատ ձեռնտու յեր, որովհետև նա հեշտությամբ կարող էր այդ ֆորմուլայով բնորոշել իր կադետական կուսակցությունը և, այսպիսով, կուսակցության ազատդասակարգային յարլիկի ոգնությամբ մաքսանենգաբար անցկացնել դասակարգային կուսակցությունը։

## ԵՍԵՐՆԵՐԻ ՖՈՐՄՈՒԼԱՆ.

Վերցնենք մեր ավելի մոտիկ հարևաններին՝ եսերներին։ Դուք գիտեք, որ նրանք իրենց կուսակցությունն անվանում էին յեթե վոչ ազատդասակարգային, գոնե միջդասակարգային։ Այս բնորոշումը բղխում էր նրանց ծրագրից։ Ցեվ իրոք, ըստ եսերների կլասսիկ ֆորմուլայի նրանք ներկայացնում են նախ՝ պրոլետարիատին, յերկրորդ գյուղացիությանը և յերրորդ՝ ինտելիգենցիային, այսինքն՝ միաժամանակ յերեք խոշոր հասարակական շերտերը։ Այդ պատճառով մարքսիստների և եսերների միջև ծագած առաջին իսկ թեորիական կռիվները պատում էին մեր այն տեսակետի շուրջը, թե միջդասակարգային կուսակցություններ չեն կարող լինել։ Յուրաքանչյուր կուսակցություն կապված է որոշ դասակարգի հետ և այդ պատճառով պետք է պաշտպանի վորոշ շահեր։ Մենք մեր բախտը կապել ենք,—ասում էին,—պրոլետարիատի հետ։ Այդ դեռևս չի նշանակում, որ թշնամական դիրք կբռնենք գեպի գյուղացիությունը, մանավանդ առավելապես գյուղացիական մի յերկրում։ Այսպիսի մի յերկրում պրոլետարիատի անելիքը պիտի լինի որոշ կոոպերացիա, համագործակցություն ստեղծել քանակով հսկայական՝ յերկրորդ դասակարգի հետ։ Մենք դուրս ենք յեկել պրոլետարիատի միջից։ Մենք Ցրա կուսակցությունն ենք։ Սակայն, պրոլետարիատի կուսակցություն լինելով, մենք, այնուամենայնիվ, կըղեկավարենք նաև գյուղացիության պայքարը, քանի որ մենք ունենք շատ ընդհանուր շահեր։

Վերջին տարիների դեպքերից հետո եսերական կուսակցության պրակտիկան բավականաչափ հայտնի յեր, և միայն այժմ միանգամայն պարզ յերևում է, թե ինչու նրանք այդպես պաշտպանում էին

«կուսակցություն» հասկացողության այն բնորոշումը, որը նրանք տալիս էին, օրինակ, 1900-ական թվականներին, երբ նրանց կուսակցությունը դեռ նոր էր։ Այն շրջանի շատ յերիտասարդ հեղափոխականներին թվում էր, թե Պլեխանովը, որն այդ ժամանակ մեր կուսակցության ընդհանուր հեղինակություն վայելող առաջնորդն էր, շատ մեծ կարևորություն էր տալիս այդ վեճին. թվում էր, թե նա բծախնդիր էր եսերների նկատմամբ, թվում էր, թե նրա մղած պայքարն իսկապես անտեղի յեր։ Շատերն այն ժամանակ յենթադրում էին, որ Պլեխանովի բանավեճը Չերնովի հետ զուտ ակադեմիական էր, իսկ վոմանք մեղադրում էին նրանց նրա համար, որ փոխանակ միահամուռ շարքերով միապետության դեմ պայքարելու, նրանք կռիվ են սկսել «կուսակցություն և դասակարգ» հասկացողությունների շուրջը։ Սակայն դուք տեսնում եք այժմ, որ այդ վոչ թե ակադեմիական, այլ քաղաքական, և այն ել շատ կարևոր, վեճ էր։

Ահա թե ինչու անհրաժեշտ է, որ մենք նախ և առաջ պայմանավորվենք, թե ինչ պիտի հասկանանք «կուսակցություն» բառի տակ, և այդ հասկացողությանը պարզ և ճիշտ բովանդակություն տանք։ Այդ բառի տակ մենք հասկանում ենք քաղաքական մի կազմակերպություն, որը որևե դասակարգի մի մասն է կազմում։ Ուրիշ խոսքով ասած՝ կուսակցությունները լինում են պրոլետարական և բուրժուական։ Մեզ համար կուսակցությունը վոչ թե համախոհ մարդկանց մի խմբակ է, կամ այնպիսի մարդկանց մի համախմբում, որոնք ունեն ընդհանուր իդեոլոգիա և, անկախ այս կամ այն դասակարգի հետ ունեցած կապից, կարող են այդ իդեոլոգիան քարոզել, որտեղ ցանկանան։ Մեզ համար, կրկնում եմ, կուսակցությունը որոշ դասակարգի մասն է, որ դուրս է յեկել նրա խորքերից, իր բախտը կապել է նրա հետ։ Յեվ այն հանգամանքը, թե ինչ դասակարգից է դուրս յեկել տվյալ կուսակցությունը, թողնում է նրա վրա իր անջնջելի կնիքը, բնորոշում է նրա ամբողջ հետագա կյանքը և տվյալ պետության համար նրա խաղացած դերը։

## ԴԱՍԱԿԱՐԳ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ.

Ներկայումս գործ ենք ածում «բանվոր դասակարգ» և «դասակարգ» բառերը, որպես բոլորիս համար պարզ, հասկանալի և անվիճելի բառեր։ Մեզ համար «դասակարգ» հասկացողությունը միս և արյուն է դարձել, մտել մեր առորյա կյանքի մեջ. մենք տեսել ենք այդ յերկու դասակարգը հեղափոխության ժամանակ գործելիս և լավ ենք ուսումնասիրել նրան. մեզ համար այս մի տարբրական, հիմնական հասկացողություն է։ Սակայն առաջ այդ այդպես չեր։ Իմ շարադրանքից



դուք կտեսնեք, որ մարքսիստների և նարոդնիկների միջև յեղած պայքարը, գոնե նրա սկզբնական շրջանում, պարփակվում էր «դասակարգ» կամ, ինչպես այն ժամանակ էին արտահայտվում, պարզապես «ժողովուրդ» ֆորմուլայի մեջ։ Կար ժամանակ, յերբ ռուսական սոցիալիզմի մեջ ամբողջ պայքարը հետևյալ հարցերի շուրջն էր պտտվում.— ինչ է դասակարգը, և պե՞տք է արդյոք հեղափոխականը նկատի ունենա որոշ դասակարգ, թե՞ պարտավոր է պաշտպանել ամբողջ «ժողովուրդը»։

Ինչպես ձեզ հայտնի յե, դասակարգային պայքարի թեորիան պատկանում է Մարքսին։ Այդ չի նշանակում, որ նա յե գտել դասակարգային պայքարը։ Այդ պայքարը թեորիա չե, այլ կենսական փաստ։ Սակայն Մարքսը այն ձևակերպել, ընդհանրացրել է և մեզ տվել է մարդկության ամբողջ պատմության, որպես տարբեր դասակարգերի պայքարի, պատկերացումը։ Յեվ մեր մարքսիստական կուսակցության հիմնադիրների ամբողջ պայքարն ընդդեմ հեղափոխականների առաջին սերնդի՝ նարոդնիկների հանգում էր վերջին հաշվով նրան, որ բացատրեն դասակարգային պայքարի թեորիան ռուսական փորձով և հասկացողություն տան այն մասին, թե ինչ է բանվոր դասակարգը Ռուսաստանում։ Ահա թե ինչու այն պարզ հասկացողությունը, որ մեր կուսակցությունը բանվոր դասակարգի մի մասն է, մի հասկացողություն, որ ներկայումս մեզանից յուրաքանչյուրի սեփականությունն է,—տասնյակ տարիների թեորիական և գործնական պայքարի գնով է ձեռք բերված։ Յեվ յեթե մենք ուզում ենք հասկանալ մեր կուսակցության պատմությունը, մենք պետք է նախ և առաջ պարզենք այս առաջին բաղխումը։

Վերջացնելով այս հարցի պարզաբանումը, պետք է ասեմ նաև հետևյալը։ Ինձ կարող են առարկել, որ հաճախ մի դասակարգ միքանի կուսակցություն է ունենում։ Այդ, իհարկե, ճիշտ է։ Բուրժուազիան, օրինակ, որպես ամբողջություն, իր շարքերում ունի միքանի կուսակցություններ՝ հանրապետականներ, դեմոկրատներ, արմատական-սոցիալիստներ, պարզապես արմատականներ, անկախ լիբերալներ, պահպանողականներ և այլն։

Արդյոք այդ փաստը չի՞ հակասում իմ տված բնորոշմանը—կհարցնեն ինձնից։ Կարծում եմ, որ վոչ։ Պետք է ինկատի ունենալ, որ հաճախ բուրժուական կուսակցություններն իրոք վոչ թե առանձին անկախ կուսակցություններ են, այլ միայն մեկ բուրժուական կուսակցության ֆրակցիաներ։

Այդ ֆրակցիաներն աքլորակռվի յեն բռնվում իրար հետ այս կամ այն մոմենտին, մանավանդ յերբ խնդիրը վերաբերում է ընտրություններին, և սովորաբար թղթի նիզակներ են ճոճում։ Հաճախ

Նրանց համար նույնիսկ ձեռնտու չէ ժողովրդին ցույց տալ, թե նրանց մեջ լուրջ տարաձայնություններ կան։ Իսկ փաստորեն, այն հիմնական հարցերի նկատմամբ, որոնք միլիոններ են համախմբում, նրանց մեջ գոյություն ունի կատարյալ համերաշխություն։ Նրանք վիճում են միայն յերկրորդական հարցերի մասին, իսկ հիմնական հարցերի նկատմամբ, որոնց համար պայքարում են բարբիկադների վրա, հեղափոխություններ են անում, տառապում են սովից և քաղաքացիական պատերազմներից,—այս բոլոր հարցերի, և առաջին հերթին մասնավոր սեփականության հարցի նկատմամբ, բոլոր բուրժուական կուսակցությունները համերաշխ են։ Վերջին հաշվով ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ գլխավոր հարցերի վերաբերմամբ գոյություն ունի միայն մեկ մեծ բուրժուական կուսակցություն. այդ սարկաստերների և մասնավոր սեփականության կողմնակիցների կուսակցությունն է։

Մեր ասածն ապացուցելու համար շատ օրինակներ կան պատմության մեջ։ Իր ժամանակին Ամերիկայում հյուսիսային և հարավային նահանգները կռվեցին իրար հետ սարկաստիրության հարցի առիթով ծագած տարաձայնությունների պատճառով։ Սակայն այդ չխանգարեց յերիտասարդ բուրժուական յերկրին, որը դեռ նոր էր ձևավորվում, կարճ ժամանակից հետո ամբողջ աշխարհի առաջ հանդես գալ որպես ամուր բուրժուական պետություն, որ ամուր պաշտպանում է մասնավոր սեփականության սկզբունքը և բոլորովին չի բացառում ներկայիս կապիտալիստական սարկաստիրությունը։ Ընդհանրապես բուրժուական կուսակցությունների այդպիսի շատ ընդհարումներ կարելի յե հիշատակել, սակայն նրանք միայն հաստատումն են մեր այն յենթադրությունը, թե կուսակցությունը որոշ դասակարգի մի մասն է կազմում։

Ապա մի այլ հանգամանքի վրա յեմ դարձնում ձեր ուշադրությունը։ Չպետք է կարծել, որ յուրաքանչյուր դասակարգ միանգամից, այսպես ասած՝ մեքենայորեն առաջ է քաշում արդեն պատրաստի կուսակցություն, որը համապատասխանում է նրա շահերին։ Սխալ է կարծել, թե այդ բոլորն այնքան էլ հասարակ ձևով է տեղի ունենում. № 1 դասակարգ և № 1 կուսակցություն, № 2 դասակարգ և № 2 կուսակցություն։ Հասարակական կյանքի և պայքարի մեջ այս ամենը շատ ավելի բարդ ձևով է կատարվում։ Առանձին մարդկանց հատուկ է սխալվել։ Նրանց յերբեմն թվում է, որ նրանք հոգով և մարմնով պատկանում են այս կամ այն դասակարգին, իսկ յերբ հասնում է վճռական մոմենտը, փորձը ցույց է տալիս, որ նրանք իրենց ամբողջ էությամբ այլ դասակարգի յեն պատկանում, նրանք զարտուղի ճանապարհով են գնում։ Իրենց զարգացման այս կամ այն շրջանում նրանք առաջ ենքաշում որոշ ծրագրներ։ Ժամանակի ընթացքում



և դասակարգային պայքարի փոթորիկների ազդեցության տակ, մեծ դեպքերի մրրիկների մեջ, որոնք կյանքի յեն կոչում տվյալ դասակարգի նոր ստորին շերտերը և սուր կերպով նոր հարցեր են հարուցանում, այդ մարդկանց մեջ տեղի յեն ունենում նոր խմբավորումներ, նոր տեղափոխություններ և նոր բողբոջումներ։ Յեվ միայն յերկար ժամանակ անցնելուց հետո, վճռական տարիներին ուժգին թափով հարուցվում են արմատական հարցեր, վերջիվերջո ստեղծվում են (այն էլ միայն մոտավորապես) այն բաժանումները, որոնք իրոք համապատասխանում են տվյալ դասակարգին։ Ահա թե ինչու, յեթե դուք մոտենաք այդ հարցին շատ սքեմատիկ կերպով, շատ պարզ և հասարակ ձևով, ապա դուք կարծես թե ձեր ճանապարհին բազմաթիվ հակասությունների կհանդիպեք։ Մեր կյանքի այս հիմնական հարցին պետք է մոտենալ դիտակցորեն, ինչպես վայել է մարքսիստին, այսինքն՝ նախորոք հրաժարվելով հասարակական յերևույթների մեքենայորեն մերձենալու յեղանակից։ Պետք է հասկանալ, որ կուսակցությունը չի ծնվում մի դիշերվա մեջ, որ նա կազմվում է տարիների ընթացքում, որ նրա շարքերում տեղի յեն ունենում որոշ սոցիալական խմբավորումներ, և որ առանձին խմբեր կամ անհատներ յերբեմն պատահական կերպով են ընկնում այս կամ այն կուսակցության մեջ, ապա հեռանում են նրանից, և ուրիշներն են գալիս նրանց տեղը։ Յեվ միայն պայքարի պրոցեսում, յերբ մեր աչքի առաջ անցնում է յերկվույթների այս կամ այն չափով վերջավորված ցիկլը, կարելի յե ասել, որ տվյալ կուսակցությունը միանգամայն համապատասխանում է տվյալ դասակարգին։

Ամբողջ վերևում ասվածը պատասխան է տալիս նաև այն հարցին, թե ինչ փոխհարաբերության մեջ են գտնվում Կոմունիստական, բոլշևիկյան կուսակցությունը և բանվոր դասակարգը։ Մեզ կարող են հարցնել. յեթե կուսակցությունը դասակարգի մի մասն է կազմում, յեթե մեր կուսակցությունը բանվոր դասակարգի մի մասն է, նրա ներկայացուցչությունը, ավանգարդը և ղեկավարը, ապա ինչպես պատահեց, որ գոյություն ունեն նաև ուրիշ բանվորական կուսակցություններ։ Ի՞նչպես պատահեց, որ գոյություն ունի մենշևիկների կուսակցությունը, որն իրեն բանվորական է անվանում, և եսերների կուսակցությունը, որը նույնպես հայտարարում է, թե ինքը պաշտպանում է բանվոր դասակարգին։ Իսկ միջազգային մասշտաբով ասած, գոյություն ունեն նաև սոցիալ-դեմոկրատիա և II Ինտերնացիոնալը, որը կապված է բանվոր դասակարգի հետ։ Արդյոք այս ամենը չի՞ հակասում մեր բնորոշմանը։

Այս հարցը ևս ակադեմիական չէ, որովհետև նա մեզ բոլորովին մոտեցնում է խնդրի էությանը։ Այն, ինչ յես ասացի բուրժուա-

կան կուսակցությունների մասին, մեծ մասամբ վերաբերում է նաև բանվորական կուսակցություններին։ Վոչ բանվոր դասակարգը, վոչ էլ բանվորական կուսակցությունը միանգամից չեն ծնվում։ Բանվոր դասակարգը կազմվում է տասնյակ տարիներում, աստիճանաբար. գյուղական ազգաբնակությունը լցվում էր քաղաքները, նրա մի մասը վերադառնում էր, մի մասն այնտեղ էր մնում, յեփվում էր գործարանային քաղաքների կաթսաներում, ստեղծելով բանվոր դասակարգը՝ իրեն հատուկ հոգեբանությամբ։ Նման ձևով տարիների և տասնամյակների ընթացքում կազմվում էր նաև բանվոր դասակարգի կուսակցությունը։ Վորոշ խմբեր կարծում էին սուբյեկտիվորեն, վոր նրանք պաշտպանում են բանվորներին, ինչպես, որինակ, մենշևիկներն առաջին հեղափոխության ժամանակ։ Ցեվ միայն աստիճանաբար, յերբ պատմությունը հերթի դրեց այն հարցերը, վորոնք յես փորձեցի ձեր առաջ ուրվագծել, այն արմատական հարցերը, վորոնք մարդկանց իրարից բաժանում են՝ բարեկամներին թշնամիներ դարձնելով, վորոնք բարիկադների տարբեր կողմերում են կանգնեցնում նրանց և առաջացնում են քաղաքացիական պատերազմ,—այն ժամանակ միայն սկսվեցին շերտավորումներ, առաջացան բողբոջումներ, պառակտումներ և միավորումներ, այն ժամանակ միայն վերջապես կազմակերպվեց վորոշ կուսակցություն։ Ցեվ այս պրոցեսսը, վոր սերտորեն կապված է մարդկանց կյանքի հետ, ամբողջապես կվերջանա միայն սոցիալիզմի վերջնական հաղթանակի մոմենտին, այսինքն՝ յերբ կոչնչանան դասակարգերը և կուսակցությունները։ Այդ քիմիական պրոցեսս չէ, վոր կարելի լիներ անթի մեջ դիտել մինչև նրա վերջանալը։ Պետք է սովորել հասարակական յերևույթներն ընդհանրացնել, պետք է ավելի խոր վերլուծել դեպքերն ու փաստերը, վորոնց ազդեցությունը տարածվում է միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր մարդկանց վրա։

Ներկայումս II Ինտերնացիոնալը դեռևս խոշոր կապեր ունի բանվորական միջավայրում, այնինչ մեզ համար պարզ է, վոր իրոք նա վոչ այլ ինչ է, յեթե վոչ բուրժուազիայի մի ֆրակցիա, նրա ձախթևը։ Շատ աղնիվ բանվորներ II Ինտերնացիոնալի անդամներ են։ Մեղանում միքանի բանվորական կուսակցություններ կան, մինչդեռ գոյություն ունի միայն մեկ բանվոր դասակարգ։ Միաժամանակ անհրաժեշտ է հիշատակել, վոր յեթե կան միքանի բանվորական կուսակցություններ, ապա պրոլետարական կուսակցությունը միայն մեկն է։ Կուսակցությունն իր կազմով կարող է լինել բանվորական, սակայն իր ուղղությամբ, ծրագրով և քաղաքականությամբ պրոլետարական չլինել։ Այդ պարզ յերևում է Ցեվրոպայի և Ամերիկայի կապիտալիստական յերկրների որինակից, վորտեղ բանվորական կուսակցությունները միքանի ահատ են, իսկ պրոլետարականը մի հատ. այդ՝ կոմունիստական է։



Այնտեղ գոյություն ունեն վոչ միայն սոցիալ-դեմոկրատական կուսակցություններ, այլ և կաթոլիկական, այսինքն տերտերական արհմիություններ և այլ տեսակի միավորումներ։ Նրանք բոլորն էլ բանվոր դասակարգի մի մասն են կազմում, սակայն վոչ ամենաառաջավորը. նրանց անդամները բանվորներն են, սակայն ըստ իրենց քաղաքականության նրանք լոկ բուրժուական կուսակցության ֆրակցիան են հանդիսանում։

## ՀՈՌԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ.

Բոլոր վերևում ասածները անհրաժեշտ են մեր կուսակցության պատմության նկատմամբ գիտակցական վերաբերմունք ունենալու համար։ Նրա սկզբնավորումը, նրա ձևակերպման պրոցեսսը, յեթե գործածելու լինենք փիլիսոփայական տերմինը, նրա ամբողջ նախապատմությունը, նրա առաջին գլուխները, վոր յերկար տարիներ են զբաղեցրել,—այս բոլորը վոչ այլ ինչ է, յեթե վոչ բանվորական կուսակցության աստիճանական բյուրեղացում բանվոր դասակարգի ներսում։ Ցեվ այդ պատճառով, յերբ խոսում ենք մեր կուսակցության 25-ամյակի մասին, այդ պետք է հասկանալ պայմանական ձևով։ Դուք այդ կտեսնեք մի շարք որինակներից։

«Հյուսիսային-ռուսական բանվորական միությունը», վոր հիմնվել էր Պլեխանովի աջակցությամբ և գտնվում էր հյուսն Խալտուրինի և փականագործ Որնորսկու ղեկավարության ներքո, պետք է համարել բանվորական կուսակցության առաջին բջիջը։ Նա կազմակերպվեց 1877 թ. վերջերին (կարելի յե նույնիսկ ասել՝ 1878 թվին) Պետերբուրգում և առաջինը հարուցեց բանվոր դասակարգի քաղաքական պայքարի գաղափարը։ Այս կազմակերպությունը, իհարկե, դեռ մարքսիստ չէր։ 1878 թվից հետո անցել է 45 տարի. շատ պարզ է, իհարկե, վոր առանձին սխալ չէր լինի մեր կուսակցության ժամանակագրությունը հաշվել «Հյուսիսային-ռուսական բանվորական միության» կազմակերպման որից։

«Աշխատանքի ազատագրման խմբակը» հիմնվել է 1883 թվին։ Նա կազմվել է այն ժամանակ, յերբ հեղափոխականների մի վորոշ սերունդ Պլեխանովի և Ակսելրոդի գլխավորությամբ ազատվեց նարոդնիկյան հիվանդությունից, խզեց իր կապերը նարոդնիկության հետ և գիտակցեց, վոր անհրաժեշտ է կուսակցությունը կառուցել, բանվոր դասակարգի վրա հիմնվելով։ Այս խումբն առաջինը յեղավ, վոր 1884 թվին առաջադրեց սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագրի նախագիծը և այդ պատճառով՝ լինելով հեղափոխական շարժման պատմության մեջ առաջին մարքսիստական կազմակերպությունը՝

ամենայն իրավամբ կարող է համարվել մեր կուսակցության ժամանակագրության սկիզբը։ Այս դեպքում մենք կարող ենք ասել, որ տոնում ենք մեր կուսակցության 40-ամյակը։

Յերրորդ թվականը կարող ենք հաշվել մեր կուսակցության առաջին համագումարը, որ տեղի ունեցավ 1898 թ. մարտի 14-ին Մինսկ քաղաքում, և յեթե այդ սկիզբ համարենք, ապա մենք կարող ենք տոնել մեր 25-ամյա հոբելյանը։ Սակայն պետք է նկատել, որ այս թիվը պատահական է։ Այս համագումարը, համեմատաբար, հետք չթողեց։ Մինսկում ստեղծված կազմակերպությունները գրեթե համագումարից 24 ժամ հետո քայքայվել են, նրան մասնակցողները գրեթե բոլորն էլ ձերբակալվեցին, իսկ մեր կուսակցության կենտրոնական կոմիտեն, որ գրեթե ամբողջ կազմով ընկավ ժանդարմների ձեռքը, չկարողացավ իրագործել իր ծրագրի նույնիսկ մի հարյուրերորդ մասը։

Ապա գալիս է մեր յերկրորդ համագումարը, որը տեղի ունեցավ 1903 թվին՝ սկսվելով Բրյուսսելում և վերջանալով Լոնդոնում։ Ըստ եությեան հենց այս համագումարն էր առաջինը, և այս դեպքում մենք նույն իրավունքով կարող ենք ասել, որ տոնում ենք մեր կուսակցության 20-ամյակը։ Ապա 1905 թվին Լոնդոնում տեղի ունեցավ կուսակցության յերրորդ իսկական համագումարը, բայշևիկյան կուսակցության համագումարը, քանի որ մենշևիկները նրան չեկին մասնակցում։ (Այդ մեր պառակտման միջոցին էր)։ Այս համագումարը ևս կարելի է հաշվել առաջինը, որովհետև նա 1905 թ. առաջին հեղափոխության նախորյակին բայշևիկյան տակտիկայի հիմունքները մշակեց։ Այսպիսով, այս դեպքում մենք կարող եյինք տոնել մեր կուսակցության հիմնադրման 18-ամյակը։

Վերջապես մենք կարող եյինք ասել, որ մեր կուսակցության պատմությունը պետք է հաշվել մենշևիկներից իսպառ անջատվելու բոպեյից, որը տեղի ունեցավ 1912 թվին, յերբ մենք սկսեցինք վերականգնել մեր կուսակցությունը հակահեղափոխության յերկարատև շրջանից հետո, Լենայի գործադուլից և նրան հաջորդող իրադարձություններից հետո սկսած վերելքի հիման վրա։ Այդ Պրագայի համառուսական կոնֆերանսում էր, որտեղ նույնպես չկային մենշևիկներ, և որտեղ մենք ասացինք՝ հին կենտրոնական կոմիտեն այլևս գոյություն չունի, և մենք կուսակցությունը նորից ենք կառուցանում։ Ճիշտն ասած՝ հենց այդ ժամանակ էլ 1905 թվի պարտությունից և հակահեղափոխության շրջանից հետո դրվեց մեր կուսակցության հիմքը։

Այսպես շարունակելով՝ մենք կարող ենք ասել, որ մեր վերջնական անջատումը մենշևիկների հետ տեղի ունեցավ ոչ թե 1912, այլ 1917 թվին։ Յեվ այդ ճիշտ է, որովհետև փետրվարյան հեղափոխությունից հետո, ցարիզմի տապալումից հետո, հենց այս դահլիճում փորձ



արվեց սոցիալ-դեմոկրատիայի միացյալ համագումար հրավիրելու, որին հրավիրում եյին բոլորին, և ուր ընկ. Լենինը հանդես յեկավ խորհրդային իշխանության վերաբերյալ իր այն հռչակավոր թեզիսներով, որոնք մտան միջազգային սոցիալիզմի պատմության մեջ։ Մինչ այդ բոպեն բոլորն այն կարծիքին եյին, թե ցարիզմի տապալումից հետո կհաջողվի սոցիալ-դեմոկրատիան միավորել, և որ բայշևիկները կմիանան մենշևիկների հետ։

Յեվ ի վերջո կարելի է ասել, որ միայն մեր 7-րդ համագումարում, 1918 թվին, Բրեստի հաշտությունից հետո, յերբ մենք որոշեցինք վերանվանել կուսակցությունը և կոչել այն Ռուսաստանի Կոմունիստական կուսակցություն, միայն այն ժամանակ նա վերջնականապես կազմակերպվեց։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊՐՈՑԵՍՍԸ.

Յես դիտավորյալ կերպով մեջբերեցի մի շարք թվականներ, ցանկանալով ցույց տալ, որ կարևորը ձևական, յերկրորդական հարցը չէ՝ 20 թե 25 տարի, այլ այն փաստը, թե ինչպես է կենդանի իրականության մեջ կազմվում կուսակցությունը։ Իսկ այդ յերբեք այնպես չէ կատարվում, որ կարծես մի գեղեցիկ որ հավաքվում են, ինչպես Վադավոդովն է արտահայտվում, որոշ «գաղափարների» կողմնակիցները և միմյանց ասում. «Ապա, յեկ կուսակցություն կազմենք»։ Վոչ, կուսակցությունն այնքան էլ հեշտ չի կազմվում։ Նա մի կենդանի օրգանիզմ է, որ միլիոնավոր թելերով կապված է այն դասակարգի հետ, որից նա ծնունդ է առնում։ Կուսակցությունը կազմվում է տարիների, նույնիսկ տասնամյակների ընթացքում։ Յեթե, օրինակ, հաշվելու լինենք Թալաուրինի ստեղծած «Հյուսիս.-ռուսական բանվորական միության» մոմենտից, կստացվի 45 տարի, յեթե հաշվենք մեր կուսակցության «Կոմմունիստական» կոչվելու օրից, կստացվի 5 տարի, յեթե հաշվենք մեր կուսակցության առաջին համագումարից, կստացվի 25 տարի, և վերջապես՝ յեթե վերցնելու լինենք «Աշխատանքի ազատագրման խմբակ»-ի սկզբնավորման մոմենտը, կլինի 10 տարի։ Այստեղից յերևում է, որ կուսակցության կենդանի, դիալեկտիկ կազմակերպումը մի շատ բարդ, յերկարատև և դժվարին պրոցես է։ Նա ծնվում է ծանր յերկունքով, պայքարի հնոցում յենթարկվում է անվերջ բողոքումների, խմբավորումների, պառակտման և փորձությունների, մինչև որ վերջնականապես կազմակերպվում է որպես պրոլետարիատի, որպես միացյալ դասակարգի կուսակցություն։ Յեվ բացի սրանից, այդ վերջնականությունը յես արդեն արեցի,—պետք է ասել, որ նույնիսկ այդ ժամանակ պրոցեսը դեռևս վերջնականապես ա-

վարված չի. միքանի խմբերի հեռանալը, մյուսների մտնելը շարունակվում է դեռևս յերկար ժամանակ։ Այս բոլորը պարզ յերևում է և մեր կուսակցության վիճակից։ Ավելի մոտիկից նայելով մեր կուսակցության այժմյան սոցիալական կազմին, դուք կտեսնեք, վոր նույնիսկ նրա ներկա շրջանակներում, յերբ նա կարողացել է 45 տարվա ընթացքում վերջնականապես ձևակերպվել, այնուամենայնիվ տեղի յեն ունենում վորոշ տեղափոխություններ և նրա ելեմենտների անվերջ թարմացում, վերանորոգում. դուք կտեսնեք, թե ինչպես հեղափոխությունից հետո դյուղացիների թիվը նրա մեջ ավելանում է հսկայական արագությամբ, և ինչպես հետագայում նրանց տեսակարար կշիռը փոքրանում է. դուք կտեսնեք, թե ինչպես նորից աճում է քաղաքային պրոլետարիատի թիվը, և ինչպես ինտելլիգենցիան սկզբում մտնում է նրա մեջ ամբողջ խմբերով, իսկ հետո ստվար մասերով սկսում է հեռանալ։ Ահա թե ինչու այդ շարժման առանձնահատկությունների մեջ խորանալով միայն՝ կուսակցությունը վորպես դիալեկտիկ հասկացողություն քննելով միայն, նրան մասսաների՝ տարիներ ու տասնամյակներ տևող կենդանի պայքարի հետ բաղդատելով միայն կարելի յե հասկանալ կուսակցությունն այնպես, ինչպես հարկն է։

## ՆԱՐՈՂՆԻԿՈՒԹՅՈՒՆ.

Յես արդեն ասացի, վոր ռուսական հեղափոխական շարժման պատմության առաջին շրջանն ամբողջովին լիքն է մարքսիզմի պայքարով ընդդեմ նարոդնիկության—մի շարժման, վոր իր մի մասով անշուշտ հեղափոխական եր և առանձնապես ծաղկյալ վիճակի յեր հասել 70-ական թվականներին։ Նարոդնիկությունը շատ փառավոր եջեր է մտցրել մեր պայքարի պատմության մեջ և տվել է անձնական արիության մի շարք անմոռանալի որինակներ։ Առանձին նարոդնիկների հերոսությունը, վորոնք թողնելով իրենց ընտանիքը, իրենց դասակարգը, իրենց դասակարգային առանձնաշնորհումները, ինչպես այն ժամանակ եյին ասում, դեպի ժողովուրդն եյին գնում,—այդ հերոսությունն ապշեցուցիչ է, և մենք նրա առաջ խոնարհվում ենք։ Բայց և այնպես նարոդնիկությունն ընդհանրապես պրոլետարական շարժում չեր։ Յեթե այն ժամանակ ասում եյին՝ «Պետք է դեպի ժողովուրդը գնալ», ապա այդ դարձվածքը պատահական կերպով չեյին գործածում։ Այն ժամանակվա Ռուսաստանի համար «դասակարգ» հասկացողությունը գոյություն չուներ, և այն շրջանի հեղափոխականներին ծանոթ եր միայն «ժողովուրդ» հասկացողությունը։ Մենք բոլորս, իհարկե, ժողովրդի պաշտպաններ ենք, և ինքնըստինքյան պարզ է, վոր այս բացի լավից, վոչ մի վատ բան չեր պարունակում։ Սակայն յեթե մոտենանք նրան գիտական



քննադատման տեսակետից, մենք կտեսնենք, վոր այն ժամանակներում այս բառի մեջ դիտավորյալ կերպով մտցնում եյին աղոտ հասկացողություն։ «Ժողովուրդ» ասելով այն ժամանակներում մեծ մասամբ գյուղացիությունն եյին հասկանում, վորովհետև բանվոր դասակարգը, վորպես այդպիսին, այն ժամանակ դեռևս գոյություն չուներ, նա դեռ նոր եր ստեղծվորվում։ Այդ պատճառով նարոդնիկական շարժումը թեպետև հեղափոխական եր, այնուամենայնիվ նա մանր-բուրժուական եր։ Սրանից չպետք է հետևցնել, իհարկե, թե մենք հրաժարվում ենք այդ ժառանգությունից և չենք ուզում տեսնել նարոդնիկական շրջանի հեղափոխականների ցուցահանած հերոսության և զարմանալի արիության որինակները։

## ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.

Հիշեցեք, թե ինչպես ենք վերաբերվում մենք, որինակ, 1789 թվի ֆրանսիական Մեծ հեղափոխության բուրժուական խոշոր հեղափոխականներին, յերբ բանվոր դասակարգը նույնպես դեռևս սաղմային վիճակի մեջ եր գտնվում։ Մենք մեծ հարգանքով ենք վերաբերվում նրանց, մանավանդ այնպիսիներին, վորոնք ապացուցեցին իրենց արտասովոր անձնվիրությունը դեպի իրենց ժողովուրդը։ Մենք ուսումնասիրում ենք ֆրանսիական մեծ հեղափոխության պատմությունը, մենք հորդորում ենք մեր յերիտասարդությանը որինակ վերցնել այն ժամանակվա մատերիալիստներից։ Յեվ, իդեպ ասած, յուրաքանչյուր վոք, վոր հետաքրքրվում է փիլիսոփայությամբ, շատ ավելի բան կարող է սովորել բուրժուական հեղափոխության շրջանի ամեն մի մատերիալիստից, քան թե նորածին «մարքսիստ» ռեվիզիոնիստներից։ Այս իսկ պատճառով, մեր կուսակցությունն անպայման անհրաժեշտ է համարում նախ և առաջ մատերիալիզմի կլասսիկների վերահրատարակումը, վորովհետև մեղանից յուրաքանչյուրը նրանցից շատ ավելի մեծ ոգուտ կքաղի, քան թե մեզ հրամցվող վաղահաս «թեորիաներից», վորոնք արտաքուստ յերբեմն բարյացակամ են յերևում, սակայն վոչ մի առընչություն չունեն մարքսիզմի հետ։ Կրկնում եմ, մենք մեր յերիտասարդությանը խորին հարգանք ենք ներշնչում դեպի ֆրանսիական Մեծ հեղափոխության ականավոր ներկայացուցիչները։ Մենք հասկանում ենք նրա դասակարգային եությունը։ Մենք գիտենք, վոր նա գլխատեց միապետին, սակայն մենք հիշում ենք և այն, վոր նա բանվորական միավորումների դեմ որենք հրատարակեց։ Միաժամանակ բուրժուական մեծ հեղափոխականների կաճառը մարդկության հարվածային զորությունն եր. նա առաջինը խորտակեց ֆեոդալիզմի ճակատը

և դրանով իսկ ներկայումս ծավալվող պրոլետարական հեղափոխությունների գարնանային ջրերի համար ազատ ճանապարհ բացեց։ Այդ չի խանգարում, որ ֆրանսիական մեծ հեղափոխականների հետևորդներն անարգ մարդուկներ են, կապիտալի գործակալներ բառիս ամենալայն իմաստով։ Յեվ Մարատի, նույնիսկ Ռոբեսպյերի և նրանց ներկայիս հետևորդների՝ Պուանկարեյի, Բրիանի և Վիվիանիի մեջ յեղած տարբերությունը մենք լավ հասկանում ենք։ Մեզ հայտնի յե, որ հեղափոխական բուրժուազիայի այն շրջանի ներկայացուցիչները, որոնք գործում եյին ֆեոդալական ճնշման պայմաններում, ճորտատիրության պատվարն եյին խորտակում, մինչդեռ բուրժուազիայի այժմյան ներկայացուցիչները, որոնք, ինչպես Պուանկարեն և նրա համախոհները, մեծ սիրով իրենց վրա յեն առնում ֆրանսիական Մեծ հեղափոխության ժառանգների ծիրանին, իրականության մեջ լոկ վորպես անարգ դենք են բուրժուական ռեակցիայի ձեռքին։ Մենք գիտենք նրանց մեջ յեղած տարբերությունը։ Նույնն է և մեր վերաբերմունքը դեպի նարոդնիկությունը։

## ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅՈՒՆԸ.

Մենք գիտենք գնահատել Ժելյաբովին, Սոֆիա Պերովսկայային և բոլոր նրանց, ովքեր Ռուսաստանի վոտներից ծանր քարի նման կախված ցարիզմի որերին, յերբ յերկիրը տնքում եր անլուր բարբարոսության լծի տակ, կարողացան դենք բարձրացնել ընդդեմ միապետության, հեղափոխականների առաջին խմբերը կռվի դուրս բերել և հաստատ քայլերով դեպի կախաղան գնալ։ Վորքան եվ այդ դեպի ժողովուրդ գնալը պրոլետարական շարժում չեր, վորքան եվ այդ ազատ սոցիալիստական գույներով ներկված մի հեղափոխական շարժում եր,—թեև այդպես եր,—սակայն և այնպես այդ մի մեծ շարժում եր, այնպիսի մի շարժում, ինչպիսին եր ֆրանսիական Մեծ հեղափոխության սկիզբը։ Այդ նարոդնիկները ցարիզմի պատնեշը, միապետության ամրությունները եյին քանդում։ Նրանք հերոսներ եյին, նրանք իրենց կապը կտրում եյին նախապաշարմունքներից, նրանք փշրում եյին այն շղթաները, որոնք նրանց կապում եյին արտոնյալ դասակարգի հետ, նրանք ամեն ինչից հրաժարվում եյին և պայքարում եյին հանուն քաղաքական ազատության։ Թեև նրանք յերբեմն դարդարում եյին իրենց պայքարը սոցիալիստական ֆրազներով՝ չունենալով որոշ սոցիալիստական ծրագիր, սակայն նրանք չեյին եվ կարող ունենալ վորևե ծրագիր, քանի որ պայքար եյին սկսում այնպիսի մի լողունգով, որը բուրժուական դեմոկրատիայի սահմաններից չեր



անցնում։ Զուր չե, որ նարոդնիկական կազմակերպություններից ամենախոշորի՝ «Նարոդնայա վոլյայի» («Ժողովրդի ազատության») գործադիր կոմիտեն իր ժամանակին բաց նամակով դիմել է Լինկոլնին։

Մենք պատրաստ ենք նույնպես մերկացնելու մեր գլուխները բուրժուական հեղափոխականների ավելի վաղեմի սերնդի՝ դեկաբրիստների առաջ, որոնք նմանապես պայքար եյին մղում ցարիզմի դեմ։ Այդ մարդիկ, որոնք բառիս բուն նշանակությամբ արիստոկրատիայի, ազնվականության և սպայության սերուցքն եյին, բաժանվեցին իրենց դասակարգից, անջատվեցին ընտանիքներից, հրաժարվեցին իրենց առանձնաշնորհումներից և պայքար սկսեցին միապետության դեմ։ Թեկուզ նրանք եվ սոցիալիստական ծրագիր չունեյին, թեկուզ նրանք եվ զուտ բուրժուական հեղափոխականներ եյին, սակայն մեր սերունդը չի հրաժարվում այդ ժառանգությունից։ Ընդհակառակը, մենք ասում ենք, որ այդ մի փառավոր անցյալ է, և մենք խոնարհվում ենք հեղափոխական նարոդնիկության առաջին ներկայացուցիչների առաջ, որոնք ընդունակ գտնվեցին զոհվելու ժողովրդի համար այն որերին, յերբ բանվոր դասակարգը նոր եր ծնվում, յերբ դեռևս չկար պրոլետարիատ և չեր կարող դասակարգային պրոլետարական կուսակցություն լինել, բայց միաժամանակ մենք գիտենք, որ մի կողմից Ժելյաբովի և Պերովսկայայի և մյուս կողմից Գոցի և Զերնովի միջև գոյություն ունի նույնպիսի տարբերություն, ինչպիսին կա մի կողմից Ռոբեսպյերի և Մարատի և մյուս կողմից Պուանկարեյի ու Բրիանի միջև։ Գոցը և Զերնովը ասում են, որ շարունակում են նարոդնիկության գործը։ Իսկ մենք նրանց ասում ենք. «Դուք շարունակում եք նրանց գործը այնպես, ինչպես Բրիանը և Պուանկարեն շարունակում են Մարատի և Ռոբեսպյերի գործը։

Կրկնում եմ, առաջին շրջանի նարոդնիկների շարքերում, յեթե խոսելու լինենք առանձին անհատների մասին, կային մարդիկ, որոնք հավիտյան պետք է մնան մեզ համար ինքնազոհության, հերոսության և իր ժողովրդին նվիրվելու անջնջելի որինակներ։ Սակայն յեթե մենք այդ շարժումը խոշորացույցով դիտելու լինենք և ինչպես հարկն է վերլուծենք այն, կտեսնենք, որ նա ընդհանուր առմամբ մի մեծ առաջադիմական քայլ լինելով, այնուամենայնիվ պրոլետարական շարժում չեր։

## ՌՈՒՍԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.

Մեր պրոլետարիատն առաջ յեկավ յերկար տասնամյակների, նույնիսկ, կարելի յե ասել, հարյուրամյակի ընթացքում։ Մարտովի «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի պատմությունը» գրքում, որը, չնայած նրա մենշևիկյան հայացքներին, յես հանձնարարում եմ ձեզ

կարդալ, սխալ մեշևիկյան հայացքների շարքում կարելի յե հանդիպել շատ հետաքրքիր փաստերի։ Ռուսական բանվոր դասակարգն սկսեց սաղմնավորվել XVII-րդ դարում։ Առաջին մեծ գործարանները, առաջին խոշոր արհեստանոցներն առաջացան Ռուսաստանում այդ իսկ շրջանում։ Նույն ժամանակներում ճորտ հողագործների, տնայնագործների և արհեստավորների դասակարգից զատվում են առաջին ճորտ, կիսաճորտ և ապա այսպես կոչվող ազատ բանվորները։

Յեթե դուք հետաքրքվեք այնպիսի յերկերով, ինչպիսին և Տուգան-Բարանովսկու հայտնի ուսումնասիրությունը, վոր թեպետև չի դիմանում վոչ մի մարքսիստական քննադատության, սակայն տալիս և բազմաթիվ փաստեր, յեթե դուք ուսումնասիրեք ընկ. Լենինի «Կապիտալիզմի զարգացումը» գիրքը և ծանոթանաք Ստրուվեյի աշխատություններին, դուք կտեսնեք, վոր բանվորների առաջին շարժումներն սկսվել են XVIII-րդ դարում և նրանից ել առաջ։

1796 թ. տեղի ունեցան գործարանային բանվորների շարժումներ Կազանում, 1797 թ.՝ Մասկվայի նահանգում, 1798 և 1800 թթ.՝ նորից Կազանում, 1806 թ.՝ Մասկվայի նահանգում և Յարասլավլում, 1811 թ.՝ Տամբովի նահանգում, 1814 թ.՝ Կալուգայի նահանգում, 1815 թ.՝ Յարասլավլում, 1816 թ.՝ Պետերբուրգի նահանգում, 1817 թ.՝ նորից Յարասլավլում և Կազանում, 1818 թ.՝ Յարասլավլում, 1819 թ.՝ Կազանում, 1821 թ.՝ Վարոնեժի և Կալուգայի նահանգներում, 1823 թ.՝ Վլադիմիրի և Մասկվայի նահանգներում և Յարասլավլում, 1829 թ.՝ Կազանում, 1834 թ.՝ Կազանում և Մասկվայի նահանգում, 1836 թ.՝ Կազանում, 1837 թ.՝ Տուլայի նահանգում, 1844 թ.՝ Մասկվայի նահանգում և 1851 թ.՝ Վարոնեժի նահանգում։

Դրանից ավելին. դեկաբրիստների ապստամբությունը հետազոտողները լուրջ փաստաթղթերով ապացուցում են, վոր շարժման ծագման բոպեին՝ 1825 թվին (հարյուր տարի առաջ) սենատի հրապարակում ամբոխի մեջ կանգնած եյին Պետերբուրգի բանվորները, վորոնց թիվը քիչ եր Պետերբուրգում, և վոր յերբ այդ բանվորները տեսան Նիկոլայ I-ի դեմ դուրս յեկած զինվորներին, բացահայտ կերպով արտահայտում եյին իրենց համակրանքը դեպի ապստամբները։

1845 թ. Նիկոլայ I-ի կառավարությունն ստիպված եր հրատարակել առաջին որենքը, վորով քրեական պատիժ եր սահմանվում գործադուլի համար։ 1848 թ. ամբողջ Յեվրոպայով անցավ բուրժուական հեղափոխությունների մրրիկը։ Այդ շարժումից Ռուսաստանը զերծ մնաց, չհաշված այն, վոր ցարական կառավարությունը ճորտ զինվորներին ուղարկեց խաղաղացնելու հունգարական հեղափոխությունը.



այնուամենայնիվ անուղղակի կերպով նա, իհարկե, անդրադարձավ նաև մեր յերկրում։ Ռուսաստանում ևս նոր հովեր սկսեցին փչել։

Հետագա հիմնական թվականներն են. 1861 թ.—գյուղացիների ազատությունը և լիբերալ բուրժուազիայի շարժման սկիզբը։ Աստիճանաբար Ռուսաստանում սկսում է ձևավորվել բավական թվով բանվոր դասակարգ, վորը 70-ական թվականներին ստանում է մասսայական յերևույթի բնույթ։ Չնայած դրան, դեկաբրիստներից հետո կազմակերպվող առաջին հեղափոխական խմբակները կազմվում են վոչ բանվորներից։

## ԶԱՅԿՈՎՍԿՈՒ ԽՄԲԱԿԸ.

Առաջին հեղափոխական խմբակը համարվում է 1869 թվին կազմված Զայկովսկու խմբակը։ Նրա մեջ մտնում եյին Ս. Պերովսկայան, Մ. Նատանսոնը, Վալխավսկոյը, Շիշկոն, Կրապոտկինը և Կրավչինսկին։ Այս անունները վերին աստիճանի նշանակալից են։ Զայկովսկին ապրեց մինչև մեր որերը, թեպետ քաղաքականապես նա վաղուց արդեն մեռած է։ Նա մասնակցեց 1917 թվի բուրժուական հեղափոխությանը, առաջին գործադիր կոմիտեյի անդամ ընտրվեց և ապա դարձավ ծայրահեղ աջ (ավելի աջ, քան մենշևիկները և եսերները)։ Ընկ. Լենինի դեմ հարուցված ստոր կամպանիայի ժամանակ, յերբ վերջինիս լրտես անվանեցին, Զայկովսկին կիսով չափ այդ գործը խրախուսողներից եր։ Դրանից հետո նա անգլիացիների կողմից գեներալ-նահանգապետ նշանակվեց Արխանգելսկում, բարեկամացավ Կալչակի հետ, իսկ հիմա՝ պատմության աղբակույտը շպրտված՝ գտնվում է Պարիզում։

Ս. Պերովսկայան, ինչպես ձեզ հայտնի յե, ընկավ 1881 թվին։ Նա մասնակցել է Ալեքսանդր II-ի սպանության նախապատրաստությանը և մտել է հեղափոխական շարժման պատմության մեջ վորպես ամենապայծառ անուններից մեկը։ Մ. Նատանսոնը մեռավ նորերս. նա վորպես ձախ եսեր՝ մեզ շատ մոտիկ եր կանգնած, մանավանդ ձախ եսերների՝ մեր դեմ հարուցած հայտնի անհեթեթ ապստամբությունից հետո։ Նա հեղափոխության սկզբում անջատվեց աջ եսերներից, մեղ հետ միասին մասնակցել է Ցիմմերվալդին և վորոշ չափով III Ինտերնացիոնալի հիմնադիրներից է։ Զայկովսկու կազմակերպության մնացած անդամները մեռել են մասամբ ֆիզիկապես, մասամբ քաղաքականապես, մնալով եսերական կուսակցության մեջ։

Այս փոքրիկ խմբակը պարզ ցույց է տալիս, թե ինչպես եր զարգանում նարոդնիկությունը և թե ինչպես նա գանազան խմբերի իդեոլոգներ եր մատակարարում։ Կրապոտկինը դարձավ անարխիստ, իսկ Նատանսոնը կոմունիստներին շատ մոտիկ կանգնած ինտերնացիոնա-

լիստ։ Զայկովսկին ցույց տվեց իրեն վորպես բուրժուազիայի իսկական ներկայացուցիչ, և վոչ վոք հիմա չի վիճի այն մասին, վոր նա լոկ բուրժուական հեղափոխական եր, այն ել միջակ, վատ դեմոկրատ, վոր չկարողացավ նույնիսկ պաշտպանել իսկական բուրժուական դեմոկրատիան. նա չկատարեց նաև հարյուրերորդ մասն այն բոլորի, ինչ կատարել եյին իսկական բուրժուական հեղափոխականները, յերբ նրանք իրենց բուրժուական հեղափոխությունն եյին կատարում։

Առաջին բանվորական խմբակը կազմակերպվեց մոտավորապես 70-ական թվականների կեսերին՝ 1875 թվին։ Նրա առանձնապես ակտիվ ներկայացուցիչներն եյին Ջուլհակ Պյոտր Ալեքսեյևը, Մալինովսկին, Ագապովը, Ալեքսանդրովը և Գերասիմովը։ Սրանք են գլխավոր անունները։ Հայտնի յե Պյոտր Ալեքսեյևի նշանակալից ճառը, կենդանի յեն նրա միքանի ժամանակակիցները, յեթե չեմ սխալվում, Մոյսեյենկոն, վորին մենք նորերս ընդունեցինք։

## «ՀԱՐԱՎԱՅԻՆ-ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ».

1875 թ. Զասլավսկին հիմնեց Ոդեսսայում «Ռուս բանվորների հարավային միությունը»։ Սակայն նրա ծրագիրն այնքան պարզ չեր, վորքան «Հյուսիսային-ռուսական բանվորական միության» ծրագիրը, վոր հիմնվեց մոտ յերեք տարի անց։ Այդ հանգամանքից ե բղխում յերևի այն հսկայական տարբերությունը, վորը գոյություն ուներ հարավի և հյուսիսի միջև, և վորը դուք կարող եք տեսնել մեր հեղափոխության զարգացման հետագա ամբողջ ընթացքում։ Այժմ կասկածից դուրս ե, վոր հյուսիսը մեր հեղափոխության պատմության մեջ տեղ կբռնի վորպես ռուսական պրոլետարիատի հեղափոխական մաս, մինչդեռ ամբողջ հակահեղափոխությունը բուն եր դրել գլխավորապես հարավում, վորտեղ նա ծնունդ ե առել և ուժեր կուտակել։

Սոցիալական շերտավորման տարբերությունը, հավանականաբար, վորոշ կնիք ե դրել նաև առաջին բանվորական կազմակերպությունների՝ հարավային-ռուսական և հյուսիսային-ռուսական միությունների վրա։ Յեթե համեմատելու լինենք մեկ և մյուս միությունների ծրագրները, կտեսնենք, վոր «Հյուսիսային-ռուսական բանվորական միությունը» անկասկած շատ ավելի մոտ ե յեղել մեզ՝ հեղափոխական ձգմարտությանը, և մեզ համար պարզ կլինի, վոր քաղաքական պայքարի նշանակության գնահատման գործում և իր մոտեցումով դեպի դասակարգային հեղափոխական բանվորական շարժումը, նա ավելի առաջադեմ եր։



## ՄԱՐՔՍԻԶՄ ՅԵՎ ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅՈՒՆ.

Նարոդնիկության և մարքսիզմի փոխհարաբերությունն ավելի պարզ հասկանալու համար անհրաժեշտ ե ինկատի ունենալ այն հենքը, վորի վրա նրանք առաջացան. նախ և առաջ՝ քիչ թե շատ խոշոր բանվոր դասակարգի բացակայությունը, վորն այն ժամանակ բաղկացած եր լոկ մանր առվակներից, վորոնց ակունքները հասնում են, ճիշտ ե, մինչև XVII-րդ դարը, և ապա ծանր, ամեն ինչ ճնշող միապետության լուծը, վորի որոք, յեթե կարելի յե այսպես ասել, բոլոր կատունները մոխրագույն եյին։ Այդ հենքի հետագա հյուսվածքներն եյին՝ դեպի ժողովուրդ գնալը, վոր նշանակում եր գնալ դեպի գյուղացիությունը, շատ խճողված ծրագրով, և այն ժամանակվա հեղափոխականների անվեհեր յելույթները, առանց պրոլետարական տեսակետի, ինտելլիգենցիայի շարքերից կազմվող առաջին խմբակները. և միայն 1875 թվին յերևան յեկան առաջին բանվորական խմբակները, վորոնք իրենց իդեոլոգիայով դեռևս սերտ կերպով կապված եյին նարոդնիկության հետ։

Արդեն ասացի Զայկովսկու մասին։ Այդ մարդը կարծես թե նարոդնիկության եյության մարմնացումն եր։ 60-ական թվականների վերջերի և 70-ական թվականների սկզբների Զայկովսկին հեղափոխական ինտելլիգենցիայի լավագույն մասի դրոշակն եր, հեղափոխական շարժման հիմքը դնող քաղաքական գործիչը։ Իսկ ներկա դարի 20-ական թվականների Զայկովսկին միանգամայն վորոշ կերպով Կալչակի և անգլիական բուրժուազիայի ձեռքին բավականի մանր գործիք եր։ Այսպիսով հանձինս մի մարդու դուք տեսնում եք նարոդնիկության յերկու կողմերն ել։ Յեվ իրոք, այդ շարժման սկզբից մինչև վերջը նրա մեջ յերևան յեկան յերկու հուն, յերկու հոսանք, յերկու ուղղություն։ Նրանցից մեկը, վոր առաջ քաշեց Ժելյաբովին և Պերովսկայային, ստեղծեց հերոսներ՝ Սազոնովներ և Բալմաշևներ։ Յերկրորդ հոսանքը, վոր առանձնապես նկատելի յե 80-ական թվականներին, կազմում ե նարոդնիկության աջ թևը, այսինքն այնպիսի նարոդնիկներ, վորոնք թե իրենց պրակտիկ գործունեությամբ և թե գրականության մեջ շատ քիչ բանով են տարբերվում լիբերալներից։

70-ական թվականների նարոդնիկությունը վորպես մի ամբողջություն վերցրած՝ բուրժուական հեղափոխականների ուղղությունն ե, վորը, սակայն, ունի խոշոր անժանիքներ։ Հաղթանակած պրոլետարիատը միշտ ել հարգանքով կվերաբերվի դեպի այդ հեղափոխականները։ Սակայն նա միաժամանակ կասի. «Մի հետևեք նրանց թույլ կողմերին, մի կրկնեք նրանց մշուշապատ ֆրազները ժողովրդի մասին, այլ խոսեցեք դասա-

կարգի մասին, գնացեք դեպի պրոլետարիատը և իմացեք, վոր արդյունաբերական պրոլետարիատը, այդ այն հիմնական դասակարգն է, վորը կազատագրի ամբողջ մարդկությունը»։ Նարոդնիկները չեին կարող թույլ, անորոշ և մշուշապատ չլինել, քանի վոր նրանք ապրում եին այնպիսի ժամանակներում, յերբ բանվոր դասակարգը դեռ նոր եր սաղմնավորվում, դեռ խանձարուրի մեջ եր։ Դուք պետք է վերցընեք նրանցից վոչ թե նրանց պարարող մշուշը, այլ այն, ինչ ուժեղ եր նրանց մեջ. ձեր ժողովրդին նվիրված յեղեք, ծառայեցեք նրան նույնքան անձնազոհ, ինչպես և նրանք. յեղեք արի և անձնվեր. նրանց նման հրաժարվեցեք դասակարգային նախապաշարմունքներից և առանձնաշնորհումներից, ընդունակ յեղեք նրանց նման դժվար բոպեին հոսանքին հակառակ գնալու։ Վորքան ավելի մութն է գիշերը, նույնքան ավելի վառ են աստղերը։ Ինչքան ավելի մութն եր ցարական գիշերը, այնքան ավելի վառ եին փայլում աստղերը. ինչպիսիք եին՝ Ժելյաբովը և Պերովսկայան։ Յեվ դրա համար նրանց հարգում են թե կռվում հաղթանակած ռուս բանվոր դասակարգը և թե ամբողջ աշխարհի բանվորները։

## ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Մենք գիտենք միաժամանակ, վոր 70-ական թվականներին սկըսված և 80-ականներին շարունակված նարոդնիկության մեջ կար ազատամիտ-չինովնիկական մի ուղղություն, վորը գրականության մեջ առաջ բերեց մի շարք հոսանքներ, վորոնք մոտ են լիբերալական դաղափարներին և վորոնք հետագայում ռուսերների կուսակցությունը բերին-հասցրին այն եվոլյուցիային, վորին մենք ականատես յեղանք։ Հենց այս պարագաներում ծնվում են պրոլետարական հեղափոխականների այն առաջին խմբակները, վորոնք մեր կուսակցության հիմքն են դնում։ Պետք է նկատի ունենալ, պետք է հաստատապես հիշել, վոր հեղափոխությունները լինում են բուրժուական և պրոլետարական։ Յեվ միայն պարզելով այս փաստը՝ մենք կհասկանանք ռուսական կուսակցության բոլոր ովիդիոսական կերպարանափոխությունները։ Յեվ իրոք։ Քանի խոսքը վերաբերում եր ցարիզմին հաղթելուն, բուրժուական հեղափոխության, այդ հեղափոխականները թափ, յեռանդ, վոգևորություն ունեին. նրանք գիտեին, թե ինչի համար են պայքարում, ինչի համար են զոհեր տալիս և ասպարեզ եին հանում այնպիսի խոշոր մարդկանց, ինչպես Գերշունին։ Սակայն յերբ բուրժուական հեղափոխությունը ընդհանուր առմամբ վերջացավ, և սկսվեց պրոլետարական հեղափոխությունը, այն բոլորը, ինչ վոր յերեկ նրանց ուժն եր կազմում, այսոր նրանց թույլ կողմը դարձավ։ Նրանք մեզ համար



ավելի վտանգավոր դարձան, քան սովորական բուրժուական հակահեղափոխականները, վորովհետև իրենց յեռանդը, ճարպկությունը, կոնսպիրատիվ հնարագիտությունը և մասսաների հետ ունեցած վորոշ կապը միանգամից 90°-ով դարձրին ընդդեմ հեղափոխական բանվոր դասակարգի։ Յեվ այստեղ է ամբողջ հարցի լուծումը։

Ռուսերների ամբողջ եվոլյուցիայի, նարոդնիկության բոլոր մետամորֆոզների մեջ պետք է տարբերել յերկու մոմենտ։ Մինչև մի վորոշ ժամանակ նրանք բուրժուական հեղափոխականներ եին։ Նրանք առաջադեմ ուժ եին, և մենք պետք է նրանց աջակցեինք, նրանց հետ միասնական ճակատով յերկար տարիների ընթացքում առաջ ընթանային ընդդեմ միապետության։ Սակայն նրանք առաջադեմ ուժ եին միայն մինչև այն մոմենտը, յերբ իշխանության գլուխն անցավ բանվոր դասակարգը, տապալելով կալվածատերերի և բուրժուազիայի արտոնյալ դասակարգին, սեփականության հետ կապված դասակարգին։ Այդ վայրկյանից սկսած, յերբ մենք կալվածատերերի և բուրժուազիայի վրայով անցանք մեր հերթական գործերին, ռուսերներն անմիջապես ամբողջ ճակատով դարձան բանվորական, պրոլետարական հեղափոխության դեմ։

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԵՎ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐը.

Մեր կուսակցության պատմության առաջին շրջանը վոչ այլ ինչ է, յեթե վոչ սկզբում կիսագիտակից, իսկ հետո պրոլետարական և բուրժուական հեղափոխականների պայքար։ Քանի վոր հարցը վերաբերում եր ցարիզմի դեմ պայքարելուն, մենք, կրկնում եմ, ունեինք միասնական ճակատ, բայց հենց վոր սկսվեց պայքար հանուն մասսաների վրա ազդեցություն ունենալու, այստեղ մեր ուղիները բաժանվեցին։ Այդ բոպեից սկսած պրոլետարական հեղափոխականներն ընդհարվեցին բուրժուականների հետ, և այդ պայքարը շարունակվեց յերկար տարիներ, վորոնք վճռական նշանակություն ունեցան Ռուսաստանի ճակատագրի համար։

---

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՐՔՍԻԶՄԻ ՎԵՃԸ.

Արդեն ասացի, վոր նարոդնիկության և մարքսիզմի միջև մղվող ամբողջ վեճն ամփոփվում է հետևյալ ֆորմուլայի մեջ՝ «ժողովուրդ», թե՞ «դասակարգ»։ Սակայն պարզ և, իհարկե, վոր նրանց միջև յեղած պատմական վեճն այնքան էլ պարզ և հասարակ չե։ Վորպեսզի կարողանանք այդ հասկանալ, պետք է մոտենանք այս հարցին ավելի խորը և լուրջ կերպով։

Նարոդնիկությունը վիճում եր մարքսիզմի հետ Ռուսաստանի ճակատագրի հարցի մասին և, նախ և առաջ, կապիտալիզմի՝ մեր յերկրում խաղալիք դերի մասին։ 70-ական և 80-ական թվականներին դեռևս կարելի յեր փորձել, ապացուցել (ինչ և անում եր նարոդնիկությունը), վոր իբր թե Ռուսաստանը, տարբերվելով ուրիշ պետություններից, չի ունենա կապիտալիզմի շրջան։ Յեղնելով այն տեսակետից, վոր այն ժամանակներում դեռևս կապիտալիզմը մեր յերկրում շատ թուլ եր, իսկ խոշոր արդյունաբերությունը դեռ նոր եր սաղմնավորվում, մի ամբողջ դպրոց, վոր իրեն սոցիալիստական եր համարում՝ նարոդնիկությունը, ապացուցանում եր, վոր Ռուսաստանի զարգացումը չի ընթանա այնպես, ինչպես ամենուրեք, և մեզ կհաջողվի մանր արտադրության այն ժամանակվա վերին աստիճանի նախնական հարաբերություններից թռիչք գործել ուղղակի դեպի սոցիալիզմը։

Սրա հետևանքով առաջ յեկավ վերին աստիճանի կարևոր մի հարց, թե ինչ վերաբերմունք պետք է ունենալ դեպի գյուղական համայնքը։ Մի շարք նարոդնիկներ ապացուցում եյին, վոր մեր գյուղական համայնքը վոչ այլ ինչ է, յեթե վոչ կոմմունիզմի բջիջ, վոր Ռուսաստանը կխուսափի գործարանային արտադրության, խոշոր քաղաքային արդյունաբերության մեծ հարստությունների կուտակման, պրոլետարիատի, վորպես դասակարգի՝ ստեղծման ուղիից և առանց վորևե միջանկյալ փուլերի, ուղղակի այդ մանր, իբր թե կոմմունիստական բջիջներից, ինչպիսիք նրանք համարում եյին գյուղական համայնքը, կանցնի նոր սոցիալիստական հասարակակարգին։

Բանվորների նկատմամբ հեղափոխական-նարոդնիկներն այն կարծիքին եյին, վոր կապիտալիզմի դեմ մղվող պայքարի գործում գուցե նրանք էլ պետք գան։ Ճիշտ է, ժամանակի ընթացքում նարոդնիկներն



սկսեցին համոզվել, վոր բանվորներն ավելի շուտ ըմբռնող են, քան բնակչության մյուս շերտերը, և նրանք սկսեցին յեռանդով նրանց ընդունել իրենց խմբակների մեջ, սակայն, չնայած դրան, հիմնական ուժը, վորի վրա նրանք կառուցում եյին իրենց տակտիկան, վոչ թե բանվորներն եյին, այլ այսպես կոչվող «ժողովուրդը», կամ, ավելի կոնկրետ ասած, գյուղացիությունը։

## ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆԸ.

Աստիճանաբար, մեր յերկրի ուժերի հարաբերության զարգացման հետ միասին, նարոդնիկների մոլորությունն ավելի և ավելի ակնհայտ եր դառնում։ Գործարանների թիվը տարեցտարի ավելանում եր, բանվորների քանակը քաղաքներում աճում եր, իսկ գյուղական համայնքի՝ ավելի և ավելի պարզ կերպով յերևան յեկող դերն ապացուցում եր, վոր այդ համայնքը վոչ մի առընչություն չուներ սոցիալիզմի և կոմմունիզմի հետ։ Մի խոսքով՝ զարգացման ընթացքը նարոդնիկության հակառակ եր գնում, և հենց այդ պատճառով եր, վոր մարքսիստները՝ կյանքի փորձի վրա հենվելով՝ համեմատաբար արագ կերպով բոլորովին ջախջախեցին իրենց հակառակորդներին,

Ցեսս մանրամասն կերպով կանգ չեմ առնի այդ վեճի վրա, վորովհետև նա մեզ շատ հեռուն կտաներ, պետք է միայն ինկատի ունենանք, վոր յերբ վիճում եյին համայնքի դերի մասին, այն մասին, թե արդյոք Ռուսաստանում կապիտալիզմ կլինի թե՞ վոչ, կգնա՞ արդյոք մեր յերկիրը հատուկ, դեռևս անհայտ ուղիներով՝ խուսափելով արդյունաբերական զարգացման բաժակից, նրանք իրոք վիճում եյին միաժամանակ **պրոլետարիատի**, բանվոր դասակարգի դերի մասին, այն մասին, թե վոր դասակարգը պետք է գալիք հեղափոխության հիմնական ուժը դառնա։ Այս վեճերի չարտահայտված նախադրյալը, վոր տեսական պայքարի մեջ զանազան ձևեր եր ընդունում, այն հարցն եր, թե արդյոք Ռուսաստանում առաջ կգա՞ բանվոր դասակարգը, և յեթե այո, ապա նա ի՞նչ դեր ունի կատարելիք։ Ահա թե ինչու այդ բոլոր վեճերին համապատասխան բացատրություն տալով՝ կարելի յե ասել, վոր մարքսիզմի և նարոդնիկության ընդհարումը եյականում հանգում եր բանվոր դասակարգի՝ Ռուսաստանում խաղալիք դերին, այն հարցին, թե կլինի՞ արդյոք մեզանում արդյունաբերական բանվորների դասակարգը, և յեթե կլինի, ապա նա ի՞նչ դեր կխաղա հեղափոխության մեջ։

## ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ԽԱՅՏԱԲՂԵՏՈՒԹՅՈՒՆԸ.

Նարոդնիկությունը յերբեք միատարր յերևույթ չի յեղել. ընդհակառակը, նա վերին աստիճանի խայտաբղետ է յեղել և բազմապիսի։

Նրա ընդարձակ բանակում մենք տեսանք ամեն տեսակի հոսանքներ, սկսած միանգամայն պարզորոշ անարխիզմից և վերջացրած նույնպիսի բուրժուական լիբերալիզմով։ Զուր չէ, որ բացի առանձին առաջնորդներից նարոդնիկների շարքերից, ինչպես յես ցույց տվեցի իմ անցյալ դասախոսության մեջ, դուրս յեկան ականավոր դեկավարներ, որոնք հետագայում դարձան զանազան հոսանքների և զանազան քաղաքական խմբերի պարագլուխներ։ Այնուամենայնիվ, չնայած այս ամբողջ խայտաբղետությանը, նարոդնիկության մեջ կարելի յե և պետք է տարբերել յերկու հիմնական հոսանք. մի կողմից՝ հեղափոխական-դեմոկրատական, մյուս կողմից՝ բուրժուական-լիբերալական։ Յեթե ժամանակագրական կարգով մոտենալու լինենք, պետք է տարբերել միմյանցից յոթանասնական և ութսունական թվականների նարոդնիկներին, այսինքն՝ գլխավորապես 70-ական և 80-ական թվականներին ապրող յերկու սերունդ։ Միաժամանակ կարելի յե ասել, որ 70-ական թվականներին նարոդնիկները գլխավորապես առաջին հոսանքի կողմնակիցներից եյին բաղկացած, որը յես անվանեցի հեղափոխական-դեմոկրատիկ՝ հաճախ անարխիզմի գունավորումով, մինչդեռ 80-ական թվականների նարոդնիկությունը մասամբ կազմվում եր այն հոսանքի ներկայացուցիչներից, որն իրավամբ կարող է կոչվել բուրժուական-լիբերալական և որը հետագայում մեծ մասամբ ձուլվեց ռուսական լիբերալիզմի, կադետական կուսակցության և այլ հոսանքների հետ։

## 70-ԱԿԱՆ ՅԵՎ 80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԱՐՈԴՆԻԿՆԵՐԸ.

70-ական թվականների հեղափոխական նարոդնիկները մի շարք կազմակերպություններ ստեղծեցին, որոնք հեղափոխական շարժման պատմության մեջ տեղ բռնեցին որպես խոշոր նվաճումներ։ Սրանց թվին են պատկանում նախ և առաջ «Земля и воля»-ն («Հող և ազատություն») և "Народная воля"-ն («Ժողովրդի ազատություն»)։ Այս տիպի նարոդնիկներն առաջ քաշեցին մի շարք գործիչների, որոնք ցուցահանեցին բարձր հերոսություն և արիություն և չնայած որ չեյին պատկանում պրոլետարական հեղափոխականների շարքին, այնուամենայնիվ հեղափոխականներ եյին, թեպետ և դեմոկրատներ։ Բոլորովին այլ բնույթ եր կրում նարոդնիկների յերկրորդ սերունդը, որ հաճախ 80-ական թվականներին ուղղակի ռեակցիոն դեր եր խաղում։ Այս հարցի վերաբերյալ կարելի յե գտնել հետաքրքիր տվյալներ Պլեխանովի սքանչելի, ամենևին չհնացած աշխատություններում, ինչպես, որինակ, նրա «Նարոդնիկության հիմնավորումը» գրքում, որ նա հրատարակեց «Վոլգին» կեղծանունով, նույնպես և նրա մի շարք այլ աշխատություններում, որոնց մասին յես դեռևս պիտի խոսեմ։



## ԿՐԻՎԵՆԿՈ.

Իմ միտքը պարզ կացուցանելու համար բավական է հիշել յերկու-յերեք որինակ։ Խոշորագույն գրականագետ-նարոդնիկներից մեկը՝ Կաբլից-Յուզովը միանգամայն լուրջ կերպով ապացուցում եր, որ մանր սեփականատերը և առաջին հերթին գյուղացին, շնորհիվ իր «տնտեսական անկախության», ինչպես նա յեր արտահայտվում, իրենից ներկայացնում է բարձր աստիճանի քաղաքացու տիպ։ Վաշխառության և ճորտության ճիրաններում ճզմված մանր գյուղացու վիճակը հարգելի նարոդնիկը անվանում է «տնտեսական անկախություն»։ Կրիվենկոն մինչև այն աստիճանի յեր հասնում, որ պահանջում եր, որպեսզի գյուղացին չհրաժարվի իր «տնտեսական անկախությունից», թեկուզ հանուն քաղաքական ազատության։ Պարզ է, որ նման գաղափարախոսությունը կարելի յե անվանել միայն ռեակցիոն։ Մենք լավ գիտենք, որ աշխարհում և վոչ մի տեղ մանր սեփականատերը տնտեսապես անկախ չէ, այլ գրեթե միշտ սերտ կախման մեջ է խոշոր սեփականատերերից, պետական կառավարչական ամբողջ սիստեմից։ Հետևապես Կրիվենկոն և ընկ. վորոշակի կերպով հեղափոխական միտքը յետ եյին տանում, հակառակ այն հեղափոխականների, որոնք տեսնում եյին, որ ծնվում է բանվոր դասակարգը, որոնք ուզում եյին բանվորների մոտ գնալ և սկսում եյին հասկանալ, որ խոսքը վերաբերում է նոր հեղափոխական դասակարգ ստեղծելուն, որը սեփականություն չի ունենա և այդ պատճառով վոչ մի կապանքներով կաշկանդված չի լինի։

## ՄԻԽԱՅԼՈՎՍԿԻ.

Իմիջի այլոց, վոչ միայն նարոդնիկության աջ թևում գտնվող գրողները, այլ և հուժկու մտածողները, ինչպիսին է Միխայլովսկին, նա յել մինչև այն տեղը հասավ, որ մարքսիստների հետ վիճաբանելիս հանդիսավոր կերպով հայտարարում եր.—Ռուսաստանում չի կարող լինել բանվորական շարժում բառիս արևմտա-յեվրոպական իմաստով, վորովհետև մեզանում չկա բանվոր դասակարգ, վորովհետև բանվորը մեր յերկրում կապված է գյուղի հետ։ Նա հողագործ է, նա միշտ կարող է տուն վերադառնալ և այդ պատճառով գործադրկությունից չի վախենում։

## ԿԱՐԱՅԵՆԿՈ.

Ինչպես հայտնի յե, Միխայլովսկին «Ռուսսկոյե բագատստվո» («Ռուսական հարստություն») խմբակի պարագլուխն եր, որին պատ-

կանում եր նաև Կարալենկոն։ Ցեվ գուցե վերջինիս որինակով ավելի ճիշտ ե ցույց տալ, վոր 80-ական թվ. սկզբներում և ավելի ուշ նարոդնիկության վորոշ մասն այս կամ այն չափով բացարձակ կերպով ձուլվեց բուրժուական-լիբերալական բանակի հետ։ Ցես դիտավորյալ կերպով հիշատակում եմ Կարալենկոյին, վորովհետև, վորպես անհատ, նա վայելում եր և վայելում ե արժանի համակրանք բոլորի կողմից, վորոնք կարդացել են նրա գեղարվեստական յերկերը։ Ցեվ այդ պատճառով մի տեսակ դժվար ե միանգամից հաշտվել այն մտքի հետ, վոր նա հեղափոխական չի յեղել, այլ պատկանել ե նարոդնիկության, բուրժուական-լիբերալական բանակին։ Այնինչ այդ անկասկած այդպես ե։ Վորպես գեղարվեստագետ, Կարալենկոն իրոք մեր ժամանակի խոշորագույն դեմքերից մեկն ե, և գեռևս շատ տասնյակ տարիներ մենք պիտի հափշտակությամբ կարդանք նրա սքանչելի գրքերը։ Սակայն վորպես քաղաքագետ, Կարալենկոն վոչ այլ ինչ եր, յեթե վոչ լիբերալ։ Իմպերիալիստական պատերազմի սկզբին նա հանդես յեկավ հոգուտ պատերազմի իր գրած բրոշյուրով։ Այդ դեռ քիչ ե, նրա մահվանից հետո հրատարակվել ե նրա նամակագրությունը, վորից պարզվում ե, վոր «Ռուսկոյե Բագատստվո»-ի խմբակում նա գրավում եր աջ թևը, գտնվելով առանց այդ ել աջ նարոդնիկական խմբակի աջ թևում։ Այժմ հայտնի յե Կարալենկոյի նամակներից, վոր այդ խմբակում տաք վեճ ծագեց այն մասին, թե կարելի յե աշխատակցել Միլյուկովի որգան՝ կադետական «Речь» թերթում. և ահա այդ հեղինակը՝ ամեն կերպ ապացուցելով, վոր «Речь»-ին պետք ե աշխատակցել՝ յենթարկվել եր համախոհների մեծամասնության վորոշմանը և աշխատակցում եր այդ թերթին, վորովհետև համերաշխ եր այդ լիբերալ խմբակի հետ։

## ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՈՒ ԹԵՎԸ.

Այսպիսով մենք պետք ե ի նկատի ունենանք, վոր նարոդնիկությունը, լինելով վերին աստիճանի բազմերանգ և խայտաբղետ յերևույթ, անարխիզմից սկսած մինչև լիբերալիզմ (նարոդնիկների շարքերում կային անարխիստական ձգտումներով մարդիկ, վորոնք քաղաքական պայքարի հակառակ եյին արտահայտվում և հենց անարխիստական տեսակետով եյին պաշտպանում այս հայացքը), ուներ իր բանակում յերկու թև, մեկը՝ հեղափոխական, մյուսը՝ վոչ հեղափոխական, ոպպորտյունիստական, լիբերալական։ Սակայն նարոդնիկների ձախ թևն ել պրոլետարական, կոմունիստական չեր և չեր ել մտածում պրոլետարական հեղափոխության մասին. նա հեղափոխական եր այն իմաստով միայն, վոր ցանկանում եր հեղափոխական ճանապարհով տապալել միապետությունը։



Մարքսիստների և նարոդնիկների փոխադարձ վեճի մեջ փոքր դեր չկատարեց նաև տերրորի հարցը։ 70-ական թվականների յերկրորդ կեսից նարոդնիկների «ձախ թևը յեկավ այն յեզրակացության, վոր միապետական Ռուսաստանի ներկայացուցիչների նկատմամբ անհրաժեշտ ե անհատական տերրոր կիրառել, վորպեսզի այսպիսով հեղափոխության համար ճանապարհ հարթվի և ազատագրման գործն առաջ տարվի։ Մարքսիստներն սկզբում շատ զգուշ կերպով, որինակ, Պլեխանովի 1884 թ. գրած առաջին ծրագրում, հրաժարվում եյին նարոդնիկների տերրորիզմից։ Բայց այն բոպեյից, յերբ սկսում ե կազմվել բանվորական կուսակցությունը, նրանք վճռական կերպով դուրս յեկան ընդդեմ անհատական տերրորի։ Այդ ժամանակ նարոդնիկները, իսկ ավելի ուշ՝ եսերները փորձում եյին գործն այնպես ներկայացնել, թե իբր մենք, մարքսիստներս տերրորի հակառակ ենք, վորովհետև մենք առհասարակ հեղափոխականներ չենք, վոր մենք տեմպերամենտ չունենք, վոր մենք արյունից վախենում ենք, և այլն։ Ներկայումս՝ մեր մեծ հեղափոխությունից հետո հաղիվ թե վորևե մեկը մեղադրի մեզ սրա համար, բայց այն ժամանակ յերիտասարդության լավագույն մասի՝ ուսանողության վրա, այլ և տաքարյուն բանվորների վրա այս առարկությունը խոշոր ազդեցություն եր թողնում, հեղափոխական ելեմենտներին նարոդնիկների կողմը գրավելով։

## ՄԱՐՔՍԻՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ՏԵՐՐՈՐԸ.

Այնինչ սկզբունքորեն մարքսիստները յերբեք տերրորի հակառակ չեն յեղել, նրանք յերբեք քրիստոնեական «մի սպանաներ» պատվիրանի կողմնակից չեն յեղել։ Ընդհակառակը, վոչ այլ վոք, քան ինքը Պլեխանովը, քանիցս կրկնել ե, վոր ամեն մի մահացում սպանություն չե, վոր սողունին սպանելը վոճրագործություն չե։ Ցեվ նա հաճախ մեջ ե բերել Պուշկինի կրակոտ տողերը ընդդեմ թագավորների՝

Ինքնիշխան չարագործ,
քեզ, քո ցեղն եմ յես արհամարհում.
քո կործանումը, յերեխանց մահը
յես չար խինդով կտեսնեմ։

Մարքսիստներն ընդգծում եյին, վոր նրանք բռնության կողմնակիցներ են և համարում են այն հեղափոխական ֆակտոր։ Աշխարհիս յերեսին շատ բան կա, վոր կարելի յե վոչնչացնել միայն զենքով, կրակով և սրով։ Մարքսիստներն արտահայտվում եյին հոգուտ մասսայական տերրորի։ Սակայն նրանք ասում եյին՝ այս կամ այն մինիստրի սպանությունը գործի դրությունը չի փոխի. պետք ե մասսաներին վոտքի

հանել, միլիոնավոր մարդկանց կազմակերպել, լուսավորել բանվոր դասակարգին։ Ցեվ միայն այն ժամանակ, յերբ նրանք կկազմակերպվեն, կհնչի վճռական ժամը, վորովհետև այն ժամանակ մենք գործ կդնենք վոչ թե անհատական, այլ մասսայական տերրորը, այն ժամանակ մենք կդիմենք զինված ապստամբության, վորը Ռուսաստանում 1905 թվին առաջին անգամ փաստ դարձավ, իսկ 1917 թվին մեջ հաղթություն տվեց։

Բայց այն ժամանակներում տերրորի հարցը վորոշ չափով շփոթում եր քարտերը, նարոդնիկների մի մասին տալով ավելի հեղափոխական կուսակցության հռչակ, քան մարքսիստներն եյին։ Նարոդնիկներն ասում եյին, թե ահա մեկը գնում է մինիստրին սպանելու, իսկ մյուսը միայն բանվորների խմբակներ է հավաքում և նրանց քաղաքական գրագիտություն է սովորեցնում. պարզ չե՞ արդյոք, վոր նա, ով սպանում է մինիստրին, հեղափոխական է, իսկ նա, ով լուսավորում է բանվորներին, պարզապես «կուլտուրական» է։ Վորոշ ժամանակ այս հանգամանքը բարդացրեց, դժվարացրեց մարքսիստների պայքարն ընդդեմ նարոդնիկների։ Սակայն այժմ պատմականորեն քննելով այս հարցը, մենք պետք է մի կողմ թողնենք այն ամենը, ինչ վոր զուտ եպիզոդիկ, այս կամ այն չափով պատահական դեր է կատարել, և վերցնենք միայն այդ պայքարի այն գլխավոր մոմենտները, վորոնք բաժանում են մեզ նարոդնիկներից։ Իսկ գլխավորը, վերջիվերջո, բանվոր դասակարգի դերի գնահատման հարցն եր։

Այստեղ պետք է նախ և առաջ լուսաբանենք պրոլետարիատի հեգեմոնիայի (գերիշխանության) հարցը, վորովհետև այս հիմնական, հանգուցային հարցը վորոշում է մեր կուսակցության, բայլշևիզմի և մենշևիզմի, մոնտանյարների և Ժիրոնդայի ամբողջ հետագա պայքարը։

## ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵԳԵՄՈՆԻԱՅԻ ՀԱՐՑԸ.

«Հեգեմոնիա» բառը նշանակում է գերագույն, ղեկավար դեր, առաջնություն։ Պրոլետարիատի հեգեմոնիա, հետևապես, նշանակում է պրոլետարիատի ղեկավար դերը, նրա առաջնությունը։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր քանի դեռ Ռուսաստանում պրոլետարիատը վորպես դասակարգ առհասարակ չկար, վեճ ել չեր կարող լինել պրոլետարիատի հեգեմոնիայի մասին։ Չեր կարելի վիճաբանել գոյություն չունեցող դասակարգի ղեկավարող դերի մասին։ Սակայն մարքսիստների հեռատեսությունն ել հենց նրանով եր արտահայտվում, վոր այն ըստ ինքյան, յերբ պրոլետարիատը նոր եր սկսել սաղմնավորվել, յերբ նա դեռևս խոշոր ուժ չեր, նրանք տեսան և հասկացան, վոր այդ ծնվող դասակարգը գալիք հեղափոխության մեջ ղեկավար, գերագույն և առաջնորդող դեր կխաղա, վոր նա կլինի նրա հիմնական ուժը և գալիք



պայքարի ամբողջ ընթացքում իր վրա կվերցնի գյուղացիության ղեկավարման գործը։ Ցեվ իրոք, մարքսիստների և նարոդնիկների ամբողջ վեճը, մանավանդ նրա յերկրորդ կեսին, 80—90-ական թվականներին, հանգում եր պրոլետարիատի հեգեմոնիայի հարցին։

Պրոլետարիատի հեգեմոնիայի հայրերը Պլեխանովն ու Լենինն եյին։ II-րդ Ինտերնացիոնալի առաջին համագումարին, Պարիզի միջազգային կոնգրեսում 1889 թվին Պլեխանովը բառացի կերպով հետևյալ նախադասությունն ասաց. «Ռուսական հեղափոխությունը կըհաղթանակի վորպես բանվոր դասակարգի հեղափոխություն, և կամ չի հաղթանակի բոլորովին»։ Մեր որերին այս ճշմարտությունը կարող է թվալ մեզ շատ սովորական և հանրածանոթ։ Բոլորի համար ել պարզ է, վոր բանվոր դասակարգը մեր հեղափոխության հիմնական ուժն է, վորը կարող եր վերջնականապես հաղթանակել միայն վորպես բանվորական հեղափոխություն և կամ բոլորովին չեր հաղթանակի։ Սակայն յեկեք մինչև 80-ական թվականների վերջերը, յերբ բանվորական կուսակցությունը վորպես այդպիսին գոյություն չուներ, յերբ բանվոր դասակարգը նոր եր սաղմնավորվում, յերբ ռուսական հեղափոխական շարժման նախաբեմում նարոդնիկներն եյին կանգնած, վորոնք նույնիսկ հանձինս այնպիսի հեռատես մարդու, ինչպիսին եր Միխայլովսկին, ուրախանում եյին, վոր Ռուսաստանում բանվորական շարժում գոյություն չունի, և ասում եյին, վոր արևմտա-յեվրոպական իմաստով նա մեզանում չի յել լինի, փոխադրվեցեք այդ շրջանը, և դուք կտեսնեք, վոր Պլեխանովն իր այդ բառերով վորոշ չափով գյուտ եր անում։ Ցեվ յեթե կարելի յե ասել, վոր վորոշ իմաստով Մարքսը յերևան հանեց բանվոր դասակարգին համաշխարհային մասշտաբով, ապա կարելի յե ասել (պայմանորեն, իհարկե), վոր Պլեխանովը յերևան հանեց բանվոր դասակարգին Ռուսաստանում։ Կրկնում եմ՝ պայմանորեն։ Պարզ է, իհարկե, վոր Մարքսը յերևան է հանել բանվոր դասակարգին։ Նա, այդ դասակարգը ծնվել է Ցեվրոպայում, ֆեոդալիզմը կապիտալիզմով փոխարինելու պրոցեսում, սակայն Մարքսը բացատրեց նրա պատմական մեծ դերը, գուշակելով այն դեռևս 1847 թվին, յերբ բանվոր դասակարգը Ցեվրոպայում նոր եր սաղմնավորվում, և ընորոշել է նրա գալիք մեծ նշանակությունը ժողովուրդների ազատագրման, համաշխարհային հեղափոխության գործում։ Նույնպիսի դեր Ռուսաստանի նկատմամբ կատարել է Պլեխանովը, յերբ 1889 թվին և առաջ ել նա ապացուցում եր, վոր բանվոր դասակարգը Ռուսաստանում կծնվի և վոր նա կլինի վոչ թե լոկ դասակարգերից մեկը, այլ հիմնական, ղեկավարող, հեգեմոն-դասակարգը, վորը հեղափոխության լծակն իր ձեռքում կպահի։ Պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը հիմնական ջրբաժան գիծն է բոլոր հետագա վեճերի ընթացքում։ Ցեվ

յերբ մենք կանցնենք բայլշևիզմի և մենշևիզմի պայքարի եյության շարադրանքին, ստիպված կլինենք հաճախ անդրադառնալ այս հարցին։

## ՊԼԵԽԱՆՈՎԻ ՎԵՃԸ ՏԻԽԱՄԻՐՈՎԻ ՀԵՏ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵԳԵՄՈՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ.

Պլեխանովը մի այլ ձևով ել շատ ցայտուն կերպով արտահայտել է նույն կարծիքը Լեվ Տիխամիրովի հետ ունեցած վեճի ժամանակ։ Վերջինս մի ժամանակ «Նարոդնայա վոլյայի» ամենաականավոր գործիչներից մեկն եր, նրա գործադիր կոմիտեյի գլխավոր անդամներից մեկը և այդ կազմակերպության լավագույն գրողը։ Հետագայում այդ Լեվ Տիխամիրովը վերջացրեց նրանով, որ սկսեց ծառայել ցարիզմին և խավարամոլներից ամենաանսանձ մեկի՝ Մենշիկովի աշխատակիցներից մեկն եր, բայց, կրկնում եմ, իր գործունեյության ծաղկման տարիներին Տիխամիրովը «Նարոդնայա վոլյայի» գլխավոր ներկայացուցիչներից մեկն եր, և Պլեխանովն ստիպված եր իր սուրը փորձել նախ և առաջ նրա դեմ։ Գործը հետևյալումն եր. յերբ, հակառակ նարոդնիկների բոլոր դուշակությունների, բանվորներն սկսեցին յերևան գալ քաղաքներում և նախ և առաջ այն ժամանակվա Պետերբուրգում, իսկ նարոդնիկներն սկսեցին համոզվել, որ համենայն դեպս բանվորները հեշտությամբ են ըմբռնում հեղափոխական պրոպոգանդան, և որ նրանց պետք է հաշվի առնել, այն ժամանակ Տիխամիրովը, որպես կոմպրոմիսս, առաջարկեց հետևյալ ֆորմուլան.-Մենք (նարոդովոլցիներ) համաձայն ենք բանվորների մեջ ևս պրոպագանդա մղելու և չենք բացասում, որ նրանք շատ **կարեվոր են հեղափոխության համար։** Պլեխանովն ոգևորվեց այս բառերից և յուրահատուկ տաղանդով նրանց ուղղեց իր թշնամու դեմ։ Նա այս առթիվ գրեց մի փայլուն հոդված նարոդնիկների դեմ և միքանի սլաքներ ուղղեց նրանց դեմ, որոնք բավական հաջող կերպով նպատակին դիպան։ Նա գրում եր, թե հենց այն հանգամանքը, որ նրանք բանվորներին ոգտակար են համարում հեղափոխության «համար», ցույց և տալիս, որ նրանք չեն հասկանում բանվոր դասակարգի պատմական դերը, որ այդ ֆորմուլան ճիշտ տեսնելու, ճիշտ հասկանալու համար հարկավոր է շուռ տալ։ Նա գրում եր, որ չի կարելի ասել, թե բանվորները կարևոր են հեղափոխության «համար,» այլ պետք է ասել **հեղափոխությունն է կարեվոր բանվորների համար։** Դուք այնպես եք դատում,—ասում եր նա նարոդնիկներին դիմելով,—որ կարծես թե մարդն է շաբաթ որվա համար և ոչ թե շաբաթը մարդուս համար։ Իսկ մենք պնդում ենք, որ բանվոր դասակարգը հիմնական դասակարգն է, հեգեմոն-դասակարգը, և որ նրան, միայն նրան կհաջողվի տապալել կապիտալիստական հասարակակարգը, համախմբել իր շուրջը գյուղացիներին և առհասարակ



բոլոր ոպպոզիցիոն ելեմենտներին։ Քանի որ դուք, նարոդնիկներդ նայում եք բանվոր դասակարգի վրա, որպես մի ինչ որ ոժանդակիչ ուժի վրա, դրանով դուք ցույց եք տալիս, որ ձեզ համար նրա դեկավար դերը, այդ յոթը կնիքով կնքված մի գիրք է, և որ դուք անընդունակ եք այդ բոլորը հասկանալու։ Այսպիսով պետք է ամենայն իրավամբ ասել, որ Ռուսաստանում պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի ֆորմուլան առաջին անգամ ձևակերպել է Պլեխանովը։ Յեվ քանի որ նա հետագայում պաշտպանում եր մենշևիկներին, դրանով նա անխնա հարվածում եր իր անցյալին՝ հրաժարվելով այն քարոզից, որը ռուսական հեղափոխական շարժման պատմության փայլուն եջերն է կազմում։

## ԼԵՆԻՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵԳԵՄՈՆԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԻ ՀԱՅՐԵՐԻՑ ՄԵԿՆ Է.

Պրոլետարիատի հեգեմոնիայի յերկրորդ հայրը Լենինն եր, որ կարողացավ զանազան վիճակներում, չտեսնված դժվար և բարդ պայմաններում, յերեք տասնամյակներից հետո այդ գաղափարը մեր որերին հասցնել։ Առաջին անգամ Լենինը ձևակերպել և այդ գաղափարը մի շատ հետաքրքիր գրվածքում, որը միայն նոր է պատրաստվում տպագրության համար։ 1894 թվականին նա գրել եր առաջին խոշոր հեղափոխական աշխատությունը, որ նա անվանեց «Ո՞վքեր են ժողովրդի բարեկամները և ինչպես են նրանք պայքարում ընդդեմ սոցիալ-դեմոկրատների» (Զմոռանանք, որ այն ժամանակ մենք բոլորս ել կոչվում եյինք սոցիալ-դեմոկրատներ)։ Լենինի այս գրվածքը, ինչպես ասացի, այն ժամանակ չկարողացավ լույս տեսնել։ Միայն նորերս հաջողվեց գտնել այդ գրվածքը մասամբ վոստիկանության դեպարտամենտի արխիվներում, մասամբ արտասահմանյան արխիվներում, մասնավորապես Բերլինում։ Լենինի այս գիրքը, որ բռնում է մոտ 15 տպագրական թերթ և կետ առ կետ վեր է լուծում նարոդնիկների մոլորությունը, վերջանում է նշանավոր բառերով։ Ապացուցելով, որ մի նոր աստղ է ծագում հանձինս բանվոր դասակարգի, և որ դա կլինի ազատարար դասակարգ, հեգեմոն-դասակարգ, հեղափոխության գլխավոր ուժն ու հիմնական զսպանակը, Լենինը մոտավորապես հետևյալն է ասում.—Հիմա ռուս բանվորները դեռևս չեն հասկանում բանվոր դասակարգի դերը, որպես հեգեմոնի, և կամ միայն առանձին անհատներն են հասկանում այդ։ բայց կգա ժամանակ, յերբ այդ դերը կհասկանան Ռուսաստանի բոլոր առաջավոր բանվորները։ իսկ յերբ այդ տեղի կունենա, ռուս բանվոր դասակարգն իր յետևից տանելով գյուղացիությանը, Ռուսաստանը կոմունիստական հեղափոխության կհասցնի։

1894 թ.

Այս ասված է 1894 թվին։ Համաձայնվեցեք, վոր հիմա՝ 30 տարի անց, այս բառերը կարդում ես մի ինչ-վոր զարմանքով։ Նույնիսկ տերմինոլոգիան՝ պրոլետարիատը, վոր իր յետևից տանում է գյուղացիությանը, նույնիսկ այնպիսի եպիտետներ, վորոնք բնորոշում են մեր հեղափոխությունը, ինչպես «կոմմունիստական» բառը, այս բոլորն ամբողջովին պարունակվում է Լենինի այս պատմական աշխատության յեզրափակման տողերում։ Յեվ, ինչպես կտեսնենք հետագայում, նա պաշտպանում եր այս գաղափարը 30 տարվա ընթացքում և բոլոր պարագաներում. պարագաները փոխվում եյին, սակայն պրոլետարիատի հիմնական գնահատումը՝ վորպես ապագա հեղափոխության հեգեմոնի՝ Լենինը և բայշևիկները յերբեք չեն փոխել։

## ԼԵԳԱԼ ՄԱՐՔՍԻԶՄԸ.

Պետք է, սակայն, ասել, վոր ճիշտ այնպես, ինչպես նարոդնիկության մեջ կար յերկու ուղղություն, այն ժամանակվա մարքսիզմի մեջ ել կար յերկու հոսանք։ Մեր շարադրության մեջ վորոշ տեղ պիտի բռնի լեգալ մարքսիզմին վերաբերյալ գլուխը։

90-ական թվականների կեսերին մեր յերկրում, մեզ արդեն հայտնի բանվորական շարժման և ընդհանրապես քաղաքական պայքարի կենդանացման ֆոնի վրա, առաջին անգամ ծագում և լեգալ մարքսիզմ կոչվող հոսանքը։ Յեթե անլեգալ մարքսիզմը ծագել է Ռուսաստանում 1883 թվին, յերբ յերևան յեկավ «Աշխատանքի ազատագրման խմբակը», ապա լեգալ մարքսիզմը ծնվել է մոտ 12 տարի հետո։ Միայն Պլեխանովի հիշյալ խմբակի կազմակերպումից ավելի քան 10 տարի անցնելուց հետո Ռուսաստանում հնարավոր յեղավ լեգալ մարքսիզմի առաջանալը։ Յեվ անա այդ լեգալ մարքսիզմի մեջ ևս կար առնվազն յերկու հիմնական հոսանք։

Նրանցից մեկի գլուխ կանգնած եյին Պլեխանովը ու Լենինը, մյուսի՝ Ստրուվեն, Տուգան-Բարանովսկին և ուրիշները։ Այս տեսակետից յերկու գրական աշխատություն վճռական բնույթ ունեն։ Այդ, մի կողմից՝ Ստրուվեյի «Քննադատական դիտողություններ» գիրքն է, վոր լույս տեսավ 1894 թվին, մյուս կողմից՝ Լենինի այն գիրքը, վորի անունը յես տվեցի—«Ո՞վքեր են ժողովրդի բարեկամները»։ (Վերջինս, չնայած նրան, վոր մինչև այժմս դեռ չեր հրատարակված և չուներ մասսայական թվով ընթերցողներ, այնուամենայնիվ մուտք գործեց մարքսիստների և առաջին բանվոր-հեղափոխականների խմբակները և իր պատմական դերը խաղաց)։



## ՍՏՐՈՒՎԵՆ ԱՌԱՋ ՅԵՎ ՀԻՄԱ.

Ո՞վ եր այն ժամանակ Ստրուվեն։ Այն ժամանակ նա դեռ յերիտասարդ, սակայն արդեն վորոշ հույսեր ներշնչող գրականագետ եր, վորն իրեն մարքսիստ անվանեց, պայքար եր մղում Միխայլովսկու դեմ, իրեն համարում եր մեր կուսակցության անդամ և հետագայում 1898 թվի նրա առաջին համագումարի մանիֆեստի հեղինակը դարձավ։ Մի խոսքով՝ նա այն ժամանակ խոշոր մեծության մարքսիստական աստղ եր։ Ո՞վ է Ստրուվեն հիմա։ Դուք այդ գիտեք։ 1905 թվի նախորյակին նա Շտուտգարտում հրատարակվող անլեգալ բուրժուական-լիբերալական «Ասվաբաժդենիյե» ամսաթերթի խմբագիրը դարձավ։ Հետո նա դարձավ Միլյուկովի հետ միասին կադետական կուսակցության ղեկավարներից մեկը, տեղ բռնելով նրա աջ թևում։ Ավելի ուշ նա դարձավ համոզված մոնարխիստ և հակահեղափոխական, իսկ Ստալըիպինի հաղթանակի շրջանում՝ նրա յերգիչը։ Փետրվարյան հեղափոխությունից հետո նա անմիջապես տեղ է բռնում կադետական կուսակցության ծայրահեղ աջ թևում, իսկ հետո դեր խաղաց (այն ել շատ մեծ) սպիտակ եմիգրացիայի շարքերում Դենիկինի, Վրանգելի և ուրիշների կառավարության մեջ։ Հիմա Ստրուվեն արտասահմանում և գտնվում և հակահեղափոխության ականավոր իդեոլոգներից մեկն է։ Կերպարանափոխությունը, ինչպես տեսնում եք, բացառիկ է։

Ասեմ իդեպ, վոր իմ պատմության ընթացքում դուք կհանդիպեք շատ խոշոր դեմքերի, վորոնք անցել են հեղափոխական շարժման բովով, նրա ձախ թևից սկսած մինչև հակահեղափոխական աջ բանակը։ Բավական է բացի Ստրուվեյից հիշատակել նաև Զայկովսկուն, վորի մասին յես խոսում եյի իմ անցյալ դասախոսության մեջ, Տիխամիրովին, վորը «Նարոդնայա վոլյայից» գլորվեց մինչև ցարական գահի պատվանդանը, Պլեխանովին, վորն սկսելով պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի հիմնադրից՝ վերջացրեց իր տխուր որերը վորպես աջ մենշևիկ-պաշտպանողական, և վերջապես Բրեշկովսկայային, վորն սկսեց իր հեղափոխական գործունեությունը հեղափոխական-նարոդնիկների ձախ թևում և վերջացնում է իր որերը նույնպես բուրժուական հակահեղափոխության բանակում։

Այս բոլոր եվոլյուցիաներն ու կերպարանափոխությունները պատահական չեն։ Սոսկալի բեկման այն շրջանում, վորը վիճակվեց մեր յերկրին, յերբ 12 տարվա ընթացքում մենք ունեցանք 3 մեծ հեղափոխություն, անխուսափելի յեր, վոր առանձին անհատների տեսակետն ու հայացքը անկայուն դուրս գար։ Ցարիզմի լծի տակ, ամբողջ յերկիրը ճնշող այս գերեզմանային վեմի տակ, անխուսափելի յեր, վոր վոմանք իրենց տեղը համարեյին այնտեղ, վորտեղ, իրոք, չպետք է

լինելին և պատահականորեն ընկնելին այս կամ այն կուսակցության մեջ, իսկ յերբ հասներ վճռական բոպեն, հաճախ հակառակ բանակն անցնելին։ Նույնը պատահեց նաև լեգալ մարքսիզմի նկատմամբ։ Նրա մի ամբողջ թևը հետո դարձավ Ռուսաստանի բուրժուական հակահեղափոխության ղեկավար։

## ՍՏՐՈՒՎԵՅԻ «ԲՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ».

Ստրուվեյի «Բննադատական դիտողություններ» գիրքն ամբողջովին ուղղված եր նարոդնիկության դեմ։ Նա նվիրված եր մի նյութի վերլուծության, այն է՝ Ռուսաստանում կապիտալիզմ լինելու յե, թե վոչ։ Իրավացի յեր Ստրուվեն իր նարոդնիկության քննադատության մեջ, յերբ գրում եր. «Զուր եք դուք յերազում մի ինչ-վոր ուրույն կենցաղ ունեցող Ռուսաստանի մասին, տնտեսապես անկախ մանր սեփականատերերի մասին։ Վոչ, վերցրեք ձեր նարոդնիկյան ակնոցները, նայեցեք՝ Ռուսաստանն առաջ է գնում, նրա մեջ կառուցվում, հիմնվում են գործարաններ, առաջանում է քաղաքային արդյունաբերական պրոլետարիատ։ Կապիտալիզմը Ռուսաստանում անխուսափելի յե։ Ռուսաստանը կանցնի կապիտալիզմի շրջանից»։ Այս մասում Ստրուվեն, ինչպես և Տուգան-Բարանովսկին, իրավացի յեր՝ համամիտ լինելով Լենինին և Պլեխանովին։ Յեվ իրոք, այն ժամանակ հերթական խնդիրը՝ ապացուցել Ռուսաստանում բանվոր դասակարգի, խոշոր գործարանների առաջացման անհրաժեշտությունը. պետք եր ապացուցել, վոր կապիտալիզմը գալիս է և վոր նա ունի իր առաջադիմական կողմը, ինչի մասին մենք՝ մարքսիստներս միշտ ել քաջություն ենք ունեցել ասելու՝ մինչև հիմա յել պնդելով, վոր ճորտատիրության և կամ անդրջրհեղեղյան ֆեոդալական հասարակակարգի հետ համեմատած՝ կապիտալիզմը մի քայլ և դեպի առաջ։ Կապիտալիզմը կոտրատում է բանվորների վոսկրները, շահագործում է նրանց և վորոշ իմաստով՝ այլանդակում. այդ ճիշտ է, սակայն կապիտալիզմն ստեղծում է մեծ գործարաններ, ելեկտրոֆիկացիայի յե յենթարկում յերկրները, բարձրացնում է գյուղական արդյունաբերությունը, ստեղծում է հաղորդակցության ճանապարհներ, ճորտատիրության պատվարն է քանդում, և այդ չափով նա պրոգրեսսիվ յերևույթ է։

Հեղափոխական մարքսիստները կրկնակի անելիք ունեյին։ Նրանց անհրաժեշտ եր մի կողմից բոլորովին գետին գլորել նարոդնիկներին, վորոնք ապացուցում եյին, վոր կապիտալիզմ չի լինելու և համոզում եյին, վոր կապիտալիզմը ժանտախտ է, հանցանք, չարիք, դժոխքի ծնունդ, և վոր մենք պետք է փախչենք նրանից, ինչպես կրակից։ Մյուս կողմից՝ այն ժամանակվա հեղափոխական մարքսիստներին անհրաժեշտ եր կապիտալիզմի առաջին իսկ նշանները յերևալուն պես բանվոր դասակարգի հենց սաղմնավորման որերին կազմակերպել նրան և ստեղծել բանվորական կուսակցություն։ Յեվ ահա Ստրուվեն, շատ լավ մշակելով առաջին հարցը, միանգամայն «մոռանում եր» յերկրորդը։ Նա համոզեցուցիչ կերպով ապացուցում եր, վոր կապիտալիզմն անխուսափելի յե, վոր նա գալիս է, վոր նա արդեն յեկավ և վոր նա ունի իր պրոգրեսսիվ կողմը. սակայն նա աչքաթող եր անում մեր հիմնական անելիքը, վոր յեթե կապիտալիզմը յեկավ, յեթե բանվոր դասակարգը յերևան յեկավ, ապա անհրաժեշտ է անմիջապես սկսել բանվորների կազմակերպումը, ստեղծել հենց ցարական Ռուսաստանում բանվորական կուսակցություն և նրան նախապատրաստել պայքարելու վոչ միայն ընդդեմ ցարի, այլ և ընդդեմ բուրժուազիայի։ Ստրուվեյի «Բննադատական դիտողություններ» գիրքը վերջանում եր նշանակալից նախադասությամբ։ Նա գրում եր. «Յեվ այսպես, ճանաչենք մեր անկուլտուրականությունը և գնանք սովորելու կապիտալիզմից»։ Համեմատեցեք Ստրուվեյի 1895 թվի այս վերջաբան ակկորդը Լենինի 1894 թվի «Ո՞վքեր են ժողովրդի բարեկամները» գրքի յեզրափակման հետ։ Լենինը ևս հարվածում եր նարոդնիկությանը՝ ապացուցելով, վոր կապիտալիզմը գալիս է, վոր նա յեկավ, վոր նա անխուսափելի յե, վոր այս ետապն անհրաժեշտ է, վոր կապիտալիզմը նախապատրաստում է բանվոր դասակարգի հաղթանակը. բայց միաժամանակ նա իր գրքի վերջում մի գուշակություն է անում, վորն այժմս արդարացավ և այն է, վոր ռուս բանվորները կհասկանան բանվոր դասակարգի դերը, վորպես հեգեմոնի, և հասկանալով այդ, իրենց յետևից կառնեն գյուղացիությանը և Ռուսաստանը կհասցնեն կոմունիստական հեղափոխության։ Այս եր այն ժամանակներում Լենինի և Ստրուվեյի միջև յեղած «փոքրիկ» տարբերությունը։ Այնուամենայնիվ ցարիզմի տիրապետության ժամանակ հարաբերություններն այն աստիճանի խճճված եյին, վոր ըստ եյության իրարից այսքան տարբերվող մարդիկ համախոհներ եյին համարվում և մի բանակում եյին գտնվում։ Վոմանք հռչակում եյին «գնանք կապիտալիզմից սովորելու» լոզունգը, մյուսներն ասում եյին. «Մենք կբարձրացնենք բանվոր դասակարգին, հեգեմոն-պրոլետարիատին, վորպեսզի Ռուսաստանը դեպի պրոլետարական հեղափոխություն տանենք»։ Յեվ բոլորը միասին եյին առաջ գնում, կարծես մի շարքով, մի ճակատով ընդդեմ նարոդնիկության։ Կրկնում եմ, այդ վերին աստիճանի անորոշ պահին, դիֆֆերենցիացիայի չենթարկված հասարակական հարաբերությունների այդ որերին այդ բոլորն անխուսափելի յեր,—և այս հանգամանքն անջնջելի կնիք է դրոշմել մեր կուսակցության հետագա ամբողջ զարգացման վրա։

## ՊԼԵԽԱՆՈՎԸ ՎՈՐՊԵՍ ԹԵՈՐԵՏԻԿ ՅԵՎ ԼԵՆԻՆԸ ՎՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՈՐԾԻՉ.

Գրական մյուս աշխատություններից պետք է հիշատակել 1895 թվին լույս տեսած Պլեխանովի (Բելտովի) «Մոնիստական պատմաբանության զարգացման հարցի առթիվ» գիրքը։ Այս աշխատության մեջ Պլեխանովը հանդես է բերել իր ամենափայլուն կողմերը՝ ճակատամարտ մղելով նարոդնիկության հետ գլխավորապես մի այլ—փիլիսոփայական ասպարեզում և հանդես գալով վորպես մատերիալիզմի պաշտպան։ Թվում է ինձ, վոր մեր ժամանակակից դոցենտներից շատերը փոխանակ կիսագետի մեծամտությամբ «քննադատելու» Պլեխանովին, ինչպես նրանք այդ հաճախ անում են, ավելի խելացի կվարվեին, եթե նրանք **շարագրեին** **յեվ բացատրեին** նոր սերնդին այս նշանավոր գիրքը, վորի ոգնությամբ մարքսիստների ամբողջ սերունդներ սովորել ու ձեռք են բերել մարտական մատերիալիզմի հիմունքների ըմբռնողությունը։

Քաղաքական հարցերում Պլեխանովը յերբեք առանձնապես ուժեղ չի յեղել. նա թեորետիկ եր։ Նա այն ժամանակ կուսակցության, նույնիսկ մարքսիստական մտավորականության ու մարքսիստ բանվորների մի ամբողջ սերնդի հանրաճանաչ իդեական ղեկավարն եր։ Լենինը նրանից յերիտասարդ եր, նա նոր սկսում եր աշխատել։ Յեվ ահա, հետադարձ հայացք նետելով, մենք պարզ տեսնում ենք հիմա, թե ինչպես 90-ական թվականների յերկրորդ կիսից սկզբում կարծես թե աշխատանքի վորոշ բաժանում է սահմանվում Պլեխանովի և Լենինի միջև։ Նրանք յերկուսն էլ այս մասին չեյին պայմանավորվում, բայց փաստորեն այդ այդպես եր։ Պլեխանովի ուժեղ կողմը—տեսական կողմն եր, և նա հանձն եր առնում ճակատել հակառակորդի հետ փիլիսոփայական ասպարեզում, վորտեղ նա եր և կմնա անզուգական վարպետ։ Իսկ յերիտասարդ Լենինն իր առաջին իսկ գրվածքներում կենտրոնացրեց իր ամբողջ ուշադրությունը սոցիալիստական-քաղաքական հարցերի, կուսակցության և բանվոր դասակարգի կազմակերպման վրա։ Յեվ այդ իմաստով նրանք միաժամանակ իրար լրացնում եյին։

Պետք է նույնպես հիշատակել Լենինի գիրքը, վոր նա գրել է աքսորում՝ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», վորով նա առաջին անգամ հանդես յեկավ, վորպես խոշոր տնտեսագետ։ Այս աշխատության մեջ նա վեր է լուծում սոցիալական հարաբերությունները Ռուսաստանում և զարմանալի պարզությամբ ու գիտականորեն ապացուցում է կապիտալիզմի անհերքելի զարգացումը Ռուսաստանում։



## ԼԵՆԻՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՍՏՐՈՒՎԵՅԻ ԴԵՄ.

Այսպիսով լեգալ մարքսիզմի մեջ հենց սկզբից յերևան յեկավ յերկու ուղղություն։ Լենինը լույս չտեսած և այրված «Մարքսիստական ժողովածուի» մեջ քննադատության յենթարկեց Ստրուվեյի «Քննադատական դիտողությունները» և այլ յելույթները։ (Նրա այս մասին «Տուլին» կեղծանվան տակ գրած հոդվածը մտել է նրա յերկերի ժողովածուի մեջ, և դուք կարող եք կարդալ)։ Լենինը առաջիններից մեկն եր, վոր ձեռք-ձեռքի ընթանալով Ստրուվեյի հետ, այնուամենայնիվ զգում եր, վոր այս դաշնակիցն այնքան էլ վստահելի չէ։ Այն տարիներին, յերբ Ստրուվեն Ռուսաստանի լեգալ մարքսիզմի ամենափայլուն ներկայացուցիչներից մեկն եր, նրան առարկելը բավական դժվար եր, սակայն Լենինն արեց այդ։ Արդեն հիշատակված հոդվածում «Տուլին» ստորագրությամբ, նա վերլուծելով Ստրուվեյի լեգալ գրվածքները, հանդիմանում եր նրան ամենալուրջ մեղքի համար։ Նա կարծես թե ասելիս լիներ նրան.—Դու տեսնում ես յերևույթի մի կողմը, վոր կապիտալիզմը գալիս է, վոր նա հարվածում է համայնքին և ճորտատիրությանը, բայց դու չես տեսնում յերևույթի մյուս կողմը, չես տեսնում, վոր մեր անելիքն այն չէ, վոր կապիտալիզմի յերեսն գալու հետևանքով գնանք նրա մոտ նրանից բան սովորելու, այլ այն է, վոր անմիջապես կազմակերպենք մեր դասակարգը, բանվոր դասակարգը, վորը կկարողանա տապալել ցարի ինքնակալությունը և ապա արշավել ընդդեմ կապիտալի ինքնակալության... Իրոք, այստեղ կարելի յե նորից ասել, վոր լեգալ մարքսիզմի միևնույն բանակի յերկու խմբերի միջև մղվող այս յերկու հիմնական վեճը հանդում է պրոլետարիատի հեգեմոնիայի հարցին, այն հարցին, թե պրոլետարիատը, վորպես դասակարգ, կխաղա արդյոք ղեկավար դեր հեղափոխության մեջ, արդյոք նա իրոք այնպիսի պայքար կմղի, վորը վերջնա բանվոր դասակարգի հաղթանակով և կապիտալիզմի վոչնչացումով, թե նա միայն կգնա ուրիշ ոպպոզիցիոն ուժերի հետ կողք-կողքի և կանգ կառնի ինքնակալությանը հաղթելուց հետո, այսինքն, յերբ Ռուսաստանում բուրժուական հասարակակարգ կհիմնվի։

Այս ֆոնի վրա յե տեղի ունենում բանվորական կուսակցության կազմակերպումը Ռուսաստանում։

Յեթե դուք նայեք մյուս յերկրներին, թեկուզ Գերմանիային, յեթե հիշեք Լասսալի պատմական աշխատությունը, կտեսնեք, վոր այս յերկրում բուրժուական կուսակցություններին ավելի շուտ հաջողվեց տիրապետել բանվորների մեծ մասին, քան վերջիններս ստեղծեցին իրենց կուսակցությունը։ Լասսալն սկսեց նրանից, վոր բուրժուական կուսակցությունների ազդեցությունից ազատում եր բանվորներին,

նրանց այն խավերին, վորոնց բուրժուազիան արդեն հաջողել եր նը-
վաճել, և նրանց քաշում եր դեպի բանվորական սոցիալիստական կու-
սակցությունը։ Ցեվ այն, ինչ տեղի յեր ունենում Գերմանիայում, պա-
տահական յերևույթ չեր։ Բուրժուազիան ամենուրեք վորպես դասա-
կարգ կազմակերպվում եր ավելի առաջ, քան պրոլետարիատը, և ամեն
տեղ նա ուներ իր կուսակցությունները, իր իդեոլոգները և իր գրա-
կանությունը ավելի առաջ, քան պրոլետարիատը, և աշխատում եր
բանվորների մի մասին տանել իր յետևից, իր կուսակցության յետևից։

Ռուսաստանում ևս տեղի յեր ունենում այս յերևույթը, սակայն
շատ յուրահատուկ ձևով։ Չնայած նրան, վոր բուրժուազիան, վորպես
բացահայտ քաղաքական ուժ, սկսեց կազմվել մեզանում ավելի ուշ,
այնուամենայնիվ մեզանում ել տեսնում ենք, վոր առաջին բանվո-
րական խմբակները, առաջին հեղափոխական բանվորները հակված եյին
վոչ թե դեպի բանվորական կուսակցությունները, այլ նարոդնիկյան
կուսակցության կողմը, վորը վերջին հաշվով թեպետ և բուրժուական-
դեմոկրատական, սակայն, այնուամենայնիվ, բուրժուական կուսակցու-
թյուն եր։ Լենինը ևս ստիպված եր վորոշ չափով սկսել նրանից, ինչից
սկսեց Լասալը Գերմանիայում։ Պարագաները, իհարկե, ուրիշ եյին, ի-
դեալական պայքարը կրում եր այլ ձևեր, սակայն հարցի եությունը
շատ տեսակետից նույնն եր։ Նա ստիպված յեղավ սկսել նրանից, վոր-
պեսզի յետ բերի բանվորների այն առանձին խմբերին, վորոնք մոլոր-
վեցին և ընկան վոչ թե բանվորական, այլ նարոդնիկյան, ըստ եյու-
թյան բուրժուական, կուսակցությունների գիրկը, իսկ հետո գրավե-
լով այդ խմբերին, սկսել կառուցել նրանց հետ բանվորական կուսա-
կցություն։ Այսպիսով յեթե մենք նկատի ունենանք յերկու հոսանք
նարոդնիկության մեջ մի կողմից և յերկու հոսանք լեգալ մարքսիզմի
մեջ մյուս կողմից, ապա մեր առաջ կտեսնենք այն իդեական հենքը,
վորի վրա սկսեց ստեղծվել բանվորական կուսակցությունը Ռուսաստա-
նում։

Իսկ հիմա, բոլոր ասածներից հետո, յես կարող եմ անցնել իմ
անմիջական նյութին—կուսակցության պատմությանը նրա իսկական
իմաստով։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՆԴԱՅԻՆ ՇՐՋԱՆԸ.

Իր «Ի՞նչ անել» գրքում, վորի մասին յես դեռևս ստիպված կը-
լինեմ խոսել, ընկ. Լենինը գրում եր, վոր մեր շարժումը 80-ական և
90-ական թվականների սկզբներից կարծես թե կուսակցության ար-
գանդային շրջանն և կազմում։ Այս տասնամյակի ընթացքում բանվոր
դասակարգը, կարծես թե, դեռևս արգանդում եր կրում իր ապագա



զավակին՝ բանվորական կուսակցությունը։ Դեռ նոր եյին ստեղծվում
առաջին խմբակները, վորոնք շատ անկայուն եյին և մերթ քայքայ-
վելով, մերթ վերածնվելով՝ սկսում եյին առաջին խոշոր իդեական
պայքարը հանուն բանվորական կուսակցության անկախության, հա-
նուն հեգեմոն-պրոլետարիատի գաղափարի։

90-ական թվականների առաջին կեսերին արդեն կուսակցությունը
կառուցվում է մասսայական բանվորական շարժման հիման վրա, և
այդ շրջանը կարելի յե նկատել վորպես նրա մանկության ու պատա-
նեկության շրջան։ Միաժամանակ ծագում է գործադուլային շարժումը,
վորն արագ աճում է, ինչպես այդ յերևում է հետևյալ թվերից. 1881 թ
մինչև 1886 թ. տեղի յե ունեցել ընդամենը 40 գործադուլ, վորոնց
մասնակցում եր 80 հազար բանվոր։ 1885-ից մինչև 1899 թ. գործա-
դուլային շարժումն արդեն ընդգրկում է գրեթե կես միլիոն՝ 450 հազար
բանվոր, այսինքն՝ գործադուլավորների թիվը ավելանում է մոտ 6-7
անգամ. Պետերբուրգում գործադուլային շարժումը բավականի խոշոր
եր 1878 թվին։ 80-ական թվականների սկզբներից նա ընդունում է
ավելի խոշոր չափեր, իսկ 90-ական թվականների կեսերին գործադուլն
ընդգրկում է միանգամից մանածագործական (տեկստիլ) արտադրու-
թյան մինչև 30 հազար բանվորներ։

## ԱՌԱՋԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ.

Այս պայմաններում սկսում են առաջանալ բանվորական **սոցիալ-
դեմոկրատական** խմբակները։ Առաջին այսպիսի խմբակն ստեղծեց
Բլագոյևը, վոր ծագումով բուլգարացի յեր։ 1884 թվին նա ուսանող եր
Պետերբուրգում, վորտեղ այն ժամանակ սովորում եյին շատ բուլգա-
րացիներ։ Ուրիշ ընկերների հետ միասին, վորոնց անունները պահ-
պանվել են՝ Գերասիմովի և Խարիտոնովի հետ, նա իր շուրջը ժողովեց
համախոհների մի խումբ՝ առաջինը հիմնելով Պետերբուրգում սոցիալ-
դեմոկրատական խմբակ, վորը պակաս դեր չխաղաց, քան Խալտուրինի
հիմնած «Հյուսիսային-ռուսական բանվորական միությունը»։ Բլա-
գոյևը վախճանված է արդեն։ Նա բուլգարական կոմունիստական կու-
սակցության լիդերն եր և III Ինտերնացիոնալի հիմնադիրներից մեկը։

## «ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ».

Առանձնապես հարուստ եր դեպքերով 1895 թիվը։ Ցեսարդեն մատ-
նանշեցի, վոր այդ տարին լույս տեսան մի շարք գրքեր, վորոնք լոկ սո-
վորական գրքեր չեյին, այլ ուղեցույցներ բանվոր դասակարգի ստեղծ-

ման ճանապարհին։ Այս թվականը նշանավոր է նույնպես և նրանով, որ այն ժամանակ հիմնվեց Պետերբուրգում «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը»։ Իսկապես կարելի է ասել, այդ մեր կուսակցության առաջին նահանգային կոմիտեն եր։ Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միություններ հետագայում ստեղծվել են նաև մի շարք քաղաքներում. 1895 թ. Իվանովո-Վազնեսենսկում, 1896 թ. Մասկվայում։ Այդ միություններն առաջին խոշոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն եյին, որոնք մեր կուսակցության հիմք ծառայեցին, իսկ առաջինը՝ Պետերբուրգինը ուներ իր շարքերում բավականի նշանավոր անձինք և ամենից առաջ ընկ. Լենինին, որը և նրա կազմակերպիչն եր։ Այդ միությանն եյին պատկանում նույնպես Ս. Ի. Ռադչենկոն, Կրժիժանովսկին, որ հիմա աշխատում է Խորհրդային Ռուսաստանի էլեկտրոֆիկացիայի ասպարեզում, Վանեյևը, Ստարկովը, Մարտովը, որոն, ինչպես գիտեք, ներկայումս մենշևիկ է, Սիլվինը (բայլևիկ), Պուտիլովի գործարանի բանվոր Բ. Զինովյևը, որի վիճակի մասին դժբախտաբար յես վոչինչ չգիտեմ, Որուխովի գործարանի բանվոր Շելգունովը, մեր կուսակցության անդամը, որ կենդանի է մինչև որս, բայց ցավոք սրտի կուրացել է, և վերջապես Ալեքսանդրովի թուջաձուլարանի բանվոր Բաբաշկինը, որը 1905 թ. գնդակահարվեց Սիբիրում Ռենենենկամպֆի վաշտի կողմից,—առաջին բայլևիկներից մեկը, որին ընկ. Լենինը մինչև վերջը մեծ համակրանքով եր վերաբերվում, որպես բանվոր-մարքսիստների առաջին սերնդի ամենաականավոր ներկայացուցիչներից մեկին։

## ՊՐՈՎԻՆՑԻԱԼ Ս.-Դ. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐ.

Նույն ժամանակներում ամբողջ Ռուսաստանում ցրված եյին բազմաթիվ խմբակներ, որոնք փորձում եյին համախմբվել, և շատ քաղաքներում մեծ ազդեցություն ունեյին։ Մարտովի գրքում դուք կգտնեք (նա անունների զարմանալի հիշողություն ունի) այն ժամանակվա խմբակավորների յերկար ցանկ։ Արժե, որ յես կարդամ այդ անունները. Կրասին՝ Պետերբուրգում, նա, որ այժմս մեր կարևորագույն գործիչն է, Ֆեդասեյև՝ Վլադիմիրում, Մելնիցկի՝ Կիևում, Ալաբիշև՝ Ռոստովում, Գոյլդենդախ (Ռյազանով), Ստեկլով և Ցիպերովիչ՝ Ոդեսայում, Կրեմեր, Այզենշտադտ, Կասովսկի և ուրիշները՝ Վիլնայում, Խինչուկ՝ Տուլայում։ Ընկ. Խինչուկն սկզբում մեր կուսակցության հիմնադիրներից մեկն եր. հետո նա դարձավ մենշևիկ և նրանց կենտրոնական կոմիտեյի անդամն եր, ապա Մասկվայի մենշևիկյան խորհրդի առաջին նախագահը, որից հետո անցավ մեր կուսակցության



շարքերը. այժմ նա կոոպերացիայի գլխավորն է։ Ինչ վերաբերում է Կրեմերին, Այզենշտադտին և Կասովսկուն, նրանք «Բունդի» հիմնադիրներն եյին, որի մասին պետք է միքանի խոսք ասեմ։

## ԲՈՒՆԴ.

Ներկայումս «Բունդ» բառը շատ քիչ է հայտնի մեր խոշոր քաղաքների բանվորներին, բայց մի ժամանակ հեղափոխական բանակում նա շատ մեծ ժողովրդականություն ուներ։ Բունդ հրեարեն նշանակում է **միություն**. այս դեպքում՝ Լեհաստանի և Լիտվայի հրեա բանվորների միություն։ Նա հիմնվեց 1897 թ., մեր կուսակցության առաջին համագումարից մի տարի առաջ։ Նա հետևանք եր Լեհաստանի և Լիտվայի հրեա արհեստավորների ուժեղ, նույնիսկ մրրկալից շարժման, մի շարժում, որ միքանի տարով կանխեց Պետերբուրգի և Մասկվայի բանվորական շարժումը։ Սրա համար կային պատճառներ։ Բանն այն է, որ հրեա բանվորներն ու արհեստավորներն այն ժամանակներում տանջում եյին վոչ միայն կապիտալիզմի, տնտեսական շահագործման լծի տակ, այլ նաև ազգային հալածանքի լծի տակ։ Շնորհիվ այս հանգամանքի հրեա բանվորներն ու արհեստավորներն ավելի շուտ հեղափոխականացան, քան թե ուրիշ քաղաքների բանվորները, և միություն կազմելով, որն ստանում է «Բունդ» անունը, կարողացան ուրիշներից շուտ ստեղծել մասսայական բանվորական կազմակերպություն։

Այս հրեական բանվորական կազմակերպության շարքերից քիչ անհատ հերոսներ, քիչ խոշոր գործիչներ դուրս չեկան։ Բավական է հիշատակել Վիլնայի վոստիկանապետ ֆոն-Վալին վիրավորող հրեա բանվոր Լեկերտին և հիշել հրեական բանվորական շարժման գործիչների մի ամբողջ շարք, որոնք մինչև որս էլ գտնվում են մեր կուսակցության շարքերում և մասնակցել են նրա կազմակերպման գործին։

Ինչպես ասացի, 1897 թվին հիմնված Բունդը, մի ժամանակ, 2-3 տարի շարունակ մեր կուսակցության ամենաուժեղ և բազմանդամ կազմակերպությունն եր։ Սակայն հետո, յերբ արթնացան մեր ամենախոշոր քաղաքները՝ Պետերբուրգ, Մասկվա, Իվանովո-Վազնեսենսկ և Օրեխովո-Զույևո, յերբ վոտքի յելան ռուս բանվորների խոր շերտեր, այն ժամանակ հրեա արհեստավորների մի փոքրաթիվ ջոկատ, որ առաջ վորոշ տեսակետից առաջավոր դիրք եր գրավում, պետք է, ինարկե, յերկրորդական տեղ բռներ։ Սակայն և այնպես, 90-ական թվականների յերկրորդ կեսին հրեա բանվորների շարժումը շատ խոշոր եր, և Բունդի դերը կուսակցության մեջ շատ մեծ եր։ Բավական է ասել, որ մեր կուսակցության 1898 թ. առաջին համագումարի գլխավոր

կազմակերպիչը Բունդն եր։ Ցեվ պատահականություն չէ, վոր այդ համագումարը Մինսկում եր, հրեաների նստակեցության գծի սահմաններում, Բունդի գործունեության տերրիտորիայում։ Ի միջի այլոց, սև հարյուրակային մամուլը՝ տեսնելով, վոր հրեա բանվորներն ու արհեստավորները մի վորոշ ժամանակ առաջին հրացանաձիգների դեր էին խաղում, ինչպես ձեզ հայտնի է, կատաղի հալածանք սկսեց և յերկար տարիներ ապացուցում եր, վոր Ռուսաստանի հեղափոխական շարժման պատճառը բացառապես հրեաներն են։

Այժմ ծանոթանալով մի հզոր կազմակերպություն դարձած մեր կուսակցության պատմությանը, թվում է ինձ, վոր պարտավոր ենք հիշել խիզախ հրեա բանվորներին և արհեստավորներին, վորոնք առաջինը պայքարի դուրս գալով, ոգնել են մեզ մեր կուսակցության շենքի առաջին աղյուսները դնելու։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.

Իսկ այժմ նորից վերադառնանք բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միություններին։ Պետերբուրգում, Մասկվայում, Իվանովո-Վազնեսենսկում, Կիևում և այլ քաղաքներում գտնվող այս միություններ ներկայացուցիչներից, այլ և Բունդի պատգամավորներից և այն ժամանակ բանվորական լրագրեր հրատարակող առանձին խմբակների ներկայացուցիչներից 1898 թվի մարտի 1-ին հրավիրվեց մեր կուսակցության առաջին համագումարը, վորին մասնակցում եյին 8 ներկայացուցիչ։ Մենք կարող ենք նրանց հանանե հանվանե թվել. «Բանվորական լրագրի» կողմից, Եյդեմանն ու Վիգդորչիկը (յերկուսն ել կենդանի յեն, առաջինը բայլշևիկ եր, իսկ յերկրորդը, ավաղ, աջ մենշևիկ), Պետերբուրգի պայքարի միությունից յեկավ Ս. Ի. Ռադչենկոն, վորը վախճանվեց 1912 թվին (նրա յեղբայրը՝ Ի. Ի. Ռադչենկոն կենդանի է և աշխատում է մեր կուսակցության մեջ)։ Կիևի միությունից՝ Տուչապսկին, վորը, յեթե չեմ սխալվում, նույնպես մեռել է։ Մասկվայի միությունից՝ Վաննովսկին։ Յեկատերինասլավից՝ Պետրուսևիչը, Բունդից՝ Կրեմերը, Կասովսկին և Մուտնիկը։ Ինչ վերաբերում է վերջինիս, նրա մասին վոչինչ չեմ կարող ասել. Կրեմերին և Կասովսկիին յես անձամբ ճանաչում եյի։ (Նրանք, դժբախտաբար, յերկուսն ել աջերից ավելի աջ մենշևիկներ են)։

Այսպես եր այդ առաջին համագումարի կազմը, վորը փորձեց կուսակցություն սաեղծելու աշխատանքը կատարել։ Համագումարն ընտրեց կենտրոնական կոմիտե, նշանակեց կենտրոնական որգանի խմբագրությունը և մի կոչ հրատարակեց, վորը, ինչպես ասացի, գրել եր վոչ այլ վոք, քան Գ. Բ. Ստրուվեն, այն մարդը, վորը հիմա բան-

տա-
ել շատ
ասաստանի
մ։
ածք կարդալու
ությունը բնորոշե-
հեղափոխության մա-
վին։
Ցեվրոպայի վրայով անցավ
կենդանաբար փոթորիկը։ Առաջին
ը պատմական ուժ բեմ յելավ ժամանակա-
ղոր դասակարգը։ Նրա ջանքերով բուրժուազիային հաջողվեց շատ հնացած ֆեոդալական-միապետական կարգերը վերացնել։ Սակայն բուրժուազիան շուտ նկատեց, վոր իր նոր դաշնակիցն իր ամենավոխերիմ թշնամին է և թե իրեն, թե նրան և թե ազատության գործը ռեակցիայի ձեռքը մատնեց։ Սակայն արդեն ուշ եր. ժամանակավորապես խաղաղացված բանվոր դասակարգը 10—15 տարուց հետո նորից յերևաց պատմության բեմում, սակայն կրկնապատկված ուժերով և ավելի մեծ ինքնագիտակցությամբ, վորպես իր վերջնական ազատագրման համար միանգամայն հասունացած մարտիկ»։

Հետո Ստրուվեն նկարագրում է միջազգային բուրժուազիայի դավաճանական դերը և անցնում է ռուսական բուրժուազիայի դերի գնահատմանը։ Ցեվ վոր ավելի հետաքրքիր է, նա բառացի կերպով հետևյալն է ասում.

«Վորքան ավելի դեպի Ցեվրոպայի արևելքը գնանք (իսկ Ռուսաստանը, ինչպես հայտնի է, Ցեվրոպայի արևելքն է), այնքան քաղաքականապես բուրժուազիան ավելի թույլ, վախկոտ և ոտար է դառնում, այնքան ավելի խոշոր կուլտուրական և քաղաքական խնդիրներ են վիճակվում պրոլետարիատին։

Կարծում եմ, վոր շատ բան կարելի է ներել Պյոտր Ստրուվեյին նրա այս մարգարեական խոսքերի համար։ Բանից դուրս յելավ, վոր նա գրում եր իր դասակարգի մասին։ Մեզ մնում է միայն նրա յետևից կրկնել, թե «վորքան ավելի դեպի արևելք, այնքան ավելի բուրժուազիան քաղաքականապես թույլ, վախկոտ և ստոր է դառնում»։ Ցեվ վոչ վոք այդ այնքան պարզ չապացուցեց, վորքան ինքը Պ. Ստրուվեն։

90-ական
սկսում են դրսևոր
թյան ասպարիզում,
նակվա թեկուզ և քիչ ձա-
թյան շարքերում։ Նրանց
կփորձեմ այն համառոտ կերպ-
կոնոմիզմը սերտ կապ ուներ այն հոսանքների
նկատվել էին լեգալ մարքսիզմի մեջ։ Իսկ եթե միասնա-
ռոտ ուզենանք արտահայտել եկոնոմիզմի և այն պայքարի էությ-
վորը տեղի ուներ մի կողմից այն ժամանակվա հեղափոխական մար-
քսիստների, քաղաքական պայքարի կողմնակից խսկրովցիների՝ ապագա
լենինցիների և մյուս կողմից եկոնոմիստների միջև, պետք է ասենք,
վոր այստեղ էլ, ինչպես և առաջ, ամեն ինչ հանգում է պրոլետարիա-
տի հեղափոխության մեջ խաղալիք դերի հարցին, նրա հեգեմոնիայի
հարցին։ Այս իդեան ավելի քան 30 տարվա ընթացքում հիմնական
ջրաբաժան գիծն է յեղել՝ կանգնելով մեր առաջ տարբեր պարագանե-
րում, տարբեր ձևերով։ 1917 թվին նա բաժանեց մեզ մենշևիկներից և
մեզ բարբիկաղների տարբեր կողմերում կանգնեցրեց, 1895 թվին նա
պարզապես գրական ընդհարման բնույթ ստացավ, իսկ 1898—1900 թ.թ.
նա վճռվում էր միջկուսակցական պայքարում... Յեվ ահա, մոտակից քն-
նելով փաստերը, դուք կտեսնեք, վոր եկոնոմիզմի կողմնակիցների և
լեգալ մարքսիզմի աջ թևի ներկայացուցիչների, մենշևիկյան կուսա-
կցության ապագա կառուցողների միջև կա նաև անձնական կապ։ Այդ
միևնույն ըջիջն է. լեգալ մարքսիզմից եկոնոմիզմի միջոցով դեպի
մենշևիզմ, ապա լիկվիդատորություն, իսկ հետո դեպի այն ընթացքը,
ինչ մենք այժմ տեսնում ենք, յերբ մենշևիկները բացահայտ կերպով
անցան բուրժուազիայի բանակը։ Այս մի տրամաբանական շղթա է։
Հեգեմոն-պրոլետարիատի հարցն այնքան կարևոր է, վոր յուրաքանչյուր
վոք, վոր այս հարցում սխալվեց, անպատիժ չի մնա։ Յուրաքանչյուր
վոք, ով այս հարցում սայթաքեց, ստիպված է մարմինների անկման
որենքով ավելի և ավելի ցած գլորվել։

## ԵԿՈՆՈՄԻԶՄԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.

Եկոնոմիզմը ծագեց 90-ական թվականների յերկրորդ կեսին, յերբ
սոցիալ-դեմոկրատիան սկսեց, ինչպես այն ժամանակ ասում էին,
խմբակի սիստեմից (кружковщина) անցնել ագիտացիայի, մասսայա-
կան աշխատանքի։ Ի՞նչ է խմբակների սիստեմը։ Անունից յերևում է,



վոր այդ այնպիսի մի շրջան էր, յերբ կուսակցությունը կազմվում էր
առանձին, շատ փոքր պրոպագանդիստական խմբակներից։ Ասենք այն
ժամանակ վոչինչ այլ բան չէր էլ կարելի անել, վորովհետև բանվոր-
ներին կարելի յեր հավաքել միայն առանձին միավորներով։ Սակայն
յերբ շարժումն սկսում է աճել, այն ժամանակ խոշոր գործադուլային
շարժման ֆոնի վրա, վորի մասին յես խոսել եմ, հեղափոխականներն
սկսեցին առաջադրել նոր, ավելի խոշոր խնդիրներ։ Նրանք ա-
սում էին.—Չի կարելի բավականանալ խմբակներով, պետք է անցնել
մասսայական աշխատանքի, ագիտացիայի, պետք է փորձել իմի հա-
վաքել վոչ միայն անհատ-բանվորներին, այլ և կազմակերպել բանվոր
դասակարգին։ Յեվ ահա այդ ժամանակ, այդ շատ կարևոր մոմենտին
ծնվում է «եկոնոմիզմ» կոչվող հոսանքը։ Ինչու այդ հոսանքն այդ-
պես անվանեցին, յես հիմա կբացատրեմ։

Յերբ սկսեցին բանվորների մասսայական կազմակերպության
անցնել, այն ժամանակ, միանգամայն հասկանալի յե, վոր բանվորների
տնտեսական պայքարի և անմիջական կենցաղի հարցերն սկսեցին խո-
շոր դեր խաղալ։ Բացի դրանից, խմբակների շրջանում միայն պրոպա-
գանդա յեր մղվում, վորը, հասկանալի յե, ստիպված եյին մասսայա-
կան աշխատանքի ժամանակ փոխարինել ագիտացիայով։

Հիշեմ իդեպ, վոր ագիտացիայի և պրոպագանդայի միջև տարբեր-
ություն կա։ Պլեխանովն այդ նկատեց շատ սրամիտ կերպով։ Նա ա-
սաց. «Յեթե մենք շատ գաղափարներ ենք տալիս փոքր թվով մարդ-
կանց, այդ պրոպագանդա յե, յեթե մենք տալիս ենք մի գաղափար մեծ
թվով մարդկանց, ագիտացիա յե»։ Այս բնորոշումը կլասսիկ է։ Այս է
իրոք, ագիտացիայի և պրոպագանդայի տարբերությունը։

Խմբակների շրջանում կատարած աշխատանքը պրոպագանդա յեր,
այսինքն՝ շատ գաղափարներ, մի ամբողջ աշխարհայացք եր քարոզվում
փոքր թվով մարդկանց. ագիտացիայի շրջանում, ընդհակառակը, բան-
վոր դասակարգի տնտեսական կախվածության հիմնական մի գաղափար
աշխատում եյին ներշնչել բազմաթիվ բանվորների։

Յեվ այսպես, այդ ժամանակներում մենք վոտք դրեցինք տնտե-
սական ուղին։ Յեվ այդ հասկանալի յե։ Բոլորովին պատահական յերևույթ
չէ, վոր Լենինի առաջին գրվածքներից մեկը «Ծուգանքների
մասին» բրոշյուրն է. այդ տուգանքները վերցվում եյին այն ժամանակ
Պետերբուրգի բանվորներից և բանվորուհիներից ուշացման, վատ աշ-
խատանքի համար, և այլն։ Այդ տուգանքներն ու ոռնկից հանվող գու-
մարներն այդ ժամանակ որվա չարիքն եյին, վորովհետև աշխատավարձի
1/5-ը, յերբեմն նաև 1/4-ն եյին կազմում։ Այդ պատճառով, ով ցանկանում
եր կենդանի կերպով հետաքրքրել մասսայական բանվորությանը, պետք
է խոսեր տուգանքների մասին։ Իզուր չէ, վոր «Բանվոր դասակարգի

աղատագրման պայքարի միությանն» առաջին թռուցիկները, վոր գրել եր ընկ. Լենինը մասամբ այն ժամանակ, յերբ նա աղատ եր, մասամբ՝ յերբ նա նստած եր Կրեստ-բանտում, նվիրված եյին յեռացրած ջրի կամ գործարանում տիրող այս կամ այն անկարգության հարցերին։ Այն ժամանակ պետք եր բանվորներին մոտենալ տարրական, զուտ այբբենական հարցերի միջոցով, վորովհետև միայն այդ ձևով կարելի յեր զարթեցնել խորը քնով քնած մասսայական բանվորին, վոր մեծ մասամբ գյուղական անգրագետ մարդ եր՝ բողոքելու, կազմակերպվածության անընդունակ։ Այստեղից պարզ է, թե ինչու այն ժամանակվա մարքսիստներն այդպես ընդգծում եյին տնտեսական մոմենտը։

Սակայն այստեղ դիալեկտիկական մի արտակարգ դեպք պատահեց, վոր հաճախ նկատվում է պատմական յերևույթների ընթացքում։ Ճիշտ կերպով ընդգծելով տնտեսական մոմենտը՝ գործիչների մի մասը, վոր իրականության մեջ զուտ ուղեկիցներ եյին, ապագա մենշևիկներ, եկոնոմիզմի գաղափարը չափազանցրեց այն իմաստով, թե բանվորներն ընդհանրապես չպետք է հետաքրքրվեն վոչ մի այլ բանով, բացի միայն նեղ-տնտեսական հարցերից։ Մնացած բոլոր հարցերը բանվորներին չեն վերաբերում, նրանք այդ չեն հասկանում, և նրանց հետ պետք է խոսել միայն այն հարցերի մասին, վորոնք անմիջապես նրանց են վերաբերում, այսինքն պետք է խոսել միայն նրանց տնտեսական պահանջների մասին։ Ցեվ ահա այդ ժամանակն եր, վոր առաջ յեկավ «եկոնոմիստ» բառը։ Այսպես սկսեցին անվանել վոչ թե տնտեսական գիտության մասնագետներին, այլ նրանց, վորոնք սկսեցին ապացուցել, վոր իբր թե բանվորների հետ վոչ մի այլ հարցի մասին չպետք է զրուցել, բացի յեռացրած ջրից, տուգանքներից և սրա նման բաներից։ Եկոնոմիստները մինչև այնտեղ հասան, վոր սկսեցին բացասել նույնիսկ ինքնակալության դեմ պայքարելու անհրաժեշտությունը։ Նրանք ասում եյին՝ բանվորն այդ չի հասկանա, մենք նրան կխրտնեցնենք, յեթե նրա մոտ գնանք «կորչի միապետությունը» լոզունգով։ Զարգացնելով և «խորացնելով» իրենց հայացքները, եկոնոմիստներն իվերջո առաջ քաշեցին հետևյալ «աշխատանքի բաժանումը»։—քաղաքականությամբ պետք է զբաղվի լիբերալ բուրժուազիան, իսկ տնտեսական բարելավումների պայքարով՝ բանվորները։

## ԵԿՈՆՈՄԻԶՄԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ.

Յեթե յես տամ այդ հոսանքի ղեկավարների թվում գտնվող անձանց անունները, դուք կտեսնեք ձեր առաջ բավական թվով հին ծանոթների։ Դրանք են՝ Պրակապովիչը և Կուսկովան, նրանք, վորոնք անցյալ տարի ստացան «Պրոկուկիշ» կրճատված անունը։ Այն ժամանակներում նրանք սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամներ եյին և մասնակցում եյին լեգալ մարքսիզմին։ Այս փաստի մեջ վոչ մի պատահականություն չկա։ Ինչպես Ստրուվեն, այնպես և արմատական ժողովրդականության շատ գործիչներ, վորոնցից հետագայում կազմվեց բուրժուական կուսակցությունը, մտնում եյին այն ժամանակ սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ և բանվորական ղեկավարների թվումն եյին հաշվվում։ Ցեվ ահա նույն այդ Պրակապովիչն ու Կուսկովան հանդես յեկան եկոնոմիզմի առիթով իրենց credo-յով՝ հավատո հանգանակով, փորձելով ապացուցել, վոր բանվորները չպետք է խառնվեն քաղաքականությանը, վոր այդ աղատամիտների և ոստոստիկոն-բուրժուական հասարակության զբաղմունքն է։ Բանվորների գործը,—համոզում եյին նրանք,—շատ փոքր է, այն է՝ տնտեսական պահանջներ։ Այդ դեռևս քիչ է։ Լենինի և Պլեխանովի դեմ պայքարելով, Պրակապովիչն ու Կուսկովան նույնիսկ իսկական բանվորների դիրք եյին բռնում։ Նրանք ասում եյին.—Բանվորների իսկական բարեկամները մենք ենք։ Ահա դուք մտածում եք ինքնակալության տապալման, հեղափոխական քաղաքական պայքարի մասին. այդ յերբեք էլ բանվորների գործը չե. դուք առաջադրում եք բուրժուական-դեմոկրատական բնույթ կրող խնդիրներ, իսկ մենք՝ բանվորների իսկական բարեկամներս՝ մենք նրանց ասում ենք.—Ինքնակալությունը ձեզ չի վերաբերում, դուք պետք է մտածեք յեռացրած ջրի, աշխատավարձի և բանվորական որվա մասին։

Ի՞նչ է այս. նորից և նորից բանվոր դասակարգի, վորպես հեգեմոնի՝ դերի կատարյալ անհասկացողություն։ «Մարքսիստների առաջարկը յերբեք այն չեր, վոր մոռացվի բանվորական որի և աշխատավարձի մասին։ Այդ մասին հիշում եր թե ընկ. Լենինը և թե «Բանվորների աղատագրման պայքարի միությունը»։ Մենք ուզում ենք, իհարկե, բարձրացնել աշխատավարձը և բարելավել բանվորների կյանքը, սակայն այդ մեզ համար քիչ եր. մենք ուզում եյինք, վոր բանվորը պետություն կառավարեր, լիներ նրա տերն ու ղեկավարը։ Ցեվ այդ պատճառով,—ասում եյինք մենք,—չկա այնպիսի մի հարց, վորով չպետք է հետաքրքրվեր բանվոր դասակարգը։ Առավել ևս ինքնակալության հարցով, վորն անմիջապես նրան է վերաբերում։ Մենք պրոլետարիատի հեգեմոնիայի կողմնակից ենք և չենք թույլ տա, վոր բանվորներին զբաղեցնեն մանր տնտեսական պահանջներով։ Այսպես եյին ասում «եկոնոմիստների» հակառակորդները։

Պրակապովիչին և Կուսկովային Ռուսաստանում պաշտպանեցին միքանի խմբեր, վորոնց թվում նաև «Բանվորական միտք» անլեգալ լրագիրը, վոր հրատարակվում եր 1897 թվին Պետերբուրգում Տախտարևի խմբագրությամբ. վերջինս բանվորական շարժման պատմա-

կան արժեքավոր հետազոտությունների հեղինակն է և այդ շարժման 90-ական թվականների խոշոր գործիչներից մեկը։ «Բանվորական մտքին», որն այն ժամանակ խոշոր ազդեցություն ուներ Պետերբուրգի խմբակներում, աշխատակցում էին նաև Լոխով-Ուլիանը և Ֆինլանդացի Կոկը։ Այս որդանը և նրա ղեկավարները մեծ յեռանդով պաշտպանում էին Պրակապովիչի և Կուսկովայի այն տեսակետը, թե բանվոր դասակարգը պետք է միայն անմիջականորեն իրեն վերաբերող տնտեսական հարցերով զբաղվի և քաղաքականության չխառնվի։

Այս ուղղությամբ առաջին պատասխանը տվեց Պլեխանովը։ Նա այդ արավ «Vademecum» (այսինքն՝ ուղեցույց, տեղեկատու) վերտառությամբ իր գրքում։ Այս գրքում նա բոլորովին ջախջախեց Պրակապովիչի և Կուսկովայի գաղափարները և միքանի ուժեղ հարվածներ հասցրեց «Բանվորական մտքին»։ Նա ապացուցում էր, որ նա, ով ուզում է բանվորներին թողնել միայն «եկոնոմիկայի» խղճուկ փշրանքները և չի ցանկանում, որ նրանք քաղաքականությամբ զբաղվեն, նա բանվորության ղեկավար չէ։

Մի ուրիշ, ել ավելի սուր պատասխան տվեց Ընկ. Լենինը։ Վերջինս այդ ժամանակ գտնվում էր Սիբիրում, որպես աքսորական, և այնտեղ, մի հեռավոր գյուղում, նա եկոնոմիստներին ուղղեց իր նշանավոր պատասխանը, որի տակ դրեց նրա հետ միասին աքսորված համախոհների մի շարք ստորագրություններ։ Ընկ. Լենինը միշտ ել տարբերվում էր Պլեխանովից նրանով, որ այսպես ասած «խմբական» մարդ էր, ձգտելով բոլոր դեպքերում կազմակերպված ձևով հանդես գալ։ Ընկ. Լենինի այս պատասխանը տարածվեց բոլոր բանվորական խմբակներում։ Ընկ. Լենինի «Ռուս սոցիալ-դեմոկրատիայի անելիքները» բրոշյուրը լույս տեսավ արտասահմանում ներկայիս մենշևիկ Ակսելրոդի առաջաբանով, որը քսան տարի սրանից առաջ անվերջ գովաբանում էր ընկ. Լենինին նրա ցուցահանած **հեռատեսության** համար։ Այդ բրոշյուրով ընկ. Լենինը միանգամայն կոնկրետ ձևով հարուցեց պրոլետարիատի հեգեմոնիայի հարցը և այս գաղափարի հակառակորդ եկոնոմիստների դեմ ճակատեց ամբողջ գծով։

900-ական թվականների սկզբներին եկոնոմիստները վերջնականապես ջախջախվեցին. մոտավորապես 1902 թվին նրանց յերգը վերջնականապես յերգվել էր։ Սակայն 1898 և 1901 թվականների ընթացքում նրանք, որոշ իմաստով, մտքերի վրա իշխում էին։ Շնորհիվ նրանց, այն ժամանակ բանվորական շարժումը մեծ վտանգի յենթակա յեր, քանի որ եկոնոմիստների լոզունգն արտաքուստ շատ գայթակղեցուցիչ էր քիչ պատրաստված բանվորների համար, և շատ հեշտ էր նրանց այդ ճանապարհով գրավել ու վորսալ։ Յեվ յեթե այդ շրջանում Պլեխանովը և Լենինը, իսկ հետո նաև ռուսական բանվորական հեղա-



փոխական շարժման պրակտիկ գործիչները պայքար չսկսեին այս ուղղությամբ բանվորական շարժման ներսում, ով գիտե, թե այդ շարժումը շեղվելով իր ընթացքից, քանի տարի «եկոնոմիզմի», այսինքն ռեֆորմայունիզմի ուղիով ընթանար։

## ԵԿՈՆՈՄԻԶՄԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ.

Մենք լեգալ և անլեգալ մարքսիզմի որինակից տեսնում ենք, որ եկոնոմիզմն անլեգալ եր. ցարական ինքնակալությունը նրան հալածում եր, և նա ստիպված եր անլեգալ լրագրեր ու թռուցիկներ հրատարակել. այս որինակից մենք տեսնում ենք լիբերալ բուրժուազիայի ազդեցության ուղիները, որոն ուժերի այն ժամանակվա փոխհարաբերության հետևանքով յերբեմն նույնիսկ պարզապես մտնում եր բանվորական կուսակցության մեջ, ձգտելով վարակել նրան հարմարվողականության և բուրժուական գաղափարների թույնով։ Նա այդ անում եր մերթ գրական ասպարիզում, ինչպես Ստրուվեն իր «Բննադատական դիտողություններում», և կամ Տուգան-Բարանովսկին, մերթ կազմակերպչական հողի վրա, ինչպես միքանի եկոնոմիստներ, որոնք արտասահմանում հիմնեցին «Ռուս սոցիալ-դեմոկրատների միությունը» և հրատարակում էին խոշոր չափերով տարածվող «Բանվորական գործ» ամսաթերթը։ «Բանվորական գործի» խմբագրության մեջ մտնում էին այն ժամանակվա բանվորական շարժման խոշոր գործիչները, ինչպես, որինակ, Մարտինովը, որը հետագայում հայտնի մենշևիկ դարձավ, իսկ նորերս անցավ մեր կողմը, Ակիմով-Մախնովեցը, Իվանշինը, Կրիչևսկին և ուրիշները։ Նրանք բուն դրեցին արտասահմանում, ստեղծելով այնտեղ վտարանդիների կենտրոն, իսկ Ռուսաստանում ունեին անլեգալ լրագրեր, խմբակներ և կոմիտեներ, որոնք պլանաչափ կերպով աշխատում էին ամբողջ բանվորական շարժումը դեպի աջ թեքել, նրան չափավոր քաղաքականության գիրկը մղել և ստիպել բանվորներին մտածել միայն իրենց նեղ տնտեսական շահերի մասին։ Նրանց գաղափարը շատ ել խորիմաստ չեր, սակայն շատ վտանգավոր. բանվորը պետք է իր տեղն իմանա, քաղաքականությամբ չզբաղվի, ցարական ինքնակալությամբ չհետաքրքրվի. նա պետք է աշխատի, որպեսզի միայն իր համքարական գրությունը բարելավի և դեպի վեր չձգտի, այդ գործը թողնելով սպիտակոսկր լիբերալներին։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս բոլորը չեր ասվում այսպես բացարձակապես կոպիտ ձևով, այլ ավելի արհեստական և հաճախ միանգամայն անկեղծ ձևով, որովհետև Մարտինովի, Տեպլովի, Ակիմով-Մախնովեցի և Տախտարևի նման մարդկանց թվում եր, որ այդ այդպես ել պետք է լինի։ Այս գաղափարը, կրկնում եմ, վերին աստի-

ճանի վտանգավոր եր, վորովհետև նա կարող եր հրապուրել ծայր աստիճանի վատ տնտեսական վիճակում գտնվող անվորձ մասսաներին։ Յեվ յեթե այդ պատահեր, հեղափոխությունը յերկար տարիներով կըհետաձգվեր, և բանվոր դասակարգին չեր հաջողվի ինքնուրույն դեր խաղալ այդ շարժման մեջ։

## ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԵՐԸ ԸՍՏ «ԵԿՈՆՈՄԻԶՄԻ» ՅԵՎ ԲԱՅԼՇԵՎԻԶՄԻ ՏԵՍԱԿԵՏԻ.

Եկոնոմիզմի կողմնակիցները չեյին ընդունում պրոլետարիատի հեգեմոն դերը։ Նրանք ասում եյին. «Ի՞նչ և, ձեր կարծիքով բանվոր դասակարգը մեսսիա՞ յե»։ Սրան մենք պատասխանում եյինք և պատասխանում ենք. «Մեսսիա, մեսսիականություն,—այդ մեր լեզուն չե. մենք չենք սիրում նման բաներ. սակայն այն հասկացողությունը, ինչ վոր նրանց տակ կա, մենք ընդունում ենք։ Այո, վորոշ իմաստով բանվոր դասակարգը մեսսիա յե, և նրա դերը մեսսիական ե, վորովհետև սա այն դասակարգն ե, վոր պիտի աշխարհն ազատագրի։ Բանվորները վոչինչ չունեն կորցնելու, բացի իրենց շղթաներից. նրանք սեփականություն չունեն, նրանք իրենց աշխատանքն են վաճառում. սա միակ դասակարգն ե, վոր շահագրգռված ե աշխարհը նոր հիմունքներով վերակազմելու ցանկությամբ և վորն ընդունակ ե իր յետևից տանելու գյուղացիությունը ընդդեմ բուրժուազիայի։ Մենք խուսափում ենք կիսամիստիկ տերմիններից՝ մեսսիա, մեսսիականություն և գերադասում ենք գիտական տերմինը, այն ե՝ **հեգեմոն պրոլետարիատ**, այսինքն պրոլետարիատ, վորը չի բավականանում իր աշխատավարձը 10%-ով բարձրացնելով և կամ բանվորական որը $^1/_2$ ժամով կրճատելով, այլ հայտարարում ե. —Յես տեր եմ, յես հարստություններ եմ ստեղծում կապիտալիզմի համար, վորն ստեղծեց ինձ իր կորստյան համար. առայժմ յես աշխատում եմ վորպես վարձու ստրուկ, կապիտալիզմի համար, բայց կըհնչի եկսպրոպրիատորների եկսպրոպրիացիայի ժամը, և կդա այն ըոպեն, յերբ բանվոր դասակարգն իշխանությունն իր ձեռքը կվերցնի։

## ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵԳԵՄՈՆԻԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե.

«Հեգեմոն» բառը ոտարազգի բառ ե։ Այժմ բանվորները թարգմանեցին այն իրենց լեզվով. պրոլետարիատի հեգեմոնիա ժամանակակից վոճով նշանակում ե **խորհուրդների իշխանություն**, իշխանությունը—բանվոր դասակարգին։ Այս լոզունգը տարիներով եր նախապատրաստվում և անցավ փորձառության բազմամյա քուրայով՝ խիստ պայ-



քար մղելով վոչ միայն ինքնակալության և կաղետական կուսակցության դեմ (յեթե թվելու լինենք աջից դեպի ձախ), վոչ միայն բուրժուազիայի և նարոդնիկության դեմ, այլ և լեգալ մարքսիզմի աջ թևվի՝ եկոնոմիզմի դեմ, իսկ հետագայում նաև մենշևիզմի դեմ։ Ահա թե ինչու պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը բայլշևիզմի հիմնական իդեական ֆոնդն ե։ Այդ այն «սյուներից» մեկն ե, վորոնց վրա կանգնած ե բայլշևիկյան կուսակցությունը։ Յեվ այդ մասին պետք ե մըտածի կոմունիզմի յուրաքանչյուր գիտակից կողմնակից, յեթե նա ուզում ե մեր կուսակցության պատմությունը հասկանալ։

---

## ՉԵՐՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Այս դասախոսության մեջ ես կխոսեմ 1898-1903 թ. թ. հնգամյակի, այսինքն այն շրջանի մասին, որն ընկած է կուսակցության առաջին և յերկրորդ համագումարների միջև, և որը կարելի յե համարել 1905 թվի առաջին հեղափոխության նախադուռը։

### ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ.

Մինչև այժմ յես խոսում եյի բանվոր դասակարգի սաղմնավորման և նրա կուսակցության ստեղծման մասին։ Այժմ անհրաժեշտ է կանգ առնել մի քանի այլ յերևույթների վրա և առաջին հերթին այն ժամանակվա ուսանողական շարժման վրա։ Ընդհանուր գծերով նա զարգանում եր հետևյալ ձևով.

Բանվորն սկզբում զարթեցրեց ուսանողին, իսկ սա հետագայում պաշտպանեց բանվորին։ Ժամանակագրական տեսակետից բանվորների գործադուլային շարժումը նախորդեց ուսանողության ցույցերին և ընդհանրապես նրանց քաղաքական շարժմանը։ Այստեղից պարզ է, որ հենց բանվորական շարժումն է, որ կյանքի կոչեց ուսանողությանը, և ոչ թե ընդհակառակը։ Սակայն ուսանողական շարժումն էլ իր հերթին որոշ շրջանում նպաստում եր բանվորական շարժման զարգացմանը։

Այժմյան և առաջվա ուսանողը միանգամայն տարբեր մարդիկ են։ Կար ժամանակ (գլխավորապես 90-ական թվականների յերկրորդ կեսին), յերբ «ուսանող» հասկացողությունը նույնանիշ եր «հեղափոխական» հասկացողության, որովհետև այդ շրջանում բարձրագույն կրթական հաստատությունների ուսանողները հեղափոխական կամ ոպպոզիցիոն տրամադրություն ունեյին և պաշտպանում եյին բանվորների հեղափոխական շարժումը։ Այժմ մենք այդ դժվարությամբ ենք մեզ պատկերացնում, որովհետև քաղաքական կռվի վերջին տարիների ընթացքում մենք գրեթե միշտ ուսանողին տեսնում եյինք բարբիկադի մյուս կողմում։ 1923 թվին դրությունը միքիչ փոխվեց, որովհետև ուսանողության շարքերում նկատվում է, անշուշտ, մի ինչ-վ որ նոր եվոլյուցիա։



### ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ.

Յեթե այդ եվոլյուցիան ուշադիր քննելու լինենք, կարելի յե ասել, որ ուսանողությունը զարգանում եր «ըստ Հեգելի»։ Սկզբում մեր ուսանողությունն ամբողջովին հեղափոխական եր և ոգնում եր բանվոր դասակարգին. հետո 1917-ից մինչև 1920 թիվը մենք ունեյինք կարծես թե անտիթեզ, յերբ ուսանողական շարժումն ամբողջովին ուղղված եր բանվոր դասակարգի դեմ և հեղափոխության դեմ. վերջապես, այժմ մենք կարծես թե նկատում ենք սինթեզի նման մի բան, յերբ ուսանողության խոշոր մասն սկսում է կարծես թե հասկանալ իր պարտականությունները աշխատավորական դասակարգերի հանդեպ և, թեկուզ մի վոտով, հեղափոխության բանակն է մտնում։

Հիշյալ զարգացման առաջին շրջանն ընկնում է 90-ական թվականների վերջերին, յերբ ուսանողությունն ամբողջովին պաշտպանում եր այն ժամանակվա բանվորական շարժումը։ Զուր չե, որ ինքնակալությունն ուսանողներին բանվորների հետ միասին համարում եր իր վտանգավոր թշնամիները, իսկ յերբ ուսանողները, խորացնելով իրենց շարժումը, աստիճանաբար սկսեցին ակադեմիզմից բացարձակ քաղաքական գործունեության անցնել, ցարական կառավարությունը նրանց դեմ վճռական միջոցներ ձեռք առավ։

Այն ժամանակվա ակադեմիական շարժումը տարբերվելով ներկայինից, հեղափոխականության գունավորում ուներ։ Ներկայումս, բուրժուազիայի անկումից հետո, ակադեմիզմը, համեմատած նրա հետ, ինչ գոյություն ուներ մինչև հեղափոխությունը, այլ նշանակություն է ստանում։ Պարզ է, որ Վանտովսկու և Պլեհեի ժամանակ համալսարանական ինքնավարության պահանջը հեղափոխական եր և, այս տեսակետից, պաշտպանության արժանի յեր նույնիսկ այն ժամանակվա ակադեմիզմը ցարական ինքնակալության դեմ ուղղված շարժում եր։ Բոլորովին այլ նշանակություն է ստանում մեր որերի այսպես կոչվող ակադեմիզմը, յերբ մեր կրթական հիմնարկների պատերի ներսում, վորպես բարբիկադների յետևում, փորձում եյին պրոլետարական հեղափոխությունից թաքնվել, ազատվել այս կամ այն չափով սպիտակ գվարդիական պրոֆեսորներն ու ուսանողները։

Այն ժամանակվա ուսանողական յերիտասարդությունը՝ սերտ կապ ունենալով ազատամիտ և դեմոկրատիկ հասարակության հետ, փորձում եր գտնել այն մասսայական ուժը, որը կարող եր տապալել ինքնակալությունը։ Յեվ ամեն քայլափոխում ուսանողները համոզվում եյին, որ այդպիսի մի ուժ բանվոր դասակարգն է, որ միայն նա յե պահում իր ձեռքում այն մուրճը, որը կիջնի ցարիզմի գլխին։ Յեվ ուսանողությունը, այսպես թե այնպես, պաշտպանում եր այն ժամանակվա բանվորական շարժումը։

## ՑԱՐԻԶՄԻ ՊԱՅՔԱՐՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԴԵՄ.

Ցարական կառավարությունը, տեսնելով, վոր ուսանողությունը ձգտում է մոտենալու բանվորներին, ուժեղ հարձակում գործեց, ամեն տեսակ կարիճներ բաց թողեց նրանց վրա։ Ամենաանհեթեթ միջոցը, վոր այն ժամանակ հնարեցին, ոպպոզիցիոն տրամադրություն ունեցող ուսանողներին զինվոր ուղարկելն եր։ Տասնյակներով և հարյուրներով բռնոտում եյին նրանց փողոցային ցույցերի ժամանակ ու փոթորկավից ուսանողական ժողովներում և գնդերն ուղարկում։ Սակայն այս միջոցը միայն յուղ եր ավելացնում կրակին։ Շարժումն ընդլայնվում եր, աճում, միաժամանակ ուսանողական յերիտասարդությունը՝ զորանոցները նետված՝ այնտեղ ել դժգոհության կայծեր եր բոցավառում, պրոպագանդա մղելով բանակում։ Այս հողի վրա ուսանողության մեջ սկսեց ամրանալ տերրորիստական շարժումը։ Շուտով Կարպովիչը գնդակ արձակեց ժողովրդական լուսավորության մինիստր Բագալեյովի վրա, իսկ հետո Լագովսկին գնդակ արձակեց Պաբեդանոսցևի վրա։ Բագալեյովին փոխարինեց գեներալ Վանովսկին իր «անկեղծ խնամակալության» ծրագրով, վորը այն ժամանակվա ուսանողներն, իհարկե, ծաղրում եյին։

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՅԵՎ ԵՍԵՐՆԵՐԸ.

Այստեղ կարևոր և մի հանգամանք ընդգծել. ուսանող-տերրորիստները, վոր հետագայում կապվեցին եսերական կուսակցության հետ, սկզբում սոցիալ-դեմոկրատներ եյին։ Իրենց տերրորիստական տակտիկայով եսերներն իրենց կողմը գրավեցին յերկու խումբ ուսանողների. մի կողմից մեծ արիություն ունեցող և անկասկած անկեղծ մարդկանց, ինչպիսիք են՝ Բալմաշևը, Կարպովիչը և Սազոնովը, վորոնց դեպի տերրոր եր քաշում նրանց հրաբորբոք սիրտը, թույլ հավատը դեպի մասսայական բանվորական շարժումը և անձնական ակտիվությամբ նույն այդ շարժումը փոխարինելու ցանկությունը. մյուս կողմից՝ եսերների կողմն եյին անցնում Սավինկովի տիպի մարդիկ, վորոնց դեպի այդ շավիղն եյին գրավում արդեն այն ժամանակ նրանց մեջ յեղած ավանտյուրիզմի և դեպի բանվորական շարժումը տածվող ատելության սաղմերը։ (Սավինկովն ել մի ժամանակ իրեն սոցիալ-դեմոկրատ եր համարում)։

## ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ.

Այն ժամանակվա սոցիալ-դեմոկրատիայի առաջ ծառացավ այն հարցը, թե ինչ վերաբերմունք պետք է ունենալ դեպի ուսանողական շարժումը։ «Եկոնոմիստների» մասին իմ ասածներից պարզ է, վոր



այդ հոսանքի հետագա կողմնակիցները պետք է առ վոչինչ համարեին ուսանողական շարժումը, և նրանք իրոք այդպես ել անում եյին, վորովհետև ուսանողական շարժումը, վորպես զուտ քաղաքական, վոչ մի առընչություն չուներ, նրանց կարծիքով, բանվորների անմիջական տնտեսական խնդիրների հետ։ Սակայն այդպես չնայեցին այդ հարցին քաղաքական պայքարի կողմնակիցները, նույն ժամանակվա սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական թևը ընկ. Լենինի և ապագա իսկրովցիների գլխավորությամբ. նրանք բոլորովին այլ կերպ գնահատեցին այդ շարժումը։ Իհարկե, թե ընկ. Լենինը և նրա համախոհներն ընդունում եյին, վոր այն ժամանակվա ուսանողական շարժումը պրոլետարական չեր. նրանք հասկանում եյին, վոր այդ ժամանակավոր յերևույթ է, և վոր կգա ժամանակ, յերբ ուսանողները յերես կդարձնեն բանվորներից. նմանապես նրանք գիտեյին, վոր այն ժամանակվա ուսանողները մեծ մասամբ ունևոր ծնողների զավակներ լինելով, փողոց եյին դուրս գալիս և ցույցեր եյին սարքում վոչ թե այն պատճառով, վոր սոցիալիզմ և կոմունիզմ եյին ցանկանում, այլ այն պատճառով, վոր ցանկանում եյին հասնել քաղաքական ազատության և յերկրում բուրժուական դեմոկրատիայի տիրապետություն սահմանել։ Բայց ընկ. Լենինը և նրա կողմնակիցները, վորոնք պրոլետարիատի հեգեմոնիայի կողմնակից եյին, այն տեսակետի վրա եյին կանգնած, վոր յեթե բանվոր դասակարգը հեգեմոն է, յեթե նա հեղափոխական հիմնական և արմատական ուժն է, ապա նա պետք է իրեն ոգնական վերցնի բոլոր նրանց, ով այս կամ այն չափով տրամադիր է պայքարել ընդդեմ ինքնակալության։ Վորպես պրոլետարիատի հեգեմոնիայի տեսակետի վրա կանգնած հեղափոխական մարքսիստներ՝ նրանք ասում եյին.—Մեծ տնտեսության մեջ ամեն ինչ կարող է պետք դալ. ուսանողական շարժումը կարող է ոգտակար լինել մեր ցարիզմի դեմ մղած պայքարում. մենք պարտավոր ենք ոգտագործել ցարիզմի դեմ ուղղված ամեն մի ոպպոզիցիոն շարժում։ Ուսանողները խռովություններ են սարքում ցարիզմի դեմ,—շատ գեղեցիկ, տանենք նրանց բանվոր դասակարգի յետևից, ոգնենք նրանց, փորձենք նրանց ղեկավարել, նրանց հարվածներն ել ուղղենք ինքնակալության ամրությունների դեմ։

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՔՍԻՍՏՆԵՐԸ ՅԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ.

Այսպիսով այն ժամանակվա հեղափոխական մարքսիստները, ապագա բայշևիկները վոչ միայն չեյին արհամարհում, այլ, հակառակ եկոնոմիստներին, ուսանողական շարժման վրա մեծ ուշադրություն եյին դարձնում։ Այս հանգամանքը դուք պետք է լավ հիշեք, յեթե ցանկանաք ճիշտ կերպով հասկանալ բայշևիզմի միքանի կարևորագույն և բնո-

զոչ հատկանիշները։ Մինչ-հեղափոխական շրջանի, մինչև 1905 թվի բայշևիզմը հաճախ մեղադրում էին նրա համար, վոր նա շատ եր հետաքրքրվում բուրժուական լիբերալներով և բուրժուական ոպպոզիցիայով՝ ուսանողությունով, զեմստվային շարժումով, «Ազատագրման միությունով» և այլն։ Մենշևիկներն ոգտվելով դրանից, հաճախ պարծենալով հավատացնում էին, վոր նրանք ավելի, քան մենք, բանվոր դասակարգի բարեկամներ են։ Նրանք ասում էին.—Ի՞նչ գործ ունենք մենք զեմստվայականների և ուսանողների հետ. մեր գործը զուտ բանվորական է, մենք մտածում ենք միայն բանվորական շարժման մասին։ Նրանք հաճախ մեղադրում էին ընկ. Լենինին նրա համար, վոր իբր թե նա չափազանց մեծ չափով եր աշխատում համերաշխ գործել ոպպոզիցիոն բուրժուազիայի՝ լիբերալների, ուսանողության հետ և այլն։

## ԲԱՅՇԵՎԻԿՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ.

Վո՞ւր եր բայշևիկների այդ տակտիկայի իսկական իմաստը։ Ահա թե վոր։ Յեթե բայշևիզմն իր սաղմնավորման իսկ որերից հետաքրքրքրվում եր ցարիզմի դեմ ուղղված ոպպոզիցիոն և հեղափոխական շարժման ամենաչնչին առկայծումներով, յեթե նա աջակցում եր ինքնակալության դեմ գնացող յուրաքանչյուր խմբակին, նա այդ անում եր վոչ թե նրա համար, վորպեսզի իր ծրագիրը մինչև լիբերալ-բուրժուականի հասցնի։ Վոչ, տվյալ դեպքումն էլ նա ինքն իրեն հավատարիմ եր մնում։ Առաջադրելով մաքսիմում-ծրագիրը (ցարիզմի տապալումը), նա միաժամանակ գտնում եր, վոր նրա իրագործման համար պետք է նախ և առաջ ցարին տապալել, իսկ դրա համար անհրաժեշտ է ոգտագործել ամեն մի հոսանք, վոր ձգտում է ինքնակալության վոչնչացման։ Այդ իսկ պատճառով բայշևիկները հենց սկզբից բանվոր դասակարգի վրա նայում էին, վորպես հեգեմոնի վրա և հայտարարում էին, վոր բանվորները վոչ միայն անուշադիր չեն անցնի ուսանողական կամ լիբերալ-բուրժուական շարժման կողքով, այլ, ինչպես ընկ. Լենինն եր արտահայտվում, կնպաստեն նրան։ Բայց և միաժամանակ բայշևիզմը նախազգուշացնում եր բանվորներին.—Պատրաստ կացեք. ուսանողներն այսոր ձեզ ոգնում են, լիբերալներն այսոր ցարի դեմ են գնում, իսկ վաղը, յերբ ցարը կտապալվի, նրանք ձեր դեմ կգնան. ստանալով այն բոլորը, ինչ վոր նրանց անհրաժեշտ է, այսինքն՝ քաղաքական ազատությունը, նրանք ձեր դեմ կշարժվեն։

Այսպիսով բայշևիզմի առաջ 2 խնդիր եր դրված. մի կողմից դասակարգային կուսակցություն կառուցել, վորը պետք է պայքարը սոցիալիզմի լիակատար հաղթանակին հասցնի, իսկ մյուս կողմից ոգտագործել ցարիզմի դեմ ուղղված ամեն մի ուժ, նրանց թվում նաև ուսանողներին, լիբերալներին և բուրժուական ոպպոզիցիան։ Այստեղից է բղխում այն տարբեր վերաբերմունքը դեպի ուսանողությունը, վոր ցուցահանել են 90-ական թվականների վերջերին մի կողմից եկոնոմիստները՝ ապագա մենշևիկները և մյուս կողմից քաղաքական պայքարի կողմնակիցները, ապագա իսկրովցիները, իսկ հետագայում բայշևիկները։

## ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԵՍԵՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ.

Այդ ժամանակներում, սակայն, լիբերալ շարժման սկզբնավորում եր նկատվում վոչ միայն ուսանողության մեջ. նախապատրաստվում եր նույնպես «Ազատագրման միությունը», վորի գլուխ կանգնած եին Միլյուկովը, Կուսկովան, Ստրուվեն, Պրակապովիչը, Բագուչարսկին և ուրիշ գործիչներ, վորոնք սկզբում մի վոտով գտնվում եին սոցիալ-դեմոկրատիայի, մյուսով՝ լիբերալների բանակում։ Եսերների միությունը կազմվեց 90-ական թվականների վերջերին։ Իրենց գոյության առաջին շրջանում այս յերկու խմբավորումներն էլ՝ «Ազատագրման միությունը» և «Եսերների միությունը», իրենց կողմն եին գրավում մինչև այդ ընդհանուր սոցիալ-դեմոկրատական մասային պատկանողներին։

Միաժամանակ և բավական արագ կերպով աճում եր նաև բանվորական, առանձնապես գործադուլային շարժումը։ 90-ական թվականների սկզբներից մի շարք քաղաքներում սկսվում է մայիս-մեկի տոնակատարումը, և տարեցտարի այդ տոնն ընդունում եր ավելի և ավելի խոշոր չափեր։ Այստեղ էլ շարժումը զարգանում եր վորոշ իմաստով ընդդեմ եկոնոմիստների, վորոնք միշտ էլ բանվորական շարժման պոչից եին գնում, հանդիսանալով վոչ թե նրա առաջապահ մասը՝ ավանգարդը, այլ նրա վերջապահը։ Յեվ զուր չէ, վոր ընկ. Լենինն իր «Ի՞նչ անել» գրքում կատակով նրանց «խվոստիստներ»՝ «պոչականներ» անվանեց, իսկ Պլեխանովն իր «Vademecum»-ում միքիչ կոպիտ, սակայն միանգամայն իրավացի կերպով, ասաց եկոնոմիստներին, վոր նրանց տեսնում են վոչ թե բանվորական շարժման գլուխը, նրա յերեսը, այլ յետևի մասը...

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀՈՒԶՈՒՄՆԵՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՅԵՎ ԱՅԼ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ.

Մի անգամ սկսվելով, բանվորական շարժումն արագ առաջ գնաց՝ իր յետևից բանվորների ավելի և ավելի լայն շերտեր գրավելով։ 1901 թվի սկիզբը և ամբողջ տարին այդ շարժման ամենափոթորկալի շրջանն եր, մասնավորապես Պետերբուրգում։ Հեղափոխական տրա-

մաղրությունը մայրաքաղաքում աճում եր մեծ արագությամբ և որե-
ցոր ավելի առաջ եր գլորվում եկոնոմիստների ծրագրի վրայով։ 1901
թվին մայիսի մեկի տոնի առթիվ խոշոր խլրտումներ բռնկվեցին Վի-
բորգյան թաղում, վորտեղ գործը հասավ արյունալի ընդհարումների
և իսկական փողոցային կռիվների։ Նույն պատճառով և իբրև հետևանք
ուսանողների ցույցերի, վոր պաշտպանվում եր բանվորների կողմից,
գլխավորապես Որուխովի գործարանի կողմից, անկարգություններ
տեղի ունեցան, վորոնք վերջացան իսկական ընդհարումով վոստի-
կանների և զինվորների հետ։ Այս այսպես կոչվող Որուխովյան պաշտ-
պանությունն ընդգրկեց միքանի հազար բանվորների և փոթորկալից
շարժում առաջ բերեց ամբողջ Պետերբուրգում։ Իսկ յերբ ուսանողու-
թյունը փողոց դուրս յեկավ վոչ միայն մայրաքաղաքում, այլ և
Մասկվայում և Կիևում, յերբ մայիսի 1-ին ցուցարար-բանվորները
փողոց դուրս յեկան, մանավանդ Պետերբուրգում, այն ժամանակ պայ-
քարն առանձնապես սուր բնույթ ընդունեց։

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ.

Բանվորական շարժման պատմության վերաբերող գրական աղ-
բյուրներում դուք կգտնեք հատվածներ «նամակներ խմբագրու-
թյունից», վորոնք այն ժամանակվա բանվորներն ու բանվորուհիներն
ուղարկում եյին անլեգալ լրագրերին։ Ահա ինչ եր գրում բանվորու-
հիներից մեկը Վիբորգյան թաղում տեղի ունեցած ընդհարման մասին։

«Դուք չգիտեք, թե ինչքան ցավում եմ յես և մենք բոլորս.
Շատ եյի ցանկանում անցնել Նևսկին կամ քաղաք։ Շատ
դառն և շատ նման մեռնել մի անկյունում, այնպես, վոր վոչ վոք
չտեսնի անգամ... Յեվ ահա թե ել ինչ եմ ուզում ասել յես ձեզ.
Թեպետ և շատերին մեզանից տարան—դուցե նրանք արդեն չեն
ել ապրում,—այնուամենայնիվ մենք ամուր կանգնած կմնանք։
Բանվոր Բ.-ն նկատում է.

«Ափսոս, վոր մենք դրոշակ չունեյինք։ Մյուս անգամ դրոշակ
ել կլինի, ատրճանակներ ել կճարեն»։

Այս թանգարժեք նամակներն այն ժամանակ ձեռք եյին բերում
ընկ. Լենինն ու նրա խումբը և տպում եյին «եկոնոմիստների» դեմ պայ-
քարելու համար՝ ցանկանալով ցույց տալ, վոր առաջավոր բանվորները
վոչ միայն աշխատավարձի բարձրացում են ուզում, այլ և գիտակցում
են փողոց դուրս գալու, ատրճանակներ ճարելու և ցարական վոս-
տիկանության դեմ կռվելու անհրաժեշտությունը։ Մեծ ուրախությամբ
ընկ. Լենինը տպեց Նևայի շրջանի մի բանվորի նամակից մի հատ-
ված, վորն եկոնոմիստների մասին հետևյալն եր գրում.



«Յես նրան[1] ցույց եյի տալիս շատ ընկերների, և նա շատ
մաշված եր։ Իսկ նա ինձ համար շատ թանգ է, շատ ավելի թանգ,
քան «Միտքը»[2], թեպետ և նրա մեջ չկան մեր տողերը։ Այնտեղ
մեր գործի, ամբողջ ռուսական գործի մասին է գրված, վորը կո-
պեկներով չես գնահատի և ժամերով չես վորոշի։ Բանվոր ժողո-
վուրդը կարող է հիմա հեշտությամբ բոցավառվել. արդեն ամեն
ինչ ներքևում կպել է, պետք է միայն մի կայծ, և հրդեհ կլինի։
Ախ, այդ վորքան ճիշտ է ասած, թե կայծից բոց կառաջանա[3]։
Առաջ ամեն մի գործադուլ մեծ դեպք եր, իսկ հիմա ամեն մարդ
տեսնում է, վոր միայն գործադուլը վոչինչ է. այժմ ազատու-
թյան պետք է ձգտել, կրծքով վերցնել այն։ Այժմ մեզ վոչ թե
դրամարկղներ, վոչ թե խմբակներ, նույնիսկ գրքեր են պետք, այլ
այժմ միայն սովորեցրու, թե ինչպես պետք է պայքարել, ինչպես
պետք է կռվել»։

## «ԻՍԿՐԱ» («ԿԱՅԾ») ԼՐԱԳԻՐԸ.

Լենինիզմի այն ժամանակվա կողմնակիցներն առանձին բանվոր-
ների նման հայտարարություններից ոգտվում եյին, վորպեսզի ապացու-
ցեն, վոր առաջավոր բանվորն այլևս չի ուզում լոկ տնտեսական պայ-
քարով բավականանալ, այլ խնդրում է, վոր նրան սովորեցնեն, թե
ինչպես պետք է կռիվ գնալ, ինչպես զինված ձեռքով տապալել ինք-
նակալությունը, այսինքն՝ ուզում է իսկական հեղափոխական կուսա-
կցություն ստեղծել, վորը կոգնի նրան հեգեմոնի, հեղափոխական պայ-
քարի հիմնական ուժի դեր խաղալ։ Յեվ ահա, այս բոլոր փաստերի և
դեպքերի ֆոնի վրա ստեղծվում է «Իսկրա» թերթը։

900-ական թվականների սկզբներում աքսորից վերադարձավ ընկ.
Լենինը, նրա հետ միասին նաև նրա այն ժամանակվա համախոհների
խումբը՝ Մարտովը, Պատրեսովը և ուրիշները։ Պետերբուրգում նրանք
հանդիպեցին Վերա Իվանովնա Զասուլիչին, «Աշխատանքի ազատագրը-
ման խմբակի» հիմնադիրներից մեկին, և նրա միջոցով կապ հաստատե-
ցին այս խմբակի հետ, վորի կենտրոնը գտնվում եր Ժընևում—Շվեյ-
ցարիայում։ Ինչպես ասացի՝ անցյալ անգամ, իր պայքարն ընդդեմ «ե-
կոնոմիզմի» ընկ. Լենինն սկսեց դեռ աքսորից։ Պետերբուրգ վերադառ-

---

1 Խոսքը վերաբերում է «Իսկրայի» առաջին համարին։

2 «Բանվորական միտքը» եկոնոմիստների ոլգանն է։ (Տես նախորդ դա-
սախոսությունը)։

3 «Իսկրա» թերթի նշանաբանն եր. «Կայծից բոց կառաջանա»։ Պուշկինին
տված դեկաբրիստների հայտնի պատասխանից։

նալով, նա սկսեց հավաքել իր համախոհներին՝ գտնելով նրանց բոլոր այն քաղաքներում, ուր զարգանում էր բանվորական շարժումը։ Ի միջի այլոց նա սկսեց վերոնել նաև այն բանվորներին, վերոնց հետ նա 1895 թվին ստեղծում էր «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունները», նա կապ հաստատեց նույնպես Մասկվայի բանվորների հետ և իր այն ժամանակվա համախոհների՝ Մարտովի և Պատրեսովի հետ յեկավ այն համոզման, վոր «եկոնոմիստների» դեմ պայքարելու, իսկական հեղափոխական պրոլետարական կուսակցություն ստեղծելու համար, անհրաժեշտ է, ինչպես այն ժամանակ եյին ասում, «համառուսական» քաղաքական լրագիր հիմնել։

Շուտով, 1900 թվին Պսկով քաղաքում կայացավ անլեգալ մի խորհրդակցություն, վորին ներկա եյին Լենինը, Մարտովը և Պատրեսովը և միայն տեղական հեղափոխական պրակտիկայի յերկու ներկայացուցիչներ՝ Ստեփան և Լյուբով Ռադչենկոները։ (Վերջինս այժմս էլ կենդանի յե, և մեզանից շատերն են ճանաչում նրան, յերբ Մասկվայում աշխատում էր 1905-6 թվականներին, և յերբ նա, դժբախտաբար, մենշևիկա յեր)։ Հետաքրքիր է հիշատակել, վոր Պսկովի խորհրդակցության յեկան նույնպես Ստրուվեն և Տուգան-Բարանովսկին, վորոնք մտադիր եյին այն ժամանակ ստեղծել լիբերալ-բուրժուական որգան «Ազատագրում» թերթը. վորովհետև նրանք չեյին ուզում խզել կապերը նաև բանվորական շարժման հետ, այդ պատճառով նրանք փորձում եյին կոալիցիայի նման մի բան ստեղծել այն ժամանակվա անլեգալ լիբերալների և անլեգալ սոցիալ-դեմոկրատների հետ։

Պսկովի խորհրդակցությանը վորոշվեց հրատարակել «Իսկրա» անլեգալ լրագիրը։ Ընկ. Լենինը Պատրեսովի հետ արտասահման մեկնեց, վորպեսզի իրագործի այս վորոշումը։ 1900 թվի դեկտեմբերին Մյունխենում լույս տեսավ «Իսկրա» թերթի առաջին համարը, վորը հսկայական դեր խաղաց հեղափոխության պատմության մեջ ընդհանրապես և Կոմմունիստական կուսակցության պատմության մեջ մասնավորապես։ Այդ սոսկ լրագիր չեր։ Այդ մի որգան եր, վորին հաջողվեց մի ամբողջ սերնդի մտքերին տիրապետել, խոշոր գրական-քաղաքական գործ կատարել և միաժամանակ կուսակցության համախմբման գործում խոշոր կազմակերպչական քաղաքական աշխատանք վարել։

## «ԻՍԿՐԱՅԻ» ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Յեթե «Իսկրան» համեմատելու լինենք ձեզ ամենից շատ ծանոթ լրագրերի հետ, ապա կարելի յե ասել, վոր նա ավելի մեծ դեր խաղաց, քան «Զվեզդան» և «Պրավդան» 1910—12 թվերին։ Ինչպես «Պրավդան» նախահեղափոխական շրջանում վոտքի հանեց բանվորների



մի ամբողջ խավ, նույնպես և «Իսկրան» իր ժամանակին ցնցեց, աթափեցրեց բանվորների և հեղափոխականների մի վորոշ մասին։ Ինչպես «Պրավդայից» սկիզբ առավ «պրավդիստների» մի ամբողջ սերունդ, նույնպես և «Իսկրայից» սկիզբ առավ «իսկրովցիների» կամ, ինչպես այն ժամանակ եյին նրանց անվանում, «իսկրյակների» մի ամբողջ սերունդ։

«Իսկրան» լույս եր տեսնում Պլեխանովի, Լենինի, Մարտովի, Ակսելրոդի, Պատրեսովի և Զասուլիչի խմբագրությամբ։ Այս վեց մարդկանց թվում կար ապագա մի բայլշևիկ և հինգ ապագա մենշևիկներ։ Սակայն ընկ. Լենինի դերն այնքան խոշոր եր, վոր կարճ ժամանակից հետո այդ լրագիրն սկսեցին անվանել «լենինյան», և նա իրոք վոր այդպիսին եր։

## «ԻՍԿՐԱՅԻ» ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ.

«Իսկրայի» հիմնական գաղափարները հետևյալներն եյին. նախ և առաջ նա խաչակրաց արշավանք հայտարարեց բանվորական շարժման աղավաղման դեմ, վորը քարոզում եյին «եկոնոմիստները». նա անխնա ծաղրի յեր յենթարկում և հարվածում նրանց այն բանի համար, վոր նրանք ցանկանում եյին, ինչ էլ վոր լինի, բանվորական շարժումը տեղավորել խաղաղ տնտեսական պահանջների Պրոկրուստեսի անկողնում. նրա փարոսը պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարն եր, այն համոզմունքը, վոր պրոլետարիատի ազատարար դասակարգը, հեղափոխության գլխավոր ուժը կլինի։ Ապա լրագիրը պայքար սկսեց եսերների դեմ։ Առաջին անգամ նրա ելքերում, արդեն 1901 թվին, նրանք կռվեցին վոչ թե սոցիալիստ-հեղափոխականներ, այլ «սոցիալիստ-ռեակցիոներներ», և այդ այն ժամանակ, յերբ նրանք նոր եյին ծագում, յերբ նրանց կուսակցության անդամներն էֆֆեկտավոր տերրորիստական ակտեր եյին կատարում, յերբ դեռևս դժվար եր նրանց ռեակցիոն եյությունը ճանաչել։ Սակայն ընկ. Լենինի և «Իսկրայի» խմբագրության սուր աչքն այդ կուսակցության մեջ արդեն նկատեց ապագա սոցիալիստ-ռեակցիոներներին, կուլակային մանր-բուրժուազիայի ապագա ներկայացուցիչներին։ «Իսկրայի» արշավանքն ընդդեմ եսերների առաջ բերեց, սակայն, դեռևս պահպանված նարոդնիկյան մտավորականության խմբակների, այլ և բանվորների վորոշ մասի ուժեղ վրդովմունքը, վորոնք ասում եյին.—Ինչու կռվել իրար հետ, յեկեք բոլորս միասին, մի շարք կազմած՝ գնանք միապետության դեմ։ Ցարիզմի հալածանքի յենթակա բանվորների հոգեբանությունը հետևյալն եր. թող բոլոր հեղափոխականները՝ անկախ կուսակցություններից և տարաձայնություններից՝ սերտ միավորվեն և համելաշխ սովո-

բեցնեն մեզ միապետության դեմ պայքարել։ Այսպիսով «Իսկրան» ստիպված եր բանվորի ուժեղ ձեռքի տակ հավաքել բոլոր ոպպոզիցիոն և հեղափոխական հոսանքների ուսանողներին, լիբերալներին, զեմցիներին և եսերներին, իսկ մյուս կողմից՝ իր զուտ պրոլետարական և անհաշտ բանվորական կուսակցության հիմքը դնել՝ միաժամանակ պայքարելով ընդդեմ լիբերալների և եսերների, մերկացնելով նրանց մանրբուրժուական եյությունը և ապացուցելով, վոր նրանք պրոլետարական հեղափոխականներ չեն։ Վերջապես «Իսկրայի» յերբորդ գլխավոր գաղափարն այն եր, վոր նա պայքարում եր պրոլետարիատի կենտրոնական միասնական համառուսական քաղաքական կազմակերպության համար։

## «ԻՍԿՐԱՅԻ» ԳՐԱԿԱՆ ՅԵՎ ՊՐԱԿՏԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ.

Մեր որերին այսպիսի գաղափարն այբբենական ճշմարտություն և թվում։ Սակայն 1900-1901 թվերին, յերբ հեղափոխականները սոցիալ-դեմոկրատներին իր փոքրիկ խմբակում պատսպարվել, յերբ վոր եյին յուրաքանչյուրն իր փոքրիկ խմբակում պատսպարվել, յերբ վոչ վոք չուներ համառուսական հեռանկար և հասկացողություն, վոր միայն այս ճանապարհով կարելի յե մի բանի հասնել, յերբ ճիշտ չափանիշ չկար, յերբ վոչ վոք չեր պատկերացնում, թե ինչպիսի հսկայական ուժ պետք է կռվի հանել, վորպեսզի կարելի լինի վորևե հեռանքի հասնել,—այդ որերին կենտրոնացած կուսակցության, ամբողջ պրոլետարիատը համախմբել ձգտող համառուսական քաղաքական կազմակերպության գաղափարը միաժամանակ թե նոր եր և թե վերին աստիճանի դժվարին։ Լենինը քարոզում եր այդ գաղափարը վոչ միայն իր հոդվածներում. նա ստեղծեց «Իսկրայի» հատուկ կազմակերպություն, վորի մեջ մտան 100-150 իսկրովցիներ, այն ժամանակվա գլխավոր հեղափոխականներից։ Յեվ այս խումբը կիրառում եր կյանքում այն ծրագրերը, վորը Լենինն ու Պլեխանովը գրական ձևով զարգացնում եյին լրագրերում։

## «ԱԶԱՏԱԿԱՆՆԵՐԸ» ՅԵՎ «ԻՍԿՐԱՆ».

Բայց նույն ժամանակներում «Իսկրային» սկզբում մասնակցում եյին այնպիսի մարդիկ, վորոնք արդեն մի վոտով բանվորական բանակից դուրս եյին գտնվում։ Այդ պահանջում եր լիբերալների և եսերների հետ ընդդեմ միապետության միասնական ճակատ կազմելու անհրաժեշտությունը։ Այս տեսակետից նշանավոր է հետևյալ միջնադեպը, վորի մասին իր անձնական հիշողություններից մանրամասն կերպով պատմում է Մարտովը։



Ինչպես ասացի, սկզբում «Իսկրայի» շուրջը պատվում եյին Ստրուվեյի և Տուգան-Բարանովսկու նման մարդիկ՝ լիբերալների ապագա ղեկավարները։ Այս դեռ քիչ է. հենց սկզբից նրան աշխատակցում եր իշխան Աբալենսկին, վորը նույնիսկ կուսակցության անդամ եր։ Իր հիմնադրումից մի տարի հետո, յերբ լրագիրը միանգամայն պարզ կերպով բանվոր դասակարգի ղեկավարի և պրոլետարիատի հեգեմոնիայի քարոզչի իր քաղաքական դեմքը ցույց տվեց, 1902 թվի կեսերին Աբալենսկին Արյոլից «Իսկրային» հետևյալ բառերը գրեց. «Յես կարծում եմ, վոր ժամանակ է արդեն, վոր մենք հրաժարվենք հեգեմոնիայից ազատագրական շարժման մեջ»։ Այս հոդի վրա Աբալենսկին շուտով խզում է իր կապը «Իսկրայից» և փաստորեն կուսակցությունից վոչնդվում է։ Նրա հեռանալով վերջնականապես խզվում է այն կապը, վոր դեռևս գոյություն ուներ «Իսկրայի» և այն հեղափոխական-լիբերալների միջև, վորոնք սկզբում դեռ կարող եյին հույս ունենալ վորոշ բլոկի, վորոշ կոալիցիայի իսկրովցիների հետ։

Այս միջնադեպը վերին աստիճանի հետաքրքիր է։ Իմ կարծիքով միանգամայն նշանակալից է, վոր այնպիսի մարդիկ, ինչպես Ստրուվեն, Տուգան-Բարանովսկին և իշխան Աբալենսկին, առհասարակ կարող եյին դեռևս բանվորական կուսակցության շուրջը պատվել։ Այժմ այդ շատերին անհասկանալի կթվա, սակայն այն ժամանակ այդ անխուսափելի յեր։ Յեվ իրավացի յեր ընկ. Լենինը, վոր միաժամանակ ոգուտ եր քաղում Ստրուվեյից, Տուգան-Բարանովսկուց և Աբալենսկուց՝ ասելով, վոր մեծ տնտեսության մեջ թոկն էլ պետք կգա. մի բանի համար պետք կգա նաև Աբալենսկին։ Հիշեցեք. բանվոր դասակարգը թագստոցներն եր քշված, որենքից դուրս եր գտնվում, նրա ագիտատորներն և պրոպագանդիստներն ապաստարան և մի կոպեկ փող չունեյին։ Իսկ լիբերալների այս ներկայացուցիչները, վոր իրենց հատուկ ձևով արհամարհում եյին ցարիզմը, կապերով և դրամով հարուստ եյին և ունեյին ընդարձակ բնակարաններ։ Հենց միայն այս մի հանգամանքի շնորհիվ միանգամայն ճիշտ եր միաժամանակ նրանցից ոգտվելը։

Սակայն, յեթե նշանակալից է այն հանգամանքը, վոր իշխան Աբալենսկու նման մարդիկ կարող եյին այն ժամանակ պատվել կուսակցության շուրջը, ապա ավելի հետաքրքիր է նրանց հեռանալը նրանից։ Ինչից այդ առաջացավ։ Մանր տարաձայնություններից։ Վոչ, հիմնական գաղափարից։ Աբալենսկին ասում եր. «Յես կարծում եմ, վոր ժամանակ է արդեն հրաժարվելու հեգեմոնիայից ազատագրական շարժման մեջ»։ Ուրիշ խոսքով, ժամանակ է հրաժարվել նրանից, վորպեսզի բանվորը ձգտի հեղափոխության մեջ ղեկավար դեր կատարել. նա պետք է միայն ոժանդակիչ ուժ լինի։ Ահա թե ինչպես եյին այդ մարդիկ բանվորի վրա նայում։ Թողնա քաշի հեղափոխության սայլը—

այդ լավ է. սակայն այդ սայլի վրա պետք է նստեն Ստրուվեյի, Տուգան-Բարանովսկու և իշխան Աբալենսկու նման աղաները, սանձն իրենց ձեռքին բռնեն և հեղափոխական շարժման ծրագիրը, նպատակն ու տակտիկան վորոշեն։ Իսկ յերբ նրանք համոզվեցին, վոր «Իսկրան» դրան համաձայն չէ, ասացին. «Մենք հեռանում ենք»։ Ընկ. Լենինին և նրա համախոհներին, վորոնք արդեն ոգտագործեցին այս մարդկանց, վոչինչ չեր մնում անել, քան նրանց բարի ճանապարհ ցանկալ։

## «ԻՍԿՐԱՅԻ» ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.

«Իսկրան» հենվելով եր վերոհիշյալ կազմակերպության վրա և, գլխավորապես, իր տպագրական սյունյակների վրա (ինչպես տեսաք, վերև բերված իմ նամակից, լրագիրը կարդում եյին մինչև նրա քրքրվելը, մանավանդ վոր նա տպվում եր բարակ մետաքսյա թղթի վրա)— «Իսկրան» հասավ նրան, վոր գրավեց բանվորական կոմիտեներին՝ այն ժամանակվա նահանգային կոմիտեներին մի շարք քաղաքներում և նախ և առաջ 2 մայրաքաղաքներում։

Բացի «Իսկրայից» բացառապես կարևոր դեր խաղաց ընկ. Լենինի «Ի՞նչ անել» գիրքը, վորը լույս տեսավ 1902 թվի գարնանը։ Այդ սոսկ մի գիրք չեր. այդ մի գիրք եր, վոր դարաշրջան ստեղծեց։ Նա ամփոփում եր «Իսկրայի» յերկամյա աշխատանքը։ Նա այն ժամանակ սեղանի եր «Իսկրայի» յերկամյա աշխատանքը։ Նա այն ժամանակ սեղանի եր գիրք եր, այն ժամանակվա բոլոր մարքսիստ հեղափոխական գործիչների ավետարանը։ Յեվ միայն 1903 թվին մենշևիկները տեսնելով այն յեղրակացությունները, վորոնք հանվում եյին այդ գրքից, սկսեցին հետին թվով խոշորացույցի միջոցով փնտռել տարաձայնություններ իրենց և նրա միջև։ «Ի՞նչ անել» գրքի գլխավոր գաղափարները նույնն եյին, ինչ և «Իսկրայի» գաղափարները, այսինքն պրոլետարիատի հեգեմոնիայի նույն գաղափարը։ Սակայն «Ի՞նչ անել» գիրքը առաջադրեց բացի այդ առանձին ուժով նաև այսպես կոչվող «տնայնագործության» և պրոֆեսսիոնալ հեղափոխականների հարցը։

## «ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ».

«Տնայնագործություն» բառով ընկ. Լենինը մկրտեց ինքնամփոփ առանձին խմբակների այն ժամանակվա խղճուկ տակտիկան։ Նա քննադատում և ծաղրում եր այն ժամանակվա այն հեղափոխականներին, վորոնք ինքնագոհ կերպով պարծենում եյին նրանով, վոր այս ինչ քաղաքում նրանք խմբակ ունեն, իսկ այս ինչ տեղում նույնիսկ յերկու։ Ընկ. Լենինը գրում եր.—Այդ մանր գործ է, այդ աշխատանքի տնայնագործական յեղանակն է, իսկ մեզ հարկավոր է խոշոր գործարանային արտադրության չափերի հեղափոխություն. տնայնագործությանը պետք է վերջ տալ. այն տարիներին, յերբ վոչինչ այլ բան չեր կարելի անել, անհրաժեշտ եր, սակայն այժմ, յերբ մասսան յեռում է, յերբ բանվորներն ու բանվորուհիները գրում են, թե պայքար են պահանջում, և խնդրում են իրենց սովորեցնել, թե ինչպես պետք է «կռիվ մղել», յերբ գործադուլների, ինչպես, որինակ, ջուլհակների, ցույցերին մասնակցում են մինչև 30,000 հոգի, յերբ Վիբորգի թաղում կռիվներ են տեղի ունենում, յերբ նույնիսկ ուսանողները՝ այդ բուրժուաների զավակները հաղարներով և տասնյակ հաղարներով փողոց են դուրս գալիս և մերկ ձեռքերով կռվում են ցարական վոստիկանության դեմ—այժմ՝ մեր որերին խմբակներով սահմանափակվելը նշանակում է տնայնագործությամբ պարապել այն ժամանակ, յերբ մեզ հարկավոր է գործարանային հեղափոխական արտադրություն։ Վոչ,—ասում եր Լենինը «Ի՞նչ անել» գրքում,—մենք պետք է համառուսական կուսակցություն ստեղծենք աշխատանքի այնպիսի բաժանումով, վորպեսզի յուրաքանչյուրը գիտենա, թե ինչ պետք է անի, և վորոնք են նրա պարտականությունները։ Աշխատանքի այս բաժանման համար ընկ. Լենինի վրա հարձակվեց այն ժամանակվա աջ թևը։ Նրան հանդիմանում եյին նրա համար, վոր նա ձգտում է առանձին հեղափոխականներին մեծ մեխանիզմի անշունչ պտուտակներ և անիվներ դարձնել, վոր նա իբր թե դրանով ստորացնում է հեղափոխականի կոչումը։ Իսկ ընկ. Լենինը պատասխանում եր.—Համաշխարհային պատմական նպատակներ հետապնդող խոշոր հեղափոխական կուսակցության փոքրիկ զսպանակ կամ անիվ լինելը դեռ չի նշանակում հեղափոխականի կոչումն ստորացնել։ Յեվ սրա հետ միասին ընկ. Լենինն առաջադրեց, յեթե կարելի յե այսպես ասել, պրոֆեսսիոնալ հեղափոխականների, այսինքն ըստ պրոֆեսսիայի հեղափոխությամբ զբաղվող մարդկանց կոոպերատիվ համախմբման գաղափարը։



## ՊՐՈՖԵՍՍԻՈՆԱԼ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ.

«Պրոֆեսսիոնալ հեղափոխականներ» տերմինն իր դերը խաղաց նաև բայշևիկների և մենշևիկների վիճաբանության ժամանակ։ Վերջիններս հետագայում տարիներով պայքարում եյին նրա դեմ և համոզում եին, թե իբր թե պրոֆեսսիոնալ հեղափոխականները կդառնան մասսայից, կտրված մարդկանց մի կաստա, բանվորական շարժման հետ մի կրծքով չեն շնչի, դավադրական խմբակի կվերածվեն և այլն։ Պատասխանելով նրանց, ընկ. Լենինը մի շատ պարզ ճշմարտություն եր ապացուցում։Մեր դեմն է,—ասում եր նա նրանց,—ցարական ինքնակալության հսկայական ուժը, 300 տարվա տիրապետության ընթացքում

ստեղծված իր ամբողջ ապպարատը. մեր դեմն են հին Ռուսաստանի բոլոր գիտական ուժերը, նրա դպրոցներն ու մամուլը. իսկ մենք ունենք բոլորովին պատանի բանվորական շարժում։ Յեթե մենք ուզում ենք միաձույլ բանվորական մասսա և մի խոշոր միասնական բոց ստեղծել մերթ այստեղ, մերթ այնտեղ բռնկվող առանձին կայծերից, մեզ անհրաժեշտ է բացառիկ, գրեթե հրաշքով լի այնպիսի մի ապպարատ, վորը կարողանա այս բոլորն իրագործել։ Իսկ սրա համար իր հերթին վոչ պակաս անհրաժեշտ է, վորպեսզի իրապես բանվոր դասակարգին նվիրված մարդիկ մեր կողմից պրոֆեսսիոնալ հեղափոխականների մի կազմակերպության մեջ համախմբված լինեն, այսինքն այնպիսի մարդիկ, վորոնք ուրիշ վոչ մի բանով չզբաղվելով՝ միայն հեղափոխության ծառայելուն և կարողանալու անլեգալ աշխատանքի պայմաններում, աներևակայելի դժվար հանգամանքներում ստեղծել շատ բարդ հեղափոխական կոոպերացիա աշխատանքի ճիշտ բաժանումով և թեթև ու ազատ մանյովը գործելու հմտությամբ ոժտված։

## ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.

Ընկ. Լենինը պրոֆեսսիոնալ հեղափոխականների գաղափարը պաշտպանելու համար ստիպված եր մեծ կռիվ մղել։ Այդ միտքն այն ժամանակ բոլորովին նոր եր և շատերին «կազմակերպչական զառանցանք» եր թվում. սակայն ընկ. Լենինն իրավացի յեր, և նրա այս գաղափարն ամենաարդյունավետներից մեկը դուրս յեկավ։ Յեվ իրոք, յեթե անձնական ղեկավարների տեսակետից մոտենանք այն հարցին, թե ինչով է ապրում այժմ մեր կուսակցությունը, նույնիսկ մեր պետությունը, պարզ կլինի, վոր կուսակցությունը նույնիսկ այժմ՝ քսան տարի անց, մեծ մասամբ սնվում է պրոֆեսսիոնալ հեղափոխականների այն խմբով, վորի հիմքը դրված եր 900-ական թվականների սկզբներին. մեր կուսակցության հին գործիչները, վոր մի փոքրիկ խումբ են կազմում (մինչև 1917 թվը ստաժ ունեցող կուսակցության անդամների թիվը ամբողջ Ռուսաստանում այժմ 10.000 է), սակայն մեծ համակրանք ու հեղինակություն վայելում, հանդիսանում են այն կրաշտողները, վորը պնդացնում է մեր կուսակցությունը։ Այդ 10 հազարը պրոֆեսսիոնալ հեղափոխականների այն փառավոր ջոկատն եր, վորը տարեցտարի հեղափոխական պայքար եր մղում և վոչ մի այլ զբաղմունք չուներ։ Նրանց բանտ են նստեցնում, իսկ նրանք այնտեղից դուրս գալով՝ փախչելով կամ իրենց ժամանակն սպասելով, նորից հեղափոխական աշխատանքների յեն գնում՝ միանգամայն նման բանվորին, վոր յերեկոյան գործարանից գալով և քնելով, առավոտյան նորից աշխատանքի յե գնում։



Պրոֆեսսիոնալ հեղափոխականների կազմակերպման գաղափարին նվիրված եր «Ի՞նչ անել» գրքի մեծ մասը։ Նա իր ժամանակին աղդեցություն ու ուժեղ տպավորություն եր թողնում։ Մենշևիզմի կողմակից մի բունդիստ, վորը չեր ընդունում վոչ պրոֆեսսիոնալ հեղափոխականների կազմակերպությունը, վոչ պայքարն ընդդեմ տնայնագործության, վոչ ել աշխատանքի բաժանումը, վերջերս՝ հիշելով 900 թիվը՝ գրում եր.

> «Հաճախ հետևյալ միտքն եր առաջանում իմ մեջ. այնուամենայնիվ, ինչքան լավ կլիներ, գոնե մասամբ նման լինել այն հեղափոխականի իդեալին, վոր նկարագրում է Լենինն իր «Ի՞նչ անել» գրքում.».

Ընկ. Լենինի հակառակորդները՝ մենշևիկներից լավագույնները՝ կարդալով «Ի՞նչ անել» գիրքը, յեթե չեյին ել գիտակցում, գոնե զգում եյին՝ ինչպես բարձր, կենսալի հեղափոխական ճշմարտություն է պարունակված այդ գրքի եջերում։

## «ԻՍԿՐԱՅԻ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ ԿԻՅԵՎՈՒՄ.

Մինչ այդ, «Իսկրայի» կազմակերպությունը շարունակում եր աճել։ Ցարական կառավարությունը, համոզվելով, վոր այդ կազմակերպությունն ամենաազդեցիկ հեղափոխական ոջախն է դառնում և ամբողջ հեղափոխական բանակն է խռովում, հարձակվեց նրա վրա և մի շարք հալածանքներ սկսեց նրա դեմ։

1901 թվի փետրվարին Կիևում, վորը «Իսկրայի» գլխավոր հենակետն եր, իշխանությունը քայքայեց նրա այն ժամանակվա կազմակերպությունը և ձերբակալեց նրա ղեկավարներին։ Նրանցից միքանիսին յես ձեզ կհիշեցնեմ։ Նախ և առաջ՝ Ն. Բաումանը, վորին սպանեցին 1905 թվին Մասկվայում, իսկական բայլշևիկ։ Հետո Վ. Կրոխմալը, վոր հետո կատաղի մենշևիկ դարձավ. նա հոկտեմբերյան օրերին մեր կողմից ցրված նախապարլամենտի նախագահն եր կամ նախագահներից մեկը, իսկ ավելի ուշ Պետերբուրգում (ինչ մեղքներս թաղցնենք) միքանի անգամ ձերբակալվել է մեր Գ. Ֆ. Վ. (Արտակարգ Հանձնաժողովի) կողմից իր հակահեղափոխական գործունեության համար։ Հետո գալիս է Բասովսկին, վորը հեռացավ հեղափոխության բեմից. Ռադչենկոն, վորի մասին յես արդեն ասել եմ, այժմ հանգուցյալ. Լիտվինովը, արտաքին գործոց ժողկոմի մեր ներկա տեղակալը. Պյատնիցկին՝ բայլշևիկ, վոր ներկայումս աշխատում է Կոմինտերնում, և միքանի ուրիշները։ Մի խոսքով՝ ըստ եյության բայլշևիկյան «Իսկրայի» կազմակերպության մեջ վորոշ ժամանակ կողք-կողքի գործում

եյին այնպիսի մարդիկ, վորոնց շարքերից դուրս յեկան թե բայշևիզմի լավագույն ղեկավարները և թե մենշևիզմի ամենացայտուն ներկայացուցիչները։

## 1902-ՐԴ ԹԻՎԸ.

1902 թվի ապրիլին փորձ արվեց նորից համառուսական համագումար հրավիրելու։ Բելաստոկում հրավիրվեց միայն կիսով չափ հաջողված կոնֆերանս, վորին ներկա եյին ինչպես ապագա բայշևիկները, այնպես և ապագա մենշևիկները, նրանց թվում նույնպես և տխրահռչակ Դանը։

1902 թվի ապրիլի 4-ին Բալմաշևն սպանեց Սիպյագինին, վորին փոխարինեց Պլևեն։ Այդ ուսանողական շարժման վերելքի ամենաբարձրը շրջանն եր, վորի ղեկավարներն ուսանողների մի մասն եր, վոր մինչև այդ գնում եյին բանվորների և սոցիալ-դեմոկրատների հետ և հետո սկսեցին հեռանալ բանվորներից և անցնել եսերների կուսակցության շարքերը։ Զուգահեռաբար ընդարձակվում եր հեղափոխական շարժումը նաև բանվորների մեջ։ Նույն ժամանակ տեղի ունեցավ Նիժեգարոդյան բանվորների նշանավոր ցույցը, վորին հետևեց շատ ընկերների ձերբակալությունը։ Ցույցերի հետևանքով տեղի ունեցավ առաջին խոշոր դատական պրոցեսը, ուր հանդես յեկան Զալոմովը, Դենիսովը և ուրիշները։ Դենիսովը, վոր ներկայումս մեր կուսակցության անդամն է և հնագույն բայշևիկներից մեկը, այն ժամանակ՝ ցարական ռեակցիայի պայմաններում դատարանում իսկական հերոսական ճառ արտասանեց։ Այդ ճառն արձագանգեց Նիժնի-Նովգորոդի փողոցներում և ապա կարդացվեց մի ամբողջ շարք ռուսական քաղաքներում։

## ՌԱՍՏՈՎԻ ԴԵՊՔԵՐԸ.

Վերջապես 1902 թվի նոյեմբերին տեղի ունեցան Ռոստովի դեպքերը, վորոնք պարզապես նախահեղափոխական բնույթ եյին կրում։ Պետք է ասել, վոր ամբողջ 1902 թիվը հարուստ եր գործադուլներով, մանավանդ Ռուսաստանի հարավում։ Այդ տարվա վերջերին՝ նոյեմբերին Ռոստով քաղաքում, սկզբում կարծես տնտեսական հողի վրա, ուժեղ քաղաքական շարժում առաջացավ։ Այստեղ առաջին անգամ մի միտինգ տեղի ունեցավ, վորին մասնակցում եյին 40 հազար մարդ, վորոնց վոստիկանությունը չկարողացավ ցրել։ Միքանի որ անընդհատ միտինգ եր տեղի ունենում, և ցուցարարներն արտասանում եյին «Իսկրայի» վոգով գրգռիչ ճառեր։ Այդ շարժման գլուխ կանգնած եյին գլխավորապես բայշևիկ Ստավսկին՝ ռոստովեցի բանվորը, այժմ մեր կուսակցության անդամ, և ընկ. Դուսսը, վոր ներկայումս աշխատում է մեզ մոտ վորպես դինվորական։ (Այն ժամանակ նա Ռոստովի կոմիտեյի անդամ եր և այդ շարժման հոգին)։



Ռոստովի դեպքերն ամփոփումն եյին վորոշ շրջանի։ Այդ ժամանակ եկոնոմիստներն արդեն վերջնականապես ջախջախված եյին։ Այնպիսի շարժումները, ինչպիսիք եյին Նիժնի-Նովգորոդինը, Որուխովի գործարանինը, Վիրորգյան թաղինը և Ռոստովինը, պարզ քաղաքական բնույթ եյին կրում և վոչ մի առընչություն չունենալով «եկոնոմիզմի» հետ՝ ապացուցում եյին, վոր բանվորներն այդ ժամանակ իրենց ձայնն եյին բարձրացնում, վորպես հեղափոխության ապագա ղեկավարներ։

## ԱՌԱՋԻՆ ԿԵՆՏԿՈՄԸ.

Բոլոր այս դեպքերը նախորդեցին մեր կուսակցության յերկրորդ համագումարին և նրա նախապատրաստման ֆոնն եյին կազմում։ Կիևում տեղի ունեցած ձերբակալությունից և տեղական բանտից կատարված փախուստից հետո, վորին մասնակցում եյին Լիտվինովն ու Պյատնիցկին, «Իսկրայի» կազմակերպությունն ստեղծեց իր կազմակերպչական կոմիտեն, վորը, ճիշտն ասած, այն ժամանակվա առաջին Կենտրոնական Կոմիտեն եր։ Ցավ այստեղ պակաս հետաքրքիր չի թվել նրանց, վորոնք մտնում եյին այդ խմբի կազմի մեջ։ Այդ պարզ ցույց է տալիս, թե վորքան մենք ավելի յենք մոտենում հեղափոխությանը, այնքան ավելի հաճախ են հանդիպում ներկա բայշևիկների անունները։

Այդ կազմակերպչական կոմիտեյի մեջ մտնում եյին. Ռուսաստանի ներկա ելեկտրոֆիկատոր Կրժիժանովսկին, վորի միսին յես հիշատակեցի, ապագա մենշևիկա Ալեքսանդրովան, ներկայումս Լուսժողկոմատում աշխատող Լենգնիկը, մեր արդժողկոմատի գլխավոր աշխատակիցներից մեկը՝ Կրասիկովը, այն ժամանակվա Պետերբուրգի Կոմիտեյի ներկայացուցիչ Կրասնուխան, «Հարավային բանվորի» ներկայացուցիչ Լևինը, և վերջապես Ռոզանովը, վորի մասին յես դեռևս ստիպված կլինեմ խոսել (1920 թվին նա ձերբակալվեց այսպես կոչվող «ազգային կենտրոնի» գործով)։ Բունդի կողմից ներկա յեր Պարտնոյը։ Թվածս անձանց գրեթե կեսն արդի բայշևիկներն են, Լենինի մերձավոր համախոհները, վորն արտասահմանից ղեկավարում եր ամբողջ աշխատանքը։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ.

Այս կազմակերպչական կոմիտեյի անելիքն եր հրավիրումը համառուսական կուսակցական համագումարի, վորը պետք է կուսակցության հիմքը դներ այս նպատակի համար «Իսկրայի» մշակած ծրագրի հի-

ման վրա։ Վերջինիս մեջ լույս տեսավ այդ ժամանակ «Իսկրայի» և «Զարյայի» կազմած մեր կուսակցության ծրագրի նախագիծը։ «Զարյան» տեսական որգան եր, վոր արտասահմանում հրատարակում եր Պլեխանովի և Լենինի նույն խումբը։

Այս նախնական նախագիծը՝ գրված գլխավորապես Պլեխանովի և Լենինի ձեռքով, մեծ մասամբ ընկ. Լենինի պնդումով մտավ մեր ներկայիս ծրագրի մեջ։ Նրա տեսական մասում դետեղված են կապիտալիզմի զարգացման, կապիտալի կուտակման, պրոլետարիատ ստեղծելու և իշխանությունը պրոլետարիատին անցնելու հարցերը։ 1903 թվին ծրագրի այս նախագիծը պատրաստ եր։ Նույն այդ ժամանակում կազմակերպչական կոմիտեն կուսակցության համագումար հրավիրեց։

Նույն ժամանակներում զանազան տեղերում հեղափոխական պայքարի կայծակներ փայլատակեցին։ 1902 թվին Սարատովում գյուղացիական շարժում սկսվեց—մի շարք գյուղացիական բունտեր, վորոնք ճնշվեցին նահանգապետ Ստալիպինի կողմից։ Նրանք ցույց եյին տալիս, վոր ուսանողությանը զարթեցնող և բուրժուական ոպպոզիցիային զարկ տվող բանվորական շարժման յետևից սկսվում է նաև գյուղացիական շարժումը։ Միաժամանակ վորոտում եյին առանձին տերրորիստների ատրճանակները, ինչպես Կարպովիչի, Բալմաշևի և Գիրշա Լեկերտի, վորը գնդակ արձակեց Ֆոն-Վալի վրա։ Միքանի քաղաքներում ցուցարարներն ընդհարվեցին ցարական վոստիկանության հետ։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.

Այս դեպքերի ֆոնի վրա 1903 թվի ամառը հավաքվեց մեր կուսակցության յերկրորդ համագումարը։ Նա սկսվեց Բրյուսսելում, բայց քանի վոր բելգիական իշխանությունը խոչընդոտներ եր հարուցում, նա տեղափոխվեց Լոնդոն, վորտեղ վերջացավ։ Այդ համագումարին ներկա եյին մոտ 60 հոգի, վորոնք 48 վճռական ձայն ունեյին։ Նրանց թվումն եյին՝ ընկ. Շոտմանը Պետերբուրգի կոմիտեյի կողմից, վոր ներկայումս աշխատում է Կարելյան կոմմունայում, Լիդիա Մախնովեցը՝ Պետերբուրգի յերկրորդ ներկայացուցիչը, Ակիմով-Մախնովեցի քույրը՝ կատաղի «եկոնոմիստականներից» մեկը, վոր նրա աջ թևին եր պատկանում, Ն. Բաումանը՝ Մասկվայի կոմիտեյից, Հյուսիսային միության կողմից, վոր համախմբում եր Ռուսաստանի հյուսիսում մի շարք կոմիտեներ. ներկա յեր Լիդիա Կնիպովիչը, վորին պետք է վոր հիշեն Պետրոգրադի հին բանվորները ու բանվորուհիները, ուր նա յերկար տարիներ աշխատում եր «Դյագենկա» (քեռի) անվան տակ. նա վախճանվեց նախանցյալ տարի. նույն Հյուսիսային միությունից յերկրորդ ներկայացուցիչը Ստոպանին եր՝ Բագվի բանվորական շարժման հիմ-



նադիրը, ականավոր բայլշևիկներից մեկը։ Ուֆայի կոմիտեյի կողմից Մախլինը և Լեոնովը եյին (հետագայում անիշխանական). Կիևի կոմիտեյի կողմից՝ Կրասիկովը. Տուլայից՝ Վլադիմիր Իլյիչ Ուլյանովի յեղբայրը, Դմիտրիյ Ուլյանովը, վոր ներկայումս գտնվում է մեր շարքերում։ Ոդեսսայի կոմիտեյից՝ Զեմլյաչկան. Ղրիմի միությունից՝ մենշևիկ Պանինը, Դոնեցի միությունից Մաշինսկին՝ ևս մենշևիկ. Դոնի կոմիտեյից՝ Դուսևը՝ այժմ բայլշևիկ, և մենշևիկ Ակկերմանը. Սարատովի կոմիտեյից՝ Գալկինը և Լյադովը, յերկուսն էլ այժմ բայլշևիկներ են. Խարկովի կոմիտեյից՝ Լևինը և Նիկոլայևը. Սիբիրի միությունից՝ բժիշկ Մանդելբերգը՝ մենշևիկ, 2-րդ Դումայի անդամ, նույնպես և ընկ. Տրոցկին, վոր այն ժամանակ մենշևիկ եր. Բաթումի կոմիտեյից՝ Զուրաբյանը, հետագայում յերկրորդ Դումայի պատգամավոր, մենշևիկ և ինտերնացիոնալիստ. Բագվի կոմիտեյից՝ Բոգդան Կնունին, վոր մասնակցել է 1905 թվին առաջին բանվորական խորհրդին և հակահեղափոխության ժամանակ անցել է մենշևիկների կողմը. Թիֆլիսի կոմիտեյից՝ Տոպուրիձեն. Բունդից՝ Կրեմեր, Այզենշտադտ, Պարտնոյ, Լիբեր, Մեդեմ և Կասովսկիյ, բոլորն էլ մենշևիկներ. վերջապես ընկ. Լենինն իսկրովցիների արտասահմանյան կազմակերպության ներկայացուցիչն եր, իսկ Մարտովը՝ խմբագրության. համագումարին ներկա եյին նույնպես Պլեխանովը, Ակսելրոդը, Դեյչը և ուրիշները։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ 900-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ.

Իդեպ՝ յերկու խոսք այն ժամանակվա կուսակցության սոցիալական կազմի մասին։ «Իսկրայի» կազմակերպության մեջ—այդ համագումարում էլ, ինչպես և այն ժամանակվա մեր կոմիտեներում—մեծամասնությունը վոչ բանվորներն եյին կազմում։ Այս հանգամանքը շատ կարևոր է կուսակցության սոցիալական կազմի վերաբերյալ մեր ներկայիս վիճաբանությունը պարզելու համար։ Յերբեմն այս մասին շատ պրիմիտիվ ձևով են դատում։ Վերցնում են վիճակագրությունը՝ վորքան կուսակցության մեջ բանվորներ, գյուղացիներ և ծառայողներ կան, և ասում են.—Վորովհետև բանվորները բացարձակ մեծամասնություն չեն կազմում, ուրեմն կուսակցությունը բանվորական չե։ Մենք գիտենք, վոր կան իրենց կազմով միանգամայն մաքուր բանվորական կազմակերպություններ, վորոնց քաղաքականությունը, սակայն, հեղափոխական չե և պրոլետարական վոգով չե տոգորված։ Միայն կուսակցության սոցիալական կազմը դեռևս հարցը չի վճռում։ Այդ, իհարկե, կարևոր հանգամանք է, սակայն վոչ միակը։

«Իսկրայի» կազմակերպությունը և մեր այն ժամանակվա կոմիտեները բաղկացած եյին մեծ մասամբ ուսանողներից և մասամբ միայն

պրոֆեսիոնալ հեղափոխականներից. բանվորներ այնտեղ քիչ կային, և դրանք յեղակի դեմքեր եյին՝ Բաբաշկինի և Շոտմանի նման, վորոնք սկսում եյին առաջ քաշվել բանվորներից։ Այդ իսկ պատճառով յերկրորդ կուսակցական համագումարն էլ, վոր կուսակցության սկիզբը դրեց, մեծ մասամբ բաղկացած եր վոչ բանվորներից։ Սակայն չնայած դրան, «Իսկրայի» կազմակերպությունը, վոր ըստ եյության առաջին բայշևիկյան կազմակերպությունն եր, մեծ և ակտիվ դեր, կոմունիստական ավանգարդի դեր խաղաց հեղափոխության մեջ։ Ընկ. Լենինի կողմից ղեկավարվող պրոֆեսիոնալ հեղափոխականներից բաղկացած լինելով, նա ըստ կազմի չլինելով զուտ բանվորական, այնուամենայնիվ իր յետևից տանում եր բանվորական մասսաներին, և նրա խորքերում ձևավորվում եր այն ամենը, ինչ հասունանում եր պրոլետարական մասսայի խորքերում։ Յեվ հենց բանվորական մասսան է, վոր իր հետ տանում եր այս խումբը, վորը հետագայում կուսակցություն ստեղծեց։

## ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՆԴԻ ՀԵՏ.

Սակայն վերադառնանք յերկրորդ համագումարին, վորտեղ պարզ կերպով նկատվեց բայշևիկների և մենշևիկների պառակտումը։ Տարաձայնության առաջին կետն այն եր, թե ինչ վերաբերմունք պետք է ունենալ դեպի ազգային հարցը, ուրիշ խոսքով՝ դեպի Բունդը։ Մի անգամ ևս համապատասխան գնահատական տալով հրեա բանվորների և արհեստավորների հերոսությանը, վորոնք ռեակցիայի մութ գիշերին առաջինը պայքար սկսեցին, պետք է միաժամանակ ասել, վոր կուսակցության պատմության մեջ այդ կազմակերպությունը մնաց վորպես մենշևիկյան և ոպպորտյունիստական։ Նրա այս հատկությունները յերկրորդ համագումարին պարզ յերևան յեկան ազգային հարցում։ Բունդը պահանջում եր, վոր նրան ճանաչեն «Ռուսաստանում ապրող ամբողջ հրեա պրոլետարիատի միակ ներկայացուցիչ»՝ ըստ յերևութին չցանկանալով հաշվի առնել այն հանգամանքը, վոր հրեա բանվորները, ինչպես և ամբողջ հրեա ժողովուրդը, ցրված են ամբողջ յերկրում, և վոր, այդ պատճառով, ավելի ճիշտ կլինի, յեթե հրեա բանվորները, ինչպես և ֆին, եստոն և այլ բանվորները, մտնեին այն վայրերի կազմակերպության մեջ, վորտեղ նրանք ապրում են։ Մենք չենք կարող համաձայնվել, վորպեսզի մեր կազմակերպությունը բաժանվի առանձին ազգային կուրիաների, վորովհետև մենք միասնական միջազգային կուսակցություն ենք, վորը պայքար է մղում ընդդեմ միջազգային կապիտալի։ Իսկրովցիները հենց այդ տեսակետն ունեյին, համաձայնվելով միայն, վոր հրեա բանվորները կարող են ունենալ իրենց ոժանդակիչ կազմակերպություններն ու հատուկ խմբակները, կարող են հրատարակել իրենց լրագրերը մայրենի լեզվով և այլն։ Սակայն Բունդն առաջին



անգամ ցուցադրելով իր ազգա-սոցիալ-շովինիզմը՝ հարցը կտրուկ ձևով դրեց՝ պահանջելով բանվորներին բաժանել ըստ ազգությունների և իրավունք տալ ունենալու իրենց առանձին կուսակցությունը։ Այս կարծես թե կազմակերպչական վեճն իրոք շատ կարևոր քաղաքական տարաձայնություն եր, վոր իր մեջ պարունակում եր դեպի ազգային հարցը և ինտերնացիոնալիզմն ունենալիք վերաբերմունքի ապագա դիսկուսսիան։ Իսկրովցիները մի ընդհանուր ճակատ կազմած,—թե Լենինը և թե Մարտովը,—պայքարում եյին Բունդի դեմ, սակայն համագումարում ապագա մենշևիկներն ու բունդովցիներն զգալով, վոր նրանք իրար շատ մոտ են և վոր միքանի այլ հիմնական հարցերի վերաբերմամբ նրանք համակարծիք են, սկսեցին մոտենալ իրար։ Սակայն գործը վերջացավ նրանով, վոր Բունդն անջատվելով կուսակցությունից՝ հեռացավ համագումարից։

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԵՏԻ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԼԻՆԵԼՈՒ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ.

Յերկրորդ՝ վոչ պակաս կարևոր վեճն առաջացավ կուսակցության կանոնադրության առաջին կետի առթիվ, վորի մեջ խոսվում եր կուսակցության անդամի պարտականությունների մասին։ Ընկ. Լենինն այսպես եր ձևակերպում այդ կետը.—Կուսակցության անդամ հաշվվում է նա, ով **մասնակցում է կուսակցության կազմակերպություններից վորևէ մեկում**, կատարում է կուսակցության անդամի պարտականությունները, անդամավճար է տալիս, յենթարկվում է դիսցիպլինայի, և այլն։ Մարտովն առաջարկում եր այսպիսի բանաձև.—Կուսակցության անդամ հաշվվում է նա, ով աշխատում է կուսակցության **հսկողության ներքո** և վորևէ աջակցություն է ցույց տալիս կուսակցական կազմակերպություններին։ Սկզբում կարող է թվալ, թե վիճաբանությունների առարկան կարծես թե այնքան էլ կարևոր չէ, և ճիշտն ասած՝ միայն բառերի մասին է։ Յեվ շատերը համագումարում իրոք վոր այդպես էլ մտածում եյին։ Բայց, իրոք, վիճաբանությունները բառերի մասին չեյին, այլ այն մասին, թե ինչ պետք է լինի կուսակցությունը։

Ընկ. Լենինն ասում եր.—Յեթե բանվորն ուզում է կուսակցության անդամ լինել, պետք է մտնի այս կամ այն բջիջի մեջ և աշխատի կուսակցության այս կամ այն կազմակերպության մեջ. բանվորի համար այդ սարսափելի չէ. այս պայմանը կիրառելիս մենք կիմանանք, թե ումից է բաղկացած կուսակցությունը, մենք կունենանք վոչ թե փքխրուն կուսակցական մասսա, վոչ թե շաղախ, այլ ամուր ձուլված կազմակերպություն, վորը բաղկացած է իսկական պրոլետարիատից։ Մար-

տովը, Ակսելրոդը և մնացած մենշևիկներն այլ կերպ էին յենթադրում։ Մենք ապրում ենք,—ասում էին նրանք,—անլեգալ ժամանակում, յերբ կուսակցության մասնակցելը անվտանգ գործ չէ։ Բանվորը գուցե և կգա մեզ մոտ, սակայն բացի բանվորից կա նաև ուսանող, կա պրոֆեսոր, կա այլատարբ մասսա, վորոնք չեն գա։ Այդ պատճառով, յեթե մենք կուսակցության անդամի պարտականություններին տանք ավելի ընդարձակ ձևակերպում, ասելով, վոր կուսակցության մեջ կարող է մտնել յուրաքանչյուր վոք, ով նրան ոժանդակում է և աշխատում է նրա հսկողության ներքո, սակայն առանց պարտավորեցնելու ընդունվելու և կազմակերպության մեջ մտնել, այն ժամանակ մեզ մոտ կգան և՛ ուսանողը, և՛ պրոֆեսորը, և՛ այլատարբ մասսան։ Ընկ. Լենինը յեռանդով առարկում էր հարցն այդ ձևով քննության առնելուն։ Ձեր պատճառաբանությունը,—ասում էր նա,—կուսակցության գոյությանն է սպառնում։ Մեզ հարկավոր են կուսակցության մեջ վոչ թե ուսանողներ, պրոֆեսորներ և այլատարբ մասսա, այլ մեզ հարկավոր են բանվորներ։ Մենք պատրաստ ենք ոգտագործելու ուսանողական և պրոֆեսորական շարժումը. մենք չենք հրաժարվում իշխան Աբալենսկու, պայծառափայլ Պյոտր Ստրուվեյի և մեր ճանապարհին մեզ հանդիպած յուրաքանչյուր մարդու ծառայությունից, բայց մենք պետք է հիշենք, վոր ղեկավար դասակարգը պրոլետարիատն է, և վոր նրա կուսակցությունը պետք է պրոլետարական լինի։ Այսպիսով վեճը վոչ թե բառերի, այլ կենսական հարցի մասին էր—պե՞տք է արդյոք մեր կուսակցությունը լինի բանվորական, պրոլետարական հեղափոխական, թե՞ դառնա այն, ինչ դարձավ գերմանական սոցիալ-դեմոկրատիան, վորն ընդունելով իր մեջ տասնյակ և հարյուր-հազարավոր ուղեկիցներ և իր շարքերում ունենալով նույնքան թեյատուն պահողներ, վորքան և բանվորներ, չափազանց ուռճացավ և պատերազմի ժամանակ հանդես բերեց իր բոլորին հայտնի սնանկությունը։ Այն, ինչ առաջարկում էին Մարտովը ու Ակսելրոդը, սպառնում էր մեզ հասցնել նույն վախճանին, ինչ վոր ունեցավ եսերների կուսակցությունը, վորը ամեն մի պատահականի ընդունելով, այնպես ուռճացավ 1917 թվին, վոր առանձին հեղափոխականները խեղդվում էին բուրժուական դեմոկրատների բազմության մրուրի մեջ, ինչպես ճանճերը կաթի մեջ։

Համագումարն այնքան պարզ չպատկերացրեց այս իր համար բոլորովին նոր հարցը. բացի դրանից, խնդիրը նրանով ել էր բարդանում, վոր կուսակցությունն անլեգալ էր։ Նույնիսկ այնպիսի սուր մտքի տեր մարդիկ, ինչպես Պլեխանովն էր, իրենց ճիշտ հաշիվ չէին տալիս, թե վորքան կարևոր լուրջ վեճ էր այդ։ Պլեխանովն արտասանեց կեսկատակային մի ճառ, վորի մեջ նա ասում էր.— Ձերը լսում ես Լենինին, թվում է, թե նա իրավացի յե, յերբ լսում ես Մարտովին, թվում է, թե նա



յել հեռու չէ ճշմարտությունից։ Նա ըստ յերևույթին ուզում էր հաշտեցնել յերկու կողմերը։ Սակայն Լենինն ամուր կանգնած էր իր դիրքերում, և կատաղի կռիվ բռնկվեց։ Վերջիվերջո հաղթանակեց Մարտովը, վորը, շնորհիվ աննշան մեծամասնության, անցկացրեց մենշևիկյան բանաձևը։ Համագումարը վորոշեց, վոր կուսակցության մեջ կարող է մտնել ամեն վոք, ով ոժանդակություն է ցույց տալիս և աշխատում նրա հսկողության ներքո։ Ուրիշ խոսքով, ընդունվեց մի վորոշում, վորը բաց էր անում կուսակցության դռները վոչ պրոլետարական ելեմենտի առաջ, վորն անկասկածորեն կկործաներ նրան, յեթե կյանքը չմտցներ հետո իր վորոշ ուղղումները։ Մարտովը շատ ավելի ուշ նկարագրելով համագումարի այս մոմենտը՝ ասում է. «Ցեսս տարա հաղթությունը, սակայն Լենինը խորամանկ գտնվեց և վորոշ ժամանակից հետո կարողացավ միքանի այլ կետերի ոգնությամբ այնպես խուզել իմ բանաձևը, վոր վերջին հաշվով իմ հաղթանակից վոչինչ չմնաց»։

Կանոնադրության առաջին կետի մասին յեղած այս վեճը վերին աստիճանի խրատական է, վորովհետև նա ցույց տվեց, վոր միասնական կուսակցության շրջանակներում արդեն այն ժամանակ յերկու կուսակցություններ կային, ճիշտ այնպես, ինչպես լեգալ մարքսիզմի շրջանում մի ժամանակ իրար կողքի ապրում էին յերկու աշխարհայացք։

Ցերկրորդ համագումարում ծագած յերրորդ տարաձայնությունն ավելի խոշոր և լուրջ էր։ Այդ դեպի լիբերալներն ունենալիք վերաբերմունքի հարցն էր։

## ՎԵՃ ԴԵՊԻ ԼԻԲԵՐԱԼ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՈՒՆԵՆԱԼԻՔ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ.

Այն ժամանակներում արդեն փեսրավորված և իր որդանն ունեցող լիբերալ բուրժուազիան սկսեց իր ճանկերը ցույց տալ բանվոր դասակարգին։ 900-ական թվականներին գործը դեռևս այն դրության մեջ էր, վոր լիբերալների գլխավոր թշնամին ինքնակալությունն էր։ Սակայն 1903 թվին հարաբերություններն սկսեցին արագ ձևավորվել, նամանավանդ Ռաստովի դեպքերից և գործադուլներից հետո, յերբ բանվորները խոսեցին իր շահերի մասին մտածող հեգեմոն դասակարգի լեզվով. լիբերալներն սկսեցին խեթ աչքով նայել դեպի ձախ և պայքար սկսեցին յերկու ճակատի վրա՝ վոչ միայն ընդդեմ ցարիզմի, այլ և ընդդեմ բանվորների։ Դասակարգային բնազդով նրանք զգացին, վոր այսոր կամ վաղը նրանք ստիպված կլինեն ընդհարվել բանվոր դասակարգի, բանվորական կուսակցության հետ։

Այս դրությունը համագումարում հարուցեց այն հարցը, թե ինչ վերաբերմունք պետք է ունենալ դեպի լիբերալները։ Ընկ. Լենինը,

վոր իր ժամանակին ասում եր, թե մենք պետք է ոգտագործենք նաև լիբերալներին, վորովհետև մեծ անտեսության մեջ պարանի կտորն էլ պետք կգա, տեսնելով, վոր լիբերալները կազմակերպվեցին և իրենց ճանկերն են ցույց տալիս, ասաց.—Այո, մենք կոգտագործենք լիբերալներին ցարի դեմ, բայց միաժամանակ մենք պետք է ասենք բանվոր դասակարգին, վոր լիբերալ բուրժուազիան կազմակերպվում է, վոր նա ստեղծում է իր կուսակցությունը և ավելի ու ավելի հակահեղափոխական դառնալով, կգնա բանվորների և հեղափոխությունը իր վախճանին հասցնելու դեմ։ Այդ պատճառով քանի դեռ բուրժուազիան ցարի դեմ է դուրս գալիս, մենք նրան կոգտագործենք, սակայն մենք չպետք է մոռանանք, վոր այդ դասակարգը մեր թշնամին է։ Ուրիշ խոսքով, համագումարում առաջին անգամ պարզ և ճշգրիտ կերպով ձևակերպվեց դեպի բուրժուազիան ունենալիք վերաբերմունքի հարցը, այն հարցը, վորը վերջիվերջո հանգեց մեր և մենշևիկների յերկպառակությանը։ Վերջիններս հանձինս Մարտովի և Պատրեսովի ու միքանի ուրիշների հետևյալ առաջարկը մտցրին.—Մենք լիբերալների հետ պետք է գնանք՝ պայման դնելով, վոր նրանք արտահայտվեն հոգուտ ընդհանուր ընտրական իրավունքի. նրանցից նրանք, վորոնք անկեղծորեն կարտահայտվեն հոգուտ ընդհանուր ընտրական իրավունքի, կապացուցեն, վոր նրանք հակահեղափոխականներ չեն։ Մենշևիկները պնդում եյին (Պատրեսովի բերանով), վոր այս պայմանը լիբերալների համար մի տեսակ փորձ, լակմուսյան թուղթ կլինի։ Սակայն հարցի նման ձևակերպումը պարզ ցույց եր տալիս, վոր նրանք ուզում եյին վոչ թե բուրժուազիային ոգտագործել, այլ նրա հետ ձեռք-ձեռքի տված գնալ, վորի համար և հնարում եյին նրա համար ընդունելի պայմաններ։

Լենինն ու Պլեխանովը խիստ քննադատության եյին յենթարկում այդ առաջարկը՝ ապացուցելով, վոր «լակմուսյան թուղթը» չի ոգնի. լիբերալը հենց նրա համար էլ լիբերալ է, վորպեսզի այսոր ինչպիսի պայման էլ վոր լինի, ընդունի, իսկ վաղը խաբի։ Բանվորներին պետք է անվստահություն սովորեցնել—ասում եյին նրանք,—և վոչ թե նրանց միամիտ մանիլովյան մտքեր ներշնչել, թե իբր թե «պայմանների» ոգնությամբ կարելի յե համաձայնության գալ լիբերալ բուրժուազիայի հետ, վորը ցանկանում է իր ինքնակալության դեմ մղած պայքարի գործում ոգտագործել բանվորներին։

1903 թվին պատկերը հետևյալն եր. գոյություն ունեին յերեք հիմնական ուժ՝ ցարական ինքնակալությունը, բանվոր դասակարգը և լիբերալ բուրժուազիան։ Բանվոր դասակարգն ասում եր՝ կոգտագործենք լիբերալ բուրժուազիային ընդդեմ թագավորի, իսկ վաղը նրա դեմ կկռվենք. լիբերալ բուրժուազիան ասում եր՝ կոգտագործենք բանվորներին ընդդեմ ցարի, իսկ վաղը նրա դեմ կկռվենք։ Իրերի այս-



պիսի դրության ժամանակ, պարզ է, վոր հիմնական հարցը դեպի լիբերալները, դեպի բուրժուազիան ունենալիք վերաբերմունքի հարցն եր, վոր վորոշում եր մի ամբողջ դարաշրջանի տակտիկան։

Սակայն համագումարն այս տարաձայնությունը չեր տեսնում այնպիսի պարզությամբ, ինչպես մենք այդ այժմ տեսնում ենք։ Իսկ վորովհետև Մարտովը, վոր յերկար տարիներ պայքարում եր ձեռք-ձեռքի տված Լենինի հետ, ժողովրդականություն և վստահություն եր վայելում, այդ պատճառով համագումարը Սողոմոնի վորոշում ընդունեց. գրեթե հավասար քանակությամբ ձայներով (համագումարի 2 կեսը) նա ընդունեց յերկու բանաձևերն էլ՝ գտնելով, վոր նրանք իրար չեն հակասում։ Այդ ցույց է տալիս, թե տարաձայնություններն իրոք վոր աստիճանի դեռ անորոշ եյին։

Համագումարում բացի վերոհիշյալ յերեք տարաձայնություններից կային նաև ուրիշները, վորոնք այդքան խոշոր նշանակություն չունեին։ Որինակ՝ այն հարցը, թե պետք է արդյոք մեր կուսակցությունը կառուցենք խիստ կենտրոնացման սկզբունքով, թե ընդհակառակը։ Ընկ. Լենինը խիստ կենտրոնացած կուսակցության կողմնակից եր։ Մենշևիկներն սկսեցին յերկչոտությամբ պաշտպանել ապակենտրոնացումը, ֆեդերատիվ սկզբունքը, տեղերում ավելի մեծ իշխանություն ունենալու տեսակետը։

## ՎԵՃ «ԻՍԿՐԱՅԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ ԱՌԹԻՎ.

Վեճ ծագեց նաև անձնավորությունների մասին՝ «Իսկրայի» խմբագրության կազմի առթիվ։ Վերջինս բաղկացած եր 6 հոգուց՝ Պլեխանով, Լենին, Մարտով, Պատրեսով, Ակսելրոդ և Զասուլիչ։ Յերբ համագումարում տարաձայնություններ յերևան յեկան, ընկ. Լենինը հայտարարեց, թե պետք է այնպիսի մի խմբագրություն կազմել, վորն արտահայտեր համագումարի մեծամասնության կարծիքը, և առաջարկեց հետևյալ յեռյակը՝ Պլեխանով, Լենին և Մարտով։ Սակայն նրա մեջ մեծամասնությունը դեմ եր Մարտովին, և այս հողի վրա տաք վիճաբանություններ բռնկվեցին։ Ընկ. Լենինի առաջարկը հայտարարեցին համարյա մի սրբապղծություն կուսակցության հնագույն և լավագույն գործիչների նկատմամբ, իսկ Մարտովն ինչան բողոքի հրաժարվեց խմբագրության կազմի մեջ մտնելուց, և նրան պաշտպանեցին նրա մի շարք կողմնակիցները։ Համագումարը վոչինչ չեր կարող անել։ Վերջապես կանգ առան Պլեխանովի և Լենինի վրա, և այս վորոշումն անցավ մեծամասնությամբ՝ կարծեմ 25 ձայնով ընդդեմ 23-ի։ Այստեղից էլ առաջ յեկան «մեծամասնականները» (բոլշևիկներ) և փոքրամասնականները (մենշևիկներ)։ Ինչպես հայտնի է, հեղափոխության ժամա-

նակ այս տերմինը բոլորովին այլ բովանդակությամբ եր հասկացվում։ Շատերը պարզապես գտնում էին, վոր բայլշևիկները նրանք են, ովքեր ավելի շատ են ուզում, իսկ մենշևիկները նրանք, վորոնք պատրաստ են ավելի քչով բավականանալ։ Այնինչ, իսկապես այս թևավոր բառերը ծագեցին համագումարում, յերբ մեծամասնությունը («մեծամասնականները»—«բայլշևիկները») քվեարկեց հոգուտ Պլեխանով-Լենին խմբագրության, իսկ փոքրամասնությունը («փոքրամասնականները»—«մենշևիկները») նրան հակառակ եր։

## ՎԵՃ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ.

Վերջապես համագումարում կար նաև կուսակցության ծրագրի հարցը։ Այս հարցի վրա արժե միքիչ կանգ առնել, վորովհետև այստեղ Պլեխանովը նորից հանդես յեկավ պրոլետարիատի հեգեմոնիայի յեռանդոտ պաշտպանի դերում։

Պլեխանովը կուսակցության ծրագրի գլխավոր հեղինակներից մեկն եր. այդ ծրագիրը եկոնոմիստները Մարտովի գլխավորությամբ խիստ քննադատության եյին յենթարկում, առաջարկելով միքանի տասնյակ ուղղումներ։ Վեճը խոշոր սկզբունքային նշանակություն ունեցող և նույնիսկ, կարելի յե ասել, որվա չարիքը կազմով կետերի շուրջն եր։ Նախ և առաջ վիճում եյին ընդհանուր ընտրական իրավունքի հարցի մասին։ Համագումարում արտասանած իր ծրագրային ճառերից մեկում Պլեխանովն այսպես ձևակերպեց իր հայացքը. «Մենք, իհարկե, այժմ առաջարկում ենք ընդհանուր ընտրական իրավունքը, սակայն վորպես հեղափոխականներ պետք ե բացարձակ կերպով ասենք, վոր չենք ուզում այդ ֆետիշ դարձնել։ Չե՞ վոր հեշտ ե պատկերացնել այնպիսի մի դրություն, յերբ հաղթանակած բանվոր դասակարգը վոչ ժամանակով ընտրական իրավունքից զրկի իր հակառակորդին՝ բուրժուազիային»։ Այս բառերն ապագա մենշևիկների ուժեղ վրդովմունքը առաջ բերին։

Հետագա վիճաբանությունների ժամանակ հարց ծագեց Հիմնադիր Ժողովի և պարլամենտի դումարման ժամկետների մասին։ Մեր մինիմում-ծրագրում մենք պահանջում եյինք պարլամենտը դումարել յուրաքանչյուր 2 տարին մի անգամ, այսինքն վորքան հնարավոր և հաճախ։ Ապագա մենշևիկներից մեկը հայտարարեց, թե ավելի լավ ե տարեկան մի անգամ. այդ ավելի դեմոկրատիկ սկզբունք ե։ Այն ժամանակ բարձրացավ Պլեխանովը և մի հրաշալի ճառ արտասանեց։ Նա ասաց.—Դուք պետք ե ինկատի ունենաք, բարեկամներս, վոր պարլամենտի դումարման ժամկետի հարցը մեզ, հեղափոխականներիս համար յերկրորդական հարց ե. յեթե տվյալ պարլամենտը ձեռնտու կլինի



բանվոր դասակարգի համար, մենք, իհարկե, կաշխատենք այն յերկարացնել. իսկ յեթե նա բանվոր դասակարգին հակառակ կլինի, մենք կաշխատենք յերկու շաբաթվա ընթացքում ցրել այն։ Հազիվ եր Պլեխանովն արտասանել այս բառերը, վոր համագումարում սկսվեց մեծ իրարանցում։ Պատգամավորների մի մասն սկսեցին ծափահարել, և մյուսները՝ սուլել և շվացնել։ Նախագահը սուլող պատգամավորներին կարգի հրավիրեց, բայց նրանցից մեկը գոռոզ դիրք ընդունելով՝ հայտարարեց. «Յեթե բանվորական կուսակցության համագումարում նման չլսված բառեր են արտասանվում, յես պարտավոր եմ սուլել»։ Պատմության իրոնիայով այդ մարդը վոչ այլ վոք եր, բայց յեթե Ռոզանովը, նույն այն մարդը, վորը «Մարտին» կեղծանունով աշխատում եր Պետրոգրադում, Պ. Կ.-ի և Կ. Կ.-ի անդամ եր և այն ժամանակվա հեղափոխականների սերնդի ակնավոր գործիչը. նույն այն Ռոզանովը, վորն սկսեց Պլեխանովի հիշյալ բառերի դեմ բողոքելուց, սակայն վերջացրեց նրանով, վոր Դենիկինի կուսակցության կազմակերպիչ դարձավ, «ազգային կենտրոնին» մասնակցելու համար ձերբակալվեց, մահվան պատժի դատապարտվեց, բայց մեզ հատուկ ներողամտության շնորհիվ այժմ ազատ շրջում ե՝ թողնելով, կարծեմ, քաղաքականությունը։

## ՊԼԵԽԱՆՈՎԸ ՄԱՀՎԱՆ ՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ.

Այս փոքր միջադեպի մեջ, ինչպես արևը մի փոքր կաթիլջրի մեջ, արտացոլվեց Լերան և Ժիրոնդայի, ապագա բայլշևիկների և մենշևիկների վեճը։ Յերկրորդ համագումարում սուր կերպով դրված եյին այն հիմնական հարցերը, վորոնք հետագայում իրենց վճռական դերը խաղացին և վերջնական սահման դնեցին մեր և մենշևիկների միջև։ Պլեխանովն այն ժամանակ բառիս լավագույն իմաստով բայլշևիկ եր. նա պարծենում եր «յակոբին» անունով։ Յերբ քննվում եր մահվան պատժի հարցը, և մենշևիկները պահանջեցին վերացնել մահվան պատիժը, Պլեխանովը նրանց գլխին սառ ջուր ածեց՝ ասելով. «Մահվան պատժի վերացումը։ Շատ լավ։ Բայց յես գտնում եմ, վոր միքանի վերապահություններ անհրաժեշտ են. ի՞նչ եք կարծում, Նիկոլայ II-ին կարելի՞ յե կենդանի թողնել։ Յես կարծում եմ, վոր նրա համար մահվան պատիժը պետք ե թողնել»։ Մենշևիկներն արդեն այն ժամանակ դատում եյին վորպես լիբերալներ՝ թե լավ չե, յեթե արյուն և թափվում, և վոչ վորպես հեղափոխականներ, վորոնք ասում են՝ ամեն ինչ հանգամանքներից ե կախված. տիրան Նիկոլայ II-ի վոչնչացման մեջ վոչինչ վատ բան չկա։ Յերբ Կերենսկին փորձում եր մահվան պատիժ մտցնել բանվորների և զինվորների վերաբերմամբ, մենք այն ժամանակ աժ-

բողջ ժողովրդին եյինք վոտքի հանում այդ միջոցի դեմ - և մենք իրավացի եյինք։ Իսկ Նիկոլայի և կալվածատերերի գլխին պայթած մահվան պատիժը—բոլորովին այլ բան է։

## ՊԼԵԽԱՆՈՎԸ—ԲԱՅԼՇԵՎԻԿ.

Բոլոր սուր հարցերում,—ինչպես ընդհանուր ընտրական իրավունք, պարլամենտարիզմ, Հիմնադիր ժողով կամ մահվան պատիժ, —Պլեխանովը հանդես եր գալիս որպես իսկական բայլշևիկ, որպես պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի իսկական պաշտպան և որպես հեղափոխական. նա հպարտությամբ իրեն «յակոբին» եր անվանում, համագումարում նա ասաց. «Այո, մեր սոցիալ-դեմոկրատիան բաժանվում է Լերան և Ժիրոնդայի. դուք՝ մենշևիկներդ Ժիրոնդիստներ եք, բանվորական հեղափոխության ապագա մատնիչներ»։ Վոմանք ճանաչում են Պլեխանովին նրա կյանքի վերջին որերին, յերբ նրա աստղը մայր մտավ, յերբ նա պատերազմի ժամանակ անցավ հակառակորդի բանակը։ բայց վորոշ չափով նա բայլշևիզմի հիմնադիրներից մեկն է։ 1903 թվին նա պաշտպանում եր այն գաղափարները, վորոնք մեր ընդհանուրիս սեփականությունն են կազմում։ Յերկրորդ համագումարում նա Լենինի հետ եր և կուսակցության խորհրդի ու նրա կենտրոնական որգանի խմբագրության մեջ մտավ վորպես նույն հայացքների ներկայացուցիչ, ինչ վոր Լենինն ուներ։

## ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ՀԵՏՈ.

Համագումարը պառակտվելուց հետո փակվեց։ Կ. Կ.-ն ընտրվեց միայն բայլշևիկների կողմից։ Մարտովը հանդես յեկավ «Կուսակցության պաշտպանողական դրությունը» բրոշյուրով, մեղադրելով Լենինին բոլոր մահացու մեղքերի մեջ և զանազան վիրավորանքների համար, վոր նա հասցրել եր դրան արժանի շատ ժարդկանց։ Մենշևիկ պատգամավորները վերադարձան Ռուսաստան և ստեղծեցին հատուկ «բյուրո», վորն իսկույն բոյկոտ հայտարարեց բայլշևիկյան Կենտրոնական Կոմիտեյին։ «Իսկրայում» վոչ վոք չեր աշխատում, բացի Լենինից և Պլեխանովից։ Տեղի ունեցավ, ինչպես իրեն հատուկ սրամտությամբ արտահայտվում եր Պլեխանովը, greve général des généraux («գեներալների ընդհանուր գործադուլ»)։ «Իսկրային» աշխատակցող այդ գեներալները ցած դրին իրենց գրիչները և հրաժարվեցին գրել այն լրագրում, վորին չեյին աշխատակցում վոչ Մարտովը, վոչ ել Ակսելրոդը։ «Իսկրայի» վեց համարներ լույս տեսան Լենինի և Պլեխանովի խմբագրությամբ, և այս համարներում վերջինս մի անգամ ևս իր ալեզարդ մա-



զերը թափ տվեց։ Նա սկսեց տեղավորել այնպիսի հոդվածներ, վորոնցով ուսուցանում եր փողոցային կռիվների տակտիկան. նա՝ հեղափոխական մարքսիստը՝ գրում եր այն մասին, թե ինչպես պետք է յերկաթալարի արգելքներ շինել ցարական ժանդարմների դեմ կռվելու համար։ Նա այն եր ասում, ինչ անում եյին այն ժամանակ բայլշևիկները, վորոնք նախագծում եյին հեղափոխական ամպրոպը։ Սակայն շատ շուտ, նույնիսկ չափազանց շուտ, Պլեխանովն իր դիրքերը հանձնեց։ Զանցավ և միքանի ամիս, վոր նա հակառակորդների կողմն անցավ։ Նա առաջարկեց Լենինին նորից յետ կանչել խմբագրության մեջ «գործադուլավոր գեներալներին» և զիջումներ անել նրանց գործադուլին, հույս ունենալով հետո նրանց մի կերպ իր բուռը հավաքել, նույնիսկ փոքրամասնություն կազմելով։ Բայց Լենինը, ինչպես և միշտ սկզբունքային հարցերում, անհաշտ եր և հեռացավ խմբագրությունից։ Պլեխանովը մնաց մենակ, և ինչպես այն ժամանակ կատակով ասում եյին, միաձայն «Իսկրայի» խմբագրության մեջ հրավիրեց չորս ականավոր մենշևիկների։ Նոր «Իսկրան» մենշևիկների որգան դարձավ։ Պլեխանովը փորձում եր սկզբում յետ կասեցնել գեներալներին աջ բեկումից, սակայն հետո ստիպանաբար հաշտվեց, խոնարհվեց ճակատագրի առաջ և ինքն ել մենշևիկ դարձավ։

Այսպիսով 1903 թվի վերջին մենք ունեյինք արդեն յերկու կազմակերպություն, յերկու խումբ, յերկու կազմակերպված կուսակցություն։ Կարելի յե ասել, վոր այն ժամանակ բայլշևիզմը և մենշևիզմը, վորպես գաղափարական հոսանքներ, արդեն ձևակերպվեցին, իսկ այն մոմենտին, յերբ հեղափոխական ամպրոպը ճայթեց, նրանք վերջնականապես կազմակերպվեցին։

---

## ԶՈՐՐՈՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

# ՌՈՒՍ-ՅԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ.

1904 թվի կարևորագույն դեպքը, իհարկե, ռուս-յապոնական պատերազմն է։ Նա հսկայական նշանակություն ուներ վորպես մի գործոն, վորը հեղափոխական վոգով տոգորեց մեր յերկիրը և մոտեցրեց 1905 թվի առաջին հեղափոխությունը, առանց վորի անհնար եր նաև 1917 թիվը։

Անոգուտ չի լինի այստեղ միքանի խոսք ասել այդ պատերազմի պատճառների մասին, վորոնց մասին այն ժամանակվա սոցիալ-դեմոկրատների շարքերում վորոշ տարաձայնություններ կային։ Մենշևիկները գլխավորապես ընդգծում եյին նրա դինաստիական բնույթը, բացատրելով այդ բացարձակապես նրանով, վոր Ռոմանովների տունը ձգտում եր ամրանալ իր գահի վրա՝ փորձելով ժողովրդի ուշադրությունը ներքին դեպքերից դարձնել արտաքին դեպքերի վրա։ Վորոշ չափով, իհարկե, այդ ճիշտ է։ Յերկիրը դժգոհ եր, խուլ կերպով հուզվում եր, և միանգամյան բնական է, վոր այն ժամանակվա կառավարությունը, վորի ղեկավարներն եյին Պաբեդանոսցևը և Վիտտեն, դիմեց այդ յերկրի ուշադրությունն իր վրա դարձնող միջոցին։ Պատմության մեջ շատ որինակներ կգտնեք, յերբ թագավորներն ու կայսրներն իրենց համար կրիտիկական րոպեներին աշխատում եյին պատերազմի միջոցով արհեստական ձևով ժողովրդի մեջ հայրենասիրական տենդ առաջացնել և դրանով իսկ հետաձգել դեպքերի զարգացումն ու վախճանը պետության ներսում։ Սակայն նույն պատմությունից հայտնի յե, վոր նման փորձերի մեծագույն մասը սովորաբար արագացրել է միայն միապետական կառավարությունների տապալումը։ Նույնը պատահեց և ռուս-յապոնական պատերազմի նկատմամբ։

### ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏը.

Սակայն դինաստիական պատճառը դեռևս չի սպառում հարցը։ Բացի նրանից, այդ պատերազմի մեջ խոշոր դեր եյին խաղում նաև զուտ իմպերիալիստական, նվաճողական ձգտումների, նոր շուկաներ ձեռք



բերելու ցանկությունը և այլն։ Ռուսաստանում աշխատող շատ կուսակցական կոմիտեներ ընդգծում եյին ռուս-յապոնական պատերազմի հենց այս բնույթը, սակայն մենշևիկները մաքառում եյին այսպիսի հայացքի դեմ՝ ապացուցելով, վոր ներկա դեպքում վոչ մի նման բան չկա։ Յեվ յեթե հիմա խոր մտածենք մենշևիզմի եվոլյուցիայի մասին, պետք է ասենք, վոր նույնիսկ ռուս-յապոնական պատերազմի պատճառների վերլուծության մեջ պարունակվում եր նրանց ապագա քաղաքական դատողության սաղմը, վորը չեր ցանկանում, ինչպես և 1917 թվին, այդ ընդհարման արմատական տնտեսական պատճառները տեսնել։

### ՊԱՐՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Ռուս-յապոնական պատերազմի ժամանակ առաջին անգամ սկիզբ առավ այն հոսանքը, վորը 1917 թվին ստացավ «պարտվողականություն» անունը։ Այս հարցի վրա անհրաժեշտ է կանգ առնել, վորովհետև նա սերտ կապ ունի բայշևիզմի հետագա եվոլյուցիայի և մեր քաղաքական հակառակորդների հետ ունեցած վեճերին։

Պարտվողականությամբ համակված եյին վոչ միայն բանվորական կուսակցության յերկու մասերը՝ բայշևիկները և մենշևիկները, այլ նաև գրեթե ամբողջ լիբերալ բուրժուական հասարակությունը։ Այս յերևույթը յերբեք էլ պատահական չե, վորը ցույց է տալիս, թե այն տարիներին, յերբ ցարիզմը տրորում եր, յեթե կարելի յե այսպես ասել, բուրժուազիայի սիրելի մաղոնները, այդ բուրժուազիան ընդունակ եր նրան դեմ գնալու և նույնիսկ թույլատրելի յեր համարում «իր» կառավարության պարտությունը արտաքին պատերազմում, միայն թե գիջումներ ձեռք բերի ներքին քաղաքականության ասպարիզում։ Այս հարցին ավելի մանրամասն ծանոթանալ ցանկացողներին խորհուրդ եմ տալիս կարդալ «Հոսանքի դեմ» ժողովածուն, իսկ ինքս կբավականանամ միայն միքանի ապացույցներ բերելով այն մասին, վոր պարտվողականությունը ռուս-յապոնական պատերազմի ժամանակ տարածված եր ամբողջ Ռուսաստանում։

1904 թվին հայտնի լիբերալ գրող և միաժամանակ համոզված միապետական՝ Բարիս Զիչերինը (վոչ թե մեր այժմյան արտգործժողկոմը, այլ նրա բարեկամը՝ հայտնի հրապարակախոսը), գրում եր.

> «Այս պատերազմի հետևանքները կոգնեն վերջապես լուծելու նաև ներքին ճգնաժամը։ **Դժվար է ասել, թե այդ բանի համար պատերազմի ինչպիսի վախճանն է ավելի ցանկալի»։**

Այս բավականի պարզ բառերը, վոր հայտարարում են, թե ավելի ցանկալի յե ցարական Ռուսաստանի պարտությունը, քան թե նրա

հաղթանակը, գրված եյին ցարական ցենզուրայի տակ։ Կարելի յե արդեն գոնե մի բոպե յերևակայել, վոր 1914 թվին, իմպերիալիստական պատերազմի ժամանակ գտնվեր վորևե բուրժուա, վոր ընդունակ լիներ վորևե նման բան ասելու։ Այդ անհնարին եր, վորովհետև 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ Պետական Դումաների միջոցով ցարական ինքնակալությունը մի կերպ սահմանեց վորոշ, քիչ թե շատ սերտ համաձայնություն ռուսական բուրժուազիայի վերին խավերի հետ. վորովհետև 1914 թվին, գոնե արտաքուստ, մոնարխիան այն չեր, ինչ 1904 թվին։ Իշխանության բաժանումը կալվածատերերի և բուրժուազիայի մեջ 1914 թվին արդեն կատարված եր, և այդ պատճառով բուրժուազիան այն ժամանակ պատերազմին բոլորովին այնպես չեր վերաբերվում, ինչպես 1904 թվին։ 1916 թվին, պատերազմի ամենայեռուն շրջանում, Միլյուկովը Պետական Դումայում արտասանեց մի ճառ, վորի մեջ նա հայտարարեց, վոր յեթե գերմանացիներին հաղթելու ճանապարհն անցներ հեղափոխության միջից, նա կհրաժարվեր հաղթանակից։ Բուրժուազիայի այս ամենալուսավորված ներկայացուցիչն այսպիսով ասում եր, վոր յեթե առանց հեղափոխության չի կարելի հաղթել գերմանացիներին, ապա ավելի լավ է հրաժարվել ատելի թշնամուն հաղթելուց, միայն թե բանն առանց հեղափոխության վերջանա։ Ուրիշ խոսքով՝ նա ուզում եր ասել, վոր նա հեղափոխությունից ավելի յեր վախենում, քան գերմանացիների հաղթանակից։ Այս յերկու հայտարարությունները՝ մի կողմից հեղափոխական բուրժուազիայի ականավոր ներկայացուցիչ Բարիս Զիչերինի՝ 1904 թվին, մյուս կողմից լիբերալ բուրժուազիայի ամենախոշոր ներկայացուցիչ Միլյուկովինը՝ 1916 թվին—ցույց են տալիս այն ուղին, վորով անցել է Ռուսաստանում ինքը բուրժուազիան։

1904 թվին բուրժուազիայի մեծագույն մասը կողմնակից եր, վոր Ռուսաստանը պարտվի ռուս-յապոնական պատերազմում, այսպիսով հույս ունենալով ինքնակալությունից վորոշ զիջումներ ստանալու և հաղթելու կալվածատերերին, վորոնք այլապես յերբեք չեյին զիջի։ Բուրժուազիան հիանալի կերպով գիտեր, վոր յեթե ցարիզմը հաղթանակեր, կալվածատերերի դիրքն ավելի կամրանար և սահմանադրության ամեն մի հույս կվերանար, այսինքն՝ իշխանությունը կալվածատերերի և բուրժուազիայի մեջ բաժանելու հույսը կչքանար։

## ԳԵՐՇՈՒՆԻԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Պարտվողական տրամադրությամբ ավելի սուր ձևով համակված եյին, իհարկե, նաև հեղափոխականները, նրանց թվում նաև հսերները։ Այս կուսակցությունը, վոր 1914—1917 թվերին «հայրենասիրության»



կաշկանդումներից դուրս չեր գալիս, ռուս-յապոնական պատերազմի ժամանակ արխի-պարտվողական տրամադրություն ուներ։ Ահա թե ինչ է գրում, որինակ, այս առթիվ հսերական կուսակցության հանրածանոթ ղեկավարներից մեկը՝ հանգուցյալ Գերշունին, վոր այն ժամանակ Պետրոպավլովսկայա բանտումն եր նստած։ Ռուսական զորքերի պարտության և ընդհանրապես ռուս-յապոնական պատերազմի մասին նա առաջին անգամ իմացավ իր պաշտպանից՝ փաստաբան Կարաբչևսկուց, վորը նրա մոտ բանտ յեկավ։ Հայտնի ռուս տերրորիստի և այն ժամանակվա ոպպոզիցիոն հասարակության տիպիկ ներկայացուցիչ ականավոր ռուս փաստաբանի հանդիպումը վերին աստիճանի հետաքրքիր է.

— Անհամբեր սպասում ես,—գրում է Գերշունին,—թե յերբ կվերջանա այս ամբողջ կոմեդիան և վերջապես մենակ կմնաս պաշտպանիդ հետ, վոր միակ կենդանի մարդն եր վոչ թշնամական բանակից, վոր իրավունք ուներ այդ անելու։

Յեվ ահա, յերկար և ձանձրալի ձևականություններից հետո, կամերայի դուռը փակվում է, և մենք յերկուսով ենք մնում, միայն յերկուսով։

(Սկսվում է յերկար ու տենդային հարց ու փորձը)։

— Պլևեն դեռ կենդանի՞ յե։ կենդանի՞ յե։

— Այո։ Սակայն կան մեծ նորություններ։ Դուք գիտեք, վոր պատերազմ է հայտարարված։

— Պատերազմ։ Ո՞ւմ հետ։

— Յապոնիայի հետ։ Մեր միքանի զրահանավերն արդեն պայթեցված են, և մենք պարտվում ենք։

— Յերկրորդ Ղրիմի կամպանիա։ Պորտ-Արթուր—Սևաստոպոլ։ Ex oriente lux։

— Դրա նման է։

— Իսկ ինչպես է յերկիրը. «հայրենասիրական» վոգևորությամբ է համակված, անզուսպ ցանկություն ունի համախմբվելու իր ինքնակալ «ղեկավարի» շուրջը։

— Այո, իհարկե, առանց դրան չի լինի։ Սակայն ամեն ինչ մեծ չափով ուռցրած է և արհեստական։ Պատերազմը ժողովրդականություն չի վայելում. վոչ վոք նրան չեր սպասում, և վոչ վոք չի ցանկանում պատերազմ։

— Տարորինակ է,—ավելացնում է Գերշունին,—վոր այստեղ՝ Պետրոպավլովսկայա բերդի այս կիսախավար նկուղում ամեն ինչ միանգամից պարզ դարձավ։ Զգացվում եր, վոր մի ինչ-վոր անսահման ահեղ, անչափ ծանր, չափազանց տխուր բան է մոտե-

նում և վոր նա պետության համար այն կայծակի հարվածի դերը կխաղա, վորը կզարթեցնի քնածներին, կպատառոտի և մոխիր կդարձնի այն վարագույրը, վորը յերկրի մեծամասնությունից թաքցնում է միապետական հասարակակարգի իսկական եությունը։

Հետո, իր հիշողությունների մեջ, նույն Գերշունին պատմում եր, թե ինչպես Շլիսսելբուրգի բանտի բակում զրոսանքի ժամանակ իր գտած լրագրի մի կտորից նա և նրա հետ բանտարկված ընկերներն իմացան Պորտ-Արտուրի անկման մասին։ «Զինվորական խորամանկությունից» խաբված բանտի ժանդարմը հաստատեց այդ նորությունը։ Դժվար է նկարագրել, թե ինչ զգացին Շլիսսելբուրգի կալանավորները։ «Մենք դող զգացինք,—գրում է Գերշունին.—ընկավ Պորտ-Արտուրը... կընկնի նաև ինքնակալությունը»։ Ակներև պարտվողական տրամադրություն։

## ՊԱՐՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՎԻՆԿՈՎԻ ՎԵՊՈՒՄ.

Յեվ այդ տրամադրությունը միայն Գերշունին չուներ։ Նույնիսկ այնպիսի մի մարդ, ինչպիսին Սավինկովն է, իր հայտնի «Դժգույն ձի» վեպում, վորը նա տպեց Ռոպշին կեղծանվան տակ, նկարագրում է տերրորիստական աշխատանք կատարելու համար արտասահմանից Ռուսաստան յեկող իր հերոսի դրությունը։ Ճանապարհին նա իմանում է Ցուսիմայի մասին, ցարական նավատորմղի անորինակ պարտության մասին, և նա համակվում է ամենահակադիր զգացմունքներով. մի կողմից վորպես ռուս մարդ, նա ափսոսում է պարտված նավատորմղի, վոչնչացած մարդկանց, սպանված և ջրահեղձ յեղած ռուս նավաստիների մասին, մյուս կողմից՝ վորպես հեղափոխական, նա հասկանում է, վոր Ցուսիմայի տակ յեղած պարտությունը հեղափոխության հաղթանակն է, վոր ցարական նավատորմղի խորտակումն ոգուտ կբերի նրան։

Նույն տրամադրությունը մենք տեսնում ենք Վերեսայևի «Հիշողություններ ռուս-յապոնական պատերազմի մասին» գրքում, վորը աքանչելի կերպով արտացոլում է իր գրվածքներում ռուս մտավորականության շարքերում ծագած բոլոր նոր հովերը։ Նրա «Հիշողությունների» յուրաքանչյուր տողը վկայում է, վոր պարտվողական տրամադրություն ունեցող գրեթե ամբողջ ռուսական մտավորականությունը հիանալի կերպով հասկանում եր, վոր ցարական Ռուսաստանի՝ ռուս-յապոնական պատերազմում պարտվելն ազատագրական շարժման հաղթանակ է նշանակում։



## ԲԱՅՇԵՎԻԿՆԵՐԸ ՅԵՎ ՌՈՒՍ-ՅԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

Այժմ դառնանք այն ժամանակվա սոցիալ-դեմոկրատիայի բանակին։ Ինչ վերաբերում է բայշևիկներին, նրանք առանց ամենաչնչին տատանումների արտահայտվում եյին հոգուտ ցարական Ռուսաստանի կատարյալ պարտության։ Յերբ արդեն մենշևիկական դարձած «Իսկրան» (յերբ ընկ. Լենինը հեռացավ նրանից, իսկ Պլեխանովն իրեն ոգնության հրավիրեց չորս մենշևիկներին) հռչակեց «հաշտություն՝ ինչ գնով ել լինի» լոզունգը, բայշևիկներն առարկեցին, վոր այդ լոզունգը ճիշտ չե։ Մենք կողմնակից չենք, վոր ինչ գնով ել լինի, հաշտություն կնքվի,—ասում եյին նրանք,—մենք պացիֆիստներ չենք։ Լինում են այնպիսի պատերազմներ, վորոնք վերջիվերջո հոգուտ ժողովրդի յեն. նշանակում է, դեռ այն ժամանակ բայշևիզմի աշխարհայացքի մեջ յերևան յեկան նրա ապագա գաղափարախոսության սաղմերը, այն է՝ իմպերիալիստական պատերազմը դարձնել քաղաքացիական։

## ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ԴԻՐՔԸ.

Մենշևիկները թեև վոչ առանց տատանումների, նույնպես պարտվողական դիրք բռնեցին։ Միջազգային սոցիալիստական կոնգրեսում Ամստերդամում 1904 թվին, վորին մեր կուսակցության կողմից մասնակցում եր յերկու պատգամավորություն, մեկը՝ պաշտոնականը, մենշևիկների գլխավորությամբ (վորովհետև այն ժամանակ նրանց ձեռքումն եյին կուսակցության կենտրոնական որգանները), և յերկրորդը՝ մերը, բայշևիկյանը, սակավաթիվ, չընդունված և թույլատրված լոկ խորհրդակցական ձայնով,—այդ կոնգրեսում Պլեխանովը հանդիպեց մեր այժմյան ընկեր Կատայամային, վորին ձեզանից շատերը յերևի տեսել են, և վորը հիշյալ կոնգրեսում յապոնական շարժման ներկայացուցիչն եր։ Յեվ ահա այն ժամանակ նրանց միջև տեղի ունեցավ յեղբայրացման տեսարան. նրանք համբուրվեցին ամբողջ կոնգրեսի հիացմունքի բացականչությունների տակ, վորը վոգևորությամբ ծափահարում եր Պլեխանովի պարտվողական ճառի առթիվ։ Ահա թե նա ինչպես է նկարագրում այդ դեպքը։

— Ցես ասացի, վոր յեթե ցարական կառավարությունը հաղթի յապոնիային, պարտված կլինի վոչ այլ վոք, յեթե վոչ ռուս ժողովուրդը... Հաղթական ցարական կառավարությունը կարող եր հաղթության հմայիչ ազդեցությունից ավելի ամուր սեղմել այն շղթաները, վորոնցով կաշկանդում է յերկիրը։ Ցես հիշեցրի կոնգրեսին այն դժբախտաբար անվիճելի ճշմարտության մասին,

վոր ցարական կառավարության արտաքին քաղաքականությունը հնուց թալանի և բռնագրավման քաղաքականություն եր, վոր այդ կառավարությունն անփոփոխ կերպով ձգտում եր իրեն յենթարկել մեզ շրջապատող այն բոլոր ժողովուրդներին, վորոնք պետք յեղած չափով ուժեղ չեյին, վորպեսզի նրան ծանր հակահարված տան, և վոր նա բուն ռուսական յերկիրը պատել և պարտված ժողովուրդների յերկար մանյակով, վորոնք վորպես ատելություն վերադարձնում են նրան այն ամենը, ինչ ստանում են նրանից վորպես ճնշում և հալածանք։ Յեվ յես ավելացրի, վոր նման քաղաքականությունից տառապում եր ինքը, ռուս բնակչությունը վոչ պակաս, յեթե վոչ ավելի, քան մնացած բոլորը, վորովհետև վոչ մի ժողովուրդ ազատ չի կարող լինել, յեթե իր հարևաններին հալածելու զենք ե ծառայում... Յեվ այս բոլորն ասելով՝ յես գիտակցում եյի, վոր ռուս ժողովրդի խոշոր մասի մտքերն ու զգացումներն եյի արտահայտում։ Վոչ մի անգամ դեռ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի ձայնն այդքան ուժեղ չափով ռուս ժողովրդի ձայնը չի հանդիսացել։

Յեվ ամբողջ II Ինտերնացիոնալը, հանձինս Ամստերդամի կոնգրեսի, մենշևիկյան պարագլխի այս բառերի տակ ստորագրեց, վոր ցարական կառավարության հաղթանակը նա կհամարեր ռուս ժողովրդի պարտություն։ Այսպիսով, ամբողջ հեղափոխական շրջապատի ճնշման տակ և միաժամանակ տեսնելով, վոր՝ այն ժամանակ նույնիսկ բուրժուազիան պարտվողական տրամադրություն ուներ, մենշևիկներն իրենց հերթին պարտվողական դիրք բռնեցին։

## ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Այս բոլորն անհրաժեշտ ե ինկատի ունենալ, վորպեսզի պարզ հասկանանք մենշևիկների դավաճանությունը 1914-17 թվի պատերազմի ժամանակ, յերբ նրանք գործն այնպես եյին պատկերացնում, թե իբր թե մեր պարտվողական դիրքը վոչ այլ ինչ եր, յեթե վոչ անլուր դավաճանություն ռուս ժողովրդի հանդեպ։ Ինչպես հայտնի յե, հետո, 1917 թվի հուլիսյան որերին, նրանք նույնիսկ համոզում եյին, վոր մեր պարտվողականության համար մեզ լավ վարձատրեցին։ Համենայն դեպս, ռուսաց պատմության այս եջը վերին աստիճանի նշանակալից ե, վորովհետև նա ցուցահանում ե այն հետաքրքիր փաստը, թե այն որերին, յերբ ռուսական բուրժուազիան դեռևս իշխանություն չուներ, և նրա գլխին կալվածատերն եր նստած, նա վերին աստիճանի պարտվողական տրամադրություն ուներ։

Այժմ, հետին թվով-իր «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի



պատմությունը» գրքում Մարտովը փորձում ե հրաժարվել մենշևիկների՝ պատերազմի ժամանակ բռնած պարտվողական դիրքից. նա գրում ե.

Հենց վոր ռուսական բանակի անհաջողություններից հետո լիբերալ հասարակության մեջ և հեղափոխական շրջաններում առաջ յեկան տիպիկ պարտվողական տրամադրություններ, և ամրացավ այն հույսը, թե հետագա ռազմական պարտությունը վերջնականապես կվոչնչացնի ցարիզմին, գրեթե առանց ուժերի վորևե լարում պահանջելով ժողովրդից, հենց վոր սրա հետ միասին պարզվեց նաև հայտնի «յապոնասիրությունը» և այն դերի իդեալիզացիան, վորն այս պատերազմում խաղում եր յապոնական իմպերիալիզմը,—«Իսկրան» (այսինքն այն ժամանակվա այդ լրագրի տեր մենշևիկները) հանդես յեկան պարտվողականության դեմ՝ պաշտպանելով այն տեսակետը, վոր ժողովուրդն ու հեղափոխությունը շահագրգռված են, վոր պատերազմը չվերջանա Ռուսաստանի վրա ծանր զոհեր բարդելով, և վոր ռուս ժողովրդին ազատություն տրվի վոչ յապոնական սվիններով։

## ՅԱՊՈՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԲԱՅՇԵՎԻԿՆԵՐԸ.

Մարտովը պարզապես քողարկում ե հարցը և այժմ հետին թվով փորձում ե իր հեղափոխական մեղքերը քավել բուրժուազիայի առաջ։ Նա գիտավորյալ կերպով շփոթում ե յերկու հարց՝ խոսելով յապոնասիրության և այն մասին, վոր «Իսկրան» պայքարում եր նրա դեմ։ Այս սիմպատիան դեպի յապոնացիները վոչ մի առընչություն չունի պարտվողականության հետ։ Պատերազմի ժամանակ, յերբ յապոնացիները կռվում եյին ռուսական ցարի զորքերի դեմ, լիբերալ հասարակության վորոշ խավերը (մանավանդ ուսանողությունը) այնքան հեռուն եյին գնում, վոր իբր թե ուսանողության առանձին խմբերը վողջույնի հեռագրեր եյին ուղարկում յապոնական միկադոյին։ Այս վաստն այնքան ել ստուգված չե, սակայն ցարական մամուլը նրան ընթացք տվեց և մեծ ջանքով տարածում եր։ Համենայն դեպս, յեթե յապոնասիրության սիմպատիաները գոյություն ունեյին ել, մենք՝ հեղափոխականներս նրանց դեմ եյինք դուրս գալիս։ Մենք ասում եյինք.—Յապոնական միապետը վոչնչով լավ չե մեր ռուսականից, և մենք չենք սպասում, վոր նա իր զինվորների սվիններով ազատություն կբերի մեզ։ Յեվ այս տեսակետից մենք դատապարտում եյինք լիբերալների և մակերեսային հեղափոխական-ուսանողների բոլոր ծայրահեղությունները, վորոնք յեթե հեռագիր չեն ել ուղարկել, գուցե պատրաստվում եյին ուղարկել յապոնական կայսրին։ Այդ իմաստով Մարտովն իրավացի յեր. այո, մենք յապոնասիրության դեմ եյինք, բայց մենք կողմնակից

եյինք ցարական բանակի պարտությանը այդ պատերազմում, և Մարտովը դիտմամբ և քարտերը շփոթում, պատմելով հետևյալ փաստի մասին.

Ֆին բուրժուական «ակտիվիստների» լեգերը՝ հետագայում—1905 թ. Ֆինլյանդայի կառավարության պարագլուխը, Կոնի Ցիլլիակուսն անմիջականորեն ինչպես Պլեխանովին, նույնպես և Բունդի արտասահմանյան ներկայացուցիչներին առաջարկեց բանակցություններ սկսել յապոնական կառավարության ագենտների հետ ռուսական հեղափոխությանը զենքով և դրամով ոժանդակություն ցույց տալու համար։

Մարտովն ավելացնում է, վոր այս առաջարկը մերժվեց։ Այդ ճիշտ է։ Յերբ ռուս հեղափոխականները և նույնիսկ ռուսական բուրժուազիայի մի մասը հանդես յեկան վորպես վորոշակի պարտվողականներ, այն ժամանակ յապոնացիները և նրանց միքանի վարձու ագենտները փորձեցին մեզ թակարդը գցել. վորովհետև դուք ցարական մոնարխիայի պարտության կողմնակից եք, ապա, յեթե ուզում եք, մենք ուրախությամբ ձեզ կոժանդակենք դրամով և զենքով։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր բոլոր նման առաջարկները զայրույթով մերժում եյին մեր կազմակերպությունը, բոլոր ազնիվ հեղափոխականները, նույնպես մենշևիկներն ու Պլեխանովը։ Բայլշևիկներն ասում եյին.—Մենք ռուսական ցարիզմի դեմ ենք, սակայն այդ չի նշանակում, վոր մենք յապոնական միապետի կողմնակից ենք։ Սակայն, այնուամենայնիվ, այդ չեր խանգարում մեզ,—իթիվս մեր նաև մենշևիկներին,—պարտվողական լինել։

## ԼԻԲԵՐԱԼ ՇԱՐԺՄԱՆ ԱՃՈՒՄԸ.

Յապոնական պատերազմի առաջացրած դեպքերի հետ միասին լիբերալ շարժումն աճում և ծավալվում եր։ Ծագեց վոչ միայն ուժեղ գործադուլային շարժում բանվորների մեջ, վոչ միայն ուսանողական շարժում, այլ տեղի ունեցավ նաև հսկայական բեկում լիբերալ-զեմցիների մեջ, վորոնք տեսան, վոր ինքնակալությունն այնպիսի մի պատմության մեջ է ընկել, վորից նա չի դուրս գա։ Լիբերալ բուրժուազիան զգաց, վոր պատերազմն անխուսափելի կերպով սահմանադրություն կբերի, այնպես, ինչպես Ղրիմի պատերազմը, վորին հետևեց գյուղացիների ազատագրումը 1861 թվին։ Յեվ վորքան ավելի եյին ջարդում յապոնացիները ցարական զորքերին, վորքան ավելի պարզ միապետությունն ապացուցում եր, վոր նա կավե վոտներով մի հսկա յե, այնքան ավելի հանդուգն ու անպատկառ եր դառնում, շնորհիվ այն ժամանակվա սոցիալական ուժերի դասավորությանը, ռուսական



բուրժուազիան։ Այդ դեռ քիչ է. խիզախություն ձեռք բերելով, նա սկսեց զարմանալի արագությամբ կազմակերպվել, միաժամանակ, ինչպես այդ հասկանալի յե, այդ կազմակերպությունն ստացավ այն ձևերը, վորոնք նրան հատուկ եյին։ Բանվոր դասակարգի շարժումը, յերբ նրա խորքերում վերելք է սկսվում, սովորաբար ընդունում է գործադուլի, մասսայական ցույցի, իսկ հետո զինված ապստամբության բնույթ։ Սակայն լիբերալ բուրժուազիային հատուկ են պայքարի այլ ձևեր՝ ժողովներ, բանկետներ և պետիցիաներ։ Ամենահայտնի զեմցիները, վորոնցից շատերն իշխանական ծագում ունեյին, սիստեմատիկ կամպանիաներ կիրառեցին նահանգային զեմստվային ժողովներում, վորտեղ կազմում եյին իրենց բանաձևերը, վորը նրանք դիմում եյին անվանում և, ծածկելով իրենց ստորագրություններով, ուղարկում եյին թագավորին։ Այդ դիմումների մեջ նրանք նրան ասում եյին, վոր նա պետք է լսի հասարակական իմաստության և «յերկրի ձայնը», այսինքն՝ իրաց ձայնը, և ժողովրդին սահմանադրություն տա, նրանց—զեմցիներին իշխանության կանչելով։ Շուտով այդ զեմստվային շարժումը հասավ իր բարձրագույն կետին՝ ընդունելով ցարի մոտ պատգամավորություն ուղարկելու ձև։ Այս այն բոլորն եր, վորից ավելի վոչ մի բան անել չեյին համաձայնվի լիբերալները։

## ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՅԵՎ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1904 ԹՎԻՆ.

Բուրժուազիայի դեպի քաղաքական կյանքը ցույց տված զարթոնքի հետ միասին, ինչ վոր մինչև այդ Ռուսաստանում չեր նկատվում, նորից մեծ սրությամբ ծագեց բանվոր դասակարգի վերաբերմունքի հարցը դեպի բուրժուազիան, նույն հիմնական հարցը, վորին մենք հանդիպում եյինք կուսակցության պատմության բոլոր շրջաններում, և վորին վերջիվերջո հանգում են մեր բոլոր տարաձայնությունները մենշևիկների հետ։ Այս հարցը, ինչպես տեսաք, ծագեց թե լեգալ մարքսիզմի մեջ, թե նարոդնիկների, Ստրուվեյի և «եկոնոմիստների» դեմ պայքարելիս, թե կուսակցության յերկրորդ համագումարում, յերբ մի կողմից առաջարկվեց Լենին-Պլեխանովի, իսկ մյուս կողմից Մարտովի և նրա համախոհների բանաձևները։ Այս անգամ՝ 1904 թվին այս հարցը ծագեց առաջին անգամ վոչ վորպես տեսական, այլ վորպես քաղաքական և որվա մեծագույն չարիք հանդիսացող հարց։ Լիբերալ բուրժուազիան շարժվեց, և բանվոր դասակարգը պետք է վճռեր, թե ինչպես վերաբերվել տվյալ դեպքում դեպի բուրժուազիան։ Յեվ ահա այստեղ է, վոր, ինչպես և առաջ, մեր և մենշևիկների միջև ծագեցին խոշոր տարաձայնություններ։

Մենշևիկներն առաջ քաշեցին այսպես կոչված զեմստվային կամպանիայի ծրագիրը, վորը հետևյալին եր հանգում։ Ինկատի ունենալով, վոր ամենուրեք տեղի եյին ունենում լիբերալ զեմստվոյի ներկայացուցիչների նահանգական ժողովներ, վորոնք քննում եյին Ռուսաստանի դրությունը և պետիցիաներով դիմում եյին ցարին, բանվոր դասակարգը, մենշևիկների կարծիքով, պետք է ուղարկեր այդ ժողովներն իր ներկայացուցիչներին՝ հանձնարարելով նրանց հայտարարել ազնվականներին և լիբերալ բուրժուազիային, վոր բանվորները նրանց կոժանդակեն և նրանց հետ միասին կգնան, յեթե նրանք յեռանդով շարունակեն իրենց պետիցիոն կամպանիան։ Միաժամանակ մենշևիկները առանձնապես շեշտում եյին, վոր բանվորները չպետք է լիբերալ բուրժուազիային վախեցնեն իրենց չափազանցրած պրոլետարական պահանջներով։ Իսկ մենշևիկյան «Իսկրան» ուղղակի և բացահայտ կերպով գրում եր.

«Յեթե դիտենք Ռուսաստանում մղվող պայքարի ասպարեզը, ինչ կտեսնենք։ Միայն 2 ուժ՝ ցարական միապետությունը և լիբերալ բուրժուազիան, վորը կազմակերպվել է և ունի այժմ մեծ տեսակարար կշիռ։ Իսկ բանվորական մասսան ջլատված է և վոչինչ չի կարող անել վորպես ինքնուրույն ուժ. այժմ մենք գոյություն չունենք, ուստի և մեր անելիքն այն է, վորպեսզի յերկրորդ ուժին՝ լիբերալ բուրժուազիային ոժանդակենք, քաջալերենք և վոչ մի դեպքում չխրտնեցնենք, մեր ինքնուրույն պրոլետարական պահանջները ներկայացնելով»։

Հարցն այս ձևով դնելուց մենշևիկների պլանը միանգամայն պարզվում է։ Բանվոր դասակարգին, վորպես ինքնուրույն ուժի, պետք է հաշիվներից դուրս ձգել, ինկատի ունենալով միայն յերկու ուժ՝ ցարին և լիբերալ բուրժուազիային։ Վոչն է նրանցից ավելի լավ։ Ինարկե լիբերալ բուրժուազիան։ Իսկ յեթե այդ այդպես է, յեկեք ոգնենք նրան։ Հարցի այսպիսի ձևակերպումը պարզ ցույց տվեց մենշևիկների ոպպորտունիզմը, և պարզվեց նրանց ընթացքը—բլոկ, դաշն կնքել բուրժուազիայի հետ և վոչ թե հենվել բանվոր դասակարգի ինքնուրույն դերի վրա։

## ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ԲՌՆԱԾ ԴԻՐՔԸ.

Այս մենշևիկյան ծրագրի դեմ, վորն առաջին խոշոր գործնական տարաձայնությունն եր յերկրորդ համագումարից հետո, վորտեղ սկսեց կազմակերպվել բայլշևիկյան կուսակցությունը, վճռական կերպով դուրս յեկավ բայլշևիզմը, հանձինս ընկ. Լենինի, վորն այս առթիվ գրեց մի շարք հոդվածներ և բրոշյուրներ, վորը կարելի յե բայլշևիզմի առաջին կարևորագույն քաղաքական դոկումենտներ համարել։ Յուրաքանչյուր



վոք, ով ցանկանում է հասկանալ մեր կուսակցության պատմությունը, պետք է ուսումնասիրի նրանց։

Պատասխանելով մենշևիկներին, ընկ. Լենինն ասում եր.—Դուք պահանջում եք մեզանից, վորպեսզի մենք չվախեցնենք լիբերալներին և աղատամիտ ձևացող ազնվականներին, բայց չե՞ վոր դուք ինքներդ ձեզ վախեցնում եք վախեցած լիբերալի սովերից։ Դուք յենթադրում եք, թե պետք է ինկատի ունենալ միայն յերկու ուժ՝ ցարական ինքնակալությունը և լիբերալ ազնվականությունը, սակայն դուք մի փոքր բան մոռացել եք, դուք մի փոքր բան չնկատեցիք. չե՞ վոր բացի այդ յերկու ուժերից կա մեկը ևս՝ խոշոր, վճռող, սուվերեն. դա բանվոր դասակարգն է, վորը կազմակերպվեց և վորը չնայած նրան, վոր նրա կուսակցությունը գաղտնի յե գործում, վոր նրան յուրաքանչյուր քայլափոխում անողորմաբար մտրակում են, այնուամենայնիվ հեղափոխության գլխավոր շարժիչ ուժն է հանդիսանում։ Դուք մոռացաք, վոր պրոլետարիատն ունի իր ինքնուրույն անելիքը և վոչ թե ստեղծված է միայն ընտրություն անել կամ ցարի, կամ Ռոդիչևի, կամ ցարական միապետության, կամ լիբերալ սահմանադրության միջև։ Դուք մոռացաք, վոր նա ունի իր ուղին, վորը տանում է դեպի միություն գյուղացիության հետ, դեպի իսկական ժողովրդական հեղափոխություն, վորն արմատախիլ կանի միապետությունը, շիկացրած յերկաթով կայրի ֆեոդալիզմի մնացորդները և իսկական պրոլետարական հեղափոխության առաջին քայլը կլինի։

Յեվ հիմնվելով ընկ. Լենինի այս խոսքերի վրա, մենք՝ բայլշևիկներս առաջ քաշեցինք ուրիշ պլան. յերբ բուրժուազիան սկսում է միապետության վոտներին փաթաթվել և իբր թե նրա դեմ պայքարել, այդ րոպեին է, վոր մենք պետք է հանդես գանք վորպես ինքնուրույն ուժ, փողոց դուրս գանք, կործանենք վոստիկանատները, և այլն։ Վերջին նախագիծը մենշևիկներին առանձնապես դուր չեկավ, և նրանք սկսեցին մեզ ծաղրել.—Ինչ է, ձեր ասելով մենք քանդող, կործանողնե՞ր ենք. մի՞թե վոստիկանատները կործանելը հեղափոխական աշխատանք է։ Նրանց կարծիքով ավելի կարևոր եր հաճախել լիբերալ ազնվականների նահանգական ժողովները և ոժանդակել նրանց, «առանց նրանց վախեցնելու»։ Մի խոսքով՝ հարցն այսպես եր դրված. կխաղա՞ արդյոք բանվոր դասակարգը հեղափոխության մեջ ինքնուրույն դեր, թի՞ կըմնա լիբերալ բուրժուազիայի սրտացավը, նրա պոչը։ Կլինի՞ արդյոք նա բուրժուազիայի սովորական հավելվածը, նրա ձախ թևը, թե՞ ընդհակառակը՝ հեղափոխության ինքնուրույն և գլխավոր շարժիչ ուժը, վորն իր միջամտությամբ վորոշ փոփոխում կկատարի դասակարգային ուժերի հարաբերության մեջ։

## ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻՑ ՀԵՌԱՆԱԼԸ.

Ցեվ ահա հենց այն ժամանակ, զեմստվային կապանքային որերին» յերբ մենշևիկների դիրքը և բուրժուազիային ոժանդակելու ու նրան միանալու տակտիկան վերջնականապես պարզվեց, նրանցից սկսեցին հեռանալ Պարվուսն ու ընկ. Տրոցկին *, վորոնք մինչև այդ նրանց եյին պաշտպանում։ Միաժամանակ սկսեց ամրանալ բայլշևիզմը, վորով-

* Տրոցկիզմը ռուսական բանվորական շարժման մեջ յերկար տարիների ընթացքում քիչ թե շատ ձևակերպված հոսանք եր։

1905 թվին, կուսակցության յերկրորդ համագումարում ընկ. Տրոցկին իսկույն յեկեթ միացավ մենշևիկներին։ 1904 թվին լույս ե տեսնում նրա «Մեր քաղաքական խնդիրները» բրոշյուրը, վորը հրատարակեցին մենշևիկները, յեվ վորն ուղղված եր հին «Իսկրայի» դեմ յեվ առանձնապես Լենինի «Ի՞նչ անել»-ի յեվ նոր հրատարակած «Մի քայլ առաջ, յերկու քայլ դեպի յետ» բրոշյուրի դեմ։ Ընկ. Տրոցկու հայտարարությունն այս բրոշյուրում, թե հին «Իսկրայի (Լենինի) յեվ նոր «Իսկրայի» (վորից հեռացավ ընկ. Լենինը, յեվ վորն ընկավ մենշևիկյան շտաբի ձեռքը) «միջեվ անդունդ ե ընկած», մեծ ծառայություն մատուցեց բայլշեվիկներին իր ռեվիզիոնիստական անկեղծությամբ։

1905 թվին ընկ. Տրոցկին Պարվուսի հետ մենշեվիզմի ձախ խմբակն եյին կազմում՝ մենշևիզմի հիմնական կորիզի հետ տարաձայնություն ունենալով բուրժուազիայի հարցի նկատմամբ։ Այնուամենայնիվ, թե մենշևիկյան «Начало» («Սկիզբ») թերթում (Պետերբուրգում եր հրատարակվում) յեվ թե առաջին բանվորական պատգամավորների Պետերբուրգի խորհրդում ընկ. Տրոցկին շարունակում եր աշխատել մենշևիկների հետ՝ թեպետ յեվ պաշտպաններով իր հատուկ հայացքները։ Նրա «պերմանենտ հեղափոխության» թեորիան այն առընչությունն ուներ մենշևիզմի հետ, վոր նա նույնպես բացասում եր գյուղացիության հեղափոխական դերը մեր յերկրում։ Այս ամբողջ պերմանենտ հեղափոխության աբիլեյան կրունկը գյուղացիության դերը պատշաճ չափով չգնահատելն եր։

1906 թվի ընթացքում ընկ. Տրոցկին աշխատակցում եր միքանի բայլշեվիկյան հրատարակություններում։

1907 թվին կուսակցության Լոնդոնի համագումարում միքանի հարցերում ընկ. Տրոցկին հանդես յեկավ վորպես վոչ ֆրակցիական սոցիալ-դեմոկրատ, սակայն ընդհանրապես նա մնում ե մի բլոկի մեջ մենշևիկների հետ։ Այս համագումարում ընկ. Տրոցկին պաշտպանում ե այն կարծիքը, վոր Պրակապովիչը կարող ե յեվ պետք ե լինի կուսակցության անդամ։

1909-10 թվականներից ընկ. Տրոցկին սկսում ե մերձենալ մենշևիկ-լիկվիդատորներին. նա պաշտպանում ե այն հայացքը, վոր բանվորական կուսակցությունը պիտի զանազան հոսանքների, զանազան ֆրակցիաների, զանազան խմբերի յեվ



հետև նրա կողմն անցան բոլոր հեղափոխականներն ու բանվորները, վորոնք մինչև այդ բոլոր տարաձայնությունները լոկ դատարկ բանների մանրամասնությունների մասին հարուցված վեճ եյին համարում։

ուղղությունների գումարը լինի։ Այն ժամանակ եր, վոր ընկ. Լենինը, վոր խիստ կերպով հանդես եր գալիս կուսակցության դերի նման հասկացողության դեմ, լույս ընծայեց ծաղրական «հոսանքաբիններ» (течениы) տերմինը՝ հոսանք բառից ծագած։ Բայլշեվիկների յեվ լիկվիդատորների միջեվ ծագած վեճի սկզբում ընկ. Տրոցկին ուղղակի կերպով չեր պաշտպանում լիկվիդատորությունը։ Ըստ եությանն նա ընդունում եր, վոր լիկվիդատորները շատ բանում իրավացի չեն։ Սակայն նա լիկվիդատորությունը համարում եր բանվորական կուսակցության մեջ «որինական յերանգ»։ «Ապրիր յեվ ուրիշներին ել թույլ տուր ապրել»—այս եր նրա միտքը։ Որյեկտիվ կերպով այդ տեսակետին եր հանդում, վոր կուսակցությունը վոչ թե մի կտորից ձուլված կազմակերպություն պետք ե լինի, այլ առանձին ֆրակցիաների յեվ հոսանքների կոնգլոմերատ։

1910-12 թ. թ. ընկ. Տրոցկին Վիեննայում հրատարակում ե «Պրավդա» հանրամատչելի բանվորական լրագիրը, վորը փորձում եր վոչ ֆրակցիական դիրք ընդունել, բայց վորն իրոք ոժանդակություն եր ցույց տալիս մենշեվիկ-լիկվիդատորներին։

1911-13 թ. թ. ընկ. Տրոցկին այսպես կոչված «ոգոստոսյան բլոկի» գլխավոր կազմակերպիչներից մեկն եր, մի բլոկ մենշեվիկների յեվ լիկվիդատորների միջեվ, վորոնք 1911 թվին Վիեննայում գումարեցին իրենց մենշեվիկ լիկվիդատորական կոնֆերանսը. վերջինն անհաշտ կռիվ հայտարարեց բայլշեվիկներին։ Յերբ Պետերբուրգում սկսեցին լույս տեսնել յերկու ամենորյա լեգալ լրագրեր- «Լույս» («Ճառագայթ»)՝ լիկվիդատորների որգանը յեվ «Պրավդա»՝ բայլշեվիկների որգանը, ընկ. Տրոցկին դարձավ լիկվիդատորների որգանի ակտիվոր աշխատակիցներից մեկը։ Նա այն ժամանակ աշխատակցում եր նայեվ լիկվիդատորների «Նաշա զարիա» («Մեր արշալույսը») տեսական ամսագրին, վորը հրատարակում եր Ս. Պատրեսովը։

Իմպերիալիստական պատերազմն սկսվելուց հետո, 1914 թվին տեղի յեն ունենում լուրջ խմբավորումներ։ Ընկ. Տրոցկին վճռական կերպով հանդես ե գալիս ընդդեմ իմպերիալիստական պատերազմի յեվ II-րդ Ինտերնացիոնալի ղեկավարների դեմ ընդհանրապես։ Սակայն յեվ այնպես նա հրաժարվում ե բայլշեվիկյան «Կոմունիստ» ամսագրին աշխատակցելուց յեվ մեռնարկում ե Լ. Մարտովի յեվ միքանի հաշտվողական բայլշեվիկների հետ «Նաշե սլովո» («Մեր խոսքը») լրագրի հրատարակությանը Պարիզում։ «Նաշե սլովո» լրագիրը՝ չնայած իր ինտերնացիոնալիստական բնույթին յեվ II-րդ Ինտերնացիոնալը քննադատելուն, շարունակում ե պաշտպանել Զիմերվալդյան ֆրակցիային ընդդեմ Լենինի յեվ լենինականների։

Փեթերբուրգյան հեղափոխությունից հետո ընկ. Տրոցկին սկզբում մասնակցում եր միջազգայնականների պետրոգրադյան կազմակերպությանը, իսկ մոտավորապես 1917 թվի հունիսին-հուլիսին ընկ. Տրոցկին մտնում ե մեր բայլշեվիկյան կուսակցության շարքերը։

իսկ այժմ հասողվեցին, որ վեճը յերկրորդական հարցերի մասին չե՝ այլ հեղափոխության մեջ բանվոր դասակարգի ունեցած պատմական դերի մասին, ուրիշ խոսքով՝ հենց իր, ռուսական հեղափոխության ընույթի մասին. արդյոք նա 1848 թվին և դրանից առաջ յեղած սովորական բուրժուական հեղափոխություններից մեկը կլինի, նա նոր տիպի հեղափոխություն կլինի, յերբ բանվոր դասակարգը գլխավոր շարժիչ ուժ և հեգեմոն կդառնա։ Այդ բոպեյից սկսած, կրկնում եմ, բայշևիզմի մեջ սկսվեց կոնսոլիդացիայի պրոցեսսը, և ինչպես սպունգը ծծում է ջուրը, այնպես էլ նա սկսեց դեպի իրեն քաշել այն ժամանակվա սոցիալ-դեմոկրատիայի ամենահեղափոխական էլեմենտներին, որոնք համոզվեցին վերջապես, որ նա իրավացի յե։

Այստեղ անհրաժեշտ է իդեպ միքանի խոսք ասել ներկուսակցական և կազմակերպչական հարցերի մասին, որոնք մեզ և մենշևիկներին անջատեցին իրարից։

## ՎԵՃԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄԻ ՄԱՍԻՆ.

1904-5 թվերին խոշոր դեր խաղաց դեմոկրատիզմի հարցը կուսակցության մեջ։ Այս շատ հետաքրքիր հարց է, որ վառ լույս է սփռում մեր ժամանակի միքանի հարցերի վրա։ Մենշևիկները հետևողական դեմոկրատիզմի, խիստ ընտրողական սկզբունքի պաշտպան եյին կուսակցության ներսում, այն ինչ բայշևիկներն ընկ. Լենինի ղեկավարությամբ այն ժամանակ վճռական կռիվ եյին մղում նրա դեմ։ Ներկայումս շատ ընկերների համար տարորինակ կթվա, թե ինչպես է, որ բայշևիկները դեմոկրատիզմի, ընտրողական սկզբունքի դեմ եյին կուսակցության ներսում, իսկ մենշևիկները թե մեկի և թե մյուսի կողմակից եյին։ Սակայն նրանց տարակուսանքը հեշտ է ցրվել։

Բանն այն է, որ մենշևիկները չեյին հավատում պրոլետարական կուսակցության ինքնուրույն դերին հեղափոխության մեջ, չեյին հավատում, որ մեզ կհաջողվի միապետության որոք լուրջ պրոլետարական կուսակցություն ստեղծել։ Ինչպես արդեն ասացի, նրանք այնպիսի կուսակցություն եյին ուզում ստեղծել, ուր հեշտ և ազատ կարողանային մտնել թե ուսանողը և թե պրոֆեսսորը. նրանք կարծում եյին, թե մեր կուսակցությունը միշտ էլ ինտելլիգենտական կլինի, և այդ պատճառով այնպիսի միանգամայն վերջավորված կառուցվածքի եյին ձգտում, որի ժամանակ յուրաքանչյուր «նորին մեծություն ինտելլիգենտը» կարող լինի իր բաժին իրավունքն ստանալ, յերբ վոչ վոք նրան «չհալածի», յերբ նա կընտրի և հաշվետվություններ կլսի, մի խոսքով՝ յերբ «իսկական դեմոկրատիզմ» կլինի, ճիշտ «ինչպես Ցեվրոպայում»։



Բայշևիկներն ընկ. Լենինի բերանով առարկում եյին նրանց հետևյալ ձևով.—Մենք էլ դեմոկրատիզմի կողմակից ենք, սակայն միայն այն ժամանակ, յերբ նա իրոք հնարավոր կլինի. իսկ հիմա դեմոկրատիզմը լոկ դատարկ բանով զբաղվել կլիներ, իսկ այդ մենք չենք ցանկանում, որովհետև մեզ լուրջ կուսակցություն է հարկավոր, որը կարողանա հաղթել ցարին և բուրժուազիային։ Ներկայումս, յերբ մենք գաղտնի աշխատանքի յենք, կուսակցության իրական դեմոկրատիզմն իրագործել մենք չենք կարող. մեզ հարկավոր են մարդված, յերկար տարիների աշխատանքով հեղափոխության և կուսակցության համար զոհվելու իրենց պատրաստակամությունն ապացուցած պրոֆեսսիոնալ հեղափոխականներ, և ահա այսպիսի մարդկանց մենք կվերցնենք և նրանց ձեռքը կտանք մեր բախտը։ Միապետության, նրա գաղտնային ռեպրեսսիաների գոյության որերին յեթե մենք ընկնենք ընտրողականության, դեմոկրատիզմի յետևից, դրանով մենք միայն կոգնենք ցարական ավազակային խմբակին կործանելու մեր կազմակերպությունը և ցարական լրտեսներին ու պրովոկատորներին կոգնենք մեր համախոհներին վորսալու։

Մենշևիկները, որպես վարժ դեմագոգներ, ցանցում եյին բոլոր սակավափորձ բանվորներին, տալիս եյին նրանց նամակները և աղմուկ հանում. «Ահա, տեսնում եք։ Սրանք բանվորներ են, նրանք ընտրողականություն են պահանջում, իսկ դուք նրանց վիրավորում եք, չեք համաձայնվում։ Պիտերում կա մի բանվոր՝ Գլեբով-Պուտիլովսկիյ (նա այն ժամանակ մենշևիկ եր), որն այս իսկ վոգով բավական խաճված մի բրոշյուր է գրել հոգուտ դեմոկրատիզմի։ Մենշևիկներն այն բոպեյապես տպեցին հենց Ակսելրոդի առաջաբանով՝ հայտարարելով.—Ահա, տեսնում եք, այս բանվորի բերանով խոսում է ամբողջ պրոլետարիատը, բոլոր բանվորները ընտրողականություն են պահանջում, իսկ դուք չեք տալիս։

Ընկ. Լենինը պատասխանում է «**Դատարկ խոսքով գործ չի կատարվի**» հոդվածով, որի իմաստը հետևյալն եր.

Մենք էլ ճանաչում ենք բանվորներին. նրանք, ինչպես և մենք, դեմոկրատիզմի կողմակից են, սակայն այնպիսի դեմոկրատիզմի, որն իրոք մեզ հարկավոր է, և յերբ հնարավոր կլինի, մենք առաջինը կանցկացնենք։ Իսկ ձեր հեքյաթներով դուք միայն բանվորների գլուխը յուղում եք։ Իսկական լուրջ բանվորը հասկանում է, որ դեմոկրատիզմը և ընտրողականությունը ինքնանպատակ չեն, այլ միայն բանվոր դասակարգի ազատագրման միջոց։ Մենք կուսակցությունն այնպես ենք կառուցում, ինչպես այդ ավելի ձեռնտու յե տվյալ բոպեյում։ Իսկ այս բոպեյին մեզ անհրաժեշտ է խիստ յերարխիա և կենտրոնացում։

Հիմա մեզ համար, իհարկե, պարզ է, որ այն ժամանակ մենշևիկները փորձում էին դեմոկրատիզմի միջոցով խաղ խաղալ բանվորների գլխին՝ կարծելով, թե կարող են նրանց թակարդը գցել։ Նրանք ամեն քայլափոխում կանչում էին. «Մենք ընտրողականություն ենք առաջարկում, իսկ բայլշևիկները հակառակ են. ուրեմն նրանք ձեզ հակառակ են, ուստի յեկեք մեզ մոտ»։ Բայց բանվորները շատ շուտ նրանց ով լինելը հասկացան։

Կազմակերպչային դեպքերն այս տեսակետից հետևյալ կերպ էին զարգանում։

## ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՃՆՇՈՒՄԸ.

Յերկրորդ համագումարում, ինչպես հայտնի յե, բայլշևիկների ձեռքն ընկավ թե Կենտրոնական Կոմիտեն, թե նրա կենտրոնական որգանը, որը ղեկավարում էին Պլեխանովն ու Լենինը, և թե Կուսակցության Խորհուրդը։ Վերջինիս մեջ մտնում էին յերկու ներկայացուցիչ Կենտրոնական Կոմիտեյից, յերկուսը՝ կուսակցության կենտրոնական որգանից, որն արտասահմանում էր գտնվում, և հինգերորդը նախագահը, որին ընտրում էին համագումարում։ Այդ հինգերորդը Պլեխանովն էր ընտրված։ Կուսակցության Խորհրդում էլ մենք մեծամասնություն էինք կազմում։ Սակայն միքանի ամսից հետո, յերբ Պլեխանովը փոխեց իր ֆրոնտը, իսկ Կենտրոնական Կոմիտեյի բայլշևիկ անդամների մի մասը ձերբակալվեց Ռուսաստանում, ստացվեց այսպիսի մի բան. սկզբում մենշևիկների ձեռքն անցավ կուսակցության կենտրոնական որգան «Իսկրան», հետո մեր ձեռքից դուրս յեկավ Կենտրոնական Կոմիտեն, ուր մեր ընկերների ձերբակալությունից հետո մենշևիկներ ընտրվեցին, և վերջապես Պլեխանովը՝ անցնելով մենշևիկների կողմը՝ նրանց ոժիտ տարավ նաև Կուսակցության Խորհուրդը։ Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մենք կորցրինք բոլոր այս կենտրոնական դիրքերը։ Մենշևիկները նստած էին և՛ Կենտրոնական Կոմիտեյում, և՛ կուսակցության կենտրոնական որգանում, և՛ Կուսակցության Խորհրդում, և Մարտովը կարող էր իր ուզածն անել, վորովհետև «մի յեր հանձինս յերեքի»՝ Կուսակցության Խորհուրդը, Կենտրոնական կոմիտեն և կուսակցության կենտրոնական որգանը։

Նման դրությունը շատ ծանր էր մեզ համար։ Պետք է ասել, վոր այն ժամանակ կուսակցության ամբողջ հեղինակավոր մասը մենշևիկների կողմն էր։ Ընկ. Լենինը, չնայած այն ամբողջ կշռին, վոր նա ուներ կուսակցության մեջ, այնուամենայնիվ Պլեխանովի համեմատությամբ դեռ յերիտասարդ գործիչ էր։ Իսկ այդ, իհարկե, մեծ նշանակություն ուներ։ Յես, որինակ, հիշում եմ իմ առաջին զրույցները Պլեխանովի հետ (այն ժամանակ յես բոլորովին «կոմյերիտական» էի), յերբ նա մեզ վախեցնում էր ասելով. «Ո՞ւմ յետևից եք դուք գնում։ Դուք միայն հաշվեցեք, թե ովքեր են մեր կողմը՝ յես, (Պլեխանով), Մարտովը, Զասուլիչը, Ակսելրոդը և ուրիշները. իսկ ձեզ մոտ՝ միայն Լենինը։ Ձե՞ վոր գործը վերջիվերջո այնպես կփոխվի, վոր բոլոր ճնշումները կսկսեն ծիծաղել ձեր Լենինի վրա։ Իսկ դուք նրա յետևից եք գնում»։ Յեվ իրոք, կուսակցության մի մասն այս հին հեղինակությունների հիպնոզի ազդեցության տակն էր, վորոնց արժանավորությունները (թեկուզ Պլեխանովի նման մի մարդու) շատ խոշոր էին։

Կրկնում եմ, բայլշևիկների դրությունը չափազանց դժվար էր և ավելի ևս բարդանում էր նրանով, վոր հնարավորություն չկար հաղթահարում անել կուսակցությանը, վորը դաղտնի յեր գործում և ցարիզմի կողմից կատաղի հալածանքի յեր յենթարկվում։

## ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ (Ե. Կ Ե.).

Այս դրությունը առանձին կերպով կազմակերպվելը և այդ կազմակերպությունը ձևականորեն ամրացնելը բայլշևիկների համար ավելի և ավելի անհրաժեշտ էր դարձնում։ Ընկ. Լենինը, վորին շատերը, անանվանդ մենշևիկները, հռչակեցին վորպես խստաբարո և անզուսպ «պառակտիչի», թեպետև նա այսպիսի քայլերի յեր դիմում մեծ դժվարությամբ և յերկար մտածելուց հետո, յերբ ուրիշ յելք չեր լինում—ընկ. Լենինը յերկար խորհելուց և խնդիրը բազմակողմանի քննելուց հետո միայն վճռեց այդ պառակտումը կատարել։ Նրա վրա վորոշ չափով ազդեց նաև ռուսական կոմիտեների և մասամբ այն ժամանակվա ավելի անհամբեր բայլշևիկյան յերիտասարդության ճնշումը, վորն ասում էր.—Ժամանակը չի սպասում, հեղափոխությունը մոտ է, մոտենում են խոշոր դեպքեր (հունվարի 9-ին մոտ էր), պետք է կազմակերպել իր կուսակցությունը։ Յեվ ահա կուսակցության մի շարք շրջանային կոնֆերանսներ՝ հարավային, հյուսիսային, Մասկվայի, եայլն, առաջ քաշեցին Ռուսաստանում մենշևիկյան Կենտրոնական Կոմիտեյին հակակշիռ «Մեծամասնության Կոմիտեների Բյուրո» ստեղծելու նախագիծը։ Յերբ այսպիսով բայլշևիկների համառուսական կենտրոնական կազմակերպությունը հիմնվեց, վորն անմիջապես պայքար սկսեց մենշևիկյան Կենտրոնական Կոմիտեյի դեմ, ընկ. Լենինը վերջնականապես առանձին կուսակցություն կազմակերպելու իր համաձայնությունը տվեց, վորից հետո մենք ձեռնարկեցինք արտասահմանում առաջին բայլշևիկյան լրագրի հրատարակությանը, վորն «Վպերյոդ» («Հառաջ») էր կոչվում և լույս տեսավ 1905 թվի սկզբում Ժընևում, ունենալով այս շարժմանը համակրող բայլշևիկներից գանձվող չնչին

կոպեկներով։ «Վպերյոդը» շարունակում եր հին լենինյան «Իսկրայի» գործը, բայց արդեն նոր պայմաններում, և բայլշևիկների տակտիկայի հիմքն եր դնում։ Այսպիսով, 1905 թվի սկզբին բայլշևիկները Ռուսաստանում Մեծամասնության Կոմիտեների Բյուրո ունեին, իսկ արտասահմանում՝ բայլշևիկյան «Վպերյոդ» որգանը։ Մենշևիկներն իրենց հերթին իրենց տրամադրության տակ ունեին Կենտրոնական Կոմիտե, Կենտրոնական որգան և Կուսակցության Խորհուրդ։

## ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ը.

Նման պարագաներում, յերբ կուսակցությունը դեռևս պատակված չեր, դեռևս գաղտնի յեր գործում, իսկ նրա ներսում յերկու ձևակերպված հոսանքների ուժեղ պայքար եր տեղի ունենում, սկսվեցին հունվարի 9-ի դեպքերը։ Յես այդ դեպքերի մասին քիչ թե շատ մանրամասն չեմ խոսի. նրանք ձեզ հայտնի յեն։ Նրանց հիմնական բովանդակությունն այն եր, որ ձևակերպված կուսակցական կազմակերպության գլխի վրայով անկուսակցական բանվորական մասսան փողոց դուրս յեկավ, ծածկեց Ձմեռային պալատի հրապարակը և ցույց տվեց, որ մենշևիկներն սխալվեցին, յերբ ասում եյին, թե իբր թե պայքարի բեմի վրա միայն յերկու ուժ են գործում՝ ցարական միապետությունը և ազնվական ոպպոզիցիան։ Հունվարի 9-ն ապացուցեց, որ մի ուժ ևս կա, որին մենշևիկները, ինչպես փղին, չնկատեցին, այսինքն՝ **բանվոր դասակարգը։** Ճիշտ է, բանվորական մասսան դեռևս պարզ չեր գիտակցում, թե ինչ է նա ուզում, նա կազմակերպված չեր և իր ղեկավարները չուներ, ուստի և առաջ եր քաշում պատահական մարդկանց. ճիշտ է, նա սրբերի պատկերները ձեռքին եր առաջ գնում, անգիտակից եր, և նրան գնդակահարեցին, ինչպես բազերի յերամ. այս բոլորն այսպես է, սակայն այս մասսան գոյություն ուներ և հզոր քաղաքական ֆակտոր եր։ Նրա հունվարի 9-ի յելույթը ցնցեց ամբողջ Ռուսաստանը, և այս շատ ավելի արժեքավոր եր, քան ամեն տեսակի լիբերալ բանաձևներն ու պետիցիաները։ Հունվարի 9-ին բանվոր դասակարգն ապացուցեց, որ նա կենդանի յե, և որ իսկական հեղափոխականների խնդիրն այն չեր, որ ժամանակ անցկացնեն նահանգական ժողովներում և ականավոր գմցիների նախասենյակներում, այն չեր, որ հանգիստ ու վոչ վոքի «չխրտնեցնող» ճառեր ասվեին, այլ այն, որ ղեկավարեն սասսիկ ուժով պայթած բանվորական շարժումը, որն սկզբում չուներ վոչ ղեկավարներ, վոչ ել պարզ քաղաքական ծրագիր։ Ուրիշ խոսքով՝ կար մարմինը, որին պետք եր գլուխ ավելացնել, պետք է կուսակցությունը խառնվեր այդ մասսային, տաներ իր յետևից նրա մեծ շարժումը և առաջ տաներ բանվոր դասակարգի պատմական ուղիով։



Հունվարի 9-ը և հետագա դեպքերը, ինչպես հայտնի յե, առաջ քաշեցին միքանի պատահական անկուսակցական դեմքեր։ Այս միանգամայն հասկանալի փաստ է և բացատրվում է նրանով, որ այն ժամանակ կուսակցությունը գաղտնի յեր և պետք յեղած չափով չեր կարող կապվել վոտքի յելած բանվորական մասսայի հետ։ Այս պատահական դեմքերի շարքումն եյին Գապոնը, Խրուստալյովը և լեյտենանտ Շմիդտը՝ մարդիկ, որ իրարից խիստ տարբերվում եյին, սակայն բոլոր յերեքն ել նոր եյին հեղափոխության համար։ Գապոնը, որ հունվարի 9-ին խոշոր դեր խաղաց, հետո պրովոկատոր դուրս յեկավ և մահվան պատժի յենթարկվեց հեղափոխականների կողմից, իսկ Խրուստալյովը, որ հետագայում կուսակցությունից հեռացավ, իրեն ցույց տվեց վորպես կիսաավանտյուրիստ։ Ինչ վերաբերում է լեյտենանտ Շմիդտին, նա լինելով բավականի համակրելի մի դեմք, այնուամենայնիվ գիտակից հեղափոխական չեր։ Այնքան ել վատուց չե, որ լույս տեսան նրա նամակները՝ իր մտերիմին ուղղած, որոնք յես ձեզ խորհուրդ եմ տալիս կարդալ, որովհետև նրանք վորպես իմիջի այլոց անձնական ետիկայի հարցերը շոշափող մարդկային դոկումենտ, մեծ հետաքրքրություն են ներկայացնում։ Այս դրքի եջերից Շմիդտը նայում է վորպես հեղափոխությանը խորապես նվիրված մի մարդ, որը հեղափոխության համար հանգիստ դեպի մահ եր գնում, բայց միաժամանակ մենք տեսնում ենք, որ քաղաքական տեսակետից առանց ղեկի և առանց առագաստի մի մարդ եր նա։ Այս կարելի յե ասել՝ միաժամանակ հարգելով նրա հիշատակը։ Իրեն մտերիմ մարդուն գրած իր նամակում Շմիդտը գրում է. «Պետք է տեսնվել Միլյուկովի հետ և նրա հետ կարևոր գործերի մասին խորհրդակցել։ Յես հուսով եմ, որ կարելի յե նրանց հետ համաձայնության գալ։ Մենք կընթանանք նրանց հետ»։ Այսպիսով նա սկզբում կիսակադետ եր։ Սակայն այդ չի խանգարում մեզ խոնարհվել նրա գերեղմանի առաջ. նա մի մարդ է, որ հերոսաբար ընկավ հեղափոխության գործի համար։

## ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Յես հիշեցի այս անունները, որպեսզի ցույց տամ, թե որպիսի անսպասելի դեպքեր եր առաջ քաշում այն ժամանակ բանվորական շարժումը՝ յերես հանելով այնպիսի մարդկանց, որոնք չունեյին պարզ ծրագիր և չգիտեյին, թե ինչպես պետք է ղեկավարել վոտքի յելած մասսաներին։ Նույն Շմիդտը, որը ղեկավարում եր սև-ծովյան նավատորմիղի ապստամբությունը, միաժամանակ յերազում եր համաձայնության գալ կադետների հետ, այսինքն՝ կալվածատիրական և միապետական կուսակցության հետ, ինչպիսիք եյին այն ժամանակ «սահմա-

նադրական դեմոկրատները (К.-Д)։ Այդ պատճառով ամենևին զարմանալի չե, վոր 1905 թվ. առաջ քաշված այդ յերեք անձնավորությունը, վորոնցից յուրաքանչյուրն իր տեսակի խոշոր դեմք եր, ճնային վորպես եպիզոդիկ դեմքեր, վորովհետև բանվորական շարժման մեջ նրանք արմատներ չունեցին։

Հունվարի 9-ը որակարգի մեջ մտցրեց այն հարցը, թե ինչպես պետք ե կուսակցությունը բանվորների հզոր շարժումը ղեկավարի, այն բանվորների, վորոնք կռվի յեն ձգտում, բայց միաժամանակ ծրագիր չունեն, չգիտեն, թե ինչ են ուզում և խաչ ու խաչվառով են գնում դեպի Ձմեռային պալատը։ Միաժամանակ հունվարի 9-ը, ահեղ դղրդյունով ցնցելով ամբողջ Ռուսաստանը, վոչնչացրեց դեպի միապետը տածվող սերը։ Այս չափազանցություն չե։ Բանվորները, վորոնք դեռևս յերեկ հավատում եյին միապետին և կարծում եյին, թե միայն մինիստրներն են վատ, տեսան, վոր նրանց ամենասարսափելի թշնամին հենց միապետը, ցարն ե։

## «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ԼՈԶՈՒՆԳԻ ՇՈՒՐՋԸ ԾԱԳԱԾ ՎԵՃԵՐԸ.

Ինչ վերաբերում ե մեր կուսակցությանը, ապա նրա առաջ հունվարի 9-ը դրեց իր ամբողջ ծավալով իշխանության հարցը, կամ, ինչպես այն ժամանակ եյին ասում, ժամանակավոր հեղափոխական կառավարությանը մասնակցելու հարցը։ Բայշևիկներն ամբողջ ուժով հռչակեցին հետևյալ լոզունգը.—Զինված ապստամբության կազմակերպում և ժամանակավոր հեղափոխական կառավարության ստեղծում։ Բայց մենշևիկները յեռանդով առարկում եյին սրան։ Ցեվ նորից ծայր աստիճանի բնորոշ ե, վոր հեղափոխական կառավարության մեջ մեր մասնակցելուն դեմ նրանք բերում եյին իբր թե «մարքսիստական» պատճառաբանություններ։ Նրանք ասում եյին.—Ի՞նչպես կարող ենք մենք՝ սոցիալիստներս, մտնել մի կառավարության մեջ, վորը սոցիալիստական չի լինելու։ Նրանք ակնարկում եյին արևմտա-յեվրոպական թարմ փորձը։

Դրանից միքիչ առաջ Ֆրանսիայում վերջացավ այսպես կոչվող միլյերանդիզմի եպոպեան։ Այս բառն առաջ ե յեկել Ֆրանսիական բուրժուական հանրապետության այժմյան պրեզիդենտ Միլյերանի անունից։ Այն տարիներին նա սոցիալիստ եր և նույնիսկ մի ժամանակ՝ ձախ։ Սակայն հետո բուրժուազիան նրան կաշառեց և հրապուրեց կառավարությանը մասնակցելու։ Նա մտավ Ֆրանսիական բուրժուական կաբինետի մեջ, ասելով՝ «Ցեռ գնում եմ այնտեղ, վորպեսզի այնտեղ բանվորների շահերը պաշտպանեմ»։ Սակայն այստեղ նա այդ չեր ա-



նում և չեր ել կարող, իհարկե, անել, այլ աստիճանաբար բուրժուազիայի ագենտը դարձավ։ Ընդդեմ Միլյերանի, ընդդեմ միլյերանդիզմի պայքարում եյին բոլոր որթոդոքս մարքսիստները, և նույնիսկ II Ինտերնացիոնալի Ամստերդամի համագումարը նրան հակառակ արտահայտվեց։ Այնտեղ այս առթիվ մենամարտ տեղի ունեցավ հանգուցյալ Ժորեսի, վոր պաշտպանում եր (ճիշտ ե, կիսով չափ) միլյերանդիստական տակտիկան, և Բեբելի միջև, վորը հակառակ եր բուրժուական կառավարությանը մասնակցելուն։ Հաղթությունը Բեբելը տարավ, և վորոշվեց, վոր վոչ մի դեպքում թույլատրելի չե սոցիալիստների մասնակցությունը բուրժուական կառավարության մեջ, վորովհետև ամեն մի նման սոցիալիստ իրականության մեջ կդառնա բուրժուազիայի պատանդը, նրա գործակատարը և կոգտագործվի նրա կողմից։ Ֆրանսիայում այդ այդպես ել յեղավ։ Միլյերանն արդեն մի տարի հետո գնդակահարում եր գործադուլավոր բանվորներին, իսկ այժմ նա ֆրանսիական բուրժուական հանրապետության պրեզիդենտն ե։

Մենշևիկներն առթիվ բաց չթողին մեր վեճի հետ կապելու ֆրանսիական այս փորձը։ Նրանք ասում եյին. «Իսկ ի՞նչ կասեք միլերանդիզմի մասին. տեսեք, ինչ դուրս յեկավ նրանից։ Կարող ենք արդյոք մենք սրանից հետո մասնակցել Ռուսաստանի ժամանակավոր հեղափոխական կառավարությանը»։ Իսկ մենք նրանց պատասխանում եյինք. «Ներեցեք, բայց դուք չեք նկատում մի փոքրիկ մանրամասնություն. Ֆրանսիայում Միլյերանը մտավ կայուն բուրժուական կառավարության մեջ, յերբ և վոչ մի հեղափոխություն չկար, պարզապես ասած՝ նա ծախվեց բուրժուազիային. իսկ մեզ մոտ՝ 1905 թվին խնդիրն այն մասին ե, վորպեսզի տապալենք ցարին, վորի գահն արդեն ճաrճաsում ե, իսկ դրա համար պայքարի ընթացքում անհրաժեշտ ե ստեղծել վորևե կենտրոնական բանվորա-գյուղացիական կազմակերպություն, ուրիշ խոսքով ասած՝ ժամանակավոր հեղափոխական կառավարություն։

## ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏԸ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ» ԼՈԶՈՒՆԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ.

Բայց մենշևիկներն իրենցն եյին պնդում, դիմելով սոֆիզմների ոգնության, փաստերն աղավաղելով և մատնանշելով միլյերանդիզմը, այսինքն՝ բոլորովին այլ յերգ յերգելով։ Ի՞նչ կլիներ, յեթե նրանց հայացքը, վոր իբր թե մենք չպետք ե մտնենք ժամանակավոր կառավարության մեջ, հաղթանակեր։ Կլիներ այն, վոր ցարիզմի անկումից հետո կառավարության մեջ կմտներ բուրժուազիան (չե՞ վոր վորևե ժեկը պետք ե կառավարություն կազմեր)։ Ցեվ հենց այդ ել ուզում

եյին մենշևիկները։ Նրանց տեսակետը հետևյալն եր. բանվորները չը-պետք և քաղաքականության մեջ խառնվեն, նրանց գործը փոքր ե՝ տնտեսական պայքար և կամ ոժանդակություն լիբերալ զեմցիներին. իսկ գալով ժամանակավոր հեղափոխական կառավարությանը կամ, ավելի ճիշտն ասած, ժամանակավոր վոչ հեղափոխական կառավարությանը, այդպիսին կարող ե Միլյուկովն ել կազմել։ Ցեվ իրոք, 1917 թ. Նրանք անչափ ուրախ եյին, վոր գտնվեց մի Միլյուկով և յերջանկացրեց նրանց՝ համաձայնվելով բանվորների ձեռք բերած իշխանությունը եսերների և մենշևիկների ձեռքից ընդունել։

Վերոհիշյալից պարզ ե, թե ինչու մենշևիկները «ժամանակավոր հեղափոխական կառավարություն» լոզունգին հակառակ եյին։ Նրանց, առաջին հայացքից պուրիտանական պատճառաբանությունները վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ ոպպորտյունիզմ։ Իրենց անփոփոխ տակտիկային հավատարիմ՝ նրանք ամեն ինչից ոգավում եյին, մինչև իսկ մարքսիստական տերմինոլոգիայից, վորպեսզի բանվորներին իշխանությունից հեռացնեն և զրկեն նրանց ղեկավար դասակարգի դերից։ Մենշևիկյան պուրիտանիզմը գործնականում միշտ ել ոպպորտյունիզմ եր։ Նրանք հակառակ եյին բանվորների և գյուղացիների միության՝ վորպես պատճառաբանություն առաջ քաշելով «դասակարգային մաքրությունը», իսկ իրենք շարունակ ըլոկ եյին կազմում Ձերնովի, Սավինկովի, Կերենսկու հետ, այսինքն «գյուղացիական» կուսակցության ամենավատթար և հակահեղափոխական մասի հետ։

## ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՅԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԼՈՆԴՈՆՈՒՄ ՅԵՎ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԺԸՆԵՎՈՒՄ.

1905 թվի կեսերին տեղի ունեցավ կուսակցության յերրորդ համագումարը, վորն, ինչպես արդեն ասվեց, կարելի յե վորոշ իմաստով բայլշևիկների առաջին համագումար համարել, վորովհետև նրան միայն բայլշևիկներն եյին մասնակցում։ Մենշևիկները՝ աջ գրպանում ունենալով Կենտրոնական Կոմիտեյի կենքը, ձախում՝ Կուսակցության Խորհրդինը՝ ասում եյին, վոր նրանք վոչ մի համագումարի յել կարիք չունեն, վորովհետև ամբողջ իշխանությունը նրանց ձեռքին ե։ Այդ պատճառով մենք՝ բայլշևիկներս այս դրությունից դուրս գալու համար ստիպված եյինք նոր համագումար հրավիրել։ Բայց մենշևիկները վճռական կերպով ընդդիմացան սրան, և մենք ստիպված յեղանք համագումար հրավիրել այն ժամանակվա Կ. Կ.-ի կամքին հակառակ. համագումարը հրավիրեց Մեծամասնության Կոմիտեների Բյուրոն, և տեղի ունեցավ արտասահմանում՝ Լոնդոնում, 1905 թվի կեսերին։ Միաժամանակ մենշևիկները գումարեցին իրենց առաջին, ինչպես նրանք



եյին արտահայտվում, Համառուսական կոնֆերանսը Ժընևում։ Այսպիսով 1905 թվի ամռանը, հենց հեղափոխության նախորյակին տեղի ունեցավ բայլշևիկների ուժերի հաշվառում Լոնդոնում, յերրորդ համագումարում, մյուս կողմից մենշևիկներինը՝ Ժընևում, «Համառուսական առաջին կոնֆերանսում»։ Այս յերկու համագումարներում յերկու կողմերն ել մանրամասն տակտիկա մշակեցին, յուրաքանչյուր կողմ իրը, յելակետ ունենալով 1905 թվի հեղափոխությունը, վորովհետև բոլորն զգում եյին, վոր այսոր կամ վաղը վրա կհասնեն վճռական որերը։

Յերրորդ համագումարը խոշոր նշանակություն ուներ. նրա գլխավոր արժեքն այն եր, վոր նա առաջին անգամ առաջ քաշեց ընդհանուր գործադուլի և զինված ապստամբության զուգորդման ծրագրորեն մշակված գաղափարը։ Այժմ այս, ինչպես և շատ բան, բավական սովորական բաներ են թվում, բայց այն ժամանակ այդ մեծ նորություն եր։ Միքանի բոպե կանգ առնենք ընդհանուր գործադուլի հարցի վրա։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ՀԱՐՑԸ.

Միջազգային սոցիալ-դեմոկրատիան հանձինս II Ինտերնացիոնալի այս գաղափարն այն ժամանակ մերժում եր։ II Ինտերնացիոնալում այն ժամանակ շրջում եր հայտնի ոպպորտյունիստ, գերմանական կուսակցության ղեկավար հանգուցյալ Աուերի թևավոր դարձվածքը՝ Generalstreick ist Generalunsinn*։ Ինչու։ Վորովհետև,—ասում եր նա,—յեթե մենք իրոք կարողանայինք ընդհանուր գործադուլն այնպես իրագործել, վոր բոլոր բանվորները, ինչպես մի մարդ, աշխատանքը դադարեցնեն, այդ կնշանակեր, վոր մենք կարող ենք նաև հեղափոխություն ել անել։ Բայց յեթե, մյուս կողմից, մենք այդպիսի ուժ ենք, այն ժամանակ մեզ հարկավոր չե ընդհանուր գործադուլ. իսկ յեթե մենք այդ չենք կարող անել, կնշանակի մեր ընդհանուր գործադուլն ել գլուխ չի գա։ Այստեղից Աուերը յեզրակացնում եր՝ ընդհանուր գործադուլը անիմաստ բան ե։ Մենշևիկներն այս հարցում II Ինտերնացիոնալի յերգն եյին յերգում։ Ցեվ այն ժամանակ ընդհանուր գործադուլի մասին խոսք անգամ չկար. մի այնպիսի հանգիստ շրջան եր, վոր յերբ Բելգիայում ընտրողական իրավունքը մի փոքր գործադուլ առաջացրեց, վորն ընդամենը 2 որ տևեց, այդ մի խոշոր դեպք համարվեց, վորի մասին ամբողջ հետազոտություններ եյին գրում, ի միջի այլոց՝ նաև հանգուցյալ Ռոզա Լյուքսեմբուրգը։

Յերկրորդ Ինտերնացիոնալի, առավել ևս մենշևիկների, նման վերաբերմունքի դեպքում դեպի ընդհանուր գործադուլը, յերրորդ համագումարը մեծ ծառայություն մատուցեց հեղափոխական շարժմանը,

* Ընդհանուր գործադուլը ընդհանուր անհեթեթություն ե։

առաջ քաշելով այս գաղափարը և հայտարարելով, վոր ընդհանուր գործադուլն անիմաստ բան չէ, վոր Ռուսաստանում նա որակարգի հարց է, և վոր մենք այդ գործադուլը գլուխ կբերենք։

## ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ.

Ավելի սուր եր դրված զինված ապստամբության հարցը. նրա մասին II Ինտերնացիոնալը լսել անգամ չեր ուզում, ապացուցելով, վոր այդ անարխիզմ է, յեվ հենվում եր Ենգելսի 90-ական թվականներին գրած առաջաբանի վրա։ Ենգելսն այդ առաջաբանում մատնանշելով բուրժուական բանակների տեխնիկայի կատաղի զարգացումը և մեծ քաղաքների փողոցների վերաշինումը, վորոնք շատ լայն դառնալով, հնարավորություն չեյին տալիս բարրիկադայի կռիվ մղելու, այն յեզրակացությունն եր գալիս, վոր նման պայմաններում զինված ապստամբությունը շատ դժվար բան է, վորովհետև բուրժուազիան մի քանի ժամվա ընթացքում կկաթկաթի ամեն մի նման շարժում։ Այս առաջաբանից պինդ բռնեցին բոլոր ոպպորտյունիստները և միաբերան կրկնում եյին, վոր զինված ապստամբությունն անհնար է, վոր այդ իբր թե «ապացուցել է Ենգելսը», միանգամայն աչքաթող անելով այն, վոր Ռուսաստանում պայմանները բոլորովին այլ են, և վոր իմպերիալիստական պատերազմները կարող են ստեղծել այլ դրություն՝ իրենց բանակի մեջ նաև Արևմտյան Յեվրոպայում։

Այս տեսակետից եվ մեր կուսակցության 3-րդ համագումարը խոշոր դեր խաղաց հեղափոխական շարժման համար, հայտարարելով, վոր նա զինված ապստամբությունը որակարգի հարց է դարձնում, վոր այդ հնարավոր է, և վոր ոպպորտյունիստներն սխալ են մեկնաբանում Ենգելսին։ Միաժամանակ նա (համագումարը) վոչ միայն այս գաղափարներից յուրաքանչյուրն առանձին առաջադրեց, այլ և առաջարկեց նրանց սինթեզը, այսինքն՝ զինված ապստամբության միավորումը ընդհանուր գործադուլի հետ, կարծես թե մարդարեական աչքով նախատեսելով 1905, իսկ հետո նաև 1917 թվի դեպքերը։

## ՅԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ.

Այսպիսով յերրորդ համագումարում դրվեց բայլշևիկյան տակտիկայի անսասան ֆունդամենտը և ուրվագծվեց գալիք հեղափոխության իսկական ծրագիրը։ Չպետք է մոռանալ, վոր այդ համագումարի պարապմունքները տեղի եյին ունենում 1905 թվի վճռական դեպքերից 2—3 ամիս առաջ, և վոր նրա վորոշումներն ամբողջ աշխարհի հեղափոխական կուսակցությունների համար կարծես թե որինակ ծառայեցին, թե ինչպես հեղափոխական մարքսիստական միտքը, յեթե նա



միացած է մասսայական բանվորական շարժման հետ, կարող է նախագուշակել հեղափոխության ուղին։ Կարդալով յերրորդ համագումարի բանաձևները, կարելի յե ասել, վոր նա, ականջը գետնին մոտեցնելով և ուշադրության առնելով Ռուսաստանի դեպքերը, մարքսիստական անալիզի հիման վրա նրանց հետագա ընթացքը գուշակեց։

## ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՍՊԱՌԱԶԻՆՄԱՆ ՀԱՐՑԸ.

Մինչև այդ մենշևիկները վերջացրին և կատարելագործեցին իրենց ոպպորտյունիստական ծրագիրը։ Իրենց «համառուսական կոնֆերանսում» նրանք առաջադրեցին բոլորովին այլ գաղափար—այսպես կոչվող «հեղափոխական ինքնավարության» գաղափարը։ Նրանք պատրաստվում եյին Բուլիգինյան Դումային մասնակցելու և որակարգի բոլոր հարցերը մշակեցին ոպպորտյունիստորեն։ Այս տեսակետից հիանալի որինակ կարող է ծառայել բանվորների սպառազինման հարցը։ Մեր կուսակցության յերրորդ համագումարը այս հարցն առաջադրեց մեծ ուժով և յեռանդով։ Մեր որերին նա, ինչպես և այլ շատ բան, այրուբեն է թվում մեզ, սակայն այն ժամանակ, Յերկրորդ Ինտերնացիոնալի խաղաղ զարգացման տարիներին, յերբ Կաուցկին և նրա արբանյակները, ինչպես կրակից, վախենում եյին զենքից, բանվորների սպառազինումը շատերին թվում եր խռովարարների վայրենի զառանցանք։ Յեվ ահա, յերբ մեր կուսակցության յերրորդ համագումարն այս հարցը կտրուկ ձևով դրեց, մենշևիկներն իրենց Համառուսական կոնֆերանսում բողոքեցին, վոր այդ չտեսնված անարխիզմ է, վոր այդ խռովարարություն է։ Մենք պետք է բանվորներին սպառազինենք վոչ թե զենքով,—ասում եյին նրանք,—այլ նախ «սպառազինման անհրաժեշտության այրող գիտակցությամբ»։ Այս հարցին նրանց հիանալի կերպով պատասխանեց բայլշևիզմը,—Դուք ռուս բանվորներին փոքր յերեխաներ եք համարում, դուք ուզում եք նրանց «գիտակցությամբ զինել», սակայն այդ ժամանակն արդեն անցել է, նրանք գիտակցություն ունեն, և այժմ պետք է նրանց զինել հրացանով, վորպեսզի հարվածեն ցարին և բուրժուազիային։

Ահա թե ինչպես խորն եր մեր և մենշևիկների տեսակետների տարբերությունը։ Մի կողմից կար հեղափոխության համար պատրաստվող ռազմական բանվորական փաղանգ, իսկ մյուս կողմից՝ թթու-քաղցը խոսակցություններ հեղափոխական ինքնավարության մասին, այսինքն զեմստվոների և քաղաքային Դումաների բարելավման և Բուլիգինյան Դումային մասնակցելու մասին։

## ՇԻԴԼՈՎՍԿՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ.

Հունվարի 9-ի դեպքերից հետո ցարական ինքնակալությունը տեսավ, վոր ինքն ստիպված է բանվորներին վորոշ զիջումներ անել՝ այս

նպատակի համար առաջ քաշելով այսպես կոչվող Շիդլովսկու հանձնաժողովը։ Ցարն այս հանձնաժողովի նախագահ սենատոր Շիդլովսկուն նշանակեց և առաջարկեց բանվորներին ուղակել իրենց ներկայացուցիչներին՝ բանվորների կենցաղի վորոշ բարելավման հարցերը միասին քննելու համար՝ Գապոնի պահանջների վրդով։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այս հանձնաժողովը հիմնական քաղաքական հարցեր չշոշափեց՝ բավականանալով լոկ դատարկութիւններով։ Այս կոմիսսիան, վորպես և ամեն մի լեգալ հնարավորություն, պետք եր ոգտագործել, ինչը և արեցինք մենք։ Սակայն մենշևիկներն այստեղ մի ամբողջ փիլիսոփայություն կառուցեցին և հարձակվեցին հանձնաժողովի վրա, ինչպես ճանճերը շաքարի վրա։

## ԲՈՒԼԻԳԻՆՅԱՆ ԴՈՒՄԱՆ.

Ավելի ուշ, յերբ բանվորական շարժումն ստացավ իր հետագա զարգացումը, յերբ կազմակերպվեց Միությունների Միությունը, և սկսեց ուժեղանալ շարժումը գյուղացիների մեջ, յերբ բանակում և նավատորմիղում և առաձնապես ռազմական նավերի վրա սկսեց հասունանալ այն տրամադրությանը, վորը հետո հանգեց «Պատյոմկին Տավրիչեսկիյ» զրահանավի ապստամբությանը, այն ժամանակ ցարական ինքնակալությունը մտածեց ավելի խոշոր «ռեֆորմների» մասին և վորոշեց Դումա հրավիրել, վոր և ստացավ «Բուլիգինյան» անունը։ Այս գործի նախապատրաստումը՝ համապատասխան ընտրողական իրավունք մշակելու տեսակետից՝ ցարը հանձնել եր Բուլիգինին։ Ցարական վոհմակի միտքն այն եր, վոր այնպիսի Պետական Դումա հրավիրվի, վորը վոչ մի լուրջ իրավունքներ չունենա, լոկ խորհրդակցական մարմին լինի, վորն իր կարծիքը ներկայացնում և միապետի «բարեհայեցողությանը», վորը և վճռում և բոլոր հարցերը։ Բուլիգինի մշակած ընտրողական օրենքն այնպես եր կազմված, վոր բանվորները գրեթե վոչինչ չեյին ստանում, մինչդեռ ազնվականությունն ու բուրժուազիան բոլոր իրավունքներն ունեյին։

Յերբ Բուլիգինյան Դումայի եյականգծերը բավական չափով պարզվեցին, հարց ծագեց,—ինչպես վերաբերվել նրան։ Բայշևիկներն առաջարկեցին հրաժարվել վորևե մասնակցությունից այդ Դումային, բոյկոտ հայտարարել և մասսաները խմբելով՝ տապալել այն։ Մենք զգում եյինք, վոր սկսված շարժումը բացառիկ ուժ ուներ, վոր իր վատթխված կարկանդակներով ցարական ինքնակալությունն այլևս վոչ վոքի չի կարող կերակրել, վոր պետք և խլել նրա ձեռքից այդ կարկանդակները, գետին շպրտել և առաջ գնալ ընդդեմ ցարիզմի։ Մենշևիկներն ըստ սովորականի՝ տեսնելով ցարի նախագծի մեջ պարլամենտարիզմի սկիզբը Ռուսաստանում, սկզբում առաջարկեցին մասնակցել Դումային։ Իսկ յերբ սկսեցին նրանց ծաղրել, նրանք մասնակցելուց հրաժարվեցին, հայտարարելով՝ այդ դեպքում մենք կսկսենք հրավիրել ընտրողական ժողովներ, և մեր մարդկանց կընտրենք վոչ թե Դումայի համար, այլ ինքնավարության հեղափոխական օրգանների համար։ Սակայն հետո այս պլանն ել մի կողմ դրվեց, և հեղափոխությունը Բուլիգինի ու նրա Դումայի և մենշևիկյան «հեղափոխական ինքնավարության» վրայով անցավ իր հերթական գործերին։ Բանվորներն ասացին.—Դատարկ բաներով զբաղվելու տրամադիր չենք, հասնում և լուրջ ժամանակը, վառոդի հոտ և գալիս, մոտենում և իսկական հեղափոխությունը, կարիք չկա ընտրելու անդամներ այն Դումայի համար, մեր վրեժխնդիրը և փաթաթում ցարական ինքնակալությունը։

## 1905 ԹՎԻ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ.

Այս պարագաներում սկսվեցին 1905 թվի հոկտեմբերյան դեպքերը. ընդհանուր գործադուլ, Միություններ Միության յեռանդոտ գործունեությունը, հոկտեմբերի 17-ը, վորոշ զիջումներ ինքնակալության կողմից և, վերջապես, սահմանադրություն։ Սահմանադրություն շնորհելու մանրամասնությունները և հետին միտքը կարելի յե իմանալ Վիտտեյի հիշողություններից, վորն իր գրքում բազմակողմանի կերպով նկարագրում և կրքերի, կուսակցությունների և պալատական ինտրիգների ամբողջ խաղը։ Միաժամանակ ծնունդ և առնում Պետերբուրգի Բանվորների Պատգամավորների Խորհուրդը։ Ցես ընդգծում եմ **Բանվորների** Պատգամավորների Խորհուրդը և վոչ թե **Բանվորների ու Զինվորների** Պատգամավորների Խորհուրդը։ Այս շատ կարևոր և, վորովհետև հենց այս եր նրա գլխավոր թուլությունը։ Բայշևիկներն ասում եյին.—Ուժ ունենալու համար պետք և ունենալ վոչ միայն բանվորների, այլ և զինվորների ու գյուղացիների պատգամավորների խորհուրդ։ Սակայն այդ չհաջողվեց անել, վորովհետև շարժումը չափազանց թույլ եր։

Խորհուրդների գաղափարը, ինչպես և բոլոր խոշոր գաղափարները, մասսաների մեջ ծնվեց։ Մենշևիկները փորձում եյին հետագայում գործն այնպես ներկայացնել, վոր իբր թե հեղափոխական ինքնավարության նրանց պոչատ գաղափարը մարմնացավ հետո խորհուրդների գաղափարի մեջ։ Սակայն նրանց գաղափարից մինչև խորհուրդները նույնքան հեռու յե, վորքան մինչև յերկնից աստղերը։ Մենշևիկները չեյին, վոր առաջ մղեցին խորհուրդների գաղափարը. նա մասսաների մեջ ծնվեց, նրանց խորքերում, Պետերբուրգի գործարաններում։ Պետերբուրգի Խորհուրդը կառավարության սկզբնական ձև դարձավ։ Հար-

ցը՝ այսպես եր դրված. կամ այդ Խորհուրդը իշխանությունն իր ձեռքը կվերցնի, և ցարական կառավարությունը կցրվի, կամ վերջինս կցրի Խորհուրդը։ Ինչպես հայտնի է, տեղի ունեցավ վերջինս։ Բայլշևիկների մի մասն սխալ գործեց՝ պահանջելով, որպեսզի Խորհուրդը պաշտոնապես Ս.-Դ. կուսակցական ծրագիրն ընդունի։ Սակայն Լենինը և բայլշևիկյան կենտկոմը շուտով ուղղեցին այս խոշոր սխալը։

## ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ (1905 Թ.) ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍԿՎԱՅՈՒՄ.

Շարժման կուլմինացիոն կետը դեկտեմբերյան ապստամբությունն եր, որ ծագեց Մասկվայում, Պրեսնայում։ Նրա գլխավոր և կազմակերպչական դերը պատկանում եր բայլշևիկներին, նրանց կոմիտեին, որի գլուխ կանգնած եյին՝ հանգուցյալ Շանցերը (Մարատ), որը մեռավ 1911 թվին արտասահմանում, ներկայիս ներքգործժողկոմի տեղակալ Վլադիմիրսկին, մեր կուսակցության անդամ Սեդոյը, որը կենդանի է, և մի քանի այլ ընկերներ։ Նույն այս կոմիտեն առաջին անգամ կազմակերպեց բանվորական մարդական գնդեր։

Մասկվայի զինված ապստամբությունը, որը խոշոր պատմական նշանակություն ունեցավ, ճնշվեց և վոչոչվեց բանվորների արյամբ։ Յեվ նրանից գրեթե անմիջապես հետո նույնիսկ մենշևիկներից լավագույնները, ինչպես, որինակ, Պլեխանովը, շտապեցին նրանից հրաժարվել։ Պլեխանովն այս առթիվ սառը, անհոգի, գրեթե դավաճանական նախադասություն գրեց. «Չպետք եր զենք վերցնել»։ Այս առթիվ մենք նրան պատասխանեցինք.—Սխալ և թե վոչ այդ շարժումը, բայց միայն բանվոր դասակարգի թշնամի մարդու գրչի տակից կարող եյին դուրս գալ նման բաներ։ Յերբ 1871 թվին Պարիզի կոմմունարները պարտություն կրեցին, Մարքսը, որ զգուշացնում եր Պարիզի բանվորներին այդ ապստամբությունից, չասաց նրանց, թե չպետք եր զենք վերցնել, այլ մի փայլուն գիրք գրեց—«Քաղաքացիական կռիվը Ֆրանսիայում»՝ հավերժացնելով Պարիզյան կոմմունարների վեհ գործն իր իսկապես որ անմահ ստեղծագործության մեջ, որ մարքսիստական հրապարակախոսության շեղյուրն և հանդիսանում։ Պլեխանովը, ինչպես և շատ ուրիշները, Մարքսի ուղիով չգնաց. ինչպես հեղափոխության աղա, նա մի կողմում կանգնած մնաց և աստղագետի պես շարժումը քննադատում եր լոկ վերացական տեսակետով՝ «պետք չեր զենք վերցնել»։ Բայլշևիկներն այդպես չվարվեցին։ Ընկ. Լենինն ամենամեծ սիրով վերաբերվեց դեպի այդ ապստամբությունը։ Նրա առաջին լոզունգն եր. ուսումնասիրել ամեն ինչ, նույնիսկ այդ պայքարի ամենաչնչին եպիզոդները, կռիվների տեխնիկան և առանձին մասնակիցներ-



ի կենսագրությունը։ Լենինն այն «հեղափոխականներից» չէ, որոնք համերաշխ են միայն հաղթական ապստամբության հետ (սրա սիրահարներ շատ կգտնվեն)—Նրա համար թանգ է նաև մեր դասակարգի պարտված ապստամբությունը։ Լինում են պարտություններ, որոնք հաղթանակից էլ թանգ են։ Իսկ 1905 թվի դեկտեմբերյան ապստամբությունը հենց այդպիսի յել եր։ Այդ առաջավոր բանվորների առաջին ապստամբությունն եր մեր կուսակցության լոզունգի ներքո, յերբ նրանք արդեն պարզ գիտեյին, թե ինչ են ուզում, և այլևս չեյին գնում Գապոնների դրոշակների ներքո։ Այդ ապստամբության փաստն ինքը ցույց տվեց, որ շարժումը նոր աստիճան եր բարձրացել, որ բանվոր դասակարգը հասունացել եր որպես մեծ ինքնուրույն ուժ, պարզ ծրագիր ուներ և հավաքված եր մինչև ատամներն սպառազինված ցարական բանակի վրա հարձակվելու պատրաստակամությամբ։ Թեկուզ այդ շարժումն անհաջողություն կրեց. մենք պայմանագիր չեյինք կնքել, որ անպայման պետք է հաղթենք։ Սովորաբար բանվորները հասնում են հաղթության մի շարք պարտություններից հետո։ Յեվ այդ պատճառով ամբողջովին համերաշխ լինելով այս ապստամբության հետ, բայլշևիկները վճռական կռիվ հայտարարեցին Պլեխանովին նրա «Պետք չեր զենք վերցնել» ռենեգատական նախադասության համար։

---

## 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ.

Հիմա քննենք մոտավորապես 1906-1909 թ. թ. ընդգրկող շրջանը։ 1905 թվի առաջին հեղափոխությունը վորոշ չաչով 1917-ի փորձն եր (репетиция)։ Առանց 1905 թվի անկարելի յեր 1917 թվի համեմատաբար հեշտ հաղթությունը։ Չնայած նրան, վոր 1905 թվին խորհուրդների գաղափարը վորպես մետեոր անցավ, այնուամենայնիվ նա ընկավ բանվոր դասակարգի հոգու խորքերը, և յերբ 1917 թվին վորոտաց փետրվարյան հեղափոխության առաջին ամպրոպը, յուրաքանչյուր բանվորի համար ինքնըստինքյան հասկանալի դարձավ, վոր յերկիրը պետք է ծածկվի խորհուրդների ցանցով։ Կրկնում եմ, 1917 թվին շատ դեպքեր բոլորովին այլ կերպ կկատարվեյին, յեթե մենք չունենայինք 1905 թվի հեղափոխության մեծ փորձը։ Սակայն անմիջականորեն, ինքնըստինքյան 1905 թվի հեղափոխությունը պարտվեց։ Ցեվ այստեղ հարց և ծագում՝ ինչո՞ւ, վորո՞նք են նրա անհաջողության պատճառները։

Մենշևիկները այս հարցին պատասխանեցին հինգ հատորից բաղկացած իրենց հայտնի աշխատության մեջ, վորը գրված է Մարտովի, Պոտրեսովի, Դանի և ուրիշ մենշևիկ ղեկավարների խմբագրությամբ հակահեղափոխության որերին՝ այսինքն՝ 1909-10 թվերին։ Նրանց բացատրությունը հետևյալն է. 1905 թվի հեղափոխությունը պարտություն կրեց այն պատճառով, վոր բանվոր դասակարգն իր զուտ դասակարգային պրոլետարական պահանջներով շատ հեռու գնաց։ Այսպես, նա առաջադրեց և նույնիսկ սկսեց իրագործել հայտարարական կարգով 8-ժամյա բանվորական որը։ Պատմության մենշևիկյան փիլիսոփայության տեսակետից այդ բանվոր դասակարգի առաջին հանցագործությունն եր, վոր նա կատարեց 1905 թվի հեղափոխության ժամանակ։ Իրենց չափազանցված պահանջներով,—համոզում եյին մենշևիկները,—բանվոր դասակարգն իրենից վանեց բուրժուազիայի մի խոշոր մասին և ստիպեց նրան դաշն կապել կալվածատերերի, այսինքն՝ ցարիզմի հետ։ Մենշևիկներն ամբողջ Պետերբուրգի Բանվորական Պատգամավորների Խորհրդի գործունեությունը սխալ եյին համարում և նույնիսկ՝ պարզապես գեմագոգիական, չնայած նրան,



վոր մի ժամանակ նրա ղեկավարությունը մենշևիկներին եր պատկանում։ Նրանց կարծիքով Խորհուրդը տարերային կերպով բայլշևիզմի ուղիով եր գնում։ Այս վերջինը վորոշ չափով ճիշտ է։ Բանվորական պատգամավորների առաջին՝ Պետերբուրգի Խորհուրդը, վոր կուսակցական տեսակետից յերբեք միմիայն բայլշևիկներից չեր բաղկացած, իրոք վոր, այն ժամանակվա բոլոր հանգամանքների ազդեցության տակ, բայլշևիզմի ուղիով եր գնում։ Ավելին կասենք։ Պատմությունը մենշևիկների գլխին նույնիսկ այսպիսի մի չար խաղ խաղաց։ Նրանց ամենորյա «Նաչալո» («Սկիզբ») լրագիրն էլ, վոր լույս եր տեսնում 1905 թվի վերջերից, խիստ բայլշևիկյան տեսակետ ընդգրկեց, և մենք այն բանին ականատես յեղանք, վոր հետագայում մենշևիկյան ամբողջ գլխավոր շտաբն սկսեց հրաժարվել իր սեփական որգանից։ Անցողակի կերպով միքանի խոսք ասեմ «Նաչալո» և «Նովայա ժիզն» («Նոր կյանք») թերթերի մասին։

### «ՆՈՎԱՅԱ ԺԻԶՆ» ՅԵՎ «ՆԱՉԱԼՈ».

1905 թվի վերջերին առաջին անգամ յերևան յեկան բայլշևիկների և մենշևիկների լեգալ որաթերթերը՝ առաջինների «Նովայա ժիզն»-ը և յերկրորդների «Նաչալո»-ն

«Նովայա ժիզն»-ը մինչև ընկ. Լենինի և մեր միքանի այլ ղեկավարների արտասահմանից վերադառնալը գտնվում եր այս կամ այն չափով պատահական մարդկանց ձեռքում։ Խմբագրության գլուխ կանգնած եր Ռումյանցևը, վորը հետագայում հեղափոխությունից հեռացավ և այժմ հայտնի չե, թե վորտեղ է գտնվում։ Լրագրին մասնակցում եյին ինտելլիգենտ գրողներ, վոչ միայն Գորկին, այլ և այնպիսի գրականագետներ, ինչպես Մինսկին, Տեֆֆին և ուրիշները, վորոնք արդեն վաղուց բարբիկադների մյուս կողմն են կանգնած։ Այժմ մինչև անգամ դժվար է պատկերացնել, վոր այդ մարդիկ յերբևիցե կարող եյին բայլշևիկյան բանակում լինել։ Դրությունը փոխվեց միայն այն ժամանակ, յերբ արտասահմանից ղեկավար բայլշևիկյան խմբակը վերադարձավ, յերբ «Նովայա ժիզն»-ը վորոշակի կերպով բայլշևիկյան թերթ դարձավ։

Մենշևիկյան «Նաչալո»-ի գործը միքիչ այլ կերպ ընթացավ։ Այս լրագիրն ընկավ Պարվուսի և ընկ. Տրոցկու ձեռքը։ 1905 թվի կեսերից սկսած, յերբ դեպի բուրժուազիան ունենալիք վերաբերմունքի հարցում տարաձայնություններ նկատվեցին, այս յերկու ականավոր մենշևիկներն սկսեցին հեռանալ մենշևիզմից։ Յերբ «Նաչալո»-ն մի շարք հանգամանքների հետևանքով ընկավ նրանց ղեկավարության տակ, նրանք թերթին խոշոր չափով բայլշևիկյան բնույթ տվին։ Ընկ. Տրոցկու

և Պարվուսի գլխավորությամբ այդ հոսանքը պատմության մեջ տեղ բռնեց, որպես այսպես կոչվող պերմանենտ, այսինքն անընդհատ հեղափոխության գաղափարը պաշտպանող հոսանք։ Այդ գաղափարի ելությունը հետևյալն եր։

## ՊԵՐՄԱՆԵՆՏ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ.

«Նաչալո»-ն պնդում եր, որ 1905 թվի հեղափոխությունը բացեց հեղափոխությունների մի շարան, որը կվերջանա միայն համաշխարհային պրոլետարիատի լիակատար հաղթանակով։ Լրագիրն ընդգծում եր, թե ռուսական հեղափոխությունը լոկ միջազգային հեղափոխության մի մասն է, և որ, հետևապես, նրա վերջնական հաղթանակը հնարավոր է միայն միջազգային հեղափոխության հաղթանակի դեպքում։ Այս հոսանքի մեջ շատ գրավիչ բան կար, սակայն քիչ չեին նաև սխալ կողմերը։ Նրա գլխավոր մոլորությունն այն եր, որ նա կամ արհամարհում եր, կամ խոշոր չափով չեր գնահատում գյուղացիության դերը, միանգամայն աչքաթող անելով, որ ռուսական հեղափոխությունը չի կարող հաղթանակել, յեթե բանվոր դասակարգը սերտ գործակցություն չհաստատի գյուղի հետ։ Ուրիշ խոսքով՝ այս հոսանքի լիդերները չեին գնահատում բայլշևիզմի լոզունգը, որը բանաձևել եր Լենինը դեռևս 1905 թվի կեսերին, մի լոզունգ, որը պրոլետարիատի և հեղափոխական գյուղացիության դիկտատուրա յեր հայտարարում։

Ինչ էլ որ լինի, մենշևիկյան «Նաչալո» թերթը տարերային կերպով գնաց վոչ յերբեք մենշևիկյան ուղիով։ Յեվ մենշևիկները 1905 թվի յեղրափակումները հանելով, պետք է վողբային վոչ միայն բայլշևիկների տակտիկան, վոչ միայն Պետերբուրգի խորհրդի վարքագիծը, այլ և իրենց սեփական «Նաչալո» թերթի ուղղությունը, որն այդ ժամանակ ուժեղ ազդեցություն եր թողնում, իհարկե, ամբողջ շարժման վրա։ Միանգամայն հասկանալի յեն և նրանց ուված բացատրությունները 1905 թվի անհաջողությունների մասին. բանվոր դասակարգն իբր թե, ինչպես այն ժամանակ եյին արտահայտվում, մաքսիմալիզմի գիրկն ընկավ, անիրագործելի պահանջներով տարվեց, բայլշևիկյան ուղիով գնաց և իր վիզը կոտրեց. բանվոր դասակարգի ամբողջ սխալն այն եր, մենշևիկների կարծիքով, որ նա չչափավորեց իր ծրագիրը, իր տակտիկան բուրժուական «հասարակության» պահանջներին չհարմարեցրեց, այլ նրանց վրայով անցավ, առաջադրելով 8-ժամյա բանվորական որ և ուրիշ զուտ դասակարգային պահանջներ։



## 1905 ԹՎԻ ՇԱՐԺՄԱՆ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

Բայլշևիկները այլ կերպ եյին մտածում։ Յեթե նույնիսկ հիշատ է,— ասում եյին նրանք,—որ 8-ժամյա բանվորական որվա պահանջն այն ժամանակ սխալ եր, այնուամենայնիվ նրա ոգին սկսված շարժումն անխուսափելի յեր։ Միայն չինովնիկները կարող են հեղափոխությունն այնպես պատկերացնել, որ հալածված դասակարգի զարթնած միլիոնները կհրաժարվեն իրենց պահանջներից և չեն առաջադրի այն, ինչ նրանց համար ամենացավոտ հարցն է։ Յեթե Պետերբուրգում,—ասում եյինք մենք,—և առհասարակ աշխարհիս յերեսին չլիներ այն ժամանակ և վոչ մի բայլշևիկ, այնուամենայնիվ բանվորական մասսաները՝ տասնամյակների ճնշումներից հետո արթնացած՝ կառաջադրեին 8-ժամյա բանվորական որվա պահանջը և չեին սահմանափակվի բուրժուական սահմանադրականներին ոժանդակելով։ Իրականում այս պահանջն սխալ չեր. այլ կերպ չեր կարող և չպետք և լիներ։ Ռուսաստանի բանվոր դասակարգը, որ այն ժամանակ առնվազն 8 միլիոն մարդ եր հաշվում իր շարքերում (գուցե և տասը), զգաց, որ գործի յելքը դրանից եր կախված։ Յեվ վոտքի յելնելով՝ նա, պարզ է, որ չեր կարող որակարգի հարց չդարձնել իր հիմնական դասակարգային պահանջները։ Յեթե նա 1905 թվին պարտվեց, այնուամենայնիվ կգա ժամանակ, յերբ 1905 թվի պահանջները կհաղթանակեն։ Սրանք՝ եյին մեր վճռական առարկությունները վերոհիշյալ մենշևիկյան փիլիսոփայության դեմ։

Ինչպիսի դիպգնող եր գնում բայլշևիզմը 1905 թվի հեղափոխության պարտությանը։ Նա այն կարծիքին եր և է, որ 1905 թվի անհաջողությունը 3 արմատական պատճառ ուներ։ Առաջինը և ամենագլխավորը միջազգային դրությունն եր։ Յեվ իրոք, ռուսական հեղափոխությունը եր և պետք է լիներ միջազգային պայքարի մի եպիզոդը։ Այն փաստը, որ 1917-20 թվերի հեղափոխությունը սերտ կապ ունի միջազգային անցուդարձի հետ, հիմա յուրաքանչյուրի համար պարզ է։ Սակայն 1905 թվի հեղափոխությունն էլ պակաս կապված չեր միջազգային դրության հետ։ Այն փոխառությունը, որ մինիստր Վիտեյին հաջողվեց կայացնել ոտարերկրյա բանկերում, անկասկած է, որ վճռական դեր խաղաց։ Բացի դրանից, միջազգային բուրժուազիան ցարիզմին դրամական ոգնություն ցույց տալով, ցույց տվեց նրան նաև մեծ բարոյական ոժանդակություն։ Այն ժամանակներում արևմտա-յեվրոպական բուրժուական աշխարհն այսպես պառակտված չեր, ինչպես մեր որերում։ Այն ժամանակ նա մի բավական ամուր ամբողջություն եր։ Ցարական Ռուսաստանն ամենաբարեկամական հարաբերությունների մեջ եր բուրժուական Ֆրանսիայի հետ. և Ֆրանս-ռուսական

տիրահռչակ դաշինքն իրոք միլիոնավոր ցարական ռուբլիների և միլիարդավոր ֆրանսիական ֆրանկների դաշինքն էր։ Յեվ պետք է ասել, վոր այդ մի հզոր դաշինք էր։ Սակայն ռուսական ցարիզմին հակայական ոժանդակություն էր ցույց տալիս վոչ միայն Ֆրանսիան. գրեթե բոլոր արևմտա-յեվրոպական խոշոր պետությունները բավական յեռանդով ոգնում էին նրան։ Յեվ թեպետև ցարական Ռուսաստանի պարտությունը ռուս-յապոնական պատերազմում ձեռնտու չեր առանձին կապիտալիստական խմբակներին, վորոնք մրցում էին նույնպիսի ռուսական խմբերի հետ, սակայն ընդհանրապես արևմտա-յեվրոպական բուրժուական աշխարհն անկասկած ոժանդակում էր ցարիզմին և չեր թողնում, վոր նա տապալվի։ Բացի այդ, արևմտա-յեվրոպական բուրժուական քաղաքագետները ռուսական ցարիզմը հաշտեցնում էին կադետների և ռուս լիբերալների հետ, վորի պարագլուխները կապ էին պահպանում յեվրոպական կապիտալի հետ։ Այժմ կասկածից դուրս է, վոր ֆրանսիական և այլ ոտարազգի բուրժուազիան միջնորդի դեր խաղաց ռուսական ոպպոզիցիոն բուրժուազիայի մի մասի և ցարական ինքնակալության միջև։ Ռուսական ցարիզմն իր մեջքին զգում էր ամենաքաղաքակիրթ յեվրոպական պետությունների բուրժուազիային։ Այս է 1905 թվի հեղափոխության պարտության առաջին պատճառը։

Յերկրորդ պատճառը գյուղացիության անգիտակից լինելն է։ Պլեխանովը ասաց, վոր ռուսական հեղափոխությունը կհաղթի միայն վորպես բանվորական հեղափոխություն։ Այս ճիշտ և անվիճելի է այն իմաստով, վոր բանվոր դասակարգը պետք է հեգեմոն, հեղափոխության հիմնական ուժը լինի։ Սակայն Պլեխանովի բանաձևը լրիվ չեր։ Պետք էր ասել.—Ռուսական հեղափոխությունը պետք է։ հաղթանակի վորպես բանվորական հեղափոխություն, բայց բանվոր դասակարգը, ինչ էլ վոր լինի, պետք է սերտ դաշինք կապի գյուղացիության հետ։ 1905 թվականին անհնար էր այդ իրագործել։ Բանվորական Պատգամավորների Խորհուրդը լոկ բանվոր պատգամավորների խորհուրդ էր, իսկ գյուղացիությունը դեռևս քաղաքականապես դաստիարակված չեր։ Յեթե հիշենք, վոր 1905 թվի հունվարի 9-ին Պուտիլովի գործարանի բանվորները դեռևս հավատում էին ցարին և նրա մոտ սրբերի պատկերներով էին գնում, ապա ավելի հասկանալի կլինի, վոր այդպիսի տրամադրություն կար նաև գյուղացիության հակայական մասսայի մեջ, վորն ավելի փոքր քաղաքական փորձ ուներ։ Դրանով և բացատրվում նաև բանակի այն ժամանակվա տրամադրությունը, վորը վերջիվերջո ոգնեց ցարիզմին հաղթելու ապստամբած բանվորներին։ Նրա տրամադրությունը այն ժամանակ այնպես եր, վոր ցարական միապետությունը դեռևս համեմատաբար ազատ կարողանում եր նրան գործի դնել և բանվորների դեմ ուղարկել։ Յեթե Պետերբուրգի և Ռուսաստանի այլ



կենտրոնական քաղաքների բանվոր դասակարգը 8-10 ամսվա ընթացքում 1905 թվի հունվարի 9-ից մինչև հոկտեմբերի 17-ը քաղաքական դիտության դասընթացը արագ կերպով անցավ և հասկացավ, թե ինչ է միապետությունը, ապա գյուղացիության, գյուղացիական բանակի համար ավելի շատ ժամանակ եր պահանջվում։ Բունտերը բանակում, վոր 1902 թվից շատ հաճախակի կրկնվող յերևույթ դարձան, յերկար ժամանակ, այնուամենայնիվ, կրում էին զուտ տեղական բնույթ և վորոշ հեղափոխական ծրագիր չունեին։ Բանակի մեջ նկատվող շարժման առաջին նշույլները, անշուշտ, շատ նշանակալից էին, և առանձնապես սիմպտոմատիկ եր սև-ծովյան նավատորմիղի ապստամբությունը։ Այդ բավական խոշոր և լուրջ յերևույթ եր։ Սակայն ցարիզմը 1905 թվին բավարար չափով տիրապետում եր և՛ իր բանակին և՛ գյուղացիությանը։ 1905 թվի հեղափոխության մեջ գյուղական բնակչությունը պրոլետարիատի բավարար պատրաստված դաշնակիցը դուրս չեկավ. նա քիչ թե շատ նեյտրալ մնաց, իսկ հանձինս բանակի նա ավելի շատ ցարիզմի ձեռքին եր, քան հեղափոխության։

Վերջապես յերրորդ պատճառը բուրժուազիայի դավաճանությունն է։ Խորապես անիրավացի էին մենշևիկները, վորոնք գործն այնպես էին ներկայացնում, վոր իբր թե ամեն ինչում բանվորներն էին հանցավոր, վորոնք առաջ մղեցին չափազանց մեծ դասակարգային պահանջներ։ Ճշմարտությունը բայլշևիկների կողմն եր, յերբ նրանք ընդգծում էին, վոր բուրժուազիան վճռական բոպեին հեռացավ շարժումից և դավաճանեց նրան, համաձայնության գալով ցարիզմի հետ։ Նա ընկավ այն վոսկրի վրա, վորը նրան շպրտեցին հոկտեմբերի 17-ին։ Այդ բոպեից սկսած ամբողջ լիբերալ-բուրժուական բանակը վճռականորեն դարձավ պրոլետարիատի դեմ։ Նույն Ստրուվեն, վորին միշտ էլ հաջողվում էին թեևավոր դարձվածքները, այն ժամանակ գործածեց մի նախադասություն գործադուլային շարժման «անիմաստ տարերքի» մասին, վորն արդեն առաջ եր գնում դասակարգային պրոլետարական լոզունգների տակ։ Լիբերալ բուրժուազիան գործն այնպես եր նկարագրում, վոր ղեթայից պոկվեց կատաղի տարերքը, փոթորկեցին ալիքները, վորոնց անհրաժեշտ եր, ինչ էլ վոր լինի, հանգստացնել, վորովհետև այլապես ընդհանուր ջրհեղեղ կառաջանա, կատարյալ քաոսում կտիրի, և կոչնչանա ամեն մի կարգ ու կանոն։ Իրոք բուրժուազիան ճիշտ դասակարգային բնազդ և հաշվեկշիռ ուներ։ Յերբ նա տեսավ, վոր ցարիզմը կոտրվեց և նրան ընդառաջ է գնում՝ հաշտաձայնության համար իր ձեռքը մեկնելով, նա միանգամից դեպի աջ թեքվեց, դավաճանեց ապատագրական շարժմանը և փաստորեն ցարի դաշնակիցը դարձավ։

Ահա այն արմատական պատճառները, վորոնք բավարար չափով բացատրում են 1905 թվի հեղափոխության պարտությունը։

## 1905 ԹՎԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ի՞նչ հետևանքներ տվեց 1905 թիվը։ Վորո՞նք եյին նրա հետևանքները, վորոնք անխուսափելի յեն յուրաքանչյուր հեղափոխությունից հետո, նույնիսկ այնպիսի հեղափոխությունից հետո, վորը պարտություն կրեց։ Նախ և առաջ դասակարգային ուժերի խմբավորում։ Այդ գլխավորապես նրանով արտահայտվեց, վոր բուրժուազիան վերջնականապես հակահեղափոխական դասակարգ դարձավ։ Ինչպես հայտնի յե, միշտ էլ այսպես չի յեղել։ Ֆրանսիայում բուրժուազիան 1789 թ. պայքարելով ֆեոդալիզմի, կալվածատիրական հասարակակարգի և միապետության դեմ, հեղափոխական դասակարգ եր։ Ռուսաստանում մինչև 1905 թիվը նա նույնիսկ քիչ թե շատ ոպոզիցիոն դեր եր խաղում։ Կար ժամանակ, յերբ ռուսական բուրժուազիայի մի մասը դաշն եր փնտռում լանվոր դասակարգի հետ և մեր բանվորական կուսակցության շուրջն եր պատվում։ Հայտնի յե մեզ Ստրուվեյի, Տուգան-Բարանովսկու և նրա ուրիշ լավագույն ներկայացուցիչների մեզ հետ համաձայնության գալու փորձը։ Միլյուկովը գնաց Լոնդոն, վորտեղ այդ ժամանակ ընկ. Լենինն եր ապրում, վոզջունելու նրան, վորպես բանվորների ղեկավարի, և առաջարկեց համագործակցության պայմանագիր կնքել։ Կար ժամանակ, յերբ ամբողջ ոպոզիցիոն բուրժուազիան ցարիզմին արհամարհելով, տրամադիր եր բանվոր դասակարգի հետ վորոշ համագործակցություն ունենալու, գաղտնի հուսալով, վոր նա նրա ձեռքերում հլու գործիք կդառնա և նրա համար կրակից շագանակներ կհանի, ինչպես այդ 1848 թվին Գերմանիայում և ուրիշ յերկրներում յեղավ։ Սակայն վորքան ավելի պարզվում եր բանվորական շարժման դասակարգային եությունը, վորքան ավելի պարզ եր լսում բուրժուազիան դասակարգային պահանջների ձայները, այնքան նա ավելի ազատագրական շարժումից յերես եր դարձնում, այնքան ավելի պարզ եր դառնում նրա համար, վոր վորքան էլ վատ լիներ ցարը, բուրժուազիայի համար նա, այնուամենայնիվ, ավելի լավ է, քան բանվոր դասակարգի հաղթանակը։ Իսկ յերբ նա վերջնականապես համոզվեց, վոր բանվոր դասակարգը բավականի ուժեղ է, վոր նա Գապոնի յուսից չէ վոր գնում է, այլ իր կուսակցության յուսից, վոր նա ունի իր դասակարգային ծրագիրը, 8-ժամյա բանվորական որվա պահանջն է առաջադրում և իր բանվորական պատգամավորների խորհուրդն է ստեղծում, այն ժամանակ բուրժուազիան սկսեց արագ կերպով իր գույնը փոխել և շուտով պարզորոշ հակահեղափոխական դասակարգ դարձավ։ Ներկա դեպքում վճռական մոտիվը Պետերբուրգի Բանվորական Պատգամավորների Խորհրդի ծագումն եր։ Ազատ-Տնտեսական Ընկերու-



թյան դահլիճում իր նիստերը գումարող այս ժողովը սարսափի առարկա դարձավ ամբողջ բուրժուազիայի համար, վորի հոտառությունը շատ սուր է։ Նա զգաց, վոր այդ ապագա բանվորական կառավարությունն է, այսինքն՝ պրոլետարիատի այնպիսի դասակարգային որգանը, վորին բուրժուազիան յերբեք չի կարող տիրանալ։ Ցեվ այդ բոպեյից նա վարդի գույնը փոխում, սև գույն է ստանում։ Այդ բոպեյից սկսած I Ինտերնացիոնալի նույնիսկ այնպիսի թեորետիկներ, ինչպիսին է Կաուցկին, հասկացան, վոր ռուսական բուրժուազիան այլևս չի կարող խաղալ այնպիսի դեր, ինչպիսին Ֆրանսիականը 1789 թվին, վորովհետև մեր յերկրի պրոլետարիատն արդեն ամրացել եր։ Ռուսական բուրժուազիան ստիպված եր հակահեղափոխական դասակարգ դառնալ, այնինչ Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ բանվոր դասակարգը դեռևս խանձարուրի մեջ եր, բուրժուազիային հեղափոխական դեր խաղալու որյեկտիվ հնարավորություն տալով։

Այսպիսով 1905 թվի առաջին հետևանքն այն եր, վոր կարևորագույն դասակարգերից մեկը՝ յերիտասարդ ռուսական բուրժուազիան միանգամից հակահեղափոխական դարձավ։ Նրա յերկրորդ հետևանքն եր գյուղացիության զարթոնքը իր դարավոր քնից։ Յեթե 1905 թվի շարժումը հաղթությամբ չվերջացավ, այնուամենայնիվ այն ժամանակ շատ սուր եր դրված հողային հարցը, վորը նշանավոր է առաջին հոդային կոմիտեների յերևան գալով։ Ինչպես էլ վոր լինի, 1905 թվի դեպքերը զարթեցրին և շարժեցին գյուղացիությունը։ Ցեվ նրա ներկայացուցիչներն առաջին և յերկրորդ Պետական Դումաներում այդ շատ պարզ ցույց տվին։ Այս յերկու Դումաներում, վոչ միայն տրուդովիկ (աշխատավորական) գյուղացիները, այսինքն կիսաեսերները, վոր կազմում եյին տրուդովիկների կուսակցությունը, այլ և աջ գյուղացիները, վորոնք քաղաքական հարցերում սև-հարյուրակայիններ եյին հաշվվում, հողային հարցի նկատմամբ արտասանում եյին հեղափոխական կրակով լի ճառեր։ Հենց վոր գործը հողին եր հասնում, այդ աջ գյուղացիները, վորոնց վրա եյին ուզում հենվել կալվածատերերն ու ցարական միապետությունը, այնպիսի լեզվով եյին խոսում, վոր բայլշևիկներին միայն ծափահարել եր մնում։

Վերջին հաշվով, 1905 թվի յերկրորդ մեծ հետևանքն եր գյուղացիական մասսայի մեծ չափով աճած գիտակցությունը։ Այս իմաստով արմատական տեղափոխություն կատարվեց. բուրժուազիան դեպի աջ գնաց, իսկ գյուղացիությունը՝ ստիճանաբար զարթնելով, սկսեց շարժումը ձախացնել։

## «1847, ԹԵ՞ 1849 ԹԻՎԸ» ԲԱՆԱՁԵՎԸ.

1906 թվին կուսակցության առաջ հարց հարուցվեց. հետո՞ ինչ. վերջացավ արդյոք հեղափոխությունը՝ Ծագած վիճերից առաջացավ հետևյալ բանաձևը. ի՞նչ ենք մենք ապրում՝ 1847, թե՞ 1849 թիվը։ Ուրիշ խոսքով, այդ նշանակում եր. ի՞նչն ենք մենք ապրում, 1847 թի՞վը, այսինքն՝ 48 թվի հեղափոխության նախորյա՞կը, թե՞ 49 թիվը, այսինքն՝ կիսահաղթանակից և կիսապարտությունից հետո յեկած ժամանակը։ Ինչպես հայտնի յե, 48 թվի հեղափոխությունը մի շարք յերկրներում հենց այդպես ել վերջացավ, այսինքն՝ վիժվածքով, կոմպրոմիսսով, միաժամանակ հաղթության պտուղները բուրժուազիայի բաժին դարձան։ Կուսակցական շրջաններում հարց եյին տալիս. ի՞նչ ենք մենք ապրում 1906 թվին. այն, ինչ Գերմանիան և Ցեվրոպայի մեծ մասն ապրում եյին 1847-ի՞ն, թե՞ այն, ինչ նրանք ապրում եյին 1849-ին։ Այլ կերպ ասած՝ 1906 թիվը նոր կռիվների նախակարապետն եր, թե՞ խոշորագույն ճակատամարտներն արդեն անցել եյին, և մենք ներքև եյինք գլորվում, այսինքն՝ ապրում եյինք 49-ը թիվը, յերբ հեղափոխությունը վերջացած եր համարվում։ Այս հողի վրա և այս բանաձևի շուրջը բայշևիկների և մենշևիկների միջև արտասովոր սուր դիսկուսսիա բռնկվեց։

Բայշևիկներն այն հայացքն եյին պաշտպանում, թե մենք 1847 թիվն ենք ապրում, թե հեղափոխությունը դեռ չե վերջացել, վոր նրա առաջացրած օբյեկտիվ խնդիրները դեռ ձևական բավարարություն չեն ստացել, և թե վաղ թե ուշ հեղափոխական ալիքը նորից կբարձրանա։ Գյուղացիությունը,—ասում եյինք մենք,—հող չստացավ, բանվորներն իրենց պահանջների բավարարությունը չստացան, իսկ այս յերկու դասակարգերը յերկրի խոշոր մեծամասնությունն են կազմում։ Այս իմաստով հեղափոխության առաջադրած խնդիրները չեն լուծված. գուցե ցարն ու Ստալիպինն առժամանակ հեղափոխության պայքարը կխեղդեն, բայց միայն առժամանակ, և նոր ճակատամարտներն անխուսափելի յեն։ Այն, ինչ 1905 թվին եր, միայն առաջապահների ընդհարումներ եյին, միայն փորձ եր, միայն 47 թիվն եր, իսկ իսկական խոշոր կռիվները դեռ առջևումն են։

Մենշևիկներն, իհարկե, այլկարծիքի եյին։ Նրանք ասում եյին.—Մենք այժմ գնացինք Պրուսսիայի ճանապարհով՝ անհաջող 48 թվից հետո, յերբ գործը կիսով չափ հոգուտ հեղափոխության, կիսով չափ հոգուտ թագավորի վերջացավ։ Ցարը մնաց, մենք կունենանք սահմանադրական միապետություն, և մենք պետք է հիմա հարմարվենք այս իրականությանը։ Այստեղից եր բղխում նաև մենշևիկների լոզունգը—



ինչ ել վոր լինի, կուսակցությունը լեգալիզացիայի յենթարկել կամ, ինչպես մենք այն ժամանակ հեգնում եյինք նրանց, լեգալության մեջ մտնել սողալով։ Ցեվ մենշևիկյան այս տեսակետը հասկանալի յե։ Քանի վոր նրանք գտնում եյին, վոր հեղափոխությունը վերջացած է, վոր հետագա ճակատամարտներ չեն լինի, վոր Ռուսսաստանը խաղաղ շրջան է թևակոխում և պրուսսական ձևով կզարգանա, ապա պարզ է, վոր կուսակցությունը պետք է դուրս գա գաղտնարանից, լեգալիզացիայի յենթարկվի, խուզի իր ծրագիրը և միապետության ու բուրժուական կուսակցությունների հետ կենակցության յեղանակ սահմանի։

## ԲԱՅՇԵՎԻԿՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ.

Սրանք եյին բայշևիկների և մենշևիկների յերկու պլատֆորմաները 1906 թվի գարնանը։ Այդ ժամանակներում 1905 թվականի հեղափոխական կռիվների հետևանքով և մասսաների ազդեցության տակ բայշևիկների և մենշևիկների շարքերն ստիպված եյին միանալ։ Մեր կուսակցության պատմության մեջ այդ վերին աստիճանի հետաքրքիր միջնադեպ է։ Յեթե ասած՝ մասսաները 2 թե 3 անգամ ստիպում եյին բայշևիկներին հաշտվել մենշևիկների հետ։ Այդ զարմանալի յել չե։ Դեռ 1917 թվին կարելի յեր լսել այսպիսի ճառեր. «Ինչո՞ւ անջատվել։ Ինչքան շատ լինենք, այնքան լավ, և յեթե բայշևիկին մենշևիկ և եսեր ավելացնենք, այն ժամանակ անկասկած է, վոր կհաղթենք բուրժուազիային և ցարիզմին»։ Այսպես եյին դատում քաղաքական պայքարի մեջ անփորձ լայն բանվորական մասսաները, և նույնիսկ կուսակցության անդամները։ Ինչպես ել վոր լինի, 1905 թվին ուժեղ շարժում սկսվեց հոգուտ միավորման։ Շատ տեղերում բայշևիկների և մենշևիկների ֆեդերատիվ կոմիտեներ կազմվեցին, վորոնք հավասարության սկզբունքով ստեղծել եյին ընդհանուր կազմակերպություններ և պայքարը ղեկավարում եյին միասին։ Բանը վերջացավ նրանով, վոր բայշևիկների կենտրոնական կոմիտեն ստիպված եր նույնպիսի ֆեդերատիվ կապ հաստատել մենշևիկյան կազմակերպչական կոմիտեյի հետ, իսկ ավելի ուշ, մասսաների ազդեցության տակ, կուսակցության միացուցիչ համագումար հրավիրվեց, վորը տեղի ունեցավ 1906 թվին Ստոկհոլմում։ Այդ համագումարում բայշևիկների և մենշևիկների գլխավոր տարաձայնությունն այն եր, վոր առաջիններն ասում եյին՝ 47-րդ թիվը, մյուսները՝ 49-րդը։ Ուրիշ խոսքով, բայշևիկները պնդում եյին.—Առաջին հեղափոխական ընդհարման մեջ մենք պարտվեցինք, սակայն հետագայում մեզ սպասում է մի այլ հեղափոխություն, վորի խնդիրները 1905 թիվը չկարողացավ լուծել։ Մենշևիկները, ընդհակառակը, հայտարարում եյին.—Դուք

ուտոպիստներ և ֆանտազյորներ եք, դուք չեք ուզում ճանաչել այն տխուր փաստը, որ այս վոչ թե 47, այլ 49 թիվն է։ Մենք չարաչար ջարդված ենք, և ռուսական հեղափոխությունն անդարձ տապալվեց։ Ռուսաստանը սահմանադրական միապետության ուղին կբռնի, և կուսակցությունը պետք է առաջ ընթանա պայքարի այս նշանաբանի ներքո՝ յեվրոպական սոցիալ-դեմոկրատիայի մաշված ճանապարհով։

## ՄԵՆՇԵՎԻԿՅԱՆ ՏԵՆԴԵՆՑԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ.

Ստոկհոլմի համագումարում հաղթեցին մենշևիկները։ Այդ ապացույց է, որ ամբողջ յերկրում՝ կրած պարտության ազդեցության տակ՝ բանվորական մասսաների հեղափոխական տրամադրությունը ընկած եր և որ նույնպիսի յեր նա նաև կուսակցական շրջաններում, վորոնք ճնշված տրամադրության տակ եյին դեկտեմբերյան ապստամբության անհաջողությունից և Պետերբուրգի Խորհրդի անդամների ձերբակալությունից հետո։ Միայն այս հանգամանքի շնորհիվ է, որ մենշևիկներին հաջողվեց Ստոկհոլմի համագումարում մեծամասնություն ստանալ (ճիշտ է՝ չնչին) և կուսակցությանն իրենց տակտիկան թելադրել։ Յերբ որակարգի հարց եր դրած դինված ապստամբության խնդիրը, նրանք հակառակ բանաձև հանեցին՝ անելով այդ, իհարկե, քիչ թե շատ դիվանագիտական ձևով։ Դրանից հետո նրանք ընդունեցին Պլեխանով-Մասլովի ագրարային ծրագիրը, որը նույնպես ուղղված եր հեղափոխության դեմ և այն բովանդակությունն ուներ, որ հողը զեմստվոների, մունիցիպալ որգանների միջոցով պետք է անցներ ավելի ունևոր գյուղացիներին։ Վերջապես նրանք առաջին Պետական Դումային մասնակցելու և այնտեղ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիա կազմելու վորոշումն ընդունեցին։

## ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱՆ.

Բայլշևիկներին ինում եր ձևականորեն յենթարկվել, վորովհետև նրանք փոքրամասնություն եյին կազմում, իսկ բանվորները միություն եյին պահանջում։ Բայց իրոք միացուցիչ համագումարն ամենևին էլ չմիավորեց բայլշևիկներին և մենշևիկներին, և հետևանքը յեղավ այն, որ մենք հեռացանք Ստոկհոլմից յերկու առանձին ֆրակցիաներով։ Կենտրոնական Կոմիտեյի մեջ,—ինչպես ասում եյինք մենք,—մեր մի-քանի ընկերներին պատանդ վերցրին։ Բայց միաժամանակ հենց համագումարում բայլշևիկները կազմեցին իրենց ներքին և կուսակցականորեն անլեգալ Կենտրոնական Կոմիտեն։ Այդ շրջանը մեր կուսակցության պատմության մեջ շատ ծանր և տանջալից շրջան եր, յերբ մենք փոքրամասնություն եյինք կազմում թե Կենտրոնական և թե Պետերբուրգի Կոմիտեներում և ստիպված եյինք մեր սեպարատ հեղափոխական աշխատանքը թագցնել։ Հաճախ պատահում եր, որ յերկու քարտուղարներ՝ մեկը մենշևիկ, մյուսը բայլշևիկ, իրար հետևում եյին, մեկը մյուսին չվստահելով։ Դրությունն այնպես եր, կարծես թե յերկու կուսակցություններ գործում եյին մեկի շրջանակներում։

Այն ժամանակվա գրական դոկումենտներից, վորոնք պարզ կերպով արձանագրել են բայլշևիզմի և մենշևիզմի պայքարը, կարելի յե մատնանշել նախ և առաջ «Հաշվետվություն Պետերբուրգի բանվորներին Ստոկհոլմի համագումարի մասին» գիրքը, գրված ընկ. Լենինի ձեռքով, վորն այդ համագումարի պատգամավոր եր ընտրված Պետերբուրգի բանվորների կողմից,—իսկ հետո նաև «Կադետների հաղթանակը և բանվորական կուսակցության խնդիրները» գիրքը։

## ՀԵՏԱԴԱ ՎԵՃԵՐ «47, ԹԵ՞ 49 ԹՎԻ» ՄԱՍԻՆ.

Ստոկհոլմի համագումարից հետո, վորին հետևեց հեղափոխության անկման ու մենշևիկների տիրապետության շրջանը, «47, թե՞ 49 թվի» մասին յեղած վեճը, թե ով եր իրավացի՝ բայլշևիկնե՞ը, թե՞ մենշևիկները, շարունակվում եր։ Մենշևիկները քանիցս մեծ հանդիսավորությամբ մեզ հիշեցնում եյին.—Տեսնում եք, ինչպես դուք սխալվում եյիք. դուք կարծում եյիք, որ հեղափոխությունը չի վերջացել, և որ շուտով նոր ճակատամարտներ են լինելու, այնինչ, տեսեք, ինչքան ժամանակ անցավ նրանից հետո։ Յեվ իրոք, հետևյալ հեղափոխությունը բռնկվեց միայն 1917 թվին, այսինքն՝ 10 տարուց հետո։ Հետևում է արդյոք սրանից այն, որ բայլշևիկներն իրավացի չեյին։ Վոչ։ Բայլշևիկները ճիշտ ժամկետ չեյին էլ դնում, թեպետև յենթադրում եյին, պետք է ճշմարտությունն ասել, որ գործը շատ ավելի արագ առաջ կգնա, և չեյին տեսնում, որ մի ամբողջ տասնամյակ կանցնի մինչև բանվոր դասակարգի նոր հաղթանակը։ Բայց, ինչպես հայտնի յե, ժամկետներում բոլորն էլ սխալվում եյին, նույնիսկ Մարքսը, որ շատ անգամ է նախագուշակել համաշխարհային հեղափոխության մոտիկությունը։ Միանգամայն հասկանալի յե, որ յուրաքանչյուր անկեղծ հեղափոխական տրամադիր է ավելի շատ կարճ ժամկետներ նշանակելու, քան յերկար։ Համենայն դեպս, մեր պրոգնոզն ընդհանրապես ճիշտ եր. հեղափոխությունը չի վերջացել, նրա հիմնական պահանջներն օբյեկտիվորեն չեն իրագործված, պրոլետարիատը և գյուղացիությունը չեն բավարարված, նոր ճակատամարտներն անխուսափելի յե, վոչ մի պրուսսական ուղի մենք չենք ունենա, այլ կունենանք **ռուսական** ուղի՝ մեծ սոցիալական հեղաշրջումներով հղի։ Մեր այս գուշակություններն **արդարացան**։ Այս բոլորը պարզ յեղավ և այն էլ բավական շուտ։

Ստոկհոլմի հաժագումարը զուգադիպեց կադետական՝ լիբերալ բուրժուազիայի կուսակցության շշմեցնող հաղթանակի հետ՝ առաջին Պետական Դումայի ընտրությունների ժամանակ։ Նա Դումայում մեծ քանակությամբ տեղ ստացավ և դրա հետ միասին առաջին ռուսական պարլամենտի քաղաքական ղեկավարությունը՝ վորպես նրա նախագահ անցկացնելով տխրահռչակ Մուրոմցևին։ Կադետական կուսակցությունն առաջինն եր Պետական Դումայում, իսկ նրա ղեկավարները՝ Նաբոկովը և ուրիշները՝ գլխավոր պարլամենտական հռետորները։ Վերջին հաշվով, առաջին Դուման ռուսական լիբերալ-բուրժուական կուսակցության խոշոր հաղթանակն եր, վորն իրեն կոնստիտուցիոն-դեմոկրատիկ եր անվանում (կ.-դ., այստեղից և՝ «կադետ» բառը)։ Հրապարակի վրա յեր շատ լուրջ քաղաքական ֆակտոր, և բանվորական կուսակցության առաջ հարց հարուցվեց, թե ինչպիսի վերաբերմունք պետք է ունենալ դեպի այդ փաստը։

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ (ԿԱԴԵՏԱԿԱՆ) ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ.

Մենշևիկյան կենտրոնական Կոմիտեն, վոր այն ժամանակ կուսակցության ղեկավարն եր, հիացած եր կադետների հաղթանակով։ Նա այն կարծիքին եր, վոր Ռուսաստանում նոր դարաշրջան է սկսվում, և վոր կոնստիտուցիոն-դեմոկրատիկ կուսակցության հաղթանակը՝ հաստատելով նրա հայացքները՝ կոգնի յերկրին խաղաղությամբ լուծելու հողային և շատ այլ արմատական հարցերը։ Ցեվ ահա մենշևիկները հռչակեցին հետևյալ լոզունգը.—Կադետական կամ, ինչպես այն ժամանակ եյին արտահայտվում, պատասխանատու մինիստրություն, այսինքն այնպիսին, վորը պատասխանատու կլինի վոչ թե ցարի, այլ Պետական Դումայի առաջ։ Այս առհասարակ բոլոր բուրժուական պարլամենտների դասական ֆորմուլան է։ Նրանք միշտ այդպես են վարվում. մինիստրությունը կարծես թե պատասխանատու յե պարլամենտի առաջ, իսկ իրականության մեջ նա պատասխանատու յե ի խումբ բանկիրների առաջ։ Հենց վոր մենշևիկյան սոցիալ-դեմոկրատիան հրռչակեց հիշյալ լոզունգը, նրա կողմնակիցները բանվորական թաղերում պատասխանատու մինիստրության ոժանդակության կամպանիա սկսեցին։ Ինչպես տեսնում եք, մենշևիկները տրամաբանորեն եյին դատում և, իրենք իրենց հավատարիմ, այստեղ ել նրանք իրենց սիրելի բուրժուազիային ոժանդակելու հող եյին փնտռում։ Բայց այստեղ նրանք տանուլ տվին. այս լոզունգը տապալեց մենշևիկներին և ոգնեց մեզ Պետերբուրգում մեծամասնություն գրավելու։ Հիշում եմ, վոր Վիբորգի թաղը, վորտեղ այն ժամանակ շատ գործարաններ եյին աշխատում, ամբողջովին մենշևիկյան եր։ Մեզ՝ մեղավոր բայշևիկներիս բանվորներն այնտեղ հաղիվ-հաղ եյին լսում։ Բայց հենց վոր գործը



հասավ պատասխանատու կադետական մինիստրության լոզունգին, նրանց համար ել պարզ յեղավ, վոր մենշևիկյան տակտիկան հանգեց բուրժուական մինիստրության ոժանդակության. պատկերը փոխվեց։ Այդ բոպեյից սկսած մենշևիկներն սկսեցին Վիբորգի թաղում գործարան գործարանի յետևից կորցնել։ Շուտով Պետերբուրգի քաղաքային կոնֆերանսն ել մենշևիկյան լոզունգին հակառակ արտահայտվեց։ Այդ կոնֆերանսը տեղի ունեցավ Ֆինլանդիայում, վորն այն ժամանակ համեմատաբար ազատ եր ապրում։ Հիշում եմ, շաբաթ որը, լրտեսների մի ամբողջ բանդայի հայացքների տարափի տակ մենք գնացք նստեցինք ֆինլանդական կայարանում և մեկնեցինք Տերիոկի։ Ամբողջ կիրակի որն այնտեղ կոնֆերանս եր տեղի ունենում, և լինում եյին բոպեներ, յերբ գործը քիչ եր մնում վոր մենշևիկների և բայշևիկների միջև տուր ու դմփոցի հասներ։ Վերջապես, չնայած մենշևիկյան կենտրոնական կոմիտեյի ճնշմանը, մեզ հաջողվեց առաջին անգամ Պետերբուրգում մեծամասնություն ստանալ, իսկ հետո նաև մի շարք այլ քաղաքներում։ Այս փաստն արդեն կիսով չափ համառուսական մասշտաբով հաղթանակ եր, վորովհետև Պետերբուրգը յերկրի քաղաքական կենտրոնն եր։ Մենշևիկյան Կենտրոնական Կոմիտեն բայշևիկյան Պետերբուրգյան Կոմիտեյի առաջ անզոր եր, և բուրժուական լրագրերն այն ժամանակ սիրում եյին կատակել՝ ասելով, վոր մանր բայշևիկյան Պետերբուրգյան Կոմիտեն հաղթեց մեծ մենշևիկյան Կենտրոնական Կոմիտեյին։

## ԱՌԱՋԻՆ ԴՈՒՄԱՅԻ ՑՐՈՒՄԸ.

Առաջին Պետական Դուման՝ չնայած նրան, վոր նրա մեջ քաղաքական ղեկավարությունը կադետներին եր պատկանում, պետք է արժանին հատուցեր հեղափոխական, մանավանդ գյուղական շարժմանը, վորը գնալով աճում եր, և ստիպված եր, թեև բավական անվճռողաբար, հողային հարցը դնել։ Այս հողի վրա նրա և ցարական կառավարության միջև կոնֆլիկտ տեղի ունեցավ։ Առաջին Դուման ցրեցին։ Կադետական կուսակցությունը նույնպես Ֆինլանդիա գնաց անլեգալ կոնֆերանս գումարելու և այնտեղ հրատարակեց տխրահռչակ վիբորգյան կոչը, վորը հետո անվանում եյին «վիբորգյան կարկանդակ»։ Այս դոկումենտը բնակչության կոչ եր անում հարկերը չտալ և ըստ եյության այն հեղափոխական ժեստի կրկնությունն եր, վորը թույլ տվին իրենց լիբերալները 1848 թվի հեղափոխության ժամանակ, յերբ նրանք գրպաններում բռունցք եյին ցույց տալիս այն ժամանակվա միապետությանը՝ չհամարձակվելով լրջորեն ոժանդակել հեղափոխական պայքարին և առաջուց գիտենալով, վոր հարկեր չվճարելու նրանց կոչին վոչ վոք չի պատասխանի։ Ցարական միապետությունը լուրջ բա-

նի տեղ չընդունեց, իհարկե, «վիբորգյան կարկանդակը» և թխողներին յերեք ամսվա բանտարկության դատապարտեց—շատ դատարկ պատիժ։

Առաջին Պետական Դումայի ցրումը փոքրիկ ապահարզան եր ցարիզմի և լիբերալ բուրժուազիայի միջև։ Բայց նա շուտով մոռացվեց, և յերկրորդ Դումայում յերկու կողմերի միջև ընդհանուր առմամբ բավականի բարեկամական հարաբերություններ սահմանվեցին, իսկ լիբերալ բուրժուազիայի մի մասն սկսեց ուղղակի ջատագովել Ստալիպինին։

## 1907 ԹՎԻ ԼՈՆԴՈՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.

Այս դեպքերի ֆոնի վրա 1907 թվի գարնանը տեղի ունեցավ մեր կուսակցության Լոնդոնի կամ հինգերորդ համագումարը։ Ցերկար վիճում եյին, թե ինչպես այն անվանել։ Մենք՝ բայլշևիկներս հաշիվը տանում եյինք յերրորդ բայլշևիկյան համագումարից, հաշվելով Ստոկհոլմինը՝ չորրորդ, իսկ Լոնդոնինը՝ հինգերորդ։ Սակայն մենշևիկները մեր յերրորդ համագումարը չեյին ճանաչում և չցանկանալով այդ համագումարը հաշվել հինգերորդ, ուզում եյին անվանել այն պարզապես Լոնդոնի համագումար։ Այս համագումարում կուսակցության մեջ մտան յերեք նոր գնդեր՝ լեհական սոցիալ-դեմոկրատիան, լատիշականը և Բունդը, վոր, ինչպես արդեն ասացի, 1903 թվին դուրս յեկավ կուսակցությունից։ Այս յերեք կազմակերպությունները (առաջին յերկուսը՝ ճնշող մեծամասնությամբ, իսկ Բունդը՝ մեծ մասով) այն ժամանակ մեր կողմն եյին։ Ցավ ահա Լոնդոնում, չնայած նրան, վոր հեղափոխությունը աստիճանաբար նվազում եր, մենք, շնորհիվ այն բանի, վոր մեր կողմն անցան այս յերեք նոր գնդերը, մեր տեսակետի վրա կանգնած, մեծամասնություն ստացանք, ճիշտ և, համեմատաբար թույլ, հաճախ 2-3 ձայնով, սակայն, այնուամենայնիվ, մեծամասնություն։ Մենշևիկներն ատամներով ամուր բռնել եյին իրենց կուսակցական իշխանությունից, և մենք ստիպված եյինք վերին աստիճանի անբարեկիրթ միջոցներով, զոռով իշխանությունը նրանցից խլել՝ ձգտելով կուսակցությունն ազատագրել նրանց ձեռքերից։

Լոնդոնի համագումարում վեճ բացվեց պարլամենտական տակտիկայի մասին, վորը տեղի յեր ունենում մենշևիկներին ներկայացնող Ծերեթելու (նա յերկրորդ Դումայի անդամ եր) և Ալեքսինսկու միջև, վորն այն ժամանակ բայլշևիկ եր և մեր կուսակցության կողմից Պետերբուրգի բանվորներից Դումայի անդամ եր ընտրված։ (Նա մինչև այդ չի ուզում մոռանալ մինչև որս եկ, յերբ ինքն արդեն մոնարխիստ և դարձել։ Ներկայումս գտնվելով Վրանգելի մոտ, նա դեռևս շարունակում եր ստորագրել՝ «Պետական Դումայի պատգամավոր Պետերբուրգի բանվորների կողմից)։ Հետո համագումարում սուր տեսակետ



պայքար բռնկվեց լիբերալ բուրժուազիայի վերաբերմունքի մասին դեպի հեղափոխությունը և հեղափոխության բնույթի մասին ընդհանրապես։ Այս լայն չափեր ընդունած դիսկուսսիային մասնակցում եյին լավագույն թեորետիկները և յերկու կողմերի ամենաականավոր հռետորները։ Մենշևիկների կողմից հանդես եր գալիս գլխավորապես Պլեխանովը, իսկ բայլշևիկներից ընկ. Լենինը և հանգուցյալ Ռոզա Լյուքսեմբուրգը, վորը վորպես լեհական բանվորների ներկայացուցիչ մեր կուսակցության մեջ մտավ և մասնակցում եր այդ համագումարին։ Ռոզա Լյուքսեմբուրգի և ընկ. Լենինի արտասանած ճառերը ռուսական հեղափոխության բնույթի և դեպի լիբերալ բուրժուազիան ունենալիք վերաբերմունքի մասին մինչև որս ել քաղաքական անալիզի որինակներ և շեղյովրներ են հանդիսանում։ Ցավ այս իմաստով Լոնդոնի համագումարում յեղած վեճն ամենևին չի հնացել. չե՞ վոր այնտեղ հիմնական հարց եյին վորոշում. պե՞տք է արդյոք Ռուսաստանի բանվոր դասակարգը լոկ ոժանդակիչ ուժ ծառայի բուրժուազիայի համար, թե՞ գալիք հեղափոխության մեջ ինքնուրույն դեր խաղա։

## ԼՈՆԴՈՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ.

Լոնդոնի համագումարում ընտրված Կենտրոնական Կոմիտեյում մեր մեծամասնությունը շատ անկայուն եր և աննշան։ Մարտովը իր գրքում միքիչ բան հիշեցրեց ինձ։ Լոնդոնի համագումարում Կենտրոնական Կոմիտեն հետևյալ կազմն ուներ. մենշևիկներից՝ Մարտինով (հիմա մեր կողմն անցավ), Ն. Ժորդանիա (Վրաստանի մենշևիկյան հանրապետության նախագահն եր, այժմ Պարիզումն է), Գոլդման-Գորև և Նոյ Ռամիշվիլի (առաջին Պետական Դումայի անդամ, մենշևիկ), լեհերից՝ Տիշկո (նրան ապստամբության ժամանակ գնդակահարեցին՝ Կարլ Լիբկնեխտից քիչ հետո) և կոմմունիստ Վարսկի (այժմ մեր կուսակցության մեջն է), Բունդից՝ Աբրամովիչ և Լիբեր. բայլշևիկներից՝ ընկ. Լենինը, Զինովյևը (յես այն ժամանակ առաջին անդամ ընտրվեցի Կենտրոնական Կոմիտեյի մեջ), Գոյլդեմբերգը( վորը մենշևիկ ել դարձավ, հետո նորից վերադարձավ մեզ մոտ և մեռավ վորպես բայլշևիկ), Ռաժկովը (վորին ձեզանից շատերը յերևի ճանաչում են. այն ժամանակ նա մեր լավագույն բարեկամներից մեկն եր և բայլշևիզմի ներկայացուցիչն եր) և վերջապես հանգուցյալ Դուբրովսկին. լատիշներից՝ Ռոզինը (բայլշևիկ, այժմ վախճանված) և Գերմանը։ Այս վերջինս վոչ այլ վոք է, յեթե վոչ մեր ներկայիս զինվորական ասպարիզում աշխատող ընկ. Դանիշևսկին։ Նրա մասին հիշատակում եմ այն պատճառով, վոր նա այն ժամանակ հաշտվողական եր. միքանի կարևոր դեպքերում, ինչպես այն ժամանակ կատակում եյին, «գերմանիզացիա»

յեր ստացվում կենտրոնական Կոմիտեյում, վորովհետև Գերմանը հերթով քվեարկում եր մերթ բայլշևիկներին, մերթ մենշևիկներին։ Կարելի յե պատկերացնել, թե ինչպիսի կայուն քաղաքականություն կարող եր ստացվել նման կենակցության հետևանքով։ Բայլշևիկներն այդ հասկանում եյին և շտապեցին նույն Լոնդոնի համագումարում իրենց անլեգալ բայլշևիկյան կենտրոնն ընտրել։ Մենք ասում եյինք.—կենտրոնական Կոմիտեյում մենք կաշխատենք և կտառապենք ըստ պաշտոնի, բայց իսկական աշխատանք մենք կտանենք բայլշևիկյան կենտրոնում, վորովհետև պարզ եր, վոր բռնի ամուսնությունը մենշևիկների հետ կարճատև կլինի։ Այսպիսով, յեզրափակելով Լոնդոնի համագումարի հետևանքները, կարելի յեր այսպես ասել.—Նա տեսական հաղթանակը տվեց բայլշևիկներին և մենշևիկներից կուսակցական իշխանությունը խլեց. սակայն կենտրոնական Կոմիտեն մերը չեր, դրությունը վերին աստիճանի անկայուն եր, առանձին ֆրակցիաների սիստեմը շարունակվում եր, և բայլշևիկներն ստիպված եյին առանձին կազմակերպվել։

Հաղիվ եյինք մենք վերադարձել Լոնդոնի համագումարից, վոր յերկրորդ Պետական Դուման ցրեցին։ Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան մեղադրվելով դավադրության մեջ՝ ձերբակալվեց և նրա դեմ հայտնի գործ սկսեցին, վորը վերջացավ նրա մի շարք պատգամավորների աքսորով։ Մենք անլեգալ շրջան թեակոխեցինք։ Մեր լրագիրը փակեցին։ Բուրժուազիան թեպետև բողոքում եր յերկրորդ Դումայի ցրման առթիվ, բայց արդեն մտադիր չեր Վիբորգ գնալու նման բաներով զբաղվելու։ Նա Պետերբուրգում հանգիստ նստած եր և յերբեմն միայն խղճի մաքրության համար ոպոզիցիոն ճառեր եր արտասանում ընդդեմ Ստալիպինի և կամ, ինչպես, որինակ, Ռոդիչևը, սուր խոսքեր եր նետում ստալիպինյան «փողկապների», այսինքն՝ կախաղանների մասին։ Սակայն այս միայն առյերևույթ եր. իրոք ամբողջ բուրժուազիան ստալիպինյան սահմանադրության կողմակից եր։

## ՅԵՐԿՐՈՐԴ ԴՈՒՄԱՆ.

Յերկրորդ Պետական Դուման ցրելուց հետո ցարական միապետությունը յերրորդի հարցը դրեց՝ «թեթև» ուղղումներ մտցնելով ընտրական որենքի մեջ, այն ել չափազանց հետաքրքիր ձևով։ Գլխավոր ուղղումն այն եր, վոր գյուղացիներն ընտրական իրավունքներից զրկվում եյին։ (Բանվորները զրկվելու վոչինչ չունեյին, վորովհետև առանց այն ել նրանք գրեթե վոչ մի ընտրական իրավունք չունեյին)։ Այս միջոցը միանգամայն հասկանալի յեր։ Մինչև յերկրորդ Դուման ինքնակալությունը դեռևս վորոշ հույսեր ուներ գեղջուկից։ Նրան հավատում եր նույնիսկ ցարական միապետության այնպիսի խելացի ներկայացուցիչը, ինչպիսին եր Պոբեդոնոսցևը։ Միապետականները կար-



ծում եյին, թե պետք է հենվել գյուղացու վրա. նա չի դավաճանի, նրա հետ կարելի յե լեզու գտնել. գյուղացին հավատում է հայր-ցարին և նրա դեմ չի գնա։ Սակայն յերկրորդ Դուման ցույց տվեց ցարիզմին, վոր գյուղացին ել կորցնում է իր հավատը դեպի ցարը։ Յեվ ահա ընտրական որենքի նկատմամբ կատարված գլխավոր վերահատությունն այն եր, վոր գյուղացիներից խլվեց ընտրական իրավունքը։ Յեվ այդ բավական հմուտ կերպով կատարվեց։ Գյուղացի-ընտրողները պետք է կալվածատերերի մաղի միջով անցնեյին, վորոնք մեծամասնություն ունեյին և ընտրում եյին այն գյուղացուն, վորը նրանց ավելի յեր դուր գալիս։ Այսպիսով, յերկրորդ և յերրորդ Դումաների ընթացքում միապետության գլխավոր եվոլյուցիան այն եր, վոր նա կորցրեց դեպի գյուղացին ունեցած իր հավատը և, իհարկե, այն պատճառով, վոր գյուղացին ինքը կորցրեց իր հավատը դեպի նա։

Կուսակցության առաջ հարց հարուցվեց. պետք է արդյոք մասնակցել յերրորդ Պետական Դումային, վորը, պարզ է, վոր սև հարյուրակային է լինելու։ Այստեղ բայլշևիկների մեջ սկսվեցին լուրջ տարաձայնություններ։ Նրանց մեծ մասն արտահայտվեց մասնակցելուն դեմ և հոգուտ Պետական Դումայի բոյկոտի՝ հուսալով, վոր նույնը կհաջողվի անել, ինչ վոր 1905 թվին բուլիգինյան Դումայի նկատմամբ արվեց։ Բայլշևիկյան ֆրակցիայում ուժեղ պայքար սկսվեց։ Ընկ. Լենինը շատ քիչ թվով կողմակիցների հետ պաշտպանում եր յերրորդ Դումային մասնակցելու տեսակետը, սակայն բայլշևիկների գլխավոր մասը դրան հակառակ եր։ Հանդես յեկան բրոշյուրներ, վորոնք ապացուցում եյին, վոր յեթե Լենինը ցանկանում է, վոր բանվորները մասնակցեն այնպիսի սև հարյուրակային Դումային, ինչպիսին յերրորդը կլինի, ուրեմն նա աջացել է։ Սրան նա պատասխանում եր.—Յերրորդ Դուման փարախ է. սակայն յեթե բանվոր դասակարգի շահը պահանջում է, վոր մենք վորոշ ժամանակ փարախում նստենք, մենք այդ կանենք։ Ընկ. Լենինի պատճառաբանությունը հետևյալն եր. 1905 թվին ուժերի հարաբերությունն այնպես եր, վոր այսոր կամ վաղը հեղափոխությունը կբռնկվի, և մենք կհաղթենք թե ցարական միապետությանը և թե բուլիգինյան Դումային. 1907 թվին այսպիսի հարաբերություն գոյություն չուներ, և պարզ եր, վոր ցարական միապետությունը ևս միքանի տարվա ապահով կյանք ուներ, վոր այժմ նրան մեջտեղից վերացնել մենք չենք կարող. յեթե մենք բոյկոտի յենթարկենք Դուման, նա, այնուամենայնիվ, կգումարվի, և մենք պետք է միքանի տարվա ծանր ռեակցիայի պատրաստվենք. սև հարյուրակային Դուման փարախ կլինի, բայց այնտեղ ել մենք կարող ենք բանվոր դասակարգին վորոշ ոգուտ բերել Դումայի ամբիոնն ագիտացիայի գենք դարձնելով։

## ԼԵԳԱԼ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ.

Վեճ ծագեց լեգալ հնարավորությունների ոգտագործման մասին։ Ընդհանուր առմամբ կուսակցությունն անլեգալ եր. Նրա պարլամենտական պատգամավորներն աքսորվեցին. Ցնում եյին առանձին լեգալ ոջախներ՝ միքանի արհմիություններ, բանվորական ակումբներ և յերբորդ Պետական Դուման, ուր բանվորները միքանի հոգի միայն կարող եյին անցկացնել և այնտեղ՝ սև-հարյուրակային պատգամավորների գլխի վրայով ժողովրդին ճշմարտություն ասել։ Այս վիճաբանությունները վորոշ ժամանակով բայլշևիկներին բավականի կրիտիկական դրության մեջ դրին։ Յեթե յերկար ժամանակով հաղթանակեր հակալենինյան հոսանքը, մեր կուսակցությունը յերևի մի աղանդ կդառնար. բանն այն է, վոր մեր աշխատանքն արհմիություններում այնքան էլ հաջող չեր հենց այն պատճառով, վոր մենք հարմար բոպեն բաց թողինք։ Կար ժամանակ, վոր մեղանում հաղթանակեցին մարդիկ, վորոնք ասում եյին.—Ինչու՞ գնանք արհմիությունները. մեր գործը կուսակցությունն է։ Մենք գաղտնի աշխատանք կսկսենք, իսկ ինչ վերաբերում է արհմիություններին, թող այնտեղ մենշևիկները նստեն։ Այս խոշոր սխալ եր, վոր մեզ շատ թանգ նստեց։ Արհմիությունները մենք խլեցինք մենշևիկներից միայն 1917 թվի հոկտեմբերից հետո, իսկ մինչ այդ նրանք այնտեղ մեծամասնություն եյին կազմում։ Ընկ. Լենինի հիմնական միտքն այն եր, վոր մենք պետք է բանվոր դասակարգի հետ մնանք, մասսայական կուսակցություն լինենք, չպետք է թույլ տանք, վոր մեզ գաղտնարան քշեն, չպետք է նեղ խմբակ դառնանք։ Յեթե բանվորներն արհմիություններումն են, մենք էլ պետք է այնտեղ լինենք. յեթե կարելի յե ցարական Դուման գոնե մի մարդ ուղարկել, կուղարկենք, թող նա բանվորներին ճշմարտությունն ասի, իսկ մենք նրա ճառերը թռուցիկներով կցրենք. յեթե մի վորևե բան կարելի յե անել բանվորների համար, մենք այնտեղ էլ կլինենք։ Մենք պետք է ամեն մի լեգալ հնարավորություն ոգտագործենք, վորպեսզի բանվորական մասսաներից չկտրվենք, մենք պետք է նրանց կյանքով ապրենք և վոչ թե զուտ պրոպագանդիստներ դառնանք, վորոնք միայն մի բան են ասում, թե յերբևիցե հեղափոխություն կլինի։ Այդպիսի մարդկանց,—ասում եր ընկ. Լենինը,—բանվորները չեն սիրի։ Նրանք պահանջում են, վորպեսզի կուսակցությունը նրանց հետ կապված լինի, վորպեսզի նա նրանց հետ լինի պայքարի բոլոր դժվար բոպեներում և բոլոր առորյա հարցերին պատասխաններ տա։

Միայն շնորհիվ ընկ. Լենինի հսկայական հեղինակության՝ չնայած, վոր նա փոքրամասնություն եր կազմում, բայլշևիկների ֆրակցիան վորոշեց մասնակցել յերրորդ Պետական Դումային, և նրան հաջողվեց անցկացնել միքանի պատգամավորներ, վորոնց թվում Պետերբուրգից Պալետային, վորը հետո խոշոր դեր խաղաց «Պրավդայի» և «Զվեզդայի» («Աստղ») կազմակերպության գործում։

Բայլշևիկյան ֆրակցիայի մեջ տեղի ունեցած այս վեճը պետք է հիշել, վորովհետև դեռևս ստիպված կլինենք նրան վերադառնալ, յերբ յես կխոսեմ բայլշևիզմի մեջ առաջացած այն հոսանքի մասին, վորը հետագայում ստացավ «ատղավիզմ» անունը։

## ԼԻԿՎԻԴԱՑՈՐՈՒԹՅՈՒՆ.

Այն ժամանակ, յերբ բայլշևիկների մեջ սկսեցին տարաձայնություններ բոյկոտիզմ, թե հակաբոյկոտիզմ հարցի շուրջը, այսինքն՝ լեգալ հնարավորություններն ոգտագործելու կամ չոգտագործելու մասին, մենշևիկների մեջ տարաձայնություններ սկսվեցին մի այլ հարցի շուրջը։ Նրանց մոտ սկսվեց ձևակերպվել այն հոսանքը, վոր «լիկվիդատորություն» անունն ստացավ։ Այս խոսքի ծագումը հետևյալն է։

Մենշևիկյան մի շարք պարագլուխներ յեկան այն յեզրակացության, թե անհրաժեշտ է, ինչպես նրանք եյին ասում, լիկվիդացիայի յենթարկել գաղտնի աշխատանքը, վերջ տալ անլեգալ կազմակերպությանը, հարմարվել որինական ցարական ռեժիմին, չափավորել կուսակցական ծրագիրը, այն ընդունելի դարձնել ցարական կամ, ինչպես այն ժամանակ եյին ասում, հունիս-յերեքյան* միապետության համար, ընդմիշտ ընդունել, վոր հեղափոխությունը վերջացած է, և բանվորների տնտեսական պահանջների պայքարի պարզ ուղիով ընթանալ։ Մենշևիկների մեջ այս լիկվիդատորական հոսանքի ամենապայծառ ներկայացուցիչը վոչ այլ վոք եր, յեթե վոչ մեր այժմյան ղինակիցը և սիրելի ընկերը՝ Լարինը։ Նա այն ժամանակ ծայրահեղ մենշևիկ-լիկվիդատոր եր, մի բան, վոր ներկայումս չի խանգարում նրան բայլշևիզմի «ձախ» թևի ներկայացուցչի գիրք ընդունել։ Ինչ կերպարանափոխություններ ասես, վոր չեն լինում։ Ընկ. Լարինն այն ժամանակ լեգալ մի ամսաթերթ հիմնեց «Վաղրաժդենիե» («Վերածնություն») անունով, վորի գոյությունը Ստալիպինը գիտակցորեն թույլ եր տալիս։ Խմբակի մեջ եյին մտնում նույնպես Յեժով, Պատրեսով, Լեիցկիյ և ուրիշ մենշևիկներ։ Այս մենշևիկ-լիկվիդատորների խմբին ընկ. Լենինը «Ստալիպինյան բանվորական կուսակցություն» անվանեց։ Յեվ այս անունը նրանք կրում եյին ինչպես Կայենի կնիք։ Հետո նրանք սկսեցին հրատարակել յերկրորդ ամսագիրը՝ գիտականը, «Նաշա զարյա» («Մեր արշալույսը»),

* 1907 թ. հունիսի 3-ին պետական հեղաշրջում կատարվեց.—հրատարակվեց յեվ կիրարկության տրվեց Պետական Դումայի ընտրության նոր որենք։

վորին մասնակցում էին նույնպես Մարտովը, Դանը և ընկ.։ Նրանք ծաղրում էին մեր անլեգալ կազմակերպությունը։ Ինքը Լարինը գրում եր. «Ամեն մի քաղաքում դժվար չէ խակ յերիտասարդներից մի յերկու տասնյակ խմբակներ թխել, սակայն ինչ նշանակություն կարող է ունենալ այդ։ Իսկական մարդիկ թագստոցներ չեն մտնի»։ Մեր ընդհանուր Կենտրոնական Կոմիտեն նրանք պայթեցրին, սակայն մենք այնքան էլ հիմար չենք, վոր դատարկ բաներով զբաղվենք. մենք չենք գնա ձեր Կենտրոնական Կոմիտեի նիստին, պետք է ցրել բոլոր անլեգալ կազմակերպությունները, վորոնց դարն արդեն անցել է, ժամանակ է յեվրոպական ձևով սոցիալ-դեմոկրատական կուսակցություն կառուցելու։ Արտասահմանում գտնվող Մարտովն ու Դանը փորձում էին չափավոր դիրք բռնել՝ չցանկանալով կորցնել այն դիրքը, վոր նրանք ունեին մեր կուսակցության մեջ։ Յեվ ահա նրանք, ինչպես ընկ. Լենինն եր ասում, վորոշ աշխատանքի բաժանում սահմանեցին. Պատրեսովը, Յեժովը, Լևիցկին, Լարինը և նրա զինակիցները հիմնավորվեցին Պետերբուրգում և այնտեղից էին կուսակցությունը քայքայում, իսկ Մարտովը և Դանը նստած էին անլեգալ ապարատի մեջ, վորպեսզի ներսից սաբոտաժ՝ յենթարկեն նրան։

## ԼԻԿՎԻԴԱՏՈՐՆԵՐԸ ՅԵՎ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ.

Լիկվիդատորական շարժումն ամբողջ Ռուսաստանում լիբերալ բուրժուազիայի ուժեղ ոժանդակությունը գտավ. «Բեչ» («Խոսք») լրագիրն ուրախությամբ իր սյուները հատկացնում եր մենշևիկներին. նրանց արհմիություններին աջակցություն եր ցույց տրվում, այն ինչ մեր արհմիությունները ձերբակալվում էին. մենշևիկները լեգալ աշխատանք էին կատարում ակումբներում և սկսեցին արհեստակցական լրագրերի մեջ խցկվել։ Լիբերալները և միապետականները բացարձակ կերպով լիկվիդատորների կողմն էին անցնում, հուսալով նրանց միջոցով կուսակցությունը քայքայել և բանվոր դասակարգի հեղափոխական ավանգարդը դեմորալիզացիայի յենթարկել։

1908 թվից սկսված այս շարժումը միանգամայն պարզ և դառնում, և «լիկվիդատորություն» տերմինը քաղաքացիության իրավունք է ստանում։ Մի շարք հին բանվոր մենշևիկներ անցնում են ձախ «Նաշա զարիայի» խմբակի կողմը, վորի գլուխ Պատրեսովն եր կանգնած, և լիկվիդատորներ են դառնում։ Ամեն քայլափոխում բացարձակ ռենեգատություն է տեղի ունենում։ Կուսակցության հին անցյալը ցեխն են կոխում, անլեգալ շրջանն անհեթեթություն, խակություն, անգիտակցություն են հայտարարում և ստալիպինյան ռեժիմին հարմարվել են քարոզում։ Այսպիսով, ստալիպինյան լիբերալ կուսակցության կողքին «Ստալի-



պինյան բանվորական կուսակցություն» է ստեղծվում։ Վորպես իրենց գլխավոր լոզունգ լիկվիդատորներն առաջադրում են կոալիցիաների ազատությունը՝ գործն այնպես ներկայացնելով, թե իբր թե բայլշևիկներն այդ ազատության հակառակ են։ Այս, իհարկե, անհեթեթություն եր։ Բայլշևիկները միությունների ազատության կողմնակից էին, բայց նրանք ասում էին, վոր ցարական միապետության որոք բանվոր դասակարգը վոչ մի ազատություն չի ստանա։ Վերջին հաշվով, բայլշևիկների և մենշևիկների անջատումը կատարյալ եր. առաջիններն առաջվա նման կուսակցության անկյունաքարն էին համարում հեղափոխությունը, իսկ յերկրորդները միապետական հասարակակարգում բարենորոգումներ էին առաջարկում։ Մենշևիկները պարզապես ռեֆորմիստներ դարձան, իսկ բայլշևիկները հեղափոխականներ էին մնում։ Մենք նրանց և բանվորներին ասում էինք.—Ով միությունների ազատություն է ուզում, պետք է տապալի ցարին, վորն ինքը յերբեք այդ ազատությունը չի տա, իսկ մենշևիկները պատասխանում էին.—Ով միությունների ազատություն է ուզում, պետք է անլեգալ կուսակցությունը տապալի, ներկայիս ռեժիմին հարմարվի և «յեվրոպական» սոցիալ-դեմոկրատ դառնա։

## ՄԵՆՇԵՎԻԿ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐ.

Բացի այս յերկու հիմնական հոսանքներից, վորոնցից մեկի վոդին եր Մարտովը, վորը կուսակցության ներսումն եր նստած և այնտեղից եր քայքայում, և մյուսի ղեկավարն եր Պատրեսովը, վորն իրեն բացարձակ կերպով լիկվիդատոր եր անվանում, մենշևիկները դեռ յերրորդ հոսանքն էլ ունեին, վորի պարագլուխը Պլեխանովն եր։ Նա մի անգամ էլ ծերության որերին իրեն ցույց տվեց և նորից մեր հեղափոխական տակտիկայի կողմն անցավ՝ մենշևիկ-կուսակցականների հատուկ խումբ կազմելով։ Նա մասնակցում եր «Սոցիալ-դեմոկրատին», վոր խմբագրում էինք ընկ. Լենինն ու յես, մենշևիկներից՝ Մարտովը և Դանը։ Վորպես մենշևիկ-կուսակցական՝ Պլեխանովն իպաշտպանություն անլեգալ կուսակցության մի շարք փայլուն հոդվածներով հանդես յեկավ։ Մենշևիկներն սկսեցին նրան ծաղրել՝ ասելով, վոր նա ծերության հասակում «գաղտնարանի յերգիչ» դարձավ։ Սակայն Պլեխանովը չեր շփոթվում, վորովհետև նա շատ մենշևիկներից տարբերվում եր և հաճախ, այնուամենայնիվ, հեղափոխական եր։ Ինձ համար, որինակ, յերբ նորություն եր Մարտովի իր «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի պատմությունը» գրքում պատմածն այն մասին, թե 1905 թվի սկզբին, ցարիզմի դեմ պայքարն առանձնապես ուժեղացավ, Պլեխանովը հանդես յեկավ վորպես տերրորի պաշտպան։ Մարտովը գրում է.

«Եղավ այնպիսի մոմենտ, երբ նույնիսկ Պլեխանովը՝ տերրորիստական մեթոդների հնագույն հակառակորդը, Կուսակցության Խորհրդում սոցիալ-հեղափոխականների հետ տերրորիստական ակտերի նկատմամբ համաձայնության հարցը դրեց, որոնք միանգամայն նպատակահարմար էին տվյալ քաղաքական պայմաններում։ Համաձայնությունը տապալվեց միայն Ակսելրոդի և Մարտովի ուլտիմատումի շնորհիվ, որոնք հայտարարեցին, որ այդ դեպքում նրանք Խորհրդի կազմից դուրս կգան և կուսակցությանը կբողոքեն։ Կուսակցության բայշևիկյան ելեմենտների մեջ ել աճեց համակրանք դեպի տերրորը, բայց ընդհանուր առմամբ կուսակցությունը մնաց տերրորի բացասման նախկին դիրքի վրա»։

Այս մոմենտը չափազանց հետաքրքիր է Պլեխանովի կենսագրության համար, որ համենայն դեպս ապացուցում է, որ նա շարլոն մարդ չէր։ Նա տերրորի հակառակ էր դուրս գալիս, երբ տեսնում էր, որ նա քայքայում է մասսայական կուսակցությունը և մասսայական պայքարը, սակայն զգալով, որ հասել է վճռական հարվածի բոպեն, նա տերրորի հարցը բարձրացրեց։

## ՊԼԵԽԱՆՈՎԸ «ԳԱՂՏՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԳԻՉ».

Կուսակցության այդ ծանր որերին (1907,1908 և 1909 թ.) Պլեխանովը նորից նրան անգնահատելի ծառայություն ցույց տվեց՝ անցնելով մեր կողմը և «գաղտնի աշխատանքի—գաղտնարանի յերգիչ» դառնալով։ Նա մեզ աջակցեց մեր անլեգալ, իսկ հետագայում նաև լեգալ գրական որգանում՝ ամբացնելով Դումայի ֆրակցիայի բայշևիկյան մասի դիրքերը և յեռանդուն կերպով ոգնելով մեզ մեր պայքարի գործում նրանց դեմ, ովքեր թաղում էին կուսակցությունը։ Այդ շատ կարևոր էր այն ժամանակ տիրող տրամադրության պայմաններում, որն այժմ դժվար է անգամ պատկերացնել։ Մեր կրած պարտությունից հետո, երբ մեր ուժի նշանավոր մասն ստիպված էր արտասահման հեռանալ, երբ ամենուրեք դեմորալիզացիա յեր զգացվում, տեղերում և վոչմի կազմակերպություն չկար, որի մեջ պրովոկատոր չխցկվեր. բոլորն իրար հետևում էին, մեկը մյուսից զգուշանում էր, վոչ վոք վոչ վոքի չէր հավատում։ Գրականության մեջ պոռնոգրաֆիան էր ծաղկում, լույս տեսավ «Սանին»-ը։ Այս բոլորը մուտք գործեց նաև հեղափոխական խմբակները։ Պետական Դուման միանգամայն հակահեղափոխական դարձավ։ Կուսակցությունը մանր խմբերի բաժանվեց։ Միաժամանակ մենշևիկների լիկվիդատորական մասը բացարձակ կերպով կուսակցության հոգեհանգիստն էր կատարում, և թաղման զանգը հնչում էր Պետերբուրգում և Մասկվայում։ Յեվ ահա այդ ժամանակ



խոսեց մենշևիկների համար հեղինակավոր Պլեխանովը, վորը մենշևիկ մնալով, հարվածում էր նրանց լիկվիդատորության համար։ Յեվ նրա ձայնը գաղտնի գործունեության գաղափարի պաշտպան բայշևիկների համար մեծ ոժանդակություն էր։

Պետք է ասել, վոր ընդհանրապես կուսակցության պարագլուխները ճանաչվում են նրա ծանր որերին։ Յեվ ընկ. Լենինի հսկայական հասակը, վորպես ղեկավարի, ամենից պարզ ներկայացավ այդ իսկ ծանր որերին. վոչ այնքան 1905 թվին, յերբ ամեն ինչ առաջադիմում էր, յերբ հեղափոխական ալիքը բարձրանում էր, յերբ կուսակցության ղեկավարությունը հեշտ էր, վորքան 1907-1909 թվերին, անհուսալի քայքայման, դեմորալիզացիայի և անկման որերին, յերբ վոչ վոք չէր հավատում վոչ հեղափոխությանը և վոչ ել կուսակցությանը, և յերբ ընկ. Լենինն ստիպված էր միայնակ, գրեթե միայնակ, խոսքով, գրչով և կազմակերպչական աշխատանքով կուսակցության գաղափարը պաշտպանել։ Այդ ժամանակ բայշևիկների մեջ տարաձայնություններ սկսվեցին բոյկոտի և վոչ-բոյկոտի, լեգալ հնարավորություններն ոգտագործելու և չոգտագործելու հարցի շուրջը։ Մենշևիկների մեջ ել տեղի ունեցավ անջատում յերկու հիմնական բանակի՝ լիկվիդատորների և կուսակցականների՝ Պատրեսովն ու Լարինը մի կողմում, Պլեխանովը՝ մյուս կողմում, իսկ մեջտեղում Մարտովը, վորն ավելի մոտ էր կանգնած լիկվիդատորներին։

1909 թվին բայշևիկների մեջ յեղած պայքարը բավականի սուր բնույթ ընդունեց։ Յերրորդ Դումայի սկզբին՝ 1908 թվին, մենք միայն վիճում էինք, թե պետք է արդյոք նրան մասնակցել, թե՞ վոչ։ Իսկ այժմ արդեն բոյկոտական հոսանքը կազմակերպվեց վորպես ամբողջ ֆրակցիա և յերևան յեկավ այսպես կոչված «ատզավիզմը»։ Բայշևիկյան ֆրակցիան պառակտվեց հետևյալ 3 հարցերի պատճառով՝ «ատզավիզմ», «ուլտիմատիզմ» և «աստվածարարություն»։ Առաջին հայացքից այս բոլորը կարող է ծիծաղելի թվալ, սակայն իմ բացատրությունը լսելով, դուք կտեսնեք, վոր այդ բոլորովին այդպես չէ։ Յեվ այսպես, նախ և առաջ « ատզավիզմը»։

## «ԱՏԶԱՎԻԶՄ».

Բայշևիկների, իթիվս վորոց և շատ հների մի մասը, ինչպես և տեղական կազմակերպությունների մի մասը, իսկ մի ժամանակ նաև այնպիսի հեղինակավոր կազմակերպություն, ինչպիսին է Կենտրոնական Ռուսաստանի Շրջանային Կոմիտեն, արտահայտվեցին հոգուտ Պետական Դումայից պատգամավորներին յետ կանչելուն (այստեղից է և «ատզավիզմ» բառը)։ Նրանք հետևյալ նկատառումներով էին առաջնորդվում. ցարական Դուման սև-հարյուրակային հիմնարկություն է, և իսկական

հեղափոխականն այնտեղ անելու գործ չունի· ով այնտեղ գնաց, նա դարձավ լիկվիդատոր, հետևապես հրաժարվեց հեղափոխությունից։ Շարունակելով իրենց դատողությունը, նրանք հետևյալ յեզրակացությունն եյին անում. լեգալ հնարավորությունների ոգտագործումն ընդհանրապես անհնար է, և այդ պատճառով կարգին բայլշևիկը միության մեջ կամ ակումբում նույնպես վոչինչ չունի անելու։ Այդ շատ վտանգավոր հոսանք եր, վոր լիկվիդատորներին ձեռնտու յեր։ Մեր «Պրոլետարիյ» թերթում, վորն ընկ. Լենինը, Կամենևը և յես եյինք հրատարակում, մենք նրանց անվանում եյինք «ձախից լիկվիդատորներ», մասնանշելով, վոր նրանց գաղափարն արտաքուստ վայելուչ և հեղափոխական լինելով հանդերձ, իրականում ձգտում է մեզ կենդանի իրականությունից անջատելու։ Մենշևիկներին հենց այդ ել հարկավոր եր, վորպեսզի մենք հեռանանք արհմիություններից, Պետական Դումայից և բանվորական միջավայրից։

Նրանք շատ եյին ուզում, վորպեսզի մենք մանր խմբակներում փակվեյինք և ծանր քաղաքական իրականությունից յերես դարձնեյինք։ Կրկնում եմ, այս բայլշևիզմի համար շատ վտանգավոր մի հոսանք եր, յեթե մենք նրան արժանի դիմադրություն ցույց չտայինք, մենք մասսայական կուսակցություն չեյինք լինի։ Բայլշևիզմի ուժն ել հենց այն եր, վոր տասնամյակների ընթացքում, իր դժվարին ճանապարհի բոլոր ետապներում նա գիտեր մասսայի խորքերը թափանցել և պատասխանել վոչ միայն հեղափոխության արմատական հարցերին, այլ և բանվորական կյանքի յուրաքանչյուր առորյա հարցին։ Դիտելով այժմ, թե ինչպես են կազմվում յերիտասարդ կոմմունիստական կուսակցություններն այլ յերկրներում, մենք տեսնում ենք, վոր նրանք հաճախ հենց այդ ճկունությունը չունեն, և նրանք աղանդավորական են դառնում, ինքնամփոփվում են և մասսաներից հեռանում են, ինչպես այդ մի ժամանակ տեղի ունեցավ իտալական կոմկուսակցության շարքերում։ Այս տեսակետից նրանք ատղավիզմի սխալներն են կրկնում։

## ՈՒԼՏԻՄԱՏԻԶՄ.

Ուլտիմատիզմն առաջ է գալիս «ուլտիմատում» բառից։ Այն ժամանակներում շատ հեղինակավոր բայլշևիկների մի խումբ Ա. Ա. Բագդանովի՝ «Քաղաքատնտեսության» դասագրքի հեղինակի (այժմ նա կուսակցությունից դուրս է յեկել և հակահեղափոխական մենշևիկյան տեսակետներ է քարոզում «Բանվորական պրավդայի» և պրոլետկուլտի ու բանֆակների միջոցով, ուր աշխատում է խցկվել, սակայն այն ժամանակ նա բայլշևիզմի ականավոր ներկայացուցիչներից մեկն եր), Ա. Վ. Լունաչարսկու և միքանի այլ ականավոր ընկերների



գլխավորությամբ (փակագծերում ասած՝ նրանց պաշտպանում եր նաև Մ. Գորկին, վորը ևս այն ժամանակ շատ «ձախ» եր),—այդ խումբն ընկ. Լենինին ոպպորտյունիզմի համար եր մեղադրում և իր «ուլտիմատիստների» ֆրակցիան կազմեց։ Իսկապես ասած, ուլտիմատիզմի և ատղավիզմի տարբերությունը լոկ գունավորման տարբերությունն է։ Ուլտիմատիստներն ասում եյին. «Մենք առաջարկում ենք պատգամավորներին յետ չկանչել, այլ ուլտիմատում դնել. նա, ով չի յենթարկվի, պետք է հեռանա»։ Դրան մենք առարկում եյինք.—Այդ նույն ատղավիզմն է։ Դուք ուզում եք ուլտիմատումի ձևի տակ, այնուամենայնիվ, յետ կանչել մեր ներկայացուցիչներին սև-հարյուրակային Դումայից, վորտեղ մեր ընկերներին, այնուամենայնիվ, հաջողվում է ամբողջ Ռուսաստանին հեղափոխական խոսք ասել։ Ուլտիմատիստները խոշոր ազդեցություն ունեյին բայլշևիկների ֆրակցիայում և բայլշևիկյան կենտրոնի անդամների մի մասի մեջ, այսինքն՝ բայլշևիկների կենտրոնական Կոմիտեյում։

## ԱՍՏՎԱԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (богостроительство).

Վերջապես յերրորդ հոսանքի, այսպես կոչվող աստվածարարության պարագլուխներն եյին՝ Ա. Լունաչարսկին և Մ. Գորկին։ Այս հոսանքի գլխավոր գրական դոկումենտներն եյին մեր ընկեր Ա. Վ. Լունաչարսկու միքանի հոդվածները և Գորկու «Խոստովանանքը», սքանչելի մի գիրք, վորը յերևի ձեզանից շատերը կարդացել են, բայց վորն իր աշխարհայացքով աստվածարարական է։ Աստվածարարներն այսպես թե այնպես վորոշ չափով կրոնական տրամադրությունների տեր եյին։ Նրանք ասում եյին, վոր սովորական աստծու նրանք, իհարկե, չեն հավատում, վոր, սակայն, նրանք ունեն մի ինչ-վոր առանձնահատուկ՝ գրեթե մարքսիստական աստված։ Այս ժամանակներում, ինչպես ընդհանրապես պարտությունից հետո բոլոր ասպարեզներում, թե գիտության և թե գրականության մեջ անկում եր նկատվում, վորի շնորհիվ ծաղկեցին պոռնոգրաֆիան, միստիցիզմը և զանազան կրոնական տրամադրություններ։ Նման տրամադրություններով համակվեցին ամենազգայուն և զրան հակված մարդիկ մեր կուսակցության շարքերում, ի թիվս վորոց Գորկին և Լունաչարսկին։ Նրանք փորձ արին, ինչպես ել այդ տարորինակ չլինի, աստվածարարությունը պսակել ատղավիզմի հետ։ Բանալով կուսակցական դպրոց—մի քսան բանվոր (լավագույնը, ինչ այն ժամանակ կարելի յեր գտնել կուսակցության մեջ)—նրանք այդ դպրոցը Կապրի կղզին փոխադրեցին, վորտեղ այն ժամանակ ապրում եր Գորկին՝ նպատակ ունենալով մարքսիզմ ուսուցանելու նրանց։ Իսկ իրապես նրանք այնքան մարքսիզմ չեյին ուսուցանում, վորքան ատ-

զավիզմ և աստվածարարություն։ Նրանց բերած բանվորները մեծ մասամբ լավ մարդիկ էին, և նրանցից շատերը ներկայումս մեր հանրապետության մեջ հայտնի պաշտոններ են վարում։ Իրապես աստվածարարությունը Կապրի կղզում բոլորովին տապալվեց։ Բանվորները սիրով լսում էին մարքսիզմը և գրականության պատմությունը, որ նրանց Գորկին էր կարդում, ականջի յետև էին գցում ատղավիզմը, սակայն յերբ գործը աստվածարարության հասավ, պրոլետարները հայտարարեցին. «Վոչ, բավական է»։ Վերջացավ նրանով, որ այդ աշակերտների կեսից ավելին՝ հանգուցյալ բանվոր Վիլոնովի՝ այդ դպրոցի կազմակերպչի՝ ղեկավարությամբ մի գեղեցիկ գիշեր կղզուց փախավ և յեկավ ընկ. Լենինի և ուրիշների մոտ, որոնք այն ժամանակ արտասահմանում էին ապրում և «Պրոլետար»-ն էին հրատարակում։ Նրանք աստվածարարության դպրոցից մեր դպրոցն անցան, իսկ հետո Ռուսաստան մեկնեցին, որպես մեր հոսանքի ներկայացուցիչներ։

Արտասահմանյան կուսակցական դպրոցը խոշոր դեր խաղաց։ Այն ժամանակները, յերբ կուսակցություն չկար, այդ քսան ղեկավարող բանվորներից բաղկացած խումբը մի ուժ էր, գրեթե մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեն էր։

## ՊԱՅՔԱՐ ԱՏԶԱՎԻԶՄԻ ՅԵՎ ՄՅՈՒՍ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ԴԵՄ.

Մենք ստիպված յեղանք ատղավիզմի, ուլտիմատիզմի և աստվածարարության դեմ կատաղի պայքար մղել, որը վերջացավ բայշևիկյան ֆրակցիայի պառակտումով։ Մենք մի շարք պատգամավորներ հրավիրեցինք տեղերից՝ Պետերբուրգից և Մասկվայից, բայշևիկյան կոնֆերանս գումարեցինք և աստծու ծառա Բագդանովին և ուրիշներին հեռացրինք մեր ֆրակցիայից։ Բայշևիզմի պատմության այս գլուխն ամենակարևորներից մեկն է։ Նա մանրամասն կերպով շարադրված է «Պրոլետարիյ» լրագրում, ուր ընկ. Լենինն այս առթիվ մի շարք հոդվածներ է գրեցել։ Պայքարը շատ դժվար էր, որովհետև մեր հակառակորդները մեծ կապեր ունեին, որովհետև բոլորը նրանց ճանաչում էին և նրանց յետևից էին գնում։ Բայշևիզմը վերջնականապես ձևակերպվեց այն ժամանակ միայն, յերբ նա այդ պայքարը «դեպի ձախ» տարավ։ Մեր անտագոնիստները մեղադրում էին մեզ մեր միավորման համար Պլեխանովի հետ։ Սակայն մենք իրավացի էինք, և մենք մինչև որս էլ կապ ենք պահպանում պլեխանովցիների հետ փիլիսոփայական մատերիալիզմի պաշտպանության համար։ Սակայն Լունաչարսկին և Բագդանովը փիլիսոփայության մեջ Մարքսի հակառակորդներն էին, իսկ Բագդանովը էր և մնում է վոչ թե Մարքսի, այլ Երնստ Մախի կողմնակից, որի փիլիսոփայությունը վոչ մի



առընչություն չունի մարքսիզմի հետ, ինչպես այդ ապացուցեց ընկ. Լենինը եմպիրիո-կրիտիցիզմի մասին գրած իր փիլիսոփայական աշխատության մեջ։ Սակայն այն ժամանակ աքսորում գտնվող կամ բանտերում նստած մեր ընկերներից շատերն անվերջ կարդում էին Մախի գրվածքը։ Յեվ Բագդանովը գրական անկման և փտած տրամադրությունների հիման վրա մարքսիզմի դեմ ուղղված յեզրակացություններ էր անում։ Կրկնում եմ, այս՝ բայշևիզմի պատմության չափազանց լուրջ գլուխն է կազմում։ Մենք դաշն կապեցինք Պլեխանովի հետ մատերիալիզմի համար փիլիսոփայական պայքար մղելու հիման վրա։ Յեվ բայշևիզմը վերջնականապես այն ժամանակ միայն ձևակերպվեց, յերբ անցավ վոչ միայն լիկվիդատորության ու մենշևիզմի դեմ մղած պայքարի բովով, այլ և «ձախից» յեկող լիկվիդատորության ու ատղավիզմի դեմ, որը նույնպես մտավ կուսակցության մեջ «վպերյոդովստվո» («հառաջականություն») անվան տակ։ «Ձախ» բայշևիկների հիշյալ խումբն ոգտվեց 1905 թվին հրատարակվող մեր «Վպերյոդ» («Հառաջ») լրագրի անունից և սկսեց նույն անունով ժողովածու հրատարակել։ «Վպերյոդովեցները» հայտարարեցին, որ իսկական բայշևիկները նրանք են, իսկ մենք՝ «աջ թևի» բայշևիկներ ենք։

Այս բոլոր ուղղությունների դեմ մղվող պայքարի պատմությունն առանձնապես արժեքավոր է նրանց համար, ովքեր ուզում են ծանոթանալ բայշևիզմի տեսական հիմնավորմանը։ Վերջինս յերբեք չէր կարծում, որ նա պետք է բոլորից «ձախ» լինի բառիս վուլգար իմաստով։ Այն ձախությունը, որ գնալով հանդում է աստվածարարության, ֆուտուրիզմի և այլն, մենք միշտ էլ բացասում էինք և վճռական պայքար էինք մղում նրա դեմ։ Յեվ այդ պայքարի մեջ բայշևիկները վերջնականապես կոփվեցին վոչ միայն ընդդեմ փտած ռեֆորմիզմի և լիկվիդատորության, այլ և ընդդեմ փտած իդեալիզմի և ավանտյուրիզմի քաղաքականության, որովհետև ատղավիզմը վոչ այլ ինչ էր, յեթե վոչ ավանտյուրիզմ։

Կուսակցության իդեական վերածնության այս պայքարի մեջ անցավ ամբողջ 1909 թվը։ Կրկնում եմ, պայմանները չափազանց դժվար էին։ Շատ ընկերներ կորցնում էին ամեն մի հեղափոխական դեմք և աստված գիտե, թե ինչ էին դառնում։ Մեր ամբողջ կուսակցությունը խմբերի, յենթախմբերի և ֆրակցիաների բաժանվեց։ Այդ դժվար որերին մեր կենտրոնական հարցն էր՝ քարը քարի յետևից կուսակցությունը հավաքել, նախապատրաստել նրա վերածնությունը, իսկ, որ գլխավորն է, մարքսիզմի հիմունքները պահպանել բոլոր աղավաղումներից։

Բայշևիզմի պատմության այս շրջանն իրոք որ ծանր է, սակայն և փառավոր է։ Յեթե բայշևիզմն այն ժամանակ իր հակառա-

կորդին վորևե տեսական կամ քաղաքական զիջում աներ, նա չեր կարող խաղալ այն մեծ դերը, վոր նա հետագայում խաղաց։ Ահա թե ինչու մեր պատմության այս եջը պետք և մեր յերիտասարդության բացառիկ և մանրակրկիտ ուսումնասիրության առարկան դառնա, մանավանդ այժմ, յերբ նորից «մոդայական» տեսական հովեր են սկսում փչել, վորոնք շատ բանով անկման վերոհիշյալ շրջանն են հիշեցնում։

---

## ՎԵՑՏԵՐՈՐԴ ԴԱՍԱԼՍՈՒԹՅՈՒՆ.

Ստալիպինյան հակահեղափոխության տարիներն ամենակրիտիկական և ամենավտանգավոր տարիներն եյին կուսակցության գոյության համար։ Հետադարձ հայացք նետելով, կարելի յե վստահ ասել, վոր այդ ծանր որերին կուսակցությունը վորպես ամբողջական կազմակերպություն գոյություն չուներ. նա առանձին մանր խմբակների բաժանվեց, վորոնք 80-ական և 90-ական թվականների շրջանի խմբակներից նրանով եյին տարբերվում, վոր նրանց ընդհանուր տրամադրությունը, հեղափոխության կրած անխնա պարտությունից հետո, վերին աստիճանի ճնշված եր։ Այս պայմաններում կուսակցության վրա ծանր կերպով ճնշող՝ մենշևիկների հետ հաստատված համակեցությունն իր մեջ ահեղ վտանգ եր պարունակում։ Մենշևիկ-լիկվիդատորները չարախնդաբար այդ փաստն եյին ընդգծում, վոր կուսակցությունը, վորպես մի ամբողջություն, գոյություն չուներ։ Յեվ մինչդեռ հեղափոխության նվիրված յուրաքանչյուր հեղափոխական այստեղից այն յեզրակացությունն եր անում, վոր անհրաժեշտ ե բոլոր ուժերը նրա վերաստեղծմանը նվիրել, նրանք հակառակ յեզրակացություն եյին անում. ուրախանալով, վոր կուսակցությունը քայքայվել ե, նրանք ձգտում եյին ստեղծել նոր կազմակերպություն, վորը գաղափարապես կապված չլիներ հին կուսակցության հետ։ Միքանի տարիների ընթացքում խուլ պայքար եր մղվում բայշևիկների և լիկվիդատորների միջև միասնական կուսակցության շրջանակներում, չեյին բացակայում և հաշտվողական խմբակներ, վորոնք փորձում եյին միջին գիծ գտնել և յերկու կողմերին հաշտեցնել։ Յերկու այսպիսի կարևորագույն փորձերի վրա անհրաժեշտ ե կանգ առնել։

### 1908 թվի ՊԱՐԻԶՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ.

Նրանցից առաջինը տեղի ունեցավ կուսակցության պարիզյան համառուսական կոնֆերանսում 1908 թվի դեկտեմբերին։ Այստեղ ներկա եյին կուսակցության բոլոր արտասահմանյան ներկայացուցիչները, նույնպես և Ռուսաստանում գործող մի շարք կոմիտեներ։ Մենշևիզմի այն թևը, վորի ներկայացուցիչը Մարտովն եր, և վորը Պլեխանովի և Պատրեսովի, մենշևիկ-կուսակցականների և լիկվիդատորների

միջին տեղն ու բռնում, նույնպես կոնֆերանս չեկավ, որպեսզի այստեղ ևս կուսակցությունը ներսից պայթեցնի և քայքայման իր աշխատանքը շարունակի։ Կոնֆերանսին հրավիրված էր նաև չորրորդ Պետական Դումայի ֆրակցիայի հանձինս նրա գլխավոր ղեկավար՝ Զիսիձեյի։ Սակայն նա չեկավ։ Այս նրա կողմից միանգամայն մտածված քայլ էր, որը խոշոր քաղաքական նշանակություն ուներ։ Համառուսական կոնֆերանսին ներկա լինելուց հրաժարվելը, թեպետ և զանազան դիվանագիտական ճարպկություններով քողարկված, նշանակում էր, որ Դումայի ֆրակցիայի մենշևիկյան մեծամասնությունը, որի պարագլուխը Զիսիձեն էր, չէր ցանկանում կուսակցությունը ճանաչել և գտնում էր, որ ոչ թե ֆրակցիան է կուսակցության չենթակա, այլ ընդհակառակը՝ Դումայի ֆրակցիան կուսակցությունից բարձր է կանգնած։ Ուրիշ խոսքով՝ ֆրակցիան այս քայլով մի անգամ ևս ընդգծեց իր համակրանքը դեպի մենշևիկների լիկվիդատորական թևը։

Պարիզյան կոնֆերանսում ընդունվեցին քաղաքական տեսակետից քիչ թե շատ ճիշտ բանաձևներ, որոնք, թեպետ և շատ չափավոր ձևով, դատապարտում էին լիկվիդատորությունը։ Այդ և հասկանալի է, որովհետև ցանկանալով Մարտովի խմբի հետ միասնականություն պահպանել, կոնֆերանսի և Լոնդոնի համագումարում ընտրված այն ժամանակվա կենտրոնական Կոմիտեյի ձեռքն ու վոտքը կապված էին, և նրանք չէին կարող լիկվիդատորությանը վճռական կռիվ հայտարարել՝ ստիպված լինելով ընդհանուր տեսական բանաձևներով բավականանալ։ Այսպիսով շնորհիվ իր կիսատության, 1908 թվի կոնֆերանսը կուսակցության համար խոշոր նշանակություն չունեցավ, մանավանդ որ նա գումարվեց հակահեղափոխության լիակատար զարգացման և Ստալիպինի ամենամեծ ծաղկման որերին, երբ միայն «Ստալիպինյան բանվորական կուսակցության դեմ հայտարարված խաչակրաց արշավանքը կարող էր որևե գործնական իմաստ ունենալ։

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎԵՐՋԻՆ ՄԻԱՑՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԸ.

Միասնականություն պահպանելու և հաշտարար տրամադրությունը ձևակերպելու մի այլ փորձ, որով տարվեց բայշևիկների մի մասը, տեղի ունեցավ 1910 թվի սկզբին կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի պլենումում—վերջին պլենումում, որին մասնակցում էին թե բայշևիկները և թե մենշևիկները, որովհետև հետագա դեպքերը վերջ դրին նրանց համագործակցության։ Այստեղ հանդես եկան բայշևիկների երկու խմբեր՝ բայշևիկ-հաշտվողականներ, որոնք իրենց բայշևիկ-կուսակցականներ էին անվանում, և մենք՝ անհաշտ բայշևիկներս։ Առաջին խմբի գլուխ կանգնած էին մի շարք ընկերներ,



որոնք այժմ ականավոր տեղ են բռնում մեր կուսակցության մեջ (Ռիկով, Սակոլնիկով, ներկայիս վախճանված Ֆինանսիստ Վլադիմիրով, Լազովսկիյ և մի քանի ուրիշները), իսկ նրանց լիդերը Դուբրովինսկին էր (մականունը՝ «Ինոկենտիյ»)—մեր կուսակցության լավագույն, անձնվեր և իր անձնական հմայքով նշանավոր գործիչներից մեկը, որը նրան խոշոր ծառայություն է մատուցել։ (Նա մեռավ ցարական աքսորում։ Դուբրովինսկին այն խոշոր քաղաքական սխալը կատարեց, որ 1909-10 թվականներին, երբ արդեն պարզ էր մենշևիկների հետ պառակտման անհրաժեշտությունը, միասնականության դաղափարով կուրացած՝ շարունակում էր պնդել, որ, այնուամենայնիվ, պետք է աշխատել նրանց հետ միասին)։ Նրա խումբը միացավ Պլեխանովի շուրջը համախմբված մենշևիկ-կուսակցականների հետ և մեր՝ լենինիստներիս դեմ դուրս եկավ։ 1910 թվի պլենումում Դուբրովինսկին և նրա համախոհները մի անգամ ևս մենշևիկների հետ համագործակցության անհրաժեշտության որոշում անցկացրին, թեպետ և նորից բանաձև ընդունվեց մի կողմից լիկվիդատորության և մյուս կողմից ատելիզմի դեմ։ Այս տարաձայնությունը նրանով է բացատրվում, որ այն ժամանակ մենշևիկ-լիկվիդատորների վրա նայում էին որպես մոլորված յեղբայրների վրա և կարծում էին, որ նրանց խոշոր մասը, այնուամենայնիվ, կաշխատի այս պլենումում ընդունված որոշումների հիման վրա։

Բայշևիկ-լենինիստներն այդ պլենումում փոքրամասնություն էին կազմում, և նրանց վոչինչ չէր մնում անել, քան յենթարկվել այն որոշմանը, որն ընդունվեց բայշևիկ-հաշտվողականների՝ Պլեխանովի և ընկ. Տրոցկու կողմնակիցների ձայներով։ Վերջինս այն ժամանակ Վիեննայում հրատարակում էր հանրամատչելի «Պրավդա» թերթը՝ քարոզելով այն միտքը, թե մենշևիկների հետ, ինչ գնով էլ որ լինի, անհրաժեշտ է միաբանել։

Այս պլենումով վերջացան հին միասնականությունը պահպանելու մի շարք փորձերը, փորձեր, որոնք տեղի էին ունենում պարտված բանվորական շարժման, թագստոցները քշված կուսակցության և բանվորների մի մասին համակած ընդհանուր հիասթափության ֆոնի վրա։

## ԼԵՆԱՅԻ ԴԵՊՔԵՐԸ։ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ.

Սակայն շուտով գրությունը դեպի լավը փոխվեց։ Հիշյալ պլենումից մի վորոշ ժամանակ անցնելուց հետո արդեն բանվորական շարժման մեջ կենդանություն սկսվեց։ Սկսվեցին առաջին թույլ գործադուլները։ Բայշևիկներին հաջողվեց իրենց փոքրիկ լեգալ գրակա-

նությունն ստեղծել, որը, չնայած կառավարության հալածանքներին, այնուամենայնիվ հնարավորություն ուներ մարքսիստական հայացքները հակադրել լիկվիդատորական հայացքներին։ Լենայում տեղի ունեցած գործադուլը և նրան հետևած դեպքերն այս իմաստով ռուսական հեղափոխական շարժման մեջ նոր էջ են սկսում։ Հուլիսի 3-ի ռեակցիան սկսում է վերանալ։ Հեղափոխականների անվերջ կախաղաններն ու գնդակահարությունները հեղափոխական շարժումը վորոշ ժամանակով ճնշեցին, սակայն Լենայի որերից հետո պարզ յեղավ, վոր բանվոր դասակարգը նոր ուժերով և սկսվող տնտեսական վերելքի հիման վրա նորից պայքար է սկսում։

## «ԶՎԵԶԴԱ» («ԱՍՏՂ») ԹԵՐԹԸ.

Մեզ հաջողվեց հեղափոխության պարտությունից հետո առաջին լեգալ «Զվեզդա» թերթը կազմակերպել։ Սկզբում նա բայլշևիկների և մենշևիկ-պլեխանովեցների որգանն եր։ Նա փաստորեն արտասահմանից եր ղեկավարվում, վորտեղից Պլեխանովը, Լենինը և ուրիշներն ուղարկում եյին իրենց ղեկավարող հոդվածները. իսկ Պետերբուրգում պաշտոնական խմբագրությունն եր գտնվում, վորը բաղկացած եր Պետական Դումայի անդամ բանվոր-բայլշևիկ Պալետայևից և մենշևիկ-պլեխանովեց պատգամավոր Պոկրովսկուց։ Սկզբում «Զվեզդան» մեծ զգուշությամբ հանդես յեկավ, և նրա քաղաքական գիծը չեր կարող բացահայտ լինել, վորովհետև թերթը, կոալիցիայի՝ բայլշևիկների և պլեխանովցիների որգանն եր։ Սակայն շատ շուտով՝ հանդես գալով վորպես յերկու կուսակցական խմբակների թերթ, «Զվեզդան» սկսեց վերածնվող բանվորական քաղաքական շարժման որգան դառնալ և ավելի ու ավելի սերտ կերպով կապվելով նրա հետ՝ սկսեց աստիճանաբար իր կոալիցիոն բնույթը կորցնել։ Իվերջո Պլեխանովի խումբը բոլորովին յերկրորդական տեղ բռնեց, և «Զվեզդան» վերջնականապես մեր բայլշևիկյան մարտական որգանը դարձավ՝ լույս տեսնելով սկզբում շաբաթը 2, իսկ հետո նաև 3 անգամ։

## «ԶՎԵԶԴԱՅԻ» ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

«Զվեզդան» իմ կարծիքով նույնպիսի դեր խաղաց 1905 թվի հեղափոխության յուրացրած փորձի հիման վրա վոտքի կանգնող բանվորների նոր սերնդի համար, ինչպիսին «Իսկրան» խաղաց 900-ական թվականներին այն ժամանակվա գիտակից բանվորների սերնդի համար։ «Զվեզդան» մեր դրոշակի տակ հավաքեց լավագույնը, ինչ կար Պետերբուրգի և ամբողջ Ռուսաստանի բանվորների մեջ։ Սկզբում զգուշությամբ, իսկ հետո ավելի ու ավելի խիզախ և վճռական կերպով, նա



լիկվիդատորների դեմ նույնպիսի անխնա պայքար սկսեց, ինչպիսին իր ժամանակին «Իսկրան» եկոնոմիստների դեմ։ «Զվեզդայի» մեջ այլևս չեյին խոսում այնպիսի կիսադիվանագիտական լեզվով, ինչպես 1908 թվի վերջին և կամ 1910 թվի պլենումում։ Թերթը մարտնչող ուղղության որգանն եր, վորն աջ ու ձախ կռվում եր, կարողանում եր յուրաքանչյուր կերպով իր գիծը պաշտպանել և բանվորական շարժման նոր ուղիներ գծել։ Պատմության մեջ, վորպես խոշոր ուղեցույցներ, միայն այն կուսակցական լրագրերը մնան, վորոնք իրոք կարողանում եյին պաշտպանել իրենց ուղղությունը և անթիվ թշնամիների մեջ իրենց համար ճանապարհ մաքրել։ Ցեվ «Զվեզդան», անկասկած, այսպիսի լրագրերի թվին եր պատկանում։ Նա նախապատրաստում եր «Պրավդայի» հանդես գալը, վորն սկսեց լույս տեսնել Պրագայի կոնֆերանսից հետո, վորի մասին անհրաժեշտ է առանձին միքանի խոսք ասել։

## ՊՐԱԳԱՅԻ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ.

Այն ժամանակներից, յերբ «Զվեզդան» բայլշևիկ-լենինիստների մարտական որգանը դարձավ, անջատումը մենշևիկներից կատարված փաստ եր արդեն։ 1908 թվի կոնֆերանսից և մանավանդ 1910 թվի պլենումից հետո մենք՝ բայլշևիկ-լենինիստներս ասացինք ինքներս մեզ, վոր մենշևիկ-լիկվիդատորների հետ չենք աշխատի, և միայն հարմար բոպեյի եյինք սպասում, վորպեսզի վերջնականապես մեր կապերը խզենք նրանցից և աշխուժացած բանվորական շարժման հիման վրա մեր ինքնուրույն կազմակերպությունն ստեղծենք։

1912 թվի սկզբին մեր խումբը վորոշեց, վոր այդ մոմենտն արդեն հասել է, և Պրագայում՝ Չեխո-Սլովակիայում կուսակցական կոնֆերանս հրավիրեց, վորը և վերականգնեց 1905 թվից հետո մեր քայքայված կուսակցությունը։ Այս կոնֆերանսը խոշոր պատմական նշանակություն ունի։ Նրան ներկա եյին իմիջիայլոց Պլեխանովի կողմնակիցների 2-3 պատգամավոր, վորոնք յեկել եյին Ռուսաստանից՝ անմիջապես աշխատանքից։ Ինքը Պլեխանովը, սակայն, հրաժարվեց նրան մասնակցելուց՝ յենթադրելով (և միանգամայն իրավացի կերպով), վոր Պրագայի կոնֆերանսի նպատակն եր անջատումը մենշևիկներից։ Վերջին բոպեին Պլեխանովը, ըստ սովորականի, վախեցավ մենշևիկներից անջատվելուց։

## ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԿԱԶՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ.

Պրագայի կոնֆերանսում ճնշող մեծամասնություն եյին կազմում բայլշևիկները։ Նրան ներկա յեր 1907-1911 թվականների հակահեղափոխության շրջանում ամած և քաղաքականապես հասունացած բան-

վոր-բայշևիկների մի նոր խավ։ Այստեղ յերևացին առաջին անգամ Զալուցկին, Սերեբրյակովը (այժմ աշխատում ե հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատում), Վարոնսկին՝ «Գրասնայա Նով»-ի խմբագիրը), Որջոնիկիձեն (այժմ պատասխանատու գործիչ Կովկասում) և մի շարք այլ ընկերներ, վորոնք կամ բոլորովին չեյին մասնակցում 1905 թվի հեղափոխությանը, կամ գործում եյին այն ժամանակ վորպես շարքային աշխատողներ։ Պրագայում նրանք բոլորն ել հակահեղափոխության ժամանակ հասունացած բայշևիկների նոր սերունդն եյին ներկայացնում, և մեզ համար շատ կարևոր եր նրանց հետ կազմակերպչական վորևե կապ ստեղծել, վորպեսզի կարողանանք նրանց ձեռք բերած փորձն ոգտագործել։

Պրագայի կոնֆերանսը, վոր ընդհանուր առմամբ մի բուռը պատգամավորներից եր բաղկացած (մի 20-25 հոգուց), և վորը ընկ. Լենինն եր ղեկավարում, իր վրա համարձակություն վերցրեց իրեն կուսակցություն հայտարարելու և միանգամայն ընդմիշտ կտրելու բոլոր կապերը բոլոր այլ խմբերի և յենթախմբերի հետ։ Այս կոնֆերանսը տապալեց հին Կենտրոնական Կոմիտեն, վորը կիսով չափ արդեն փտել եր և ասաց.—Կուսակցությունը՝ այդ մենք ենք, մեր բայշևիկյան կուսակցության դրոշն ենք բարձրացնում. ով մեզ հետ չե, նա մեր դեմ ե, մենք կատաղի պայքար կմղենք բոլոր նրանց դեմ, ովքեր հրաժարվում են իրենց հերթին լիկվիդատորների դեմ պայքարելուց։

Արտասահմանյան տարագիրները, վորոնց խոշոր մեծամասնությունը (մոտավորապես ինը տասերորդը) այն ժամանակ մենշևիկների կողմն եր, Պրագայի կոնֆերանսն ատաՄների կրճատոցով ընդունեցին։Այս բանի համար մենշևիկները մեր գլխին հանդիմանություններ տեղացին՝ պնդելով, վոր մենք ուղուրպատորներ ենք, վոր բոլոր բայշևիկները մի թիկնաթոռի վրա կարող են տեղավորվել, և վոր այս կոնֆերանսն անցողիկ նշանակություն կունենա, վորովհետև վոչ վոք նրան չի ճանաչի, և նա վոչ մի դեր կուսակցության մեջ չի խաղա։ Սակայն իրոք այլ բան դուրս յեկավ։ Յեթե ամբողջ մենշևիկյան եմիգրացիան մեզ հակառակ եր, ապա Ռուսաստանում աճող հեղափոխական բանվորների նոր սերունդը մեր կողմն եր, և Պրագայի կոնֆերանսին հաջողվեց կամուրջ գցել դեպի վերածնվող բայշևիկյան բանվորական խմբակներն ու նոր հիմունքներով կուսակցություն ստեղծել։

## ՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ «ՊՐԱՎԴԱՅԻ» ՀԻՄՆՈՒՄԸ.

Պրագայի կոնֆերանսում առաջին անգամ առաջադրվեց ամենորյա «Պրավդա» լրագրի ստեղծման գաղափարը։ Այս մտքի ամենաջերմ պաշտպաններից մեկը ընկ. Վարոնսկին եր։ Մենք սկզբում բավականի



կասկածամտաբար եյինք վերաբերվում դեպի այս նախագիծը, դժվարությամբ եյինք պատկերացնում, թե Ռուսաստանում հնարավոր լիներ բայշևիկների ամենորյա քաղաքական թերթ հրատարակել։ Այնուամենայնիվ վորոշվեց փորձ անել, և մենք համապատասխան ագիտացիա սկսեցինք։ «Պրավդան» ստեղծվեց, սակայն, իհարկե, վոչ այնպես, ինչպես բոլոր լրագրերն են ստեղծվում, այլ բանվորների և բանվորուհիների գանձած կոպեկներով։ Շարունակաբար ստացվող դրամի հավելումը մեզ համար ճիշտ բարոմետր եր այն համակրանքի, վոր ունեյին բանվորները դեպի բայշևիկները։ Մենք սկսեցինք գրի առնել «Պրավդայի» համար այս կամ այն գումարը մուծող բանվորական խմբերին, և հազիվ եր այս կամ այն խումբը մի քսան կոպեկ տալիս, վոր նա իսկույն տեղ եր գտնում ռեգիստրացիոն պահանջաթերթում։ Այս ստատիստիկայով առանձնապես հետաքրքրվում եր ընկ. Լենինը։

Սկզբում «Պրավդան» ել կոալիցիոն որգան եր, վորովհետև նրան մասնակցում եյին թե բայշևիկները և թե մենշևիկ-պլեխանովեցները։ Սակայն նա ևս «Զվեզդայի» բախտին արժանացավ։ Ամենակարճ ժամանակից հետո պլեխանովեցները, վոր փորձում եյին յերկու աթոռի արանքում նստել, դեպքերի ընթացքով «Պրավդայից» քշվեցին և թերթը լենինյան հոսանքի բայշևիկների որգան դարձավ։

## ՉՈՐՐՈՐԴ ԴՈՒՄԱՆ.

Այդ ժամանակ սկսվեցին չորրորդ Պետական Դումայի ընտրությունները։ Այս անգամ ել բայշևիկների մեջ վեճ սկսվեց՝ պետք ե արդյոք նրանք ընտրողական կամպանիային մասնակցեն, թե վոչ։ Սակայն այժմ արդեն այս պայքարն այնպիսի կրքոտությամբ չեր մղվում, ինչպես առաջին ընդհարման ժամանակ բոյկոտիստների հետ։ Բայշևիկների խոշոր մեծամասնությունը համոզված լինելով, վոր մեզ անհրաժեշտ ե լեգալ հնարավորություններն ոգտագործել, գտավ, վոր Դումային մասնակցելն անհրաժեշտ ե։ Ընտրողական որենքն այնպես եր կազմակերպված, վոր 6 ամենախոշոր արդյունաբերական նահանգների բանվորները միայն մի-մի ներկայացուցիչ ունեյին, իսկ ընտրությունը կատարվում եր այսպես. բանվորները պետք ե լիազորներ ընտրեյին, սրանք իրենց հերթին՝ ընտրողներ, վորոնց միջից նահանգական ժողովում կալվածատերերն ու բուրժուազիան, վոր խոշոր մեծամասնություն եյին կազմում, պետք ե բանվորներից մեկին պատգամավոր ընտրեյին։ Այսպիսով, բայշևիկին պատգամավոր ընտրելու համար պետք եր ձգտել նրան, վորպեսզի նահանգական ժողովում բոլոր ընտրողներն ել բայշևիկներ լինեյին, և վորպեսզի կալվածատերերն ստիպված լինեյին բայշևիկին ընտրել։ Այս դժվարին խնդիրն իրենց առա-

ջաղբեցին բայլշևիկները և վայլուն կերպով կատարեցին։ Չնայած նրան, որ մենշևիկները շատ ավելի լեգալ հնարավորություններ ունեին, բայլշևիկներն իրենց ձեռքը գցեցին բոլոր բանվորական կուրիաները վերուիշյալ 6 նահանգներում։ Կամա, թե ակամա, կալվածատերերն ու կապիտալիստները պետք է բայլշևիկի ընտրեին, իսկ յեթե յերբեմն փորձում եյին մեր մատնանշածին չընտրել, որպեսզի, այսպես ասած, վրեժ լուծեն մեզանից, մենք այնպիսի խիստ դիսցիպլինա ունեյինք, որ մնացած բոլոր բայլշևիկները հրաժարվում եյին և վերջի-վերջո անցնում եր նա, որին կազմակերպությունն եր ուղում ուղարկել Պետական Դումա։ Այսպես պատահեց, մասնավորապես, Բաղայևի հետ, որն Ալեքսանդրյան գործարանի կողմից ընտրված լինելով, ուր նա աշխատում եր որպես փականագործ, այսպիսով անցավ Պետական Դումա, չնայած նրան, որ ընտրողական ժողովում մեծամասնություն եյին կազմում հոկտեմբերականները և կադետները։ Նույն ճանապարհով Դումայի անդամ ընտրվեցին. Պետրովսկին՝ Յեկատերինասլավից, Մուրանովը՝ Խարկովից, Սամոյլովը՝ Իվանովո-Վազնեսենսկուց, Շագովը՝ Կոստրոմայից և Մալինովսկին՝ Մոսկվայի նահանգից։

## ՊՐՈՎՈԿԱՏՈՐ ՄԱԼԻՆՈՎՍԿԻՆ.

Վերջինս բանվորական շարժման հին գործիչ եր և մետաղագործների միության նախագահ։ Յերկար տարիների ընթացքում նա Պետերբուրգի բանվորների մեջ (և ոչ միայն նրանց մեջ) այնպիսի լայն ժողովրդականություն ուներ, որ յերբ նա արհեստակցական շարժման գործիչների մի խմբի կողմից որպես պատգամավոր Պրագա յեկավ, մենք նրան գրկաբաց ընդունեցինք։ Մենք նրան տեղավորեցինք Մոսկվայի ծոցերքում գտնվող գործարաններից մեկում և Պրագայում ընտրված Կենտրոնական Կոմիտեյի կողմից իրավունք տվինք, որ նա մինչև ընտրությունները մի ամբողջ տարի հանգիստ նստի, որպեսզի նրան չձերբակալեն, և նա կարողանա Պետական Դումա անցնել։ Այդպես ել պատահեց։ Հետագայում, ինչպես հայտնի յե, Մալինովսկին պրովոկատոր դուրս յեկավ, և նրա գործը բավական թանգ նստեց մեր կուսակցությանը։ Մալինովսկուն հաջողվեց Դումայի ֆրակցիայի, մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի, այլ և «Պրավդայի» և «Բանվորական ուղի» մասկոյան թերթի խմբագրությունների մեջ անցնել. վերջին թերթի հիմման համար նա ամենքից շատ աշխատեց, բայց և այնպես, հետադարձ հայացք նետելով, մենք պարզ տեսնում ենք, որ այն ժամանակ ստեղծված դրության շնորհիվ, պառնորդական բաժնի այս զզվելի խաղը հաղիվ թե նրա ոգին վերջացավ։ Իհարկե, Մալինովսկին քիչ վնաս չհասցրեց մեզ, որովհետև նրա աջակցությամբ



պառնորդական բաժինը ձերբակալեց միքանի հարյուր հոգի մեր լավագույն ընկերներից, սակայն, չնայած դրան, մենք, այնուամենայնիվ, կարող ենք ասել, պառնորդական բաժնի հույսերը դուրս յեկան ավազի վրա կառուցված։ Բանն այն է, որ հանգամանքներից դրդված, Մալինովսկին ստիպված եր Դումայում հեղափոխական յելույթներ կատարել, որովհետև, ուրիշ պատգամավորների նման, նա հաճախ ստիպված եր տետրակից արտասանում գրած ճառեր արտասանել։ Մալինովսկին մեր դումայական վեցյակի նախագահն եր, և վստահությունը չկորցնելու համար ստիպված եր ոգնել մեզ մեր աշխատանքի մեջ։

Ինքը Մալինովսկին, յեթե նրա անձի մասին խոսենք, որոշ չափով արտասովոր, չհավասարակշռված, սակայն տաղանդավոր մարդ եր։ Նա ծագումով լեհական ազնվականներից եր, ընկավ պրոլետարական շրջան և, յերիտասարդ հասակում քրեական հանցանք գործելով, որի հետևանքով նա անլեգալ կացության մեջ ընկավ, շուտով խճճվեց պառնորդական բաժնի ցանցերում։ Իր պատգամավորական լիազորություններից հրաժարվելուց հետո նա, զգալով, որ շուտով կմերկացվի, 1914 թվին պատերազմ գնաց, գերի ընկավ և այնտեղ, ինչպես այդ ապացուցված և գերիներից ստացված տասնյակ նամակներով, նրանց մեջ բայլշևիկյան ագիտացիա յեր մղում։ Հաղիվ թե նա վորևե հիմք ունենար գերության մեջ յերկերեսանի խաղ խաղալու։ Հոկտեմբերից հետո, յերբ մենք արդեն իշխանության գլուխն եյինք կանգնած, նա ինքը Ռուսաստան վերադարձավ, հանձնվեց մեր ձեռքը, ձերբակալվեց, Մոսկվա ուղարկվեց, որտեղ Տրիբունալը նրան գնդակահարության դատապարտեց։

## ԴՈՒՄԱՅԻ ՖՐԱԿՑԻԱՅԻ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ.

Բացի մեր վեցյակից, Դումայում կար նաև մենշևիկյան յոթնյակը, որի պատգամավորները գլխավորապես անցան Կովկասի մանրբուրժուական ազգաբնակչությունից, և որի պարագլուխն եր տխրահռչակ Զխեիձեն։ Վերջինս յերրորդ և չորրորդ Դումայումն եր, որ ժողովրդականություն ձեռք բերեց, որոշ նշանակություն ստացավ և փետրվարյան հեղափոխության սկզբում միաժամանակ բավական խոշոր դեր խաղաց։ Յերբ մենք «Պրավդայի» աջակցությամբ պառակտում գցեցինք Դումայի ֆրակցիայի մեջ, մենշևիկները Պետերբուրգում և ամբողջ Ռուսաստանում բանվորների մեջ կատաղի ագիտացիա մղեցին միասնականության լոզունգի տակ, որը նրանք հաճախ առաջադրում եյին մեր դեմ՝ գիտակցորեն սպեկուլյացիայի առարկա դարձնելով բանվորական մասսաների դեպի միավորումն ունեցած միանգամայն հասկանալի ձգտումը։ Վերջիններս յերբեմն պարզ են դատում. ինչքան

մենք շատ լինենք, այնքան ավելի լավ կլինի գործի համար։ Միայն դժվարությամբ, այն դասերի հիման վրա, վոր պատմությունն է տալիս, բանվորական մասսան գալիս է այն համոզման, վոր լինում են դրություններ, յերբ պառակտումը հեղափոխականի սրբազան պարտականությունն է դառնում, յերբ անհրաժեշտ է պառակտել հին կազմակերպությունը, վորը հակահեղափոխական է դարձել և վորպես ծանր քար կախված է բանվոր դասակարգի վոտքերից։ Այդպես եր 1912 թվին, յերբ Պրագայի կոնֆերանսը պառակտումն որակարգի հարց դարձրեց։ Նույնպիսի պառակտում տեղի ունեցավ 1912 թվին և 1913 թվի սկզբին լեգալ ասպարեզում «Պրավդայի» և «Լուչի» («Ճառագայթի») միջև, մեր դումայական վեցյակի և մենշևիկյան յոթնյակի միջև, վորի ղեկավարը Չխեիձեն եր։

## ՈԳՈՍՏՈՍՅԱՆ ԲԼՈԿԸ.

Վորպես Պրագայի կոնֆերանսին հակադիր միջոց, 1912 թվի ոգոստոսին մենշևիկները Վիեննայում գումարեցին համառուսական կոնֆերանս, կազմեցին այսպես կոչվող «ոգոստոսյան բլոկը»։ Այդ կոնֆերանսին մասնակցում եյին մենշևիկ-լիկվիդատորները և Մարտովի կողմակից մենշևիկները, նույնպես և ընկ. Տրոցկու խմբակը, վորը շատ եր նպաստում հիշյալ բլոկի ստեղծման։ Այն ժամանակ ընկ. Տրոցկին յեռանդոտ պայքար եր մղում մեր պետերբուրգյան «Պրավդայի» և Դումայի ֆրակցիայի պառակտման դեմ, անհրաժեշտ համարելով, ինչ եվ վոր լինի, միասնականությունը պահպանել։ Ոգոստոսյան բլոկը՝ միավորելով մի քանի խմբեր, մեր դեմ դուրս յեկավ, Պրագայի կոնֆերանսը ուղղորդապատրաստական հայտարարեց, Պետերբուրգում սկսված Դումայի ֆրակցիայի պառակտումը դատապարտեց և իր լիկվիդատորական քաղաքականությունը վերջնականապես ձևակերպեց։

## ՎԵՃ ՄԱՍՆԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Այդ տարին առանձնապես ուժեղ վեճ կար մասնակի պահանջների հարցի մասին։ Բայշևիկներն իրենց Պրագայի կոնֆերանսում, իրենց «Զվեզդա» և «Պրավդա» թերթերում և իրենց դումայական ֆրակցիայում պաշտպանում եյին, ինչպես ասում եյին, յերեք կետերին, այսինքն՝ յերեք պահանջ՝ դեմոկրատական հանրապետություն, 8-ժամյա բանվորական որ և կալվածատիրական հողերի բռնագրավում։ Մենշևիկներն ու ոգոստոսյան բլոկն իրենց հերթին ձևակերպում եյին իրենց ծրագիրը, վորն արմատապես տարբերվում եր մերից։ Նրանք պահանջում եյին խոսքի, գործադուլների, ժողովների և միությունների ազատություն։ Այլ կերպ ասած՝ բայշևիկյան հեղափոխական ծրագրի փոխարեն նրանք առաջարկում եյին բարենորոգումների ծրագիր, հիմնական հարցերի վճռման փոխարեն՝ մասնակի պահանջներ։ Բայշևիկներն ասում եյին, վոր նրանք մասնակի պահանջների դեմ չեն առարկում, վոր նրանք պատրաստ են պայքարել հանուն բանվոր դասակարգի դրության ամենաչնչին բարելավման, բայց նրանք այն կարծիքին են, վոր ամեն մի մասնակի պահանջ պետք է առաջադրել մասսայի առաջ միայն «յերեք կետերի» լույսի տակ։ Կարճ ասած, մեր գլխավոր պահանջն եր ինքնակալության տապալումը, այն ինչ մենշևիկները ցանկանում եյին պատվաստվել սահմանադրական միապետությանն ու կուսակցությունը ստալիպինյան ռեժիմին հարմարեցնել։ Այսպիսով, ակներև եյին յերկու իրարից խիստ տարբերվող պլատֆորմաներ, մեկը՝ Պրագայինը և մյուսը՝ Վիեննայինը, ոգոստոսյան բլոկինը։

## ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ.

Իդեպ միքանի խոսք «դեմոկրատական հանրապետության» մասին։ Բայշևիկները շատ անգամ են առաջադրել այդ պահանջը։ Սակայն հետադարձ հայացք նետելով, պետք է ընդունենք, վոր այս հարցում մեզանում 1915-1917 թվերին վորոշ պարզություն չկար։ 1905 թվից սկսած մենք կարծում եյինք, վոր Ռուսաստանը գնում է դեպի պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա, և այդ պատճառով հարցը այսպես եյինք դնում.—Յեթե մեր հեղափոխությունը հաղթական լինի, վերջապես մաքրելով ցարական ինքնակալության ավգյան ախոռը, և յեթե նա ընկնի արևմուտքում սկսվող հեղափոխության շրջանը, նա կլինի վոչ միայն դեմոկրատիկ, այլ սոցիալիստական հեղափոխության սկիզբ կդառնա։ Ընկ. Լենինի 1915 թվում գրած թեզիսներում, յերբ արդեն բարձրանում եր հեղափոխական ալիքը, մենք, այնուամենայնիվ, դեռևս դեմոկրատական հեղափոխության մասին եյինք խոսում։ Յեվ միայն հետագայում, տեսնելով այն խոշոր փոփոխությունները, վոր իմպերիալիստական պատերազմը կատարեց նաև մեզանում՝ Ռուսաստանում, և ամբողջ աշխարհում, մենք վերջնականապես ձևակերպեցինք սոցիալիստական պրոլետարական հեղափոխության մեր պլատֆորման։



## ԲԱՅՇԵՎԻԶՄԻ ԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ.

Մեր հայացքների այս եվոլյուցիան 1905 և 1917 թվերի ընթացքում մենք չենք կարող ժխտել, ինչպես և այն, վոր նա կատարվեց վորոշ դժվարությամբ, առաջացնելով մեր շարքերում 1917 թվի նախորյակին շատ վտանգավոր տարաձայնություններ։ Վտանգ մեզանից (յես եվ այդ թվում) շատ յերկար ժամանակ պաշտպանում եյին

այն միտքը, վոր մեր գյուղացիական յերկրում չի հաջողվի միանգամից սոցիալիստական հեղափոխության անցնելու, և միայն այն հույսն ունեյին, վոր յեթե մեր հեղափոխությունը զուգադիպի միջազգային պրոլետարական հեղափոխությանը, նա կարող է պրոլետարական հեղափոխության ուվերտյուրա դառնալ։ Սակայն 1914 թվի սարսափելի պատերազմը միանգամից շատ տասնամյակներով մարդկությունը մոտեցրեց սոցիալիզմի հաղթանակին։ Ճիշտ է, այդ պատերազմն անորինակ զոհեր տարավ, սակայն նա արմատախիլ արեց կապիտալիզմը, խախտեց կապիտալիստական հավասարակշռությունը, մոտեցրեց համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը, իսկ Ռուսաստանում մեր կուսակցությանը հնարավորություն տվեց կոնկրետ կերպով գնելու նրա հարցը։ Դեպքերի այսպիսի ընթացքը բայլշևիզմի հիշյալ եվոլյուցիան մեզ համար անխուսափելի յեր դարձնում...

Ի՞նչն եր բաժանում մեզ ոգոստոսյան բլոկից. մի շատ պարզ բան. մենք հեղափոխական ծրագրի կողմնակից եյինք, իսկ մեր հակառակորդները՝ բարենորոգումների ծրագրի, սահմանադրական միապետության հետ կոմպրոմիսի կողմնակիցներ եյին, վորովհետև նրանք հեղափոխությանը չեյին հավատում, համարելով այն անհնար։ Մենք նրանց հետ համաձայնության չեյինք գալիս վոչ թե այն պատճառով, վոր վիճում եյինք նրանց հետ ապագա հեղափոխության բնույթի մասին, այլ այն պատճառով, վոր նրանք պարզապես վոչ մի հեղափոխություն չեյին ցանկանում, չեյին սպասում այն և հարմարվում եյին այն ժամանակվա սահմանադրական միապետությանը։ Բայլշևիզմն այլ կերպ եր մտածում։ Ուշադիր կերպով քննելով այն ուղին, վորն անցնում եր բանվոր դասակարգն իմպերիալիստական պատերազմի որոք, մենք աստիճանաբար հեռանում եյինք «պրոլետարիատի և գյուղացիության դեմոկրատիկ դիկտատուրա» բանաձևից և մոտենում ուրիշին՝ «պրոլետարիատի դիկտատուրային, վորն իր յետևից տանում է գյուղացիությունը». մենք հեռանում եյինք «աստիճանական դեմոկրատական հեղափոխության» բանաձևից և մոտենում «խորհրդային իշխանության և պրոլետարական հեղափոխության» բանաձևին, «Հիմնադիր Ժողով» բանաձևից, վորը մենք պաշտպանում եյինք դեռևս 1917 թվի ամռանը, դեպի «խորհրդային իշխանություն» բանաձևը...

Այսպիսով, 1912 թվի վերջին, ոգոստոսյան բլոկից հետո, իրար դեմ առ դեմ կանգնած եյին յերկու ձևակերպված ուժեր, յերկուսն էլ նախկին ծանր տարիներից ապաքինված։ Բայլշևիկներն ապաքինվելով, ստեղծեցին նոր կուսակցություն, իսկ մենշևիկ-լիկվիդատորները, հաշտվողականները և միասնականության կողմնակիցները միացան մասնակի պահանջների դրոշի տակ՝ ձգտելով լեգալ կուսակցություն կազմակերպելու սահմանադրական միապետության որոք։



Ի՞նչ եր կատարվում այդ ժամանակ բանվոր դասակարգի խորքերում։ Ամեն ինչ նրա ներսում ամսե ամիս ավելի և ավելի ուժեղ կերպով եր փոթորկում։ Շարժումը գործադուլային բնույթ եր կրում։ Զեղանից շատերը մասնակցել են նրան և կհիշեն, յերևի, վոր 1912-13 թ. Պետերբուրգը, Մասկվան և բոլոր բանվորական կենտրոնները բառացի կերպով սասանում եյին անդադար գործադուլներից։ Վերջիններս ամենուրեք բռնկվում եյին։ Զգացվում եր, վոր նորից բանվորների մկանները լարվում են։ Բանվորներն այն ժամանակ ոգտվում եյին յուրաքանչյուր առիթից, վորպեսզի ամեն մի տնտեսական գործադուլ քաղաքական դարձնեն։ Մենշևիկներն անմիջապես գրոհ տվին այս գործադուլային շարժման վրա՝ նրան իրենց թշնամին համարելով։ Թե նրանց «Լուչ» թերթը, թե Զբսեիձեյի ֆրակցիան և թե նրանց ամբողջ բլոկը ծառս յելան։ Բոլորը հիշում են նրանց լրագրային հոդվածները, վորոնք պ«դում եյին, վոր Պետերբուրգի բանվորները «գործադուլային մոլությամբ» են բռնված։ Սակայն այդ հոդվածները մենշևիկների հույսերը չարդարացրին. կարդալով այդ հոդվածները, բանվորներն իսկույն ևեթ հասկանում եյին, թե ովքեր են նրանց բարեկամները, և ովքեր թշնամիները։

## «ՊՐԱՎԴԱՅԻ» ՀԱՂԹԱՆԱԿԸ.

«Պրավդան» աստիճանաբար մեկը մյուսի յետևից խլում եր գործարանները մենշևիկներից։ Բանվորներն ուղարկում եյին թերթին,— վորը կարծես թե շարժման շտաբ, կազմակերպչական կենտրոն եր դարձել,—տասնյակ և հարյուրավոր թղթակցություններ։ Արհմիությունների յուրաքանչյուր ժողով, այլ և մետաղագործների միության ընտրությունները, վորոնք խոշոր քաղաքական նշանակություն ունեյին, ինչպես և ապահովագրական դրամարկղների ընտրությունները, անցնում եյին «Պրավդայի» դրոշի տակ, վորը հանդես եր գալիս իր «պրավդիստների» կամ հետևողական մարքսիստների ցուցակներով, վորոնք պաշտպանում եյին բանվորական դեմոկրատիան և, ինչպես այն ժամանակ գրաքննության համար եյին ասում, «չխուզված» պահանջները։ Մենշևիկներն ամենուրեք պարտություն կրելով, բացատրում եյին այդ «պրավդիստական ազդեցությամբ», վորն իշխում եր Պետերբուրգի և գլխավոր քաղաքների բանվոր դասակարգի մեջ. նրանք նայում եյին այդ բոլորի վրա վորպես պատահական մի յերևույթի և դիտմամբ ականջները բամբակ եյին խցկում, վորպեսզի չլսեն բանվորական թաղերը լցնող խուլ վորոտը։

«Պրավդայի» դլխին տեղացին մեծ ռեպրեսիաներ. թերթը կանգնեցնում եյին, տուգանում եյին յուրաքանչյուր հոդվածի համար,

ձերբակալում էին նրա խմբագիրներին, այնպես վոր մի ժամանակ չեր կարելի թերթի համար սրբագրիչ անգամ գտնել։ Սակայն Պետերբուրգի հերոսական բանվորներն արիաբար ոժանդակում էին «Պրավդային», վորը, չնայած բոլոր հալածանքներին, որեցոր ամրանում եր։ Վորքան ավելի շատ հարվածներ էին տեղում նրա վրա, այնքան ավելի թանդ եր դառնում նա բանվորական մասսաների համար, այնքան բառացիորեն կոպեկ առ կոպեկ էին թերթի հրատարակության և տուգանքների վճարման համար գրամ հավաքում և անդադար իրենց միջից նորանոր խմբագիրներ էին տալիս բանտը նստելու համար։ Վոստիկանության բոլոր խորամանկությունները, վորոնք պահապան էին կանգնում տպարանի մոտ, վորպեսզի թերթի լույս տեսնելն արգելեն, նպատակին չէին հասնում շնորհիվ Պետերբուրգի բանվորների արթուն կացության և յեռանդի, վորոնք իրենց «Պրավդայի» տարածման համար զարմանալի կազմակերպություն էին ստեղծել. դեռևս եշերի ներկը չեր չորանում, վոր արդեն հարյուրավոր բանվոր-բանվորուհիներ ու նրանց յերեխաները փեշերի տակ թաքցրած ցրվում էին լրագրերը գործարաններում։ Կամաց-կամաց «Պրավդան» դարձավ յուրաքանչյուր բանվորական ընտանիքի լավագույն բարեկամը, և այժմ հնարավոր կարելի յե ասել, վոր իրոք մեր հեղափոխության և բայլշևիզմի պատմության մեջ նա պատվավոր տեղ է բռնում։

## ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.

1913 թվին և մանավանդ 1914 թվի սկզբին բանվորական շարժումն իր նոր փուլը թևակոխեց՝ գործադուլներից նորից դեպի ցույցերն ու բացարձակ ընդհարումներն անցնելով։ Կասկածից դուրս է, վոր պատերազմն սկզբում կասեցնում եր այս շարժումը։ Արդեն 1914 թվի սկզբում Պետերբուրգում առանձին բարրիկադներ կառուցվեցին, իսկ գործադուլներն այնպիսի լայն և փոթորկոտ ալիքով էին զարգանում, վոր այլևս չկար այն ուժը, վոր կարողանար այս վաղուց հասունացած շարժումը կասեցնել։ Կրկնում եմ, յեթե պատերազմը չլիներ, յերևի 1915 թվին դուք կտեսնեյիք 1905 թվին շատնման դեպքեր, այն տարբերությամբ միայն, վոր այս անգամ գյուղացիությունը շատ ավելի գիտակից կերպով հանդես կգար։ Բայց, մյուս կողմից, յեթե իմպերիալիստական պատերազմը վորոշ չափով կասեցրեց հեղափոխությունը, սակայն հետո այս պատերազմի հետևանքները հեղափոխականացրին Ռուսաստանը և մեզ համար հնարավորություն դարձրին «դեմոկրատական հեղափոխությունը» բանաձևը փոխել «պրոլետարական հեղափոխություն» բանաձևով։

1914 թվի սկզբում մեր կուսակցությունը բանվոր դասակարգի հեգեմոն եր՝ բառիս ամենալայն իմաստով։ Կուսակցությունն այդ ժամանակ անլեգալ եր։ Նրա Կենտրոնական Կոմիտեի զգալի մասն արտաքսված եր գտնվում։ Ընկ. Լենինը և միքանի այլ ընկերներ տեղափոխվեցին Կրակով։ Այնտեղից նրանք «Պրավդան» և «Զվեզդան» էին ղեկավարում, և Պետերբուրգից ել այդտեղ էին գալիս տասնյակ ընկերներ՝ կարևորագույն հարցեր քննելու համար։ Միաժամանակ մենք ունեյինք մեր շտաբները Պետերբուրգում և Մասկվայում, վորոնք աշխատում էին լեգալ և անլեգալ հողի վրա։ Ինչքանի յեր հասնում կուսակցության թիվը այն ժամանակ, դժվար է ասել։ Վերջին անգամ, յերբ կուսակցությունը կիսալեգալ եր, և մեզ հաջողվեց հաշվառում կատարել 1907 թվին Լոնդոնի համագումարում, բոլոր ֆրակցիաներում միասին վերցրած՝ բայլշևիկյան, մենշևիկյան և ազգային՝ մոտ 150,000 մարդ կար։ 1914 թվին մենք չեյինք կարող ճշտությամբ ասել, թե վորքան անդամ ունենք, բայց մենք հաստատ գիտեյինք, վոր մեզ հետևում եր կազմակերպված բանվորների խոշոր մեծամասնությունը։ Նույն թվին, ինչպես նոր ասացի, բանվորական շարժումը փողոց և դուրս գալիս։ Առաջին բարրիկադները հենց պատերազմի հայտարարման նախորյակին էին։ Այն ժամանակ դրությունն այն աստիճանի սրվեց, վոր, ամենայն հավանականությամբ, մեր ֆրակցիան կձերբակալվեր, վորովհետև Դումայի մեր ներկայացուցիչները Պետրովսկու, Մուրանովի և Բադայևի գլխավորությամբ իսկական հեղափոխական ոջախ էին դառնում։ Նրանց անընդհատ բռնոտում էին՝ Բադայևին Պուտիլովի գործարանում, անլեգալ մասսայական ժողովներում, իսկ Պետրովսկուն Դոնի ավազանի ածխահանքերի անլեգալ ժողովներում։ Այս բոլորը պարզ կերպով ապացուցում եր, վոր հեղափոխական շարժումը հսկայական քայլ է արել։ Ոգոստոսյան բլոկն անզոր դուրս յեկավ, սկսեց քայքայվել և ջլատվել, և քանի այդ պրոցեսսը զարգանում եր, նրա լավագույն մասն աստիճանաբար մեր կողմն եր անցնում։ Մենշևիկ-լիկվիդատորները, չնայած վոր լայն ժողովրդականություն ստացած մարդիկ և հռետորներ ունեյին (ինչպես Զխեիձեն Դումայում), այնուամենայնիվ բանվորական մասսաների մեջ չնչին փոքրամասնություն էին կազմում։

## ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.

Այսպիսի դրության մեջ եյինք մենք իմպերիալիստական պատերազմի սկզբին։

Նրան հետևեց կուսակցության գրեթե կատարյալ քայքայումը։ Նախ և առաջ ձերբակալվեց Դումայի մեր ֆրակցիան՝ հինգ պատգամավորներ։ (Մենշևիկներին ձեռք չտվին)։ Նրանց ձերբակալեցին Պետրոգրադի տակ գտնվող գյուղերից մեկում, ուրիշ ընկերների հետ, ան-

լեգալ ժողովի ժամանակ։ Ձերբակալված պատգամավորների մոտ գըտան մեր Կենտրոնական Կոմիտեյի կոչը իմպերիալիստական պատերազմի առթիվ, որ գրել եր ընկ. Լենինն արտասահմանում։ Այս կոչի մեջ մենք առաջին անգամ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական դարձնելու լոզունգն եյինք առաջադրում։ Այս լոզունգն այժմ լայն բանվորական մասսաների սեփականությունն է կազմում և մի ինչ-վոր ինքնըստինքյան հասկանալի բան է թվում։ Սակայն այն ժամանակ այդ այդպես չեր, և II Ինտերնացիոնալի բանակում մեզ վրա նայում եյին, բառացիորեն, որպես ժանտախտով վարակվածների վրա։ Ցերը մենք հայտարարեցինք, որ այդ պատերազմը պետք է քաղաքացիական դարձնել, ուղղել ընդդեմ բուրժուազիայի, մեզ լուրջ կերպով սկսեցին ակնարկել, թե ակներև է, թե «մեր գլխում ինչ-վոր բան պակաս է»։ Մենք դիմեցինք II Ինտերնացիոնալում գտնվող ձախերից ամենաձախին՝ Ռոբերտ Գրիմմին՝ խնդրելով, որպեսզի նա մեր կոչից համառոտ քաղվածքներ տպի, սակայն նա մեզ վրա դառն խղճահարությամբ նայեց, որպես հոգեպես հիվանդ մարդկանց վրա, և ասաց, որ չի կարող քաղաքական զառանցանք հիշեցնող դոկումենտներ տպագրել։ Իսկ յերբ մենք համարձակություն ունեցանք ասելու, որ II Ինտերնացիոնալը մնանկացավ և կործանվեց, մեզ սկսեցին պարզապես մատով ցույց տալ։ Հանաք բան եր. չե՞ որ II Ինտերնացիոնալը խոշոր հեղինակություն ուներ և, ինչպես ասում եյին, իր շարքերում մինչև 25 միլիոն կազմակերպված բանվոր ուներ։ «Ճիշտ է, նրան չհաջողվեց,—վշտանում եյին այն ժամանակվա ավգուրները՝ II Ինտերնացիոնալի ղեկավարները, ինչպես օրինակ Կաուցկին,—պատերազմի առաջն առնել, սակայն ինչ կարելի յե անել։ Չե՞ որ Ինտերնացիոնալը խաղաղ ժամանակի գործիք է, և վոչ թե պատերազմի միջոց, որի ժամանակ դասակարգային պայքարը պետք է դադարեցվի»։ Ցեվ բոլոր այս պարոնները կարծես թե պայմանավորվել եյին իրար հետ փոխադարձ ամիսատիայի վերաբերմամբ. թող գերմանական սոցիալ-դեմոկրատիան պաշտպանի իր կառավարությունը, ֆրանսիականը՝ իրը, անգլիականը՝ իրը, իսկ յերբ պատերազմը կվերջանա, այն ժամանակ բոլոր սոցիալ-դեմոկրատները կհավաքվեն միասին և, իրար մեղքերի թողություն տալով, կասեն. «Վոչինչ չի կարելի անել. մի փոքր թյուրիմացություն պատահեց՝ միքանի միլիոն բանվոր մորթոտեցին, սակայն այդ այլևս չի լինի»։ Ցեվ ահա, յերբ այս բոլորից հետո բայլևիկները՝ II Ինտերնացիոնալի մեջ մնող տասնյակ կուսակցությունների թվում մեր անլեգալ կուսակցության ներկայացուցիչները՝ նրանց յերեսին ասացին, որ նրանք գավաճաններ են, որ II Ինտերնացիոնալը խայտառակ մնանկություն կրեց, որ նրանք բանվոր դասակարգի դավաճաններ են, մեզ բարոյական բոյկոտ հայտարարեցին և մեծ ջանքով



լռում եյին այն բոլորի մասին, ինչ մենք գրում եյինք։ Մեր յելույթների վրա ուշադրություն դարձնողներից առաջինները, ինչքան ել որ այդ տարորինակ է, բուրժուական քաղաքագետներն եյին։ Մի գերմանացի պրոֆեսսոր հիշյալ կոչի և նրանից հետո լույս տեսած «Սոցիալիզմ և պատերազմ» բրոշյուրների առթիվ հանդես յեկավ գիտական ուսումնասիրությամբ, որի մեջ նա ասում եր. «Չի կարելի, սակայն, չգնահատել այս յերևույթը։ Կարելի յե մխիթարվել նրանով, որ այս մարդիկ խելագար են, բայց պետք է ինկատի ունենալ նաև այն, որ սոցիալիզմի, միջազգային բանվորական շարժման մեջ ինչ-վոր նոր հոսանք է հասունացել, և որ մենք՝ բուրժուաներս պետք է այդ ականջի յետև չգցենք»։ Ինչպես ել որ լինի, II Ինտերնացիոնալը յենթարկեց մեզ բարոյական խեցեգետության, լռում եր մեր յելույթների և մեր մասին, որպես ֆանատզյորների, որոնց յետևից վոչ վոք չի գնում, և որոնք պարզապես զառանցանքների յետևից են ընկած։

## Կ. Կ.-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՑԵՎ ՆՐԱՆՑ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.

Բավական է ասել, որ այն ժամանակ նույնիսկ այնպիսի մարդիկ, ինչպիսին Լիբկնեխտն է, որ հենց սկզբից պատերազմի դեմ արտահայտվեց, չեյին համարձակվում, այնուամենայնիվ, պատերազմական վարկերի դեմ քվեարկել՝ այնքան որ ուժեղ եր հին կուսակցական սոցիալ-դեմոկրատական դիսցիպլինայի և բուրժուական հասարակական կարծիքի ճնշումը՝ հանձինս նրա բաղմալեզու մամուլի։ Ուստի և պարզ է, թե ինչ ընդունելության հույս կարող եր ունենալ մեր Կենտրոնական Կիմետեյի կոչը։ Կոմիտեն ամբողջովին արտասահմանում չեր գտնվում։ Նրա մի մասը Պետրոգրադումն եր գտնվում, ձերբակալվեց հիշյալ դոկումենտի հետևանքով և դատի հանձվեց։ Պետք է ասել, որ այդ դատավարության ժամանակ վոչ բոլոր ընկերներն իրենց վայել հաստատակամություն ցույց տվին, սակայն մեր մի շարք ընկերները՝ առանձնապես Մուրանովը, Պետրովսկին և Բադայևը ցույց տվին, թե ինչ է հեղափոխական պարլամենտարիզմը։ Դատարանում կարդում եյին Պետրովսկու հուշատետրը, որն իր ամենորյա գործունեությունն արձանագրելու թուլությունն ուներ։ Անլեգալ աշխատանքի ժամանակ այդ, իհարկե, պետք չեր անել, սակայն Պետրովսկին իր պատգամավորական անձեռնմխելիության վրա հույս ուներ և կարծում եր, թե այդ շռայլությունը կարող է իրեն թույլ տալ։ Այս իրային ապացույցը ժանդարմերիայի ձեռքն ընկավ և կարդացվեց դատավարության ժամանակ։ Սակայն չկա չարիք առանց բարիքի։ Պետրովսկու հու-

շատերը ցույց տվեց ամբողջ աշխարհի բանվորներին, վորոնք ջերմ հետաքրքրություն եյին ցույց տալիս դեպի այդ գործը, թե ինչպես պետք է աշխատի պարլամենտում բանվորական պատգամավորը. յերբեաց, վոր Պետրովսկին որեցոր վոչ թե Դումայում հռետորական վարժություններին յեր նվիրում, այլ անլեգալ աշխատանքի՝ հավաքույթների, ժողովների և անլեգալ խորհրդակցությունների, այսինքն՝ վորպես պարլամենտական պատգամավոր անլեգալ աշխատանքը միացնում եր լեգալ աշխատանքի հետ։ Այս իմաստով Դումայի ֆրակցիայի այս դատավարությունն անպայման խոշոր նշանակություն ուներ և բայլշևիկյան աշխատանքի որինակ եր ցույց տալիս։

Բայլշևիզմն ընդհանրապես, իբաց առյալ միքանի զուտ անձնական բացառություններ, կանգնեց ինտերնացիոնալիստական և հակաշովինիստական տեսակետի վրա, այսինքն՝ ընդդեմ պատերազմի։ Մենշևիկները և, իբաց առյալ միքանի բացառություններ (որինակ՝ Մարտովի պես, վորը վճռականություն չուներ վորոշակի կերպով այս կամ վոչ ասելու) պատերազմի կողմնակիցներ եյին։ Նրանց հայացքին եյին նաև եսերները։

Պատերազմն, իհարկե, ամենալուրջ փորձն եր ամբողջ կուսակցության համար։ Այդ մի իսկական քուրա յեր, վորի միջից նա ըստիպված յեղավ անցնելու։ Սակայն նա այդ փորձին դիմացավ և մինչև վերջը շարունակեց իր ինտերնացիոնալիստական ուղղությունը՝ գործով ցույց տալով իր նվիրվածությունը բանվոր դասակարգին։ Պատահական չե այն, վոր մենշևիկները և եսերները պատերազմի կողմնակից դուրս յեկան։ Այստեղ դեպքերի տրամաբանական կապ կար։ Մենշևիկներն անցան իրենց ուղին՝ սկսելով լեգալ մարքսիզմի աջ թևից և հասնելով մինչև եկոնոմիզմ, լիկվիդատորություն, պաշտպանողականության և սոցիալ-շովինիզմ։ Գրեթե նույնը տեղի ունեցավ նաև եսերների հետ։ Իսկ բայլշևիկներն անցան «իսկրայից» դեպի բայլշևիզմ, հակալիկվիդատորություն, ինտերնացիոնալիզմ և կոմմունիզմ։

## V

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԱՆ-ՄԵՆՇԵՎԻԿՅԱՆ ՃԱԿԱՏ.

Այստեղ հետաքրքիր է հիշատակել, թե ինչպիսի արագությամբ միասնական ճակատ ստեղծվեց ռուսական բուրժուազիայի և մենշևիկների միջև. յերկու-յերեք քաղվածք այդ պարզ կերպով ցույց կտան։ Ահա թե ինչ եր գրում, որինակ, Իզգոյևը՝ կադետական կուսակցության կենտրոնական կոմիտեյի անդամը, նրա նախկին մարքսիստ մասնագետը.

Սկսեցին աշխատել իսկական պատմական ուժերը, և դուրս յեկավ, վոր «բուրժուական աշխարհին» հակադիր վոչ մի ինտերնացիոնալիստական սոցիալ-դեմոկրատիա գոյություն չունի։



Գոյություն ունեն միայն **ազգային** բանվորական կուսակցություններ, վորոնց ղեկավարներն իրենց սոցիալ-դեմոկրատներ են անվանում։ («Русская мысль», 1914 թ., ոգոստոս-սեպտեմբեր)։

Ուրիշ խոսքով, կադետական կուսակցության ամենաականավոր պարագլուխը մեծ հրճվանքով է խոսում այն մասին, վոր գոյություն ունի վոչ թե միջազգային սոցիալ-դեմոկրատիա, այլ լոկ ազգային բանվորական կուսակցություններ, վորոնցից յուրաքանչյուրը գնում է իր յերկրի բուրժուազիայի յետևից։ Ավելի բացահայտ կերպով եր արտահայտվում վոչ պակաս խոշոր կադետական լիդեր՝ Պյոտր Ռիսսը։ Այդ ժամանակներում Ռոզա Լյուքսեմբուրգը և Կարլ Լիբկնեխտը Գերմանիայում վորպես ինտերնացիոնալիստներ պատերազմի դեմ դուրս յեկան։ Թվում եր, թե ռուսական բուրժուազիան, վորն այն ժամանակ գերմանականի դեմ եր պատերազմում, պետք է վորոշ չափով վողջուներ այս յելույթը՝ իրենց նեղ դասակարգային շահերի տեսակետից գրգռված, վորովհետև այդ թուլացնում եր Վիլհելմ կայզերին։ Սակայն հակառակը պատահեց։ Բուրժուազիան գիտե, վոր բացի թռուցիկ և անցողական շահերից, նա ունի նաև արմատական դասակարգային շահեր։ Յեվ թեպետ նրա համար ձեռնտու յեր, վորպեսզի Լիբկնեխտն ու Լյուքսեմբուրգը Վիլհելմին թուլացնեին, սակայն, բուրժուազիայի լայն հեռանկարների տեսակետից, նրան ձեռնտու չեր, վորպեսզի պատերազմող յերկրում՝ Գերմանիայում, բայլշևիզմ և վորոշակի ինտերնացիոնալիստական հոսանք հանդես գային։ Յեվ ահա Պյոտր Ռիսսը գրում եր.

Գերմանիայի քաղաքական-տնտեսական շահերի տեսակետից Ռոզա Լյուքսեմբուրգը և նրա սակավաթիվ համախոհներն այնպիսի մարդիկ են, վորոնք պարտականության գիտակցություն չունեն իրենց հայրենիքի հանդեպ։ Յեվ յեթե ճշմարտության աչքերին նայելու լինենք և չթաքնվենք յերեսպաշտ ֆրազների տակ, **պետք է ասենք, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատիայի վարքագիծը որինական յեվ խելացի յե, ինչպես յեվ որինական ու խելացի յե Ֆրանսիայի, Բելգիայի յեվ Մեծ-Բրիտանիայի սոցիալ-դեմոկրատիայի վարքագիծը։ Ընդհակառակը, Ռոզա Լյուքսեմբուրգը յեվ Կարլ Լիբկնեխտը օբյեկտիվորեն խոշոր սխալ են կատարում՝ ցուցահանելով տեղի, ժամանակի մասին հասկացողության բացակայություն։** („Русская мысль,“ 1915, IV, յերես 12)։

Այս խոսքերը պետք է լավ հիշել։ Ռուսական բուրժուազիան՝ պատերազմելով Գերմանիայի հետ՝ հայտարարեց միաժամանակ, վոր Ռոզա Լյուքսեմբուրգը և Կ. Լիբկնեխտը վատ մարդիկ են, վորովհետև նրանք դավաճանեցին իրենց պարտականությանը «հայրենիքի» հան-

դեպ։ Ռուսական բուրժուազիան արհամարհում եր գերմանականին և Վիլհելմին տանել չեր կարող, սակայն նա չեր մոռանում, այնուամենայնիվ, վոր Ռ. Լյուքսեմբուրգը և Կ. Լիբկնեխտն իրենց յելույթներով թուլացնելով նրա հակառակորդին, միաժամանակ ինտերնացիոնալիզմի ուղին եյին հարթում և այդ պատճառով նրանց թշնամիներն եյին։ Այսպիսով ռուսական բուրժուազիան միանգամից սոցիալ-դեմոկրատիայի, այսինքն մենշևիզմի պաշտպանության ուղիով գնաց։

Նարոդնիկները Կերենսկու բերանով հենց սկզբից հայտարարեցին, վոր նրանք պատերազմի կողմնակից են։ Կերենսկին Պետական Դումայում մի ճառ արտասանեց, ուր նա բառացի կերպով ասաց. «Մենք անսասան համոզված ենք, վոր ռուսական մեծ դեմոկրատիան յերկրի ներսից ուժերի հետ միացած՝ համառ դիմադրություն ցույց կտա մեզ վրա հարձակված թշնամուն»։ Այդ վերին աստիճանի կարևոր հայտարարություն եր։ Այդ բոպեին Կերենսկին, այսպես ասած, բուրժուազիայի ապագա մինիստրի իր թեկնածությունը դրեց։

## ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ.

Մենշևիկները Պետրոգրադի բանվորներին գրավեցին այսպես կոչված ռազմարդյունաբերական կոմիտեների մեջ։ Վերջիններս կազմակերպվել են ակտյաբրիստների և առևտրական-կալվածատիրական բուրժուազիայի խոշորագույն ներկայացուցչի՝ Գուչկովի թևի տակ, վորն այս միջոցը հնարեց, վորպեսզի գործարանների արտադրողականությունը բարձրացնի և ավելի հաջող պատերազմի։ Պետրոգրադի բանվորների միջև տաք վիճաբանություններ սկսվեցին. մասնակցել թե՞ չմասնակցել բուրժուազիայի հնարած այդ գործին։ Բանվոր-բայլշևիկները, վորպես հետևողական ինտերնացիոնալիստներ, հրաժարվեցին այդ կոմիտեներին մասնակցելուց, վորոնք ցարական կառավարության ֆիլիալ որգաններն եյին և պետք է նրան ոգնեյին պատերազմ շարունակելու։ Մենշևիկները տիրահնչակ Կուզմա Գվազդյովի գլխավորությամբ, վորը հետագայում կոալիցիոն կառավարության մինիստրներից մեկը դարձավ, ռազմարդյունաբերական կոմիտեների մեջ մտան։ Եսերներից վոչ վոք, բացառությամբ միքանի առանձին անհատների, ինչպես Չերնովը և Նատանսոնը, վորոնք վորոշ չափով փորձում եյին կռվել Կերենսկու հայացքների դեմ, բացարձակ կերպով չեր առարկում այս շովինիզմի դեմ։

Վորպես ռուսական շովինիզմի գլխավոր ռահվիրա հանդես յեկավ Պլեխանովը, մի բան, վոր առանձնապես դժվար եր, վորովհետև նա II Ինտերնացիոնալում մեծ հեղինակություն ուներ և, չնայած իր բոլոր տատանումներին, վոչ պակաս ազդեցություն ուներ



նաև մեր կուսակցության մեջ։ Պլեխանովն իրեն ցույց տվեց վորպես կատաղի գերմանատյաց և մինչև վերջը հետևողական սոցիալ-շովինիստ։ Նա մինչև այնտեղ հասավ, վոր պատերազմն արդարացի ճանաչեց ցարի կողմից։ Նա հայտարարում եր. «Յես հին հեղափոխական եմ. դուք գիտեք, վոր յես քսան և հինգ տարի պայքարում եմ ցարիզմի դեմ և վոր յես նրա ձեռքից շատ տուժեցի։ Յեվ ահա, յես ասում եմ, վոր այն պատերազմը, վոր հիմա Ռուսաստանն է մղում, արդարացի պատերազմ է, և վոր այս ամբողջ ժամանակի ընթացքում մենք պետք է դադարեցնենք ամեն մի պայքար ընդդեմ ռուսական կառավարության»։ Մենշևիկների շովինիզմը մինչև այն տեղը հասավ, վոր, որինակ, Յորդանսկին (նա այն ժամանակ անսասնձահարելի շովինիստ եր, իսկ այժմ մեր կողմն է անցել) այն Յորդանսկին, վորը «Սավրեմենների մեր» ամսագիրն եր խմբագրում, դեսեղեց Կլեյնբուրգի հոդվածը, վորը գրում եր.

> Կարծես ձեռքի մի շարժումով հանդավ Պետերբուրգի բանվորությունը, և վերջացան Մասկվայի ու Բագվի շրջանի գործադուլները. բանվորները՝ մոմենտի պատմական նշանակության լրիվ գիտակցությամբ՝ ընդդեցին, վոր ժամանակ չի ներքին պայքարը սրելու։

Այս բառերի մեջ պարունակվում է ուղղակի դավաճանություն բանվոր դասակարգի դեմ, վորովհետև նրան կոչ եյին անում դադարեցնել ամեն տեսակի, նույնիսկ տնտեսական, պայքարն ընդդեմ կապիտալիստների։

Պատերազմի նախորյակին, Բրյուսսելում, II Ինտերնացիոնալի Միջազգային Բյուրոյին կից կայացավ նրա նախագահ Վանդերվելդեյի հրավիրած կոնֆերանսը, վորը նպատակ ուներ ռուսական կուսակցության մեջ գոյություն ունեցող բոլոր հոսանքներն ել՝ թվով 7, հաշտեցնել։ Այս կոնֆերանսում խոշոր մեծամասնությունը մեր դեմ բանաձև հանեց՝ պնդելով, վոր ամեն բանի համար բայլշևիկներն եյին մեղավոր, և այլն։ Այն ժամանակ մենք դեռևս պաշտոնապես II Ինտերնացիոնալից դուրս չեյինք յեկել և ստիպված եյինք վորոշ չափով նրա վորոշումները հաշվի առնել։ Սակայն մենք այդ միայն ձևականորեն եյինք կատարում, իսկ իրականության մեջ մեր գիծն եյինք տանում։ Յերբ պատերազմը պայթեց, Վանդերվելդեյի Բրյուսսելում հավաքած գրեթե բոլոր յոթ հոսանքները սոցիալ-շովինիստներ դուրս յեկան՝ բացի բայլշևիկներից։ Կուսակցություն, վորպես ամբողջական կազմակերպություն, այն ժամանակ չկար։ Միայն բայլշևիկներն եյին կուսակցության գրոշը պաշտպանում և ընդունում եյին ցարիզմի բոլոր հարվածները։ Ինտերնացիոնալիզմն աքսորով եր պատժվում. լեգալ բայլշևիկյան շարժման վերջին ոջախներն ել ճնշվեցին։

## ՑԻՄՄԵՐՎԱԼԴԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ.

Առաջին տարիներին թվում եր, թե մենք մենակության ենք դատապարտված։ Կենտրոնական Կոմիտեյի անդամների այն մասը, որն արտասահմանումն եր գտնվում, աշխատանք սկսեց Ինտերնացիոնալիստներին միջազգային մասշտաբով համախմբելու ուղղությամբ։ Մենք մասնակցում եյինք Ցիմմերվալդի կոնֆերանսին, որտեղ թույլ փոքրամասնություն եյինք կազմում, և ցիմմերվալդյան ձախ թև կազմակերպեցինք, որը ծառայեց որպես ապագա III Ինտերնացիոնալի առաջին հատիկը։ Այն ժամանակ մեզ միացան միայն գերմանական ընկերների մի փոքրիկ խումբ, այլ և միքանի շվեդ և լատիշ ընկերներ։ Ցիմմերվալդին մասնակցող մնացածները՝ բոլոր սոցիալ-դեմոկրատները դեռևս այդ միավորման դեմ եյին դուրս գալիս։ Ցիմմերվալդում մեծամասնությունն իմպերիալիստական պատերազմին դեմ արտահայտվեց, սակայն և ընդդեմ քաղաքացիականի։ Դրանք պացիֆիստներ եյին, որոնք բացահայտ կերպով չեյին ուզում դավաճանել բանվոր դասակարգին, և որոնք, սակայն, միաժամանակ չեյին հավատում ոչ պրոլետարական հեղափոխությանը և ոչ քաղաքացիական պատերազմին և ուզում եյին պատերազմական վարկերի դեմ քվեարկելով և սրա նման միջոցներով սահմանափակվել։ Նրանց գլուխ կանգնած եր Լեդեբուրը։ Նրա և ընկ. Լենինի միջև Ցիմմերվալդում տեղի ունեցավ բուռն պայքար։ Լեդեբուրն ասում եր. «Նրան (Լենինին) հեշտ է արտասահմանում նստած քաղաքացիական կռիվ քարոզել, ապա թող մի Ռուսաստան գնա և ցույց տա, ով է նրա յետևից գնում»։ II Ինտերնացիոնալում ասում եյին, որ մենք պարզապես տարորինակ մարդիկ ենք, որոնց Ռուսաստանում ոչ ոք չի հետևում, և որ այդ կարող են հաստատել Կուզմա Գվազդյովը, Զիսիձեն և Կերենսկին։ Յեվ իրոք, II-րդ Ինտերնացիոնալի զգալի մասն այդ գործն այդպես ել պատկերացնում եր.—գուցե և բայլշևիկներն իրավացի յեն, սակայն նրանք միայնակ են, նրանք չունեն բանվորական մասսա, և ոչ ոք նրան չի հետևի։

## ԸՆԿ. ԼԵՆԻՆԸ ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ.

Ցիմմերվալդում մենք փոքրամասնություն կազմեցինք։ Գերմանական բանվորների և մեր արտասահմանյան կազմակերպությունների չնչին փշրանքներից, բառացի կերպով կոպեկներից, մենք ձախ ցիմմերվալդյան առաջին բջջի հիմքը դրինք, որն սկսեց գերմաներեն «Vorbote» («Նախադուշակ») ամսաթերթը հրատարակել, ուր զետեղվեցին Լենինի, Ռոլանդ-Հոլստի, Ռադեկի և ուրիշների սքանչելի հոդվածները։ Այս ամսագրի շուրջն սկսեցինք մենք միջազգային մասշտաբով մեր ուժերը հավաքել։ Ստիպված եյինք աշխատել Շվեյցարիայում, որը պատերազմից զերծ եր մնացել։ Այս փոքրիկ յերկիրը, իր փոքրաթիվ բանվոր դասակարգով, ոչ մի լուրջ տեսակարար կշիռ միջազգային պրոլետարական հեղափոխության մեջ չեր կարող ունենալ։ Շվեյցարական ս.-դ. կուսակցությունը մեծ մասամբ մեշչանական եր, և յերբ ընկ. Լենինին մնում եր միայն Ցյուրիխում հավաքել բանվորական յերիտասարդության փոքրիկ խմբակներ, որպեսզի նրանց դասախարակի ընդդեմ պատերազմի, այդ կուսակցության մեջ հարց հարուցեցին նրան հեռացնելու մասին, որպես յերիտասարդության մեջ պատերազմի դեմ հանցագործ պրոպագանդ մղողի։

1915-16 թվերի ընթացքում մենք չնչին փոքրամասնություն եյինք կազմում, որ փորձում եր առաջին միջազգային կապերը հաստատել և ձգտում եր ռուսական դեպքերից յետ չմնալ։

Սկսած 1916 թվի յերկրորդ կեսերից մեր կապերը Ռուսաստանի հետ ավելի հաստատ եյին դառնում։ Մենք սկսում ենք բանվորական թղթակցություններ ստանալ և աստիճանաբար պարզում ենք, որ բանվորները պարզապես պատերազմի դեմ են տրամադրվում։ Մեր «Սոցիալ-դեմոկրատ» թերթը, որը մենք այն ժամանակ հրատարակում եյինք, և որից հոդվածներ են արտատպված «Հոսանքի հակառակ» ժողովածուի մեջ, չնայած բոլոր արգելքներին, սակավ որինակներով Ռուսաստան եր հասնում, և այնտեղ այն աստիճանի տարվում եյին նրա ընթերցանությամբ, որ արտագրում եյին։ Այդ լրագիրը խոշոր դեր խաղաց, չնայած որ կրում եր «Սոցիալ-դեմոկրատ» հնացած անունը։ Ներկա ժամանակներում այս բառը մի խայտառակ մականուն է թվում, բայց չէ՞ որ մեր կուսակցությունը վերանվանվեց միայն 1918 թվին։

## ԲԱՅԼՇԵՎԻԶՄԻ ՅԵՎ ՄԵՆՇԵՎԻԶՄԻ ՈՒՂԻՆԵՐԸ.

Բայլշևիզմն իմպերիալիստական պատերազմի ժամանակ ապացուցեց, որ իզուր չանցավ նրա քսան և հինգ տարվա աշխատանքը։ Միջազգային տակտիկայի ամուր հիմքը դնելով՝ նա համոզեց բանվորներին, որ իր ճանապարհին, սկսած լեգալ մարքսիզմից և վերջացրած իմպերիալիստական պատերազմի արխի-անլեգալ շրջանով, նա միշտ ել իր գաղափարին հավատարիմ մնաց։ Միքանի սխալներն, իհարկե, անխուսափելի եյին, սակայն և այնպես այն գիծը, որը նա վարում եր, —կոմունիստական հեղափոխական տակտիկայի ուղիղ գիծն եր։ Մենշևիկներն ել իրենց ուղիղ գիծն ունեն, սակայն նա լեգալ մարքսիզմից գնում է դեպի եկոնոմիզմ, հետո՝ լիկվիդատորություն և սոցիալ-շովի-

նիզմ. այդ ռեֆորմիստական մանր-բուրժուական հաջորդականության գիծն է։ Իմպերիալիստական պատերազմը, վորը հանդես յեկավ վորպես ահեղ ճգնաժամ ամբողջ մարդկության համար ընդհանրապես և բանվորական շարժման համար մասնավորապես, պարզ կերպով և վերջնականապես ցույց տվեց յուրաքանչյուր հոսանքի իսկական դեմքը։ Միջազգային սոցիալիզմի բանակում յերեք հոսանք կազմվեց՝ մի կողմից՝ սոցիալ-շովինիզմ, մյուս կողմից՝ ինտերնացիոնալիզմ կամ կոմմունիզմ, և յերրորդ հոսանքը, Կաուցկու գլխավորությամբ, ինչպես նրան անվանում եյին, «կենտրոնի հոսանքն» եր, միջին գիծը, վորին յերկար ժամանակ հարում եր Մարտովը, և վորին հետևում է արդի Անկախ Գերմանական Կուսակցությունը։

## «ԿԵՆՏՐՈՆԻ ՀՈՍԱՆՔԸ».

Այս միջին հոսանքը մենք ամենավտանգավորն եյինք համարում և նրա դեմ պայքարելու համար կենտրոնացրինք մեր ամբողջ ուժերը։ Այդ և հասկանալի յել է։ Բացարձակ շովինիստները, ինչպես, որինակ, Պլեխանովը, վորը հայտարարեց, թե ցարը «արդարացի» պատերազմ է մղում, բացահայտ կերպով եյին հանդես գալիս։ Այս տակտիկայից մեզ համար մեծ վնաս չկար, վորովհետև բանվորները վերջիվերջո կըհասկանային այն և վաղ թե ուշ նրա ներկայացուցիչներից յերես կըդարձնեյին։ Շատ ավելի վտանգավոր եր «կենտրոնի հոսանքը», վորի կողմնակից եյին II Ինտերնացիոնալի բոլոր, կամ գրեթե բոլոր հեղինակավոր ներկայացուցիչները, վորոնք հանդես եյին գալիս պառակտման դեմ։ Ահա թե ինչու, յերբ գերմանական սոցիալ-դեմոկրատիան պառակտվեց, բայլշևիկյան կենտրոնական Կոմիտեն այդ շատ կարևոր դեպք համարեց, հասկանալով, վոր գերմանական բանվոր դասակարգի վրին ծանրացած եր միասնականության գաղափարը, վոր ուժասպառ եր անում նրա այն խմբերին, վորոնք ուզում եյին պատերազմի դեմ դուրս գալ։

Այսպիսով, սկսած 1910 թվի պլենումից, մենք այլևս մենշևիկների հետ չենք գործում վորպես միասնական կազմակերպություն։ 1914-17 թ. թ. ամբողջ պատերազմի ընթացքում մենք գոյություն ունեցանք վորպես առանձին կուսակցություն։ Մենշևիկներն ընդհանրապես համաշխարհային սպանդանոցի պաշտպան եյին, ռազմարդյունաբերական կոմիտեների գործունեությունն եյին քաջալերում և կադետական բուրժուազիայի հետ բլոկ եյին կազմել։ Բայլշևիկները նույն ժամանակներում իրենց աշխատանքն եյին վարում, վորը կրկնակի բնույթ եր կրում։ Մի կողմից նրանք, ովքեր արտասահման եյին ընկել, այնտեղ հատիկ առ հատիկ ձախ Ցիմմերվալդի ապագա ներկայացուցիչներին, Կոմմունիստական Ինտերնացիոնալի ապագա կողմնակիցներին եյին հավաքում, իսկ ովքեր Ռուսաստանում եյին գտնվում, պատերազմում եյին ռազմարդյունաբերական կոմիտեների և շովինիստների դեմ՝ հավաքելով և համախմբելով բանվորներին հանուն պրոլետարական հեղափոխության պայքարելու համար։

## ՍՈՑԻԱԼ-ՇՈՎԻՆԻԶՄԻ ՃՆՇՈՒՄԸ.

Շովինիզմը չխնայեց նաև ռուս բանվորներին։ Այդ յերևում է թեկուզ նրանից, վոր փետրվարյան հեղափոխության առաջին կեսին նույնիսկ Պետերբուրգի նման քաղաքների բանվորների խոշոր մեծամասնությունը մենշևիկների և եսերների կողմն եր։ Ընդհանրապես հետադարձ հայացք նետելով, մենք համոզվում ենք, թե ինչպիսի հզոր զենք եր մեր թշնամիների ձեռքին պատերազմը, յերբ «հայրենիքը վտանգի մեջ է» խաբուսիկ լոզունգների շնորհիվ և ոգտվելով այնպիսի անհամեմատ գործիքից, ինչպիսին II Ինտերնացիոնալն է, բուրժուազիան կարողացավ շովինիզմով վարակել նույնիսկ Ռուսաստանի յերիտասարդ, մարտական հեղափոխական վոգևորությամբ լի բանվոր դասակարգին։ Պետերբուրգի բանվորները, վորոնք 1914 թվին, պատերազմից յերկու-յերեք շաբաթ առաջ, ցարիզմի դեմ բարբիկադներ եյին կառուցում, փետրվարյան հեղափոխության սկզբում մի քանի ամիսների ընթացքում մենշևիկների և եսերների, այսինքն՝ սոցիալ-շովինիզմի կողմնակից եյին։ Ահա թե ինչու իմպերիալիստական պատերազմի ծանր դասերը բանվոր դասակարգի համար միաժամանակ և շատ արժեքավոր են. և ահա թե ինչու, մյուս կողմից, խոշոր է բայլշևիկյան կուսակցության այդ պատերազմի ընթացքում մատուցած ծառայությունը, յերբ բանվոր դասակարգի մեջ փոքրամասնություն կազմելով, նա, այնուամենայնիվ, իր դրոշը չծածկեց, այլ հոսանքին հակառակ գնաց և բանվորներին նրանց փառավոր Հոկտեմբերյան հաղթանակին հասցրեց։

Փետրվարյան հեղափոխությունը և կուսակցության դերը նրա մեջ, առավել ևս Հոկտեմբերյան Հեղափոխությունը և կուսակցության դերը նրա մեջ, քիչ թե շատ մանրամասն շարադրելու դեպքում կպահանջվեյին մի տասնյակ նոր դասախոսություններ։ Յես չեմ կարող այդ անել։ Յես իմ առանց այնել սխեմատիկ և վոչ լրիվ շարադրանքը մինչև Փետրվարն եմ հասցնում։ Յես գրեթե վոչինչ չասացի իմ լուսաբանած շրջանի Ռուսաստանի եկոնոմիկայի մասին։ Այդ, իհարկե, խոշոր բաց է։ Յես բավականացա կուսակցության պատմությամբ, բառիս նեղ իմաստով, և չտվի նույնիսկ հեղափոխության մանրամասն պատմությունը։ Իմ խնդիրն եր միայն ոգնել ձեզ **ըմբռնելու** կուսակցության պատմության ուսումնասիրությունը։ Մնացածն ինքներդ պետք է անեք։

Փետրվարյան հեղափոխությանը մեր կենտրոնական Կոմիտեն մասամբ արտասահմանում եր, մասամբ՝ աքսորում ու բանտերում։ Կուսակցությունը կարծես թե գոյություն չուներ. նա ցրված և ջախջախված եր։ Սակայն, չնայած այս բոլորին, նրա քսան և հինգ տարվա ընթացքում կատարած աշխատանքն իր հետևանքները տվեց։ Մեր կուսակցությունն իսկական հեղափոխական կուսակցություն եր և այդ պատճառով նա վոչ միայն այն ժամանակ եր աշխատում, յերբ նա գոյություն ուներ վորպես յերարխիկ և սերտ միաձուլված-կազմակերպություն, այլ և այն ժամանակ, յերբ առաջին հայացքից նա կարծես թե բոլորովին չկար ել, յերբ նա ամբողջովին գաղտնի աշխատանքի յեր գնում։ Այսպես և հեղափոխական պրոցեսսի դիալեկտիկան, և հենց այսպես ել եր նաև մեր կուսակցությունը։ Քանիցս ցարիզմի յերկար տարիների ընթացքում թվում եր, վոր նա բոլորովին քայքայված և, առանձին միավորներ և միայն հաշվում իր շարքերում, սակայն շնորհիվ նրա աշխատանքի, բանվոր դասակարգի գիտակցության մեջ կուտակվում եյին բոլոր այն ելեմենտները, վորոնք անհրաժեշտ եյին համառուսական մեծ կուսակցություն ստեղծելու համար։ Յեվ մեր կուսակցությունը վերածնվում եր վորպես Ֆենիկսը մոխրից։ Նա վճռական դեր չխաղաց Փետրվարյան հեղափոխության մեջ և չեր ել կարող խաղալ, վորովհետև բանվոր դասակարգն այն ժամանակ պաշտպանողական տրամադրություն ուներ. բայց հետո, միքանի ամիսների ընթացքում, նա իր կապիտալը ռեալիզացիայի յե յենթարկում, վոր նա մուծել եր 20-30 տարվա ընթացքում բանվորական շարժման մեջ, և վորպես վառ փարոս փայլող պրոլետարիատի հեգեմոնիայի լույսի տակ նա ռուսական բանվոր դասակարգն ազատագրեց մենշևիկ-եսերական գերությունից և բուրժուազիայի դեմ կատարյալ հաղթանակի հասցրեց։

---

# ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ.

Հիսուն տարի սրանից առաջ Յեվրոպայի վրայով անցավ 1848 թվի հեղափոխության կենդանարար մրրիկը։

Ժամանակակից բանվոր դասակարգն առաջին անգամ բեմ դուրս յեկավ վորպես խոշոր պատմական ուժ։ Նրա ջանքերով բուրժուազիային հաջողվեց շատ հնացած ֆեոդալական-միապետական կարգեր վերացնել։ Սակայն բուրժուազիան շատ շուտ նկատեց, վոր իր նոր դաշնակիցն իր ամենավոխերիմ թշնամին ե, և թե՛ իրեն, թե՛ նրան և թե՛ ազատության գործը ռեակցիայի ձեռքը մատնեց։ Սակայն արդեն ուշ եր. վորոշ ժամանակով խաղաղված բանվոր դասակարգը 10-15 տարի հետո նորից յերևաց պատմության բեմի վրա, սակայն կրկնապատկված ուժերով, աճած ինքնագիտակցությամբ, վորպես իր վերջնական ազատագրման համար միանգամայն հասունացած մարտիկ։

Այս ամբողջ ժամանակի ընթացքում Ռուսաստանը ըստ յերևույթին այս պատմական շարժման մեծ ճանապարհից հեռու յեր մնում։ Դասակարգերի պայքարն այնտեղ չեր յերևում, սակայն նա կար և, վոր գլխավորն ե, ավելի հասունանում եր և աճում։ Ռուսական կառավարությունը գովասանքի արժանի ջանասիրությամբ ինքն եր դասակարգային պայքարի սերմեր ցանում՝ ընչազուրկ դարձնելով գյուղացիներին, հոլանավորելով կալվածատերերին, աշխատավոր բնակչության հաշվին կերակրելով և չաղացնելով խոշոր կապիտալիստներին։ Սակայն բուժուա-կապիտալիստական հասարակակարգն անհնար ե առանց պրոլետարիատի կամ բանվոր դասակարգի։ Վերջինս կապիտալիզմի հետ ծնվում ե, նրա հետ աճում և վորքան ամրանում ե, այնքան ավելի ու ավելի յե առիթ ունենում բուրժուազիայի դեմ պայքարելու։

Ռուս գործարանային բանվորը, ճորտ թե ազատ, միշտ ել գաղտնի և բացարձակ պայքար եր մղում իր շահագործողների դեմ։ Կապիտալիզմի զարգացման հետ աճում եյին նաև այս պայքարի չափերը, նրանք բանվորական շարժման ավելի և ավելի մեծ շերտեր եյին ընդգրկում։ Ռուսական պրոլետարիատի դասակարգային գիտակցության արթնացումը և տարերային բանվորական շարժման աճումը զուգադիպեցին միջազգային սոցիալ-դեմոկրատիայի՝ ամբողջ աշխարհի գի-

տակից բանվորների դասակարգային պայքարի և դասակարգային իդեալի կրողի՝ վերջնական զարգացման հետ։ Ռուսական բանվորական բոլոր նորագույն կազմակերպությունները միշտ էլ իրենց գործունեության ընթացքում, գիտակցաբար թե անգիտակցաբար, սոցիալ-դեմոկրատական գաղափարների վոգով էին գործում։ Բանվորական շարժման և նրա վրա հենվող սոցիալ-դեմոկրատիայի ուժն ու նշանակությունն ապացուցում են Ռուսաստանում և Լեհաստանում վերջերս տեղի ունեցած մի շարք գործադուլները, մանավանդ Պետերբուրգի ջուլհակների և մանարարների գործադուլները 1896 և 1897 թվերին։ Այս գործադուլները կառավարությանն ստիպեցին 1897 թ. հունիսի 2-ի որենքը հրատարակելու բանվորական ժամանակի տևողության մասին։ Այդ որենքը, վորքան էլ մեծ էին նրա թերությունները, ընդմիշտ կմնա այն հզոր ճնշման հիշատակելի ապացույցը, վորը գործում է բանվորների միացյալ ուժը կառավարության որենսդրական և այլ գործունեության վրա։ Զուր է միայն կառավարությունը կարծում, վոր նա դիջումներով կարող է բանվորներին հանգստացնել։ Ամենուրեք բանվոր դասակարգն այնքան ավելի պահանջկոտ է դառնում, վորքան ավելի շատ բան են տալիս նրան։ Նույնը տեղի կունենա նաև ռուսական պրոլետարիատի հետ։ Նրան մինչ այժմ տալիս էին այն ժամանակ միայն, յերբ նա պահանջում էր, և այսուհետև էլ կտան այն միայն, ինչ նա կպահանջի։

Իսկ ինչեր չեն հարկավոր ռուս բանվոր դասակարգին։ Նա բոլորովին զուրկ է այն ամենից, ինչից ազատ և հանգիստ կերպով ոգտվում են նրա արտասահմանյան ընկերները՝ պետության կառավարչության մեջ մասնակցելուց, բանվոր և տպագիր խոսքի ազատությունից, միությունների և ժողովների ազատությունից—մի խոսքով՝ բոլոր այն միջոցներից և գենքերից, վորոնցով արևմտա-յեվրոպական և ամերիկյան պրոլետարիատը բարելավում է իր դրությունը և պայքարում է հանուն իր վերջնական ազատագրման մասնավոր սեփականությունից և կապիտալիզմից՝ հանուն սոցիալիզմի։ Քաղաքական ազատությունն անհրաժեշտ է ռուսական պրոլետարիատին, ինչպես մաքուր ոդն անհրաժեշտ է առողջ շնչառության համար։ Այդ ազատությունը նրա ազատ զարգացման և մասնակի բարելավումների ու վերջնական ազատագրման համար մղվող պայքարի հիմնական պայմանն է։

Սակայն իրեն անհրաժեշտ քաղաքական ազատությունը ռուս պրոլետարիատը կարող է ձեռք բերել միայն ինքը։

Ինչքան ավելի դեպի Յեվրոպայի արևելքը գնանք, այնքան քաղաքական տեսակետից ավելի թույլ, վախկոտ և նենգ է դառնում բուրժուազիան, այնքան ավելի մեծ կուլտուրական և քաղաքական խնդիրներ են վիճակվում պրոլետարիատին։ Քաղաքական ազատության գործը



ռուսական բանվոր դասակարգն իր ուժեղ ուսերի վրա պետք է տանի և կտանի։ Այդ՝ պրոլետարիատի մեծ պատմական այն միսսիայի անհրաժեշտ, սակայն լոկ առաջին քայլն է, վորի նպատակն է այնպիսի հասարակակարգ ստեղծել, վորտեղ տեղ չի դտնի մարդուս և վոչ մի շահագործում մարդու կողմից։ Ռուս պրոլետարիատն իր վզից կը-թոթափի ինքնակալության լուծը, վորպեսզի ավելի մեծ յեռանդով շարունակի պայքարն ընդդեմ կապիտալիզմի և բուրժուազիայի՝ մինչև սոցիալիզմի լիակատար հաղթանակը։

Ռուսական բանվորական շարժման առաջին քայլերը չէին կարող վորոշ չափով ջլատված, պատահական, միասնականությունից և ծրագրից զուրկ չլինել։ Այժմ հասել է այն ժամանակը, յերբ անհրաժեշտ է ռուսական սոցիալ-դեմոկրատիայի տեղական ուժերը, խմբակներն ու կազմակերպությունները համախմբել վորպես միասնական «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն»։ Այս գիտակցությամբ է, վոր «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունների», «Ռաբոչայա գազետա» հրատարակող խմբակի և «Ռուսաստանի և Լեհաստանի համահրեական բանվորական Միության» ներկայացուցիչները համագումար հրավիրեցին, վորի վորոշումները բերվում են ստորև։

Տեղական խմբակները, վորպես մի կուսակցություն միավորվելով, գիտակցում են այս քայլի և նրանից բղխող պատասխանատվության ամբողջությունը։ Սրանով նրանք վերջնականապես ամրապնդում են ռուսական հեղափոխական շարժման անցումը դեպի գիտակցական դասակարգային պայքարի նոր շրջան։ Ինչպես շարժումը, այնպես էլ ուղղությունը սոցիալիստական է. Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը շարունակում է Ռուսաստանի ամբողջ նախընթաց հեղափոխական շարժման գործն ու տրադիցիաները. կուսակցության հերթական խնդիրներից կարևորագույնը համարելով քաղաքական ազատության նվաճումը, սոցիալ-դեմոկրատիան գնում է դեպի այն նպատակը, վորը պարզ կերպով առաջադրել էին հին «Նարոդնայա վոլյայի» փառավոր գործիչները։ Սակայն սոցիալ-դեմոկրատիայի ընտրած միջոցներն ու ուղիներն այլ են։ Նրանց ընտրությունը նրանով է ընորոշվում, վոր նա գիտակցաբար և ուղում կազմակերպված բանվորական մասսաների դասակարգային շարժումը լինել և մնալ։

Նա հաստատ համոզված է, վոր բանվոր դասակարգի ազատագրումը միայն նրա սեփական գործը կարող է լինել, և անշեղ կերպով իր բոլոր գործողությունները կշարմարեցնի միջազգային սոցիալ-դեմոկրատիայի այս հիմնական սկզբունքներին։

Կեցցե՛ ռուսական, կեցցե՛ միջազգային սոցիալ-դեմոկրատիան։

---

# Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ԿԵՆՏԿՈՄԻ ՄԱՆԻՖԵՍՏԸ

Տասնամյակների ընթացքում բոլոր յերկրների կառավարությունների և բուրժուական կուսակցությունների կողմից նախապատրաստած յեվրոպական պատերազմը պայթեց։ Սպառազինությունների աճումը, առաջավոր յերկրների կապիտալիզմի զարգացման նորագույն իմպերիալիստական շրջանում՝ շուկաների գրավման համար մղվող պայքարը, ամենահետամնաց արևելա-յեվրոպական միապետությունների դինաստիական շահերն անխուսափելիորեն պետք է հանգեցին և հանգան այս պատերազմին։ Հողերը բռնագրավել և ոտար ազգերին նվաճել, մրցող ազգին քայքայել, Ցրա հարստությունները թալանել, աշխատավորական մասսաների ուշադրությունը Ռուսաստանի, Գերմանիայի, Անգլիայի և այլ յերկրների ներքին քաղաքական ճգնաժամից հեռացնել, բանվորներին ջլատել և ազգայնական մտքերով հիմարացնել և պրոլետարիատի հեղափոխական շարժումը թուլացնելու նպատակով նրա ավանգարդը վոչնչացնել—ահա ժամանակակից պատերազմի միակ իսկական բովանդակությունը, նշանակությունն ու իմաստը։

Սոցիալ-դեմոկրատիայի պարտականությունն է նախ և առաջ պարզել պատերազմի այս իսկական նշանակությունը և անխնա կերպով մերկացնել տիրապետող դասակարգերի՝ բուրժուազիայի և կալվածատերերի պատերազմի պաշտպանության համար տարածած խաբեությունը, սոփեստությունը և «հայրենասիրական ֆրազները»։

Պատերազմող ազգերի մի խմբի գլուխ կանգնած է գերմանական բուրժուազիան։ Նա հիմարացնում է բանվոր դասակարգին և աշխատավորական մասսաներին՝ հավատացնելով, վոր պատերազմը մղում է հանուն հայրենիքի, ազատության և կուլտուրայի պաշտպանության, հանուն ցարիզմի լծի տակ ճնշված ժողովուրդների ազատագրման, հանուն ռեակցիոն ցարիզմի տապալման։ Իսկ իրականության մեջ հենց այդ բուրժուազիան և, վոր լակեյություն անելով պրուսական յունկերների առաջ՝ Վիլհելմ II-ի գլխավորությամբ միշտ էլ ցարիզմի ամենահավատարիմ դաշնակիցն է յեղել և Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հեղափոխական շարժման թշնամին։ Իրականում այդ բուրժուազիան յունկերների հետ իր բոլոր ջանքերը գործ կդնի և հաղթության և պարտության դեպքում ցարական միապետությունը պաշտպանելու ընդդեմ Ռուսաստանի հեղափոխության։

Իրականում գերմանական բուրժուազիան թալանչիական արշավանք սկսեց Սերբիայի դեմ, ցանկանալով գրավել այն և հարավային սլավոնության ազգային հեղափոխությունը խեղդել, միաժամանակ իր ռազմական ուժերի խոշոր մասն ավելի ազատ յերկրների դեմ դուրս բերել, ինչպիսիք են Բելգիան և Ֆրանսիան, վորպեսզի կարողանա կողոպտել իր ավելի հարուստ մրցակցին։ Գերմանական բուրժուազիան՝ հեքյաթներ տարածելով այն մասին, թե ինքը պաշտպանողական պատերազմ է մղում, իրականության մեջ իր տեսակետից պատերազմի համար ամենալավ մոմենտ ընտրեց, ոգտագործելով ռազմական տեխնիկայի իր վերջին կատարելագործությունները և ցանկանալով Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից ծրագրված նոր սպառազինությունները կանխել։

Պատերազմող ազգերի մյուս խմբի գլուխն է կանգնած անգլիական և ֆրանսիական բուրժուազիան, վորը մոլորեցնում է բանվոր դասակարգին ու աշխատավորական մասսաներին՝ հավատացնելով, թե պատերազմ է մղում հանուն հայրենիքի, ազատության և կուլտուրայի ընդդեմ Գերմանիայի միլիտարիզմի և դեսպոտիզմի։ Իսկ իրականության մեջ այդ բուրժուազիան վաղուց արդեն իր միլլիարդներով վարձում եր ռուսական ցարիզմի՝ Յեվրոպայի ամենառեակցիոն և բարբարոս միապետության զորքերը և պատրաստվում եր Գերմանիայի վրա հարձակվելու։

Անգլիական և ֆրանսիական բուրժուազիայի սկսած պայքարի իսկական նպատակն է գերմանական գաղութների բռնագրավումը և տնտեսապես ավելի արագ զարգացող մրցակից ազգի վոչնչացումը։ Յեվ այս բարձր նպատակի համար «առաջավոր» դեմոկրատական ազգերն ոգնում եյին վայրենի ցարիզմին ավելի ևս խեղդելու Լեհաստանին, Ուկրայնային և այլն, ավելի ևս ճնշելու Ռուսաստանի հեղափոխությունը։

Պատերազմող յերկու կողմերն էլ բոլորովին էլ իրարից յետ չեն մնում թալանների, գաղանությունների և պատերազմի անվերջ վայրագությունների հարցում, սակայն նպատակ ունենալով պրոլետարիատին մոլորեցնել և նրան հեռու պահել միակ իսկական ազատագրական պատերազմից, այն է՝ քաղաքացիական պատերազմից ընդդեմ ինչպես «իր» յերկրի, նույնպես և «ոտար» յերկրների բուրժուազիայի, այս բարձր նպատակի համար յուրաքանչյուր յերկրի բուրժուազիան հայրենասիրության մասին կեղծ ֆրազներ տարածելով, ձգտում է վստահացնել «իր ազգային պատերազմի նշանակությունը և հավատացնել, վոր նա ձգտում է հակառակորդին հաղթել վոչ թե թալանի և նրա յերկրները գրավելու համար, այլ բոլոր այլ ժողովուրդների «ազատագրման համար՝ բացի իր սեփական ժողովրդից։

Սակայն վորքան ավելի մեծ յեռանդով բոլոր յերկրների կառավարություններն ու բուրժուազիան աշխատում են ջլատել բանվորներին և նրանց իրար դեմ լարել, վորքան ավելի մեծ կատաղությամբ և կիրարկվում այս բարձր նպատակի համար ռազմական դրությունն-

րի և ռազմական գրաքննության սիստեմը (վորը նույնիսկ այժմ՝ պատերազմի ժամանակ ավելի շատ «ներքին», քան թե արտաքին թշնամուն է հալածում),—այնքան ավելի ստիպողական և դառնում գիտակից պրոլետարիատի համար՝ պաշտպանել իր դասակարգային համախմբումը, իր ինտերնացիոնալիզմը, իր սոցիալիստական համոզմունքները բոլոր յերկրների բուրժուական վոհմակի «հայրենասիրական» շովինիզմի սանձարձակության դեմ։ Այս խնդիրներից հրաժարվել—կնշանակեր, վոր գիտակից բանվորները պիտի հրաժարվեն իրենց ազատագրական, դեմոկրատական, յեթե այլևս չասենք սոցիալիստական ձգտումներից։

Սրտի մեծ դառնությամբ ստիպված ենք արձանագրել, վոր գլխավոր յեվրոպական յերկրների սոցիալիստական կուսակցություններն իրենց այս խնդիրը չիրագործեցին, իսկ այդ կուսակցությունների ղեկավարների վարկը, առանձնապես գերմանական կուսակցության, պարզապես սոցիալիզմի դավաճանություն է։ Հսկայական համաշխարհային պատերազմական կարևորություն ունեցող այս բոպեին, ներկայիս, յերկրորդ (1889-1914) սոցիալիստական Ինտերնացիոնալի ղեկավարներից շատերը փորձում են սոցիալիզմը վերածել նացիոնալիզմի։ Նրանց ընթացքի շնորհիվ այս յերկրների բանվորական կուսակցությունները չդիմադրեցին կառավարությունների հանցագործ գործունեությանը, այլ կոչ արին բանվոր դասակարգին իրենց դիրքերը միաձուլել, նույնացնել իմպերիալիստական կառավարությունների դիրքերի հետ։ Ինտերնացիոնալի ղեկավարները դավաճանեցին սոցիալիզմին՝ ռազմական վարկերի ոգտին ձայն տալով, կրկնելով «իրենց» յերկրների բուրժուազիայի շովինիստական («հայրենասիրական») լոզունգները, արդարացնելով և պաշտպանելով պատերազմը, մտնելով պատերազմող պետությունների բուրժուական մինիստրությունների մեջ, և այլն և այլն։ Ամենաազդեցիկ սոցիալիստական ղեկավարները և ժամանակակից Յեվրոպայի սոցիալիստական մամուլի ամենաազդեցիկ որգանները շովինիստական-բուրժուական և լիբերալ, և յերբեք վոչ սոցիալիստական տեսակետի՝ կողմնակից են։ Սոցիալիզմի այս խայտառակության պատասխանատվությունը նախ և առաջ ընկնում է գերմանական սոցիալ-դեմոկրատների վրա, վորոնք II Ինտերնացիոնալի ամենաուժեղ և ազդեցիկ կուսակցությունն եյին կազմում։ Սակայն չի կարելի արդարացնել նաև ֆրանսիական սոցիալիստներին, վորոնք մինիստրական պաշտոններ են ստանում այն բուրժուազիայի կառավարության մեջ, վորը իր հայրենիքն եր մատնում և Կոմմունան ճնշելու համար Բիսմարկի հետ եր միանում։

Գերմանական և ավստրիական սոցիալ-դեմոկրատները փորձում են պատերազմին ցույց տված իրենց ոժանդակությունը նրանով արդարացնել, վոր իբր թե իրենք դրանով իսկ ռուսական ցարիզմի դեմ են պայքարում։ Մենք՝ ռուս սոցիալ-դեմոկրատներս հայտարարում ենք, վոր նման ձևի արդարացումը սոփեստություն ենք համարում։ Ցարիզմի դեմ ուղղված հեղափոխական շարժումը վերջին տարիների ընթացքում մեր յերկրում նորից հսկայական չափեր ընդունեց։ Այդ շարժման գլուխն և յեղել կանգնած շարունակ Ռուսաստանի բանվոր դասակարգը։ Վերջին տարիների միլիոնավոր գործադուլները տեղի եյին ունենում ցարիզմի տապալման և դեմոկրատական հասարակապետության լոզունգի տակ։ Վոչ շատ շուտ, քան պատերազմի նախորյակին ֆրանսիական հանրապետության նախագահ Պուանկարեն Նիկոլայ II-ին այցելության յեկած ժամանակ բարբիկադներ կարող եր տեսնել Պետերբուրգի փողոցներում, վորոնք կառուցված եյին ռուս բանվորների ձեռքով։ Ամբողջ մարդկությունը ցարական միապետության խայտառակությունից ազատելու համար Ռուսաստանի պրոլետարիատը վոչ մի զոհի առաջ կանգ չի առել։ Սակայն մենք պետք է ասենք, վոր յեթե վորևե բան վորոշ պայմաններում կարող է հետաձգել ցարիզմի անկումը, յեթե վորևե բան կարող է ոգնել ցարիզմին ամբողջ Ռուսաստանի դեմոկրատիայի դեմ պայքարելու գործում, այդ՝ այժմյան իսկ պատերազմն է, վորը ցարիզմի ռեակցիոն նպատակներին տրամադրեց անգլիական, ֆրանսիական և ռուսական բուրժուազիայի դրամական պարկը։ Յեվ յեթե վորևե բան կարող է դժվարացնել Ռուսաստանի բանվոր դասակարգի հեղափոխական պայքարն ընդդեմ ցարիզմի, այդ հենց գերմանական և ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի ընթացքն է, վորն անդադար, վորպես որինակ, մեզ հիշեցնում է Ռուսաստանի շովինիստական մամուլը։

Յեթե նույնիսկ յենթադրենք, վոր գերմանական սոցիալ դեմոկրատիայի ուժն այնքան փոքր եր, վոր կարող եր նրան ստիպել հրաժարվել վորևե հեղափոխական գործողությունից, ապա այդ դեպքում ել չեր կարելի միանալ շովինիստական բանակին, չեր կարելի այդպիսի քայլեր անել, վորոնց առթիվ իտալական սոցիալիստներն իրավամբ հայտարարում եյին, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարներն անպատվում են Ինտերնացիոնալի պրոլետարական դրոշը։

Մեր կուսակցությունը՝ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը արդեն կրեց և դեռ ելի կկրի հսկայական զոհեր պատերազմի պատճառով։ Մեր ամբողջ լեգալ մամուլը վոչնչացված է։ Շատ միություններ փակված են, մեր ընկերներից շատերը ձերբակալված և աքսորված են։ Սակայն պարլամենտական մեր ներկայացուցչությունը Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան, իր բացարձակ սոցիալիստական պարտականությունը համարեց ձայն չտալ ռազմական վարկերի ոգտին և նույնիսկ՝ վորպես իր

բողոքի ավելի բուռն արտահայտություն՝ թողնել Դումայի նիստերի դահլիճը։ Նա իր պարտականությունը համարից յեվրոպական կառավարությունների քաղաքականությունը դրոշմել վորպես իմպերիալիստական։ Յեվ չնայած ցարական կառավարության տասնապատկած ճնշմանը, Ռուսաստանում ընկեր բանվորներն արդեն հրատարակում են պատերազմի դեմ ուղղված առաջին անլեգալ կոչերը՝ իրենց պարտքը կատարելով դեմոկրատիայի և Ինտերնացիոնալի հանդեպ։

Յեթե հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները՝ հանձինս գերմանական սոցիալ-դեմոկրատիայի փոքրամասնության և նեյտրալ յերկրների լավագույն սոցիալ-դեմոկրատիայի ամոթ են դնում II Ինտերնացիոնալի այս փլուզումի առթիվ, յեթե և Անգլիայում և Ֆրանսիայում լսվում է սոցիալիստների ձայնն ընդդեմ սոցիալ-դեմոկրատիայի մեծամասնության շովինիզմի, յեթե ոպպորտյունիստները՝ հանձինս, որինակ, գերմանական «Սոցիալիստական ամսագրի» («Sozialistische Monatshefte»), վաղուց արդեն ազգային լիբերալ դիրքերում կանգնած, ամենայն իրավամբ յեվրոպական սոցիալիզմի դեմ տարած իրենց հաղթանակն են տոնում,—ապա ամենավատ տեսակի ծառայություն են մատուցանում պրոլետարիատին նրանք, ովքեր տատանվում են ոպպորտյունիզմի և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի միջև (ինչպես գերմանական սոցիալ-դեմոկրատիայի «կենտրոնն» է) և փորձում են II Ինտերնացիոնալի փլուզումը քողարկել դիպլոմատիական ֆրազներով և կամ լռել նրա մասին։

Ընդհակառակը, պետք է բացարձակ կերպով ընդունել այդ փլուզումը և հասկանալ նրա պատճառները, վորպեսզի կարելի լինի բոլոր յերկրների բանվորների նոր, ավելի կայուն սոցիալիստական միություն հիմնել։ Ոպպորտյունիստները զանց արին Շտուտգարտի, Կոպենհագենի և Բազելի կոնգրեսների վորոշումները, վորոնք բոլոր յերկրների սոցիալիստներին պարտավորեցնում եյին ամեն տեսակի պայմաններում եվ շովինիզմի դեմ պայքարել և բուրժուազիայի և կառավարությունների սկսած ամեն մի պատերազմին պատասխանել քաղաքացիական պատերազմի և սոցիալիստական հեղափոխության ուժեղ քարոզով։ II Ինտերնացիոնալի փլուզումը—այդ ոպպորտյունիզմի փլուզումն է, վորն աճում եր անցած (այսպես կոչված «խաղաղ») պատմական շրջանի յուրահատուկ պայմաններում և վերջին տարիներում փաստորեն իշխում եր Ինտերնացիոնալում։ Վաղուց եյին ոպպորտյունիստներն այդ փլուզումը նախապատրաստում. նրանք բացատրում եյին սոցիալիստական հեղափոխությունը և այն փոխարինում եյին բուրժուական ռեֆորմիզմով. նրանք բացատրում եյին դասակարգային պայքարը, վորը պիտի իր անհրաժեշտ մոմենտներին քաղաքացիական պատերազմի վերածել, և դասակարգերի համագործակցություն եյին քարոզում.



նրանք բուրժուական շովինիզմ եյին քարոզում հայրենասիրության և հայրենիքի պաշտպանության անվան տակ և արհամարհում կամ բացատրում եյին դեռևս «Կոմունիստական Մանիֆեստում» շարադրված սոցիալիզմի այն հիմնական ճշմարտությունը, թե բանվորները հայրենիք չունեն. միլիտարիզմի դեմ պայքարելիս նրանք սահմանափակվում եյին սենտիմենտալ-մեշչանական տեսակետներով, փոխանակ բոլոր յերկրների պրոլետարների հեղափոխական պայքարի անհրաժեշտությունն ընդունելու ընդդեմ բոլոր յերկրների բուրժուազիայի. նրանք բուրժուական պարլամենտարիզմից և բուրժուական լեգալությունից ոգտվելու անհրաժեշտությունը դարձնում եյին այդ լեգալության ֆետիշականացում և մոռացություն եյին տալիս, վոր ճգնաժամերի շրջանում անհրաժեշտ են կազմակերպության անլեգալ ձևեր և ագիտացիա։ Ոպպորտյունիզմի բնական «լրացումը» պրոլետարական, այսինքն մարքսիստական տեսակետին նույնքան թշնամական անարխո-սինդիկալիստական այդ հոսանքը վոչ պակաս խայտառակ ձևով հավերժացավ, ժամանակակից ճգնաժամերի ընթացքում ինքնագոհ կերպով կրկնելով շովինիզմի լոզունգները։

Առանց ոպպորտյունիզմի հետ վճռականապես ամեն մի կապ կտրելու և մասսաներին նրա պարտության անխուսափելիությունը բացատրելու անկարելի յե ներկայումս իրագործել սոցիալիզմի խնդիրները, անկարելի յե իրագործել բանվորների իսկական ինտերնացիոնալիստական միավորումը։

Յուրաքանչյուր յերկրի սոցիալ-դեմոկրատիայի անելիքն առաջին հերթին պետք է լինի պայքարել տվյալ յերկրի շովինիզմի դեմ։ Այդ շովինիզմը Ռուսաստանում ամրոզջովին համակեց բուրժուական լիբերալներին («կադետներ») և մասամբ նարոդնիկներին, մինչև իսկ սոցիալ-հեղափոխականներին և «աջ» սոցիալ-դեմոկրատներին (առանձնապես անհրաժեշտ է հիշել Ցե. Սմիրնովի, Պ. Մասլովի և Գ. Պլեխանովի շովինիստական յելույթները, վորը լայն կերպով ոգտագործեց բուրժուական «հայրենասիրական» մամուլը)։

Ներկա դրությունը հնարավորություն չի տալիս վորոշելու, թե միջազգային պրոլետարիատի տեսակետից պատերազմող ազգերի յերկու խմբերից վորի պարտությունը փոքրագույն չարիք կլիներ սոցիալիզմի համար։ Սակայն մեզ համար՝ ռուս սոցիալ-դեմոկրատների համար կասկածից դուրս է, վոր Ռուսաստանի բանվոր դասակարգի և բոլոր ազգերի աշխատավորական մասսաների տեսակետից փոքրագույն չարիք կլիներ ցարական միապետության՝ Յեվրոպայի և Ասիայի ավելի մեծ թվով ազգարնակություն և ազգեր ճնշող ամենառեակցիոն և բարբարոս կառավարության պարտությունը։

Յեվրոպայի սոցիալ-դեմոկրատիայի մոտակա քաղաքական լոզուն-

դը պետք է լինի Յեվրոպայի հանրապետական Միացյալ Նահանգների կազմակերպումը. միաժամանակ, տարբերվելով բուրժուազիայից, վորը պատրաստ է ամեն ինչ «խոստանալ», միայն թե պրոլետարիատին գրավի և շովինիզմի ընդհանուր հոսանքի մեջ առնի, սոցիալ-դեմոկրատները կրացատրեն այս լոզունգի ամբողջ ստահոդությունն ու անիմաստությունը՝ առանց գերմանական, ավստրիական և ռուսական միապետությունների հեղափոխական տապալման։

Ռուսաստանում, ինկատի ունենալով այս յերկրի խոշոր հետամնացությունը, վոր դեռ չի վերջացրել իր բուրժուական հեղափոխությունը, սոցիալ-դեմոկրատիայի անելիքն առաջվա նման պետք է լինի ստեղծել աստիճանական դեմոկրատական բարեփոխման յերեք հիմնական պայման՝ դեմոկրատական հանրապետություն (բոլոր ազգերի ինքնորոշմամբ և իրավահավասարությամբ), կալվածատիրական հողերի բռնագրավում և 8-ժամյա բանվորական որ։ Սակայն բոլոր առաջավոր յերկրներում ել պատերազմը հերթական հարց է դարձնում սոցիալիստական հեղափոխության լոզունգը, վորն այնքան ավելի հրատապ է դառնում, վորքան ավելի յեն պրոլետարիատի ուսերին ընկնում պատերազմի դժվարությունները, վորքան ավելի ակտիվ պետք է դառնա նրա դերը խոշոր կապիտալիզմի հսկայական տեխնիկական հաջողությունների պայմաններում մղվող ժամանակակից «հայրենասիրական» բարբարոսության արհավիրքներից հետո Յեվրոպան վերականգնելու գործում։

Այն հանգամանքը, վոր շնորհիվ զինվորական դրության բուրժուազիան կարողանում է ոգտագործել բոլոր որենքները պրոլետարիատի բերանը բոլորովին փակելու համար, այդ հանգամանքը նրա առաջ է դնում ագիտացիայի և կազմակերպության անլեգալ ձևեր ստեղծելու ստիպողական պահանջը։ Թող ոպպորտյունիստներն ել իրենց համոզմունքներին դավաճանելու միջոցով «պահպանեն» լեգալ կազմակերպությունները,—հեղափոխական սոցիալ-դեմոկրատները կոգտագործեն բանվոր դասակարգի կազմակերպչական փորձառությունն ու կապերը սոցիալիզմի համար մղվող պայքարի՝ ճգնաժամերի շրջանին համապատասխան անլեգալ ձևեր ստեղծելու և բանվորներին վոչ թե իրենց յերկրի շովինիստական բուրժուազիայի, այլ բոլոր յերկրների բանվորների հետ միավորելու համար։ Պրոլետարական ինտերնացիոնալը չի կործանվել և չի յել կործանվի։ Բանվորական մասսաները բոլոր խոչընդոտները հաղթահարելով՝ նոր Ինտերնացիոնալ կստեղծեն։ Ոպպորտյունիզմի այսորվա հաղթանակը յերկարատև չի։ Վորքան ավելի զոհեր խլի պատերազմը, այնքան ավելի պարզ կլինի բանվորական մասսաների համար ոպպորտյունիստների դավաճանությունը բանվորական գործին և գենքը՝ յուրաքանչյուր յերկրի կառավարությունների ու բուրժուազիայի դեմ դարձնելու անհրաժեշտությունը։



Ժամանակակից իմպերիալիստական պատերազմը քաղաքական պատերազմի վերածելը միակ ճիշտ պրոլետարական լոզունգն է, վորը մատնանշում է Կոմմունայի փորձը, վորը ցույց է տրված Բազելի (1912 թ.) բանաձևում և բխում է բարձր զարգացում ունեցող բուրժուական յերկրների միջև մղվող իմպերիալիստական պատերազմի բոլոր պայմաններից։ Վորքան ել այս կամ այն բոպեին կատարվելիք փոփոխության դժվարությունները մեծ լինեն, սոցիալիստները յերբեք չեն հրաժարվի այս ուղղությամբ սիստեմատիկ, համառ և անշեղ նախապատրաստական աշխատանք կատարելուց, յերբ պատերազմն արդեն փաստ է դարձել։

Միայն այս ճանապարհով պրոլետարիատը կարող է ազատվել շովինիստական բուրժուազիայից կախում ունենալուց, և այս կամ այն ձևով, քիչ թե շատ արագ կերպով վճռական քայլեր անել դեպի ժողովուրդների իսկական ազատությունը և դեպի սոցիալիզմը։

Կեցցե՛ բանվորների միջազգային յեղբայրությունն ընդդեմ բոլոր յերկրների բուրժուազիայի շովինիզմի ու հայրենասիրության։

Կեցցե՛ ոպպորտյունիզմից ազատագրված պրոլետարական Ինտերնացիոնալը։

Ռուսաստանի Ս.-Դ. Բանվորական
Կուսակցության Կենտրոնական Կոմիտե.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊ. ԳՐԱԴ. ԹՈՒՄ
ՀԱՄԱ-
ԱՄ. Ա. ՄԱՍ.
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

# ՑԱՆԿ


Եջ

ՀԵՂԻՆԱԿԻՑ . . . . . 4

**Առաջին դասախոսություն.—**

Ինչ է կուսակցությունը . . . . . 5
«Կուսակցություն» բառի մարքսիստական և բուրժուական բնորոշումը . . . . . 6
Ինչու բուրժուական գիտությունը չի տալիս «կուսակցություն» բառի ճիշտ բնորոշումը . . . . . 7
Միլյուկովի բնորոշումը . . . . . 8
Եսերների ֆորմուլան . . . . . 9
Դասակարգ և կուսակցություն . . . . . 10
Հոբելյանական տարեթվեր . . . . . 15
Կուսակցության կազմակերպման պրոցեսը . . . 17
Նարոդնիկություն . . . . . 18
Կոմմունիստների վերաբերմունքը դեպի ֆրանսիական Մեծ հեղափոխությունը . . . . . 19
Կոմմունիստների վերաբերմունքը դեպի նարոդնիկությունը 20
Ռուսական պրոլետարիատի նախապատմությունը . 21
Զայկովսկու խմբակը . . . . . 23
«Հարավային-Ռուսական Բանվորական Միությունը» . 23
Մարքսիզմ և նարոդնիկություն . . . . . 25
Բուրժուական և պրոլետարական հեղափոխություններ . 26
Պրոլետարական և բուրժուական հեղափոխությունների պայքարը . . . . . 27

**Երկրորդ դասախոսություն.—**

Նարոդնիկության ու մարքսիզմի վեճը . . . 28
Նարոդնիկության մոլորությունը . . . . 29
Նարոդնիկության խայտաբղետությունը . . . 29
70-ական և 80-ական թվականների նարոդնիկները . 30
Կրիվենկո . . . . . 31
Միխայլովսկի . . . . . 31
Կարալենկո . . . . . 31
Նարոդնիկության յերկու թևը . . . . . 32





Մարքսիստների վերաբերմունքը դեպի տերրորը . . 33
Պրոլետարիատի հեգեմոնիայի հարցը . . . 34
Պլեխանովի վեճը Տիխամիրովի հետ պրոլետարիատի հեգեմոնիայի մասին . . . . . 36
Լենինը պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի հայրերից մեկն է . . . . . 37
Լեգալ մարքսիզմը . . . . . 38
Ստրուվեն առաջ և հիմա . . . . . 39
Ստրուվեյի «Բիզնեսագիտական գիտությունները» . 40
Պլեխանովը վորպես թեորետիկ և Լենինը վորպես քաղաքական գործիչ . . . . . 42
Լենինի պայքարը Ստրուվեյի դեմ . . . . . 43
Կուսակցության արգանդային շրջանը . . . 44
Առաջին բանվորական սոցիալ-դեմոկրատական խմբակները Պետերբուրգում . . . . . 45
«Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միություն» 45
Պրովինցիալ ս.-դ. բանվորական խմբակներ . . 46
Բունդ . . . . . 47
Կուսակցության առաջին համագումարը . . . 48
Եկոնոմիզմ . . . . . 50
Եկոնոմիզմի աղբյուրները . . . . . 50
Եկոնոմիզմի գործիչները . . . . . 52
Եկոնոմիզմի արտասահմանյան կենտրոնը . . . 55
Բանվոր դասակարգի դերը ըստ եկոնոմիզմի և բայլշևիզմի տեսակետի . . . . . 56
Պրոլետարիատի հեգեմոնիան խորհուրդների իշխանությունն է 56

**Չերրորդ դասախոսություն.—**

Ուսանողական շարժումը . . . . . 58
Ուսանողության եվոլյուցիան . . . . . 59
Ցարիզմի պայքարն ուսանողական շարժման դեմ . 60
Ուսանողները և եսերները . . . . . 60
Սոցիալ-դեմոկրատների վերաբերմունքը դեպի ուսանողական շարժումը . . . . . 60
Հեղափոխական մարքսիստները և ուսանողությունը . 61
Բայլշևիկների տակտիկան ուսանողության նկատմամբ 62
Ազատագրման միությունը և եսերների միությունը . 63
Բանվորական հուզումները Պետերբուրգում և այլ քաղաքներում . . . . . 63
Բանվորների նամակները . . . . . 64

«Իսկրա» («Կայծ») լրագիրը . . . . . 65
«Իսկրայի» դերն ու նշանակությունը . . . 66
«Իսկրայի» ուղղությունն ու գաղափարները . . 67
«Իսկրայի» գրական և պրակտիկ գործունեությունը . 68
«Ազատականները» և «Իսկրան» . . . . 68
«Իսկրայի» հաջողություններն ու ազդեցությունը . 70
«Տնայնագործություն» . . . . . 70
Պրոֆեսիոնալ հեղափոխականներ . . . . 71
Նրանց աշխատանքն ու նշանակությունը կուսակցության համար . . . . . 72
«Իսկրայի» կազմակերպության քայքայումը Կիևում . 73
1902-րդ թիվը . . . . . 74
Ռաստովի դեպքերը . . . . . 75
Առաջին կենտկոմը . . . . . 75
Կուսակցության ծրագրի նախագիծը . . . 75
Կուսակցության յերկրորդ համագումարը . . . 76
Կուսակցության սոցիալական կազմը 1900-ական թվականների սկզբներին . . . . . 77
Վիճաբանություններ Բունդի հետ . . . . 78
Կուսակցության կանոնադրության առաջին կետի (կուսակցության անդամ լինելու) վերաբերյալ վեճը . . 79
Վեճ դեպի լիբերալ բուրժուազիան ունենալիք վերաբերմունքի մասին . . . . . 81
Վեճ «Իսկրայի» խմբագրության կազմի առթիվ . 83
Վեճ կուսակցության ծրագրի մասին . . . 84
Պլեխանովը մահվան պատժի մասին . . . 85
Պլեխանովը—բայլշևիկ . . . . . 86
Յերկրորդ համագումարից հետո . . . . 86

Չորրորդ դասախոսություն.— . . . . .

Ռուս-յապոնական պատերազմ . . . . 88
Մենշևիկների տեսակետը . . . . . 88
Պարտվողականություն . . . . . 89
Գերշունիի հիշողությունները . . . . 90
Պարտվողականությունը Սավինկովի վեպում . . 92
Բայլշևիկները և ռուս-յապոնական պատերազմը . . 93
Մենշևիկների դիրքը . . . . . 93
Մենշևիկների դավաճանությունը . . . . 94
Յապոնասիրություն և բայլշևիկները . . . 95
Լիբերալ շարժման աճումը . . . . . 96



Բանվոր դասակարգի և բուրժուազիայի փոխհարաբերությունները 1904 թվին . . . . . 97
Ընկ. Լենինի բռնած դիրքը . . . . . 98
Մենշևիկներից հեռանալը . . . . . 100
Վեճեր կուսակցության դեմոկրատիզմի մասին . . 102
Մենշևիկների ճնշումը . . . . . 104
Մեծամասնության Կոմիտեների Բյուրո (Б. К. Б.) . . 105
Հունվարի 9-ը . . . . . 106
Հունվարի 9-ի նշանակությունը . . . . 107
«Ժամանակավոր հեղափոխական կառավարություն» լոզունգի շուրջը ծագած վեճերը . . . . . 108
Մենշևիկների տեսակետը «ժամանակավոր հեղափոխական կառավարություն» լոզունգի նկատմամբ . . . 109
Բայլշևիկների յերրորդ համագումարը Լոնդոնում և մենշևիկների առաջին կոնֆերանսը Ժընևում . . . 110
Ընդհանուր գործադուլի հարցը . . . . 111
Զինված ապստամբության հարցը . . . . 112
Յերրորդ համագումարի մատուցած ծառայությունը . 112
Բանվորների սպառազինման հարցը . . . . 113
Շիպլովսկու հանձնաժողովը . . . . . 113
Բուլիգինյան Դուման . . . . . 114
1905 թվի հոկտեմբերյան դեպքերը . . . . 115
Դեկտեմբերյան (1905 թ.) զինված ապստամբությունը Մասկվայում . . . . . 116

Հինգերորդ դասախոսություն.— . . . . .

1905 թվի հեղափոխության փորձը . . . . 118
«Նովայա ժիզն» և «Նաչալո» . . . . . 119
Պերմանենտ հեղափոխություն . . . . . 120
1905 թվի շարժման անհաջողության պատճառները . 121
1905 թվի հետևանքները . . . . . 124
«1847, թե՞ 1849 թիվը» բանաձևը . . . . 126
Բայլշևիկների և մենշևիկների միավորումը . . 127
Մենշևիկյան տենդենցի հաղթանակը . . . 128
Բայլշևիկների տակտիկան . . . . . 128
Հետագա վեճեր «47, թե՞ 49 թվի» մասին . . . 129
Գատասխանատու (կադետական) մինիստերություն . 130
Առաջին Դումայի ցրումը . . . . . 131
1907 թվի Լոնդոնի համագումարը . . . . 132
Լոնդոնի համագումարում ընտրված կենտրոնական Կոմիտեն 133
Յերրորդ Դուման . . . . . 134

Լեգալ հնարավորությունների ոգտագործման վերաբերյալ վեճը . . . . . 136
Լիկվիդատորություն . . . . . 137
Լիկվիդատորները և բուրժուազիան . . . . 138
Մենշևիկ-կուսակցականներ . . . . . 139
Պլեխանովը «գազանի աշխատանքի յերգիչ» . . 140
«Աստվածիզմ» . . . . . 141
«Ուլտիմատիզմ» . . . . . 142
Աստվածարարություն (богостроительство) . . 143
Պայքար աստվածիզմի և մյուս հոսանքների դեմ . 144

Վեցերորդ գաստխոսություն. — . . . . . .

1908 թվի Պարիզյան կոնֆերանսը . . . . 147
Կենտրոնական Կոմիտեյի վերջին միացյալ պլենումը . 148
Լենայի դեպքերը։ Բանվորական շարժման աշխուժացումը 149
«Զվեզդա» («Աստղ») թերթը . . . . . 150
«Զվեզդայի» դերն ու նշանակությունը . . . 150
Պրագայի բայլշևիկյան կոնֆերանսը . . . . 151
Կոնֆերանսի կազմն ու դեկավարները . . . 151
Պետերբուրգյան «Պրավդայի» հիմնումը . . . 152
Զորրորդ Դուման . . . . . 153
Պրովոկատոր Մալինովսկին . . . . . 154
Դումայի ֆրակցիայի պառակտումը . . . . 155
Ոգոստոսյան բլոկը . . . . . 156
Վեճ մասնակի պահանջների մասին . . . . 156
Դեմոկրատական հանրապետության հարցը . . 157
Բայլշևիզմի եվոլյուցիան . . . . . 157
«Պրավդայի» հոդվանակը . . . . . 159
Պատերազմը և հեղափոխությունը . . . . 160
Պատերազմը և կուսակցությունը . . . . 161
Կ. Կ.-ի անդամների ձերբակալումը Պետերբուրգում և նրանց դատավարությունը . . . . . 163
Միասնական բուրժուական-մենշևիկյան ճակատ . . 164
Ռազմարդյունաբերական կոմիտեներ. . . . 166
Ցիմմերվալդի կոնֆերանսը . . . . . 168
Ընկ. Լենինը Շվեյցարիայում . . . . . 168
Բայլշևիզմի և մենշևիզմի ուղիները . . . . 169
«Կենտրոնի հոսանքը» . . . . . 170
Սոցիալ-շովինիզմի ճնշումը . . . . . 171

ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ. — . . . . . .

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մանիֆեստը . . . . 173
Ռ. Ս.-Դ. Բ. Կ. Կենտկոմի մանիֆեստը . . . 176

«Ազգային գրադարան»
NL0185741